

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ - 2019



INSTITUTE OF LANGUAGE AFTER H.ACHARYAN

**CONTEMPORARY ISSUES OF
HISTORICAL STUDY OF ARMENIAN
LANGUAGE**

Collection of scientific papers

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
ИСТОРИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ
АРМЯНСКОГО ЯЗЫКА**

Сборник научных статей

Ереван 2019


Yerevan 2019

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

7
A104294

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2019

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

Հ 240

Ժողովածուն հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հայագիտական
ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական
հիմնադրամի օժանդակությամբ

..

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհուրդը

Խմբագրական խորհուրդ՝

Վ. Լ. Կատվայան (նախագահ)

Գ. Մ. Մխիթարյան

Լ. Ս. Հովսեփյան

Գ. Գ. Գևորգյան

Ա. Ե. Սարգսյան

Ն. Մ. Սիմոնյան

Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ:
Հ 240 Գիտական հոդվածների ժողովածու.- Եր.: ՀՀ ԳԱԱ
«Գիտություն» հրատարակչություն, 2019. - 227 էջ:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8080-1401-5

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2019

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2019

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հուշագրությունը անցյալի՝ հետաքրքրությունն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողություն է: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների հուշեր¹, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում ժամանակի գրամշակութային, հասարակական իրադարձություններին և այլն:

Թեմատիկ առումով նա կա տարբերություն, հայտնի են *անձնական, թատերական, քաղաքական, պատրիարքական հուշեր* և այլն:

Առավել ընդգրկուն են հուշ-դիմանկարները: Մրանք հուշեր են գրողների, արվեստագետների, գիտության ականավոր գործիչների մասին, որոնց հեղինակները հանդիպել են տարիներ շարունակ և մոտիկից ճանաչել նրանց:

Հուշագրությունը հետաքրքրական իրողություններ է վեր հանում լեզվի ձևային-կառուցվածքային տեսանկյունից: Եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ հեղինակը դեպքերի ընթացքն ինքն է կառուցում նախապես ուրվագծված ձևով, ապա հուշագիրը եղած փաստերից է խոսք կառուցում: Գլխավորը, որին ձգտում է հեղինակը, անցյալի իրականության, դեպքերի և դեմքերի, նրանց ունեցած փոխհարաբերու-

¹Այս առումով հետաքրքրական պատկեր են ներկայացնում Նվարդ Թումանյանի «*Հուշերը*»՝ նվիրված Ամենայն հայոց բանաստեղծին, Վիգեն Իսահակյանի «*Հայրս*» հուշագրական վեպը՝ նվիրված Ավետիք Իսահակյանին, Արփենիկ Չարենցի «*Հուշեր հայրիկիս մասին*» գիրքը, Մարիա Փափազյանի «*Հուշերի թևով*» հիշողությունը՝ նվիրված Վահրամ Փափազյանին, Արեգ Իսրայելյանի «*Հայրիկիս հետ*» հիշողությունը՝ նվիրված Ռաֆայել Իսրայելյանին և այլն:

թյունների ճշմարիտ և համարժեք արտացոլումն է, որը կարող է ներկայացվել նաև գեղարվեստական հանդերձավորմամբ:

Այսպես. Վ. Ալազանը հուշեր գրելիս առաջնորդվել է էական սկզբունքով՝ լինել անկեղծ և ճշմարիտ, բնավ «չգեղեցկացնել» հիշողությունների նյութ հանդիսացող անձանց, այլ գրել ճշմարտությունը²:

Թեև վավերագրության հեղինակը գեղարվեստական իմաստով կերպար չի ստեղծում, բայց կերտում է դիմանկարներ, որոնք հանդես են գալիս իբրև տարբեր երևույթների, կարևոր իրողությունների անմիջական կրողներ: Բայց եթե գրող-գեղագետը ազատ է կերպարների ընտրության մեջ, այսինքն՝ նա կարող է անհրաժեշտության դեպքում ստեղծագործության մեջ ներառել հերոսներ՝ ստեղծելով իրականության առանձին պատկերներ, ապա հուշագրության հեղինակը ազատ չէ այդ ընտրության մեջ: Նա հնարավորություն ունի կերպարագծելու միայն իր հետ առնչություն ունեցած մարդկանց դիմանկարները: Հուշագիր հեղինակը հաճախ ինքն էլ կարող է երևալ հուշագրության հայելիում:

Հարկ է շեշտել, որ հուշագիրը վերջին հաշվով ենթակայական դիրք կարող է ունենալ: Այդ է վկայում, օրինակ, Ս. Ջորյանի հետևյալ միտքը. «Հուշերի մեջ հնարավոր չէ բացարձակ օբյեկտիվություն, և սուբյեկտիվ մոտեցումը զգալի տեղ է բռնում անկասկած»³: Այս դեպքում հեղինակը բնորոշին ընկալում է իր պատկերացումներով: Վերջիվերջո հուշագրությունը կյանքը լուսանկարչական ճշգրտությամբ չի ներկայացնում: Ալ. Շիրվանզադեն նշում է, որ «չկան և չեն կարող լինել ֆոտոգրաֆիական ճշտություն ունեցող պատկերներ ներկայացնող ստեղծագործություններ»⁴:

² Վ. Ալազան, *Հուշեր*, Ե., 1967, էջ 4:

³ Ստ. Ջորյան, *Հուշերի գիրք*, Ե., 1991, էջ 7:

⁴ *Դաֆֆին ժամանակակիցների հուշերում*, Ե., 1986, էջ 228:

Ժամանակակից լեզվաբանության ուղղությունների մեջ առաջնային նշանակություն ունի հուշագրության բնագրերի հոգելեզվաբանական հիմքերի ուսումնասիրումը, որովհետև հետազոտության կիզակետում մարդ-անհատականության լեզվական իրացումն է: Լեզվաբանական գրականության մեջ առաջադիր խնդրի որոշ տեսակների (հուշագրական և ինքնակենսագրական արձակ) երբեմն անվանում են լեզվաբանական անձնաբանություն («лингвистическая персонология»)⁵: Այստեղ հեղինակը հանդես է գալիս իբրև անհատական և սոցիալական գծերի համադրությամբ անհատականություն, որ լիովին կարող է երևալ սեփական նախաձեռնությամբ ստեղծված երկում:

Կարելի է ընդգծել, որ անցյալի իրադարձության կամ երևույթի լեզվական իմաստավորման համար անհրաժեշտ է «որոշակի հոգեկան ակտիվության նվազագույն շեմ, որից ներքև հնարավոր չէ ընկալումների, զգացմունքների և մտքերի լեզվական արտահայտություն»⁶: Այս դեպքում լեզվական դրսևորում են ստանում մարդու և՛ մտածական, և՛ հուզական աշխարհները:

Ղ.Աղայանը «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» հուշագրության մեջ ընդգծում է, որ հիշողությունները չեն մոռացվում միայն այն պատճառով, որ կրկնվում են անընդհատ. «Արտաքին տպավորությունները, մեր գազաթի մեջ ծովանալով, շարունակ շարժման մեջ են...: Բարձր ոգևորությունը այդ ծովում փոթորիկ բարձրացնելն է»⁷:

Մասնագետները, սակայն, հաճախ ներկայացնում են հոգեվիճակներ, երբ հիշողության շարադրանքը դժվարությամբ է կառուցվում՝ հստակ չհիշվելու պատճառով:

⁵В. Нерознак, *Лингвистическая персонология: к определению статуса Дисциплины* // Язык, Поэтика, Перевод, М., 1996, էջ 112-116:

⁶Գ. Հովհաննիսյան, *Հոգելեզվաբանություն*, Ե., 2011, էջ 44:

⁷Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հ.4, Ե., 1963, էջ 424:

Հուշագիր Ս. Ալաջաջյանը գրում է, որ «մոռացության փոշին միշտ էլ կարող է երևալ յուշերի մեջ, յուշերի կողքին: Այդ փոշին նստում է ամեն մեկիս անցեալի որոշ հատուածի վրայ, ու ափսոսում ես, որ որոշ բաներ մոռացել ես»⁸: Նման նրբագծեր գետեղված են հենց հուշագրության բնագրերում. «Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի, և *մոռացել եմ, թե ինչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ*»⁹: Երբեմն գեղարվեստական վավերագրության հեղինակը, հաշվի առնելով տարբեր հանգամանքներ, կարող է չցանկանալ դեպքերի մանրամասներ ներկայացնել. «Ասում են՝ ամեն ինչ ասողից աղքատ մարդ չկա: Որ այդպես է, ուրեմն թող ամեն ինչ թղթին չհանձնվի. *մի քանի դրվագ էլ*, որ հիշելիս միշտ հպարտություն եմ ապրել, *թող անհայտ մնան*, մնան որպես նվիրական հիշատակներ միայն ինձ համար»¹⁰:

Իրականում, ինչպես ընդունված է հուշագրությանը վերաբերող ուսումնասիրություններում, կարող են լինել նաև, կարելի է ասել, կեղծ հուշեր, նամակներ (պսևդոհուշեր, պսևդոնամակներ): XX դ. գեղանկարչության խոշորագույն դեմքերից մեկի՝ Արշիլ Գորկու նամակները, որոնց մի մասը կարելի է նաև հիշողություններ համարել, առաջին անգամ ոչ ամբողջությամբ տպագրվել է «Արարատ» ամսագրի հատուկ համարում (Բոստոն, 1971): Կարծիքներ են շրջանառվում, որ որոշ նամակներում կան հավելումներ, իսկ որոշ գրառումների բնօրինակները բացակայում են: Խոսք կա նաև այն մասին, թե դրանք ոչ թե պակաս են կամ ինչ-ինչ պատճառներով չկան, այլ հորինվել են նկարչի քրոջ որդու՝ Կ. Մուրադյանի կողմից¹¹: Մի առիթով վերջինս նշել է, որ իր մոտ պահված նամակներում որոշ անձանց մասին կան անբարենպաստ արտահայտություններ, և

⁸ Ս. Ալաջաջյան, *Վաթսունականք*, Լոս Անջելես, 2002, էջ 8:

⁹ *Թումանյանը ժամանակակիցների հուշերում*, Ե., 1969, էջ 8:

¹⁰ Ռ. Զարյան, *Հուշապատում, գիրք 1*, Ե., 1975, էջ 106:

¹¹ Հմմտ. Ա. Գորկի, *Նամակներ*, Ե., 2005, էջ 6-8:

ինքը չէր ցանկացել, որ դրանք հանրությանը ներկայացվեին¹²:

Հուշագրական բնագրերը կառուցելիս հեղինակները բնականաբար իրացնում են հիշողության տարբեր ծավալներ: Այս մետաժանրի լեզվակառուցման համար կարևորվում են ոչ միայն խոսքի ընկալման, այլև խոսքարտադրության մեխանիզմները, որոնցով էլ, անշուշտ, պայմանավորվում է լեզվական մտածողությունը: Հայտնի է, որ ընկալման գործընթացն առավելապես վերլուծության գործընթաց է, իսկ հաղորդմանը՝ իրադրության տարբեր դրվագների: Հաղորդման և ընկալման հակադարձ գործընթացներում խաղարկվում են գեղարվեստական վավերագրության կառուցվածքային տարրերը և նրանց գործառության օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, հասկացումը առաջին հերթին վերլուծություն է, իսկ հասկանալի դարձնելը՝ առաջին հերթին համադրում¹³: Մա լայն առումով հոգելեզվական ուրույն համակարգ է, որի բարձրագույն մակարդակը տվյալ դեպքում տեքստային-ժանրային պլանն է:

Հուշագրական բնագրում դիմանկարը, լինելով հեղինակային խոսքի բազմազան շերտերից, հեղինակները կերտում են նուրբ դիտողականությամբ և յուրահատուկ մեթոդով: Այս ժանրում դիմանկարն ամբողջանում է մի քանի սկզբունքներով, որոնցից էականը թերևս հուշագրի առաջին տպավորությունն է: Նկատելի են ուշագրավ փաստեր. հուշագիրների մեծ մասը իբրև սկիզբ արձանագրում է բնորդի հետ առաջին հանդիպումը, ինչը անմոռանալի տպավորություն է թողնում: Հեղինակների հիշողության հոսքերում բնորդը նախևառաջ ուրվագծվում է իր արտաքին նկարագրով: «Թումանյանին ես առաջին անգամ տեսա հեովից, Սոլլուակի Մերգենսկայա փողոցում,- հիշում է Դ. Դեմիրճյանը, ապա անմիջապես անցնում

¹² Նույն տեղում, էջ 6:

¹³ Հմմտ. Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., 1974, էջ 20:

բանաստեղծի արտաքին նկարագրությանը:– Արագ, մեծ քայլերով գնում էր նա...: Մուգ դեղնագույն վերարկու ուներ հագին, նույն կտորի հաստ հետնագոտիով, ահագին մի ձեռնափայտ՝ առանց գլխի: Սև շլապան հովանի էր անում կիսաժպտուն, երազալից դեմքին»¹⁴:

Հուշերում նկարագրական խոսքը հեղինակը հյուսում է՝ կիրառելով լեզվառճական այնպիսի հատուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցվածքային միավորներ, բառա-շերտեր, որոնք ընդգծում են՝ ա. հուշագրության ժանրային տիպը, բ. բնորդի արտաքին հատկանիշները, գ. գործողություններն ու արարքները, դ. ուղղակի (կամ անուղղակի) խոսքը և այլն:

Հուշ-դիմանկարները սովորաբար սկսվում են «առաջին անգամ տեսա/ծանոթացա», «առաջին հանդիպում /ծանոթություն», «ճանաչում էի», «հիշում եմ»¹⁵ քերականական կառույցներով, որոնք հաստատապես կարելի է համարել հուշագրությանը բնորոշ կաղապարային միավորներ: Ուշագրավ է, որ Հ. Թումանյանին նվիրված հուշ-դիմանկարներում հեղինակները քանիցս առիթ են ունեցել շփվելու և հաղորդակցվելու բանաստեղծի հետ, սակայն որոշակի օրինաչափությամբ գրեթե բոլորն իրենց հուշերը շարադրում են մատնանշելով և ընդգծելով առաջին հանդիպումը: Մ. Արագին հուշագրում է. «Հ. Թումանյանի հետ շատ հանդիպումներ եմ ունեցել, բայց հիշողությանս մեջ մի առանձին հմայքով տպավորվել է իմ առաջին հանդիպումը և ծանոթությունը բանաստեղծի հետ 1897 թվականին Դսեղում»¹⁶:

¹⁴ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 22:

¹⁵ Հուշագրական բնագրերում կարևորվում են *հիշել* բայի իմաստաշարահյուսական հատկանիշները:

¹⁶ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 521:

Բնագրի սկզբնամասում հուշագիրները կերպարանագծում են Հ. Թումանյանի դիմանկարը՝ արտաքին բարեմասնությունների հաշվառումով՝ երբեմն առանձնացնելով նրա աչքերը, դեմքը, ժպիտը, հայացքը, կազմվածքը, ձայնը, քայլը, մատները, մորուքը և այլն. «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից... Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա»¹⁷:

Բնորդի դիմանկարն ամբողջանում է ոչ միայն գոյականական միավորներով՝ աչք, դեմք, ժպիտ, մազեր և այլն, այլև դրանց բնութագրական ածականներով. Հաճախադեպ են Ա + Գ (ածական + գոյական) կաղապարի կիրառությունները. «Թումանյանն այդ ժամանակ մի վառվռուն, ուրախ, ժպիտը միշտ շրթունքներին, գանգրահեր, բարձրահասակ երիտասարդ էր»¹⁸: «Ու վ չէր ճանաչում Թիֆլիսում Հովհաննես Թումանյանին՝ բարի ժպիտը դեմքին, արծաթագույն մազերով, բարձր հասակով, սև թիկնոցով, լայնեզր գլխարկը գլխին»¹⁹:

Հուշերում Հ. Թումանյանին տեսնում ենք Թիֆլիսում, Էջմիածնում, Դսեղում, Վանում և այլուր: Գործողությունները հաջորդում են միմյանց, որոնց կենտրոնում Թումանյանն է, և որոնք դառնում են բանաստեղծի դիմա-նկարի ձևավորման մյուս տարրերը: Հետաքրքրական է և նույնիսկ կարևոր, թե հուշագիրը ե՞րբ և որտե՞ղ է հանդիպում բնորդին: Այս դեպքում տարածաժամանակային ընդգծումը նորովի է բացահայտում մարդ, բանաստեղծ, ազգային-հասարակական գործիչ Հ. Թումանյանին:

Դիմապատկերներում փոխվում են լեզվական բնութագրիչները. եթե Թիֆլիսում, Լոռիում բանաստեղծի դիմանկարը կերտվում է առավելաբար արտաքինի նկարա-

¹⁷ Նույն տեղում, էջ 7:

¹⁸ Նույն տեղում, էջ 387:

¹⁹ Նույն տեղում, էջ 708:

գրություններով՝ գործածվելով գոյականների և ածականների համապատասխան բառափնջեր, որոնք երբեմն զուգորդվում են ներքին հատկանիշներով, ապա Վանում և Էջմիածնում հուշագրի համար առաջնային են դառնում բա-նաստեղծի ներաշխարհի հուզականային դրսևորումները: Օրինակ՝ արտաքին աշխարհի հոգեկան արձագանքների արտահայտության ենք հանդիպում Ս. Ջրբաշյանի հուշերում: Վանում մոտիկից ծանոթանալով տեղի բնակչությանը՝ Թումանյանը «հիանում էր այդ հերոսաբար մարտնչող ու լույսի ձգտող մի բուռ ժողովրդով, հուզվում էր, քաջալերում, գովում, զարմանում...»²⁰:

Ամենայն հայոց բանաստեղծի ինքնանվիրումը հատուկ ընտրանքով առանձնացված բայերի համակուտակման միջոցով է բնութագրում նաև Վ. Թոթովենցը. «Թումանյանը վազում էր կետից կետ, վրանից վրան, խմբից խումբ... Կարգադրում էր, հրամայում, հայհոյում, կշտամբում, ժպտում, շոյում, զայրանում»²¹:

Հուշագիրների ստվար մասը տևական հիշողության մեջ եղած մտապատկերներով ներկայացնում է նաև ծնողների դիմանկարը²², որ լավագույնս կերտել է Հովհ. Շիրազը «Մի փետուր իմ արծիվ կյանքից» հուշագրության մեջ: Այն գծվում է համեմատությունների յուրահատուկ կուտակումով. «Մայրս հեզ էր, նույնիսկ հեզիկ ու ծայրաստիճան ինքնամփոփ ու մենասեր, քնքուշ, ինչպես հով, երկչոտ, ինչպես սարի եղնիկ, սիրելի, ինչպես թփերի տակ քաշված լացակումած աչքերով մանուշակ: Հայրս նույնպես բարի ու մեղմախոս էր, ինչպես

²⁰ Նույն տեղում, էջ 679:

²¹ Նույն տեղում, էջ 136:

²² Ըստ անալիտիկ հոգեբանության հիմնադիր Կ. Յունգի՝ հուշագրությունը շարադրելիս դուրս են լողում մոր, հոր մասին մտավոր պատկերացումներ, որոնք մարդկային հոգեկերտվածքի և փոխհարաբերություններին բնորոշ արքեսիպներ են: Վերջիններս հիշողություններ են, որոնք ինչ-որ ժամանակ ձևավորվել են, բայց հետագայում ճնշվել են կամ մոռացվել:

Շիրակի դաշտերի հովերը, բայց երբեմն խիստ, ինչպես Արագածի ձմռան շունչը»²³։ Ինչպես ասում են, այս դիմանկարում համեմատությունները թափվում են «առատության եղջյուրից»։

Խոսքային իրադրությունը հուշագիրներից պահանջում է կիրառել ժամանակային տարբեր հարաբերություններ։ Նրանք գործածում են «Մի փոքր առաջ ընկնելով՝ պիտի նշեն», «Ասեմ՝ դեպքից առաջ ընկնելով», «Մի փոքր հետ գնալով՝ ասեն», «Ժամանակը մի փոքր հետ եմ շրջում» կառույցները, որոնք ներկայացնում են այս ժանրատեսակի ժամանակային տարբեր հարաբերություններ։

Կառուցվածքային հետաքրքրական ձև ունի Ն. Թումանյանի «Հուշերը...»։ Երբեմն հեղինակային խոսքն ընդմիջվում է «Աշխեն Թումանյանի հուշերից» կամ «Մայրս է պատմել» խորագրերով։ Նման մեջբերում-խոսքերը ավելի բազմաբովանդակ և հետաքրքրական են դարձնում պատումի ընդհանուր շղթան, այն հավելում լրացուցիչ փաստերով ու մեկնաբանություններով։

Նկատելի է, գեղարվեստավավերագրական խոսքը՝ որպես գործընթաց, ծավալվում է ժամանակի որոշակի հատվածներում։ Ֆրանսիացի փիլիսոփա Պ. Ռիկյորը նշում է, որ պատումի ժամանակը միշտ էլ հարբերակցվում է մարդուն՝ ներկայացնելով նրան հուշագրության տարբեր իրավիճակներում։ Երբեմն դեպքերի փոխհաջորդականությունը օգնում է հասկանալու նրանցից յուրաքանչյուրի իմաստը²⁴։

Հուշագրական պատումը կարող է ընդգրկել տվյալ պահի համեմատ ինչպես նախկինում տեղի ունեցած դեպքեր, այնպես էլ առաջ ընկնել և պատկերել դեպքեր, որոնք ունեն կատարվելիք իրադարձությունների արժեք։ Երբեմն հուշագրա-

²³ Հ. Շիրազ, *Մի փետուր իմ արծիվ կյանքից*, Ե., 1984, էջ 7։

²⁴ Paul Ricoeur, *Time and Narrative*, vol. 1 (Chicago: Universiti of Chicago Press, 1984).

կան հատվածի վերջաբանը ընթերցողին հուշում է, որ հետագա պատումներում մենք դեռ հանդիպելու ենք այդ բնորդին: Այսպիսի դեպքի հանգամանքը ենթադրում է ավելի ուշ կատարված իրադարձությունների ներմուծում հուշագրության խոսքաշղթայում (անախրոնիան կոչվում է *պրոլեպսիս*): Պրոլեպսիսի ժամանակ պատմողն առաջ է ընկնում տվյալ պահի դեպքերից և երբեմն *ծանուցման* ձևով ընթերցողին նախապատրաստում է գալիք դեպքերին: Նշենք, որ պատմողի կողմից դեպքերի կանխավ հիշատակումը չի արվում ինչ-որ դրվագներ բաց թողնելու նպատակով: Պրոլեպսիսը բնորոշվում է իբրև *անհամբերության* կամ *նոստալգիկ սպասման* արտահայտության շարադրույթ: Ենթադրվում է, որ պատմողը, նախապես իմանալով ավարտը, մատնում է գալիք դեպքերը՝ դրանով իսկ խախտելով հուշագրության ժամանակային սահմանները. «Դեպքը պատահեց... Մակայն համբերո՛ղ եղիր, ընթերցո՛ղ, այդ մասին հետո»²⁵:

Հուշագրությունը շրջասույթների շտեմարան է: Հուշագրության լեզվատիրություն *Ամենայն հայոց բանաստեղծ* շրջասույթի ձևավորման հիմքերն են նախանշված: Անշուշտ, չենք կարող շրջանցել այն փաստը, որ 1915թ. գաղթականության հիմնական պատսպարանը եղել է Էջմիածինը, որը դարեր շարունակ բացառիկ դեր է կատարել պետականություն չունեցող ժողովրդի համար, ինչը գնահատել են ժամանակի առաջադեմ գործիչներն ու մտավորականները: Բացառություն չէր նաև Թումանյանը: Նա իր ողջ կյանքում մեծապես առնչվել է հոգևորականության հետ²⁶:

Տարագիր և հայրենագուրկ հայության հավաքատեղի Էջմիածնում են տեղի ունենում հայոց երկու մեծերի՝ Հ. Թումանյանի և Գևորգ V կաթողիկոսի հանդիպումն ու հայտնի

²⁵ Վ. Փափագյան, *Հետադարձ հայացք*, 1, Ե., 1979, էջ 46:

²⁶ Նայ եկեղեցու հետ կապն առաջին հերթին պայմանավորված է եղել հոգևորական հայր ունենալու հանգամանքով:

երկխոսությունը: Այս առումով կարևորվում են ժամանակակիցների հուշագրական պատումները՝ Նվարդ Թումանյան, Աշոտ Պատմագրյան, Վահան Թոթովենց, Ստեփան Զորյան, Վարդգես Ահարոնյան և այլք:

Հայտնի է, որ բանաստեղծի կողքին այդ պահին եղել է դուստրը՝ Նվարդը, որը նույն օրվա մասին, ինչպես մյուս հուշագիրները, պատմությունը սկսում է օգոստոսյան այդ ծանր զիջերվա նկարագրությամբ. փոթորիկ, կայծակ, որոտ, հորդառատ անձրև. բաց երկնքի տակ մնացած գաղթականություն: Ուսանողներ Լևոն Լիսիցյանի, Լյայա Աճեմյանի, Ալեքսանդր Բարխուդարյանի ուղեկցությամբ Թումանյանը շտապում գաղթականությանը շենքերում պատսպարելու: «Առաջին հերթին նա նկատի ուներ վեհարանի նոր, կիսավարտ շենքը,- գրում է Ն. Թումանյանը,-որ կաթողիկոսը մերժել էր գաղթականությանը հատկացնել: Հայրիկը գայրացած էր: Հակառակ կաթողիկոսի արգելքին՝ նա գաղթականությանը տարավ դեպի նոր վեհարանի շենքը... Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին...

Ամենայն հայոց կաթողիկոսին դուր չէր եկել, որ հայրիկը կառուցվող վեհարանը դարձրել էր գաղթականների ապաստարան: Հետևյալ օրը հայրիկին կանչում է իր մոտ բացատրության այդ ինքնակամ արարքի համար. չէ՛ որ ինքը արգելել էր: Հայրիկի բացատրությունը չի գոհացնում կաթողիկոսին, և նա հիշեցնում էր՝ «Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ», հայրիկն էլ պատասխանում է՝ «Գիտե՞ք, որ ես էլ Ամենայն Հայոց բանաստեղծն եմ»»²⁷:

Վստահաբար կարող ենք ընդգծել, որ և՛ Ամենայն հայոց կաթողիկոսի, և՛ Ամենայն հայոց բանաստեղծի վարմունքի մեջ որևէ դիտավորություն չի եղել: Ժամանակակիցները վկայում են, որ հայոց հովվապետը մշտապես իր ժողովրդի կողքին է եղել և ծառայել գաղթականներին ու կարոտյալներին: Սակայն

²⁷ Ն. Թումանյան, *Հուշեր և գրույցներ*, Ե., 1969, էջ 130-131:

սկզբունքորեն դեմ է եղել դեռևս կիսավարտ վեհարանի շահագործմանը: Պատճառներից մեկը կարող էր լինել այն կարևոր հանգամանքը, որ շենքը տակավին օրհնված չի եղել, մի բան, որ գուցե հոգևոր առաջնորդի համար էական նշանակություն է ունեցել: Կամ կաթողիկոսը փորձել է պաշտպանել ճեմարանի սաներին՝ տարածված ժանտախտից: Սակայն Ամենայն հայոց բանաստեղծը անդդովելի էր. նա անօթևան մնացած գաղթականներին օգնելու համար անում է հնարավորն ու անհնարին:

Հուշագրության լեզվում դիպուկ արտահայտություն է *XX դարի երեք մեծ հասակակիցներ* շրջասույթը, որը բնութագրում է 1908 թվականին ծնված Վազգեն Առաջինին, Վիլյամ Սարոյանին, Վիկտոր Համբարձումյանին: Երջանիկ զուգադիպությամբ երեք հայորդիներն էլ ծնվել են Կույս համաստեղության ներքո:

Հուշագրության մի հատկությունն է, որը, կարծում ենք, հետաքրքրական նշանակություն կարող է տալ մեր վերլուծություններին: Մասնագետները նշում են, որ հուշեր գրելը այսպես կոչված «թերապևտիկ» ազդեցություն կարող է ունենալ: Հայ գրող Վ. Ալազանը հիվանդության ծանր շրջանում հոգեկայարդաբան պրոֆ. Գրոյի խորհրդով զբաղվել է հուշագրությամբ, որը թուլացրել է պրկված նյարդերը, առողջություն պարգևել նրան²⁸:

Ամերիկացի հոգեբան Ջերի Վաքսլերը փոքր տարիքից օրագիր է պահել և գրառել իր մտքերը: Հոգեբանը տարիներ անց հիշում է, որ բառերի հորդումը թղթի վրա հանգստացրել է

²⁸Սա արտամղման երևույթ է, որն ըստ Զ. Ֆրոյդի, Էս-ի (եզոյի) պաշտպանական մեխանիզմներից է, որի շնորհիվ գիտակցության ոլորտից ենթագիտակցության ոլորտ են մղվում հագեցած բովանդակություններ, հիշողություններ և այլն: Ֆրոյդը համարում է, որ արտամղված մտքերը չեն կորցնում իրենց ակտիվությունը անգիտակցականում և դրանց պոթելման կանխարգելման համար պահանջվում է հոգեկան էներգիայի մշտական ծախս (Տե՛ս Զ. Ֆրոյդ, *Հոգեվերլուծության ներածություն*, Ե., 2002, էջ 27):

104999
իր խառնված մտքերը, խաղաղեցրել իրեն: Հոգեբանը համարում է, որ երբ գրում ես հոգու խորքից, բացահայտում ես ինքդ քեզ, ավելի հստակ ես տեսնում ամեն ինչ: Ըստ նրա՝ ճանաչված մարդկանց հուշերը հասարակության մեջ կարող են հեղափոխության նման մի բան առաջացնել: Կյանքի պատմություն գրելով՝ ըստ էության կարելի է տեսնել մարդու գործունեության սահմանները, հասկանալ նրա էությունը և մտքի կառուցվածքը: Ջերի Վաքսլերը համարում է, որ խճճված մտքերը հուշերում ըստ էության ձևավորվում են խճանկարի հատվածների պես: «Հուշեր գրելը բուժման միջոց է», - եզրակացնում է հոգեբանը:

Galstyan Ashot- Some Issues of the Linguistic Structure of Memoirs. Summary-The memoirs are a reminder of past persons and events of interest. This genre includes many species, of which memorial portraits stand out linguistically and structurally. Ultimately, the memoirist has a subjective approach. He depicts only portraits of people who were associated with him, and sometimes does not show absolute objectivity. Portraits in memoirs are summarized according to several principles, the most important of which, perhaps, is the first impression of the memoirist. Memorial portraits usually begin with the grammatical structures 'I first saw', 'First acquaintance', 'I remember', which can definitely be considered model units typical of memoirs. The speech situation requires from the memoirists to apply different temporary relationships. Memoirs are a collection of paraphrases.

Галстян Ашот- Некоторые вопросы языковой структуры мемуаристики. Резюме-Мемуары.- Мемуары-память о представляющих интерес лицах и событиях прошлого. Этот жанр включает множество видов, из которых в языковом и структурном отношении выделяются мемуарные портреты. В конечном счете мемуарист имеет субъективный подход. Он изображает только портреты людей, которые были связаны с ним, а иногда проявляет не абсолютную объективность. Портреты в мемуарах обобщаются согласно нескольким принципам, наиболее важным из которых, возможно, является первое впечатление мемуариста. Мемуарные

портреты обычно начинаются с грамматических структур «первые увидел», «первое знакомство», «помню», которые определенно можно считать модельными единицами, типичными для мемуаров. Речевая ситуация требует от мемуаристов применения разных временных отношений. Мемуары представляет собой набор парафраз.

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ
«ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-ՈՒՄ

Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ում¹ Հին և Նոր կտակարանների նյութը մեկնում է տաալ զլուխների մեջ՝ Գիրք ծննդոցից մինչև Հովհաննու Հայտնություն, այսինքն՝ Աստվածաշունչն ամբողջությամբ, ուստի անսպասելի չէ, որ Տաթևացու սուրբգրային ամբողջական այս շարադրանքում հիմնականում առկա են Աստվածաշնչում հիշատակվող հատուկ անունները:

Տաթևացին անդրադառնում է դրանցից շուրջ 370-ին (ճնշող մեծամասնությունը), իսկ իր մեկնությամբ բերում գրեթե 240 նոր անուններ, որոնք կա՛մ Աստվածաշնչի առաջին մեկնիչներն են, կա՛մ սուրբ հայրերը, կա՛մ նկարագրվող իրադարձությունների մասնակիցներ, որոնց անունըՄուրբ Գիրքը չի տալիս: Կա նաև առանձին մեծ խումբ, որոնք քրիստոնեության ակունքներում կանգնած հայազգի գործիչներն են, սրբերը, շարականագիրները, ընդհանուր առմամբ քրիստոնեության կերտողները Հայաստանում:

Զգալի թիվ են կազմում նաև տեղանունների և տոների անվանումները, ինչպես նաև կրոնական արարողակարգերի, շարականների, ծիսակարգերի հատուկ անունները²:

«Գիրք հարցմանց»-ի շարադրանքը հեղինակը սկսում է ընդհանուր դավանաբանական հարցադրումներ կատարելով, ապա անցնում Հին և Նոր կտակարանների քննությանը: Առանձին գլխով հեղինակն անդրադառնում է հայ եկեղեցու

¹Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729 թ.:

²Քանի որ հնարավոր չէ տալ տողատակի շուրջ 240 հղում, ուստի բնագրային հղումներն անհրաժեշտաբար բերվում են տեղում:

պատմությանը, հայոց եկեղեցու առանձնաշնորհներին, մեր շարականներին և շարականագիրներին և ինչպես ասացինք՝ ընդհանրապես քրիստոնեության կերտողներին Հայաստանում: Վերոնշյալ բաժանումներով էլ ներկայացվում են հատուկ անունների քննությունը և ցանկերը՝ համապատասխան բնագրային հղումներով՝ հաշվի առնելով, որ դրանք պարունակում են զանազան պատմական իրադարձությունների հետաքրքրական մանրամասներ և տեղեկություններ և իրենց մասին խոսում են ինքնին: Այսպես օրինակ՝ անդրադառնալով Քաղկեդոնի ժողովի նախաձեռնողներին և դրդապատճառներին՝ Տաթևացին միայն այդ դրվագում հիշատակում է շուրջ երկու տասնյակ անուններ. «Հինգերորդ, յերկրորդ ամի թագաւորութեանն մարկիանոսի եղև ժողովն քաղկեդոնի: Ձի պողքեր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՝ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՝ էր մկրտեալ:

Եւ էր սիրելի փլաբիանոսի. և լտնի. և թէոդորիտոսի գորս նգովեցին յեփեսոս. և վասն նոցա վրէժխնդրութեանն արարին ժողով ուլգ եպիսկոպոսաց. և ընկալան գթողթն լտնի. և զնգովեալն յեփեսոս զփլաբիանոս ընկալան. և զթէոդորիտոս եղին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհւոյն և թագաւորին. և զդէսկորոս հայրապետն աղէքսանդրոս, և զպետրոս անտիոքոս, և զտիմոթէոս և զանատօլ, և զայլս բազումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: Եւ յետոյ բազումք զղջացան և ասացին, պատահեցաք զկանոնս հաւատոյ: Եւ գրեցին ապաշխարութեամբ խոստովանութիւն. և եղին ի տապանին դադայ՝ յեկեղեցւոջ սուրբ վկային դէմետրեայ: Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և զնացին ի քաղկեդոն, զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս. և նոքա զամենայն ինչ ծածկապէս տեղեկացան. զի ժողովեալքն ի քաղկեդոն ակն առին թագաւորին և կնոջ իւրոյ. և զարհուրեցան ի սպառնալեացն. և զնեստորի կարծիսն

հաստատեցին. զերկու բնութիւնսն. և զերկու կամսն. և զերկու ներգործութիւնսն: Բայց միայն զի խաբէութեամբ աստուածածին ասացին զկոյսն սուրբ: Եւ զնեստոր նգովեցին: Եւ յոլովք ի զիտողացն ասացին, թէ հաւատք զնեստորին հաստատէք զնա ընդէ՞ր նգովէք: Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: Եւ պետրոս անտիոքոս պատրիարզն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նգովեցին զհաւանեալսն մարկիանոսի: Եւ սուրբն սիմէոն սիւնակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՝. և նգովեաց զթղթատարն որ էր թեոդորիստոս գլուխ ժողովոյն: Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարեաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինւածն. և արգելաւ Հոգին Սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւագան մկրտութեան: Եւ զայլամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայէլի»³:

Կամ՝ հինկտակարանյան մեկնության մի հատվածում խոսելով նախահայրերի մասին՝ Տաթևացի հակառե՝ հանվանէ թվարկում է նրանց կանանց անունները՝ լրացուցիչ հետաքրքրություն հաղորդելով շարադրանքին, որտեղ էլ առկա են հինգ տասնյակից ավել հատուկ անուններ. «Ադամայն Եւա՝ Մեթայն Ազերա՝ Ենովսայն Նուենա՝ Կայնանայն Մադադեդա՝ Մադադիէլին Դինա՝ Յարեղին Բառաքա՝ Ենովքայն Յադներա՝ Մաթուսադային Յեդնա՝ Ղամեքայն Բեդհա՝ Նոյին Ջարա՝ Մեմայն Դեզէկ Ալիփաթա՝ Արփաքսաթայն Ռաբուլիա՝ Մադային Սուքա՝ Եբերայն Ջուրա՝ Փադեկայն Դուբնա՝ Ռագաւայն Սուրա՝ Մերութայն Մելքա՝ Նաքովրայն Յեքքա՝ Թարային Յեդնա՝ Աբրահամուն Սառա՝ Իսահակայն Ռեբեկա՝ Յակոբայն Ռաբէկ և Լիա՝....Իսկ դ կանայքն որք խառնեցան յօրհնութեան ազգն Իսրայէլի, Թամար՝ որ ծնաւ զՓարէս ի Յուդայէ՝ Ռահաբ՝

³Գրիգոր Տաթևացի, *նշվ. աշխ.*, էջ 542-543:

որ ծնաւ զԲոյոս ի Սաղմանայ: Հռութ՝ որ ծնաւ զՈւրբէ՝ ՚ի Բոյոսայ: Բերսաբէ՝ որ ծնաւ զՍողոմոն ի Դաւթայ»⁴:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում շարականներին նվիրված գլուխը, որտեղ Տաթևացին կատարում է պատմական ակնարկ, թե որ շարականը երբ է գրվել և ում կողմից: Այստեղ էլ հիշատակվում են երկու տասնյակից ավել շարականագրի և շուրջ վեց տասնյակ շարականների անվանումներ:

«Նա ի՞ Մեծն Մեսրոպ *զկարգն ապաշխարութեան*. և Սուրբն Սահակ *զաւագ շաբաթեանն*:

Սովսէս քերթողն *զծննդեանն, և զմեծացուցէքն, և զտեառնընդատաջին, և զփռիման առաջին պատկերն*: Այլ և *զկարգն յարութեան* սորա է ասացեալ *մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին*: Իսկ այլք ասեն թէ անանիա շիրակունին է ասացեալ:

Եւ *զպէնտակոստէին, և զվարդավառին, և զսուրբ գրիգորին և զյովհաննուն, և զմարգարէիցն, և զվարդանանցն, և զառաքելոցն, և թագաւորացն, և զանտօնին*: Չայս ամենայն ոմանք անանիայի տան. և ոմանք խորենացոյն: *Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, յոհան օձնեցին*: *Զեռիփսիմեանց անձինքն և զհարցն տէր կումիտասն*: Եւ *զանսկիզբն, յոհան մանդակունին*: Եւ այլք ասեն թէ օձնեցին: *Զհանգստեանն, և զմարտիրոսացն, պետրոս գետադարձն*:

Եւ *զբագումս ՚ի մանկտեացն*:

Զխաչին և զէկեղեցոյ, սահակն որ զնաց ընդ դէմ տաճկաց:

Զգորս ըստ պատկերին, զրիգոր մագիստրոսն:

Զաւագ օրհնութիւնքն զեօթն ձայնիցն, ստեփաննոս սիւնեցին:

Եւ *զվառին* ներսէս կլայեցին:

Այլև *զաղցից կիրակէիցն, և զնինուէացոցն, և զծաղկազարդի հարցն, և զհոգւոյ զալստեան դ պատկերն, և զվարդավառի ր*

⁴Գրիգոր Տաթևացի, նշվ. աշխ., էջ 299-300:

պատկերն, և զփոխման Բ պատկերն, զհրեշտակապետացն, և զեօթանասնիցն, զղնոնդեանցն, զմարգարէից զձ հարցն, և զյովհաննու զձ հարցն, զնորահրաշն, զնայեա՝ սիրովն, զի քէն հայցեմքն զարևագալին շարականերն, զօրհնեմք զքեզն, զայսօր անձառն, զարարչականերն, զաստուած անեղն, և յոմանց լուսաբ թէ զսուրբ յակոբին այլ: Ձայս ամենայն մեծն ներսէս է ասացեալ կլայեցին:

Իսկ զայսօր յարեաւն, զնորոգեալ կղզիքն, և զթոռանցն, ներսէս լամբօնացին:

Իսկ զխորհուրդն անձառ, և զմեծաւորաշն, զրիգոր վկայասերն:

Իսկ զարեգականն, զրիգոր սկիւտացին:

Ջերգեցէքն, տէր յակոբ կլայեցին: Եւ զոր նախ իմացն, զի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և զսուրբ սարգսի օրհնութիւնն, վարդան վարդապետն:

Իսկ զներսէսին մեծի, և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն:

Եւ զղնոնդեանց մանկունքն զձ, սարկաւագ վարդապետն որ ի հաղբատ:

Եւ զսրբութիւն սրբոցն խաչի, ստեփաննոս սիւնեցին»⁵:

Հայտնի է, որ Տաթևացի անձամբ է դասավանդել երգ և երաժշտություն, ինչով և բացատրվում է «Գիրք հարցմանց»-ում նրա կողմից այսչափ մանրամասն տեղեկատվությունը: Ավելին, հեղինակը նույնքան մանրամասն տեղեկություն է տալիս երաժշտական ձայների և նրանց հեղինակների մասին, որտեղ էլ հիշատակվում են երկու տասնյակ հատուկ անուններ. «Ո՞րք գտին զձայնս: Պատասխանի: Ասեն եթէ՝ ստեփաննոս ոմն երաժիշտ զամենայն ձայնս զոյից բաժանեաց իզ. որք են, բառաչել, կառաչել, խխնչել, և այլն նմանապէս: Եւ ստեփաննոսս այս՝ արար գործիք իզ որիշ որիշ. և նոքօք երգէր: Իսկ թիմգիանոս՝ արար մի գործի և իզ աղի: Եւ յետ սորա թովնաս երաժիշտ՝ այլակերպ յօրինէր գործի. որ զամենայն կենդանեաց ձայնս նովաւ երգէին:

⁵Գրիգոր Տաթևացի, *նշվ.աշխ.*, էջ 637-638:

Իսկ յետ սորա՝ Մինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՝ գտեալ արուեստից:

Փոկեղեղէս եղբայր նորա՝ արար զերկրորդ ձայնն ի դարբնականէ.. ապա՝ Մովեկղիղէս եղբայր սոցա եգիտ զերրորդ ձայնն ի հոսանաց. ապա Պապիանոս քեորդի սոցա՝ արար զչորրորդ ձայնն ի ծփանաց ծովու:

Եւ ապա քինոսփէնէս հմուտ ձայնից զազանաց և թոշնոց, զատուցանէ՝ զկողմն առաջին ձայնին: Ապա՝ աքիլէս, զատուցանէ՝ զկողմն երկրորդ ձայնին որ կոչի աւագ կողմն: Եւ զերրորդ ձայնին որ կոչի վառ:

Ապա նոմինոս, զատոյց զկողմն չորրորդ ձայնին. որ է՝ վերջին: Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն որ ուսաւ ի ծովային կենդանեաց:

Եւ թեովիլեանք ոմանք կոչեցեալք, արարին զերկու ստեղունս ասացեալ. և այսպէս աւարտեցաւ ժ ձայնքն:

Եւ զայսոսիկ հոգեխառնեաց դաւիթ և ուսոյց երգեցողացն: Ասափ և Դիթամ ցնծղայիւք երգէին: Զաքարիա Միմա Ելիա Մովսէս տաւօք երգէին: Բանէաս, Մանէոն և այլքն քնարօք երգէին: Անանիաս, Եղիազար փողովք երգէին: Եւ ոմանք առանց գործեաց երգէին»⁶:

Հեղինակը երբեմն բերում է հատուկ անունների բառարանային բացատրություններին համընկնող ստուգաբանություններ. «Ադամ՝ երկիր: Մեթ՝ ջրարբ. կամ մոռացումն չարի: Ենովս՝ մարդ ընտրեալ: Կայնան՝ ստացուած ընտրեալ, օրհնեալ աստուած: Յարեղ՝ վերհայեցումն աստուծոյ: Ենովք՝ շնորհ: Մաթուսաղա՝ առաքումն: Ղամե՝ք տառապանք: Նոյ՝ հանգիստ: Մեմ՝ կատարեալ: Յաբեթ՝ գեղեցկութիւն: Քամ՝ իշխեցօղ: Քանան՝ դառնացօղ»⁷:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի պատմագիտական արժեքը հայագիտության համար մեծ է ոչ միայն այն

⁶Գրիգոր Տաթևացի, *Նշվ. աշխ.*, էջ 640:

⁷Գրիգոր Տաթևացի, *Նշվ. աշխ.*, էջ 299:

առումով, որ այն միջնադարյան գիտելիքների յուրահատուկ հանրագիտարան է, այլև այն պատճառով, որ բազմաթիվ ոլորտների ուսումնասիրողների համար այն սկզբնաղբյուրի արժեք ունի: Այս իմաստով, չափազանց հետաքրքրական են հայ եկեղեցու պատմության նրա վերլուծությունները Աբգար թագավորից մինչև իր օրերը: Անդրադառնալով քրիստոնեության ընդունման կարևորագույն դրվագներին՝ քրիստոնեության դավանաբանական հիմքերը, ընդհանրական եկեղեցու պատմությունը մանրամասն ներկայացնելուց հետո, Տաթևացին կատարում է պատմական եկեղեցական ժողովների, հայ եկեղեցու պահպանողական վարքագծի վերլուծական հսկայական աշխատանք: Հիշատակվող հայազգի գործիչների անուններն այստեղ շուրջ չորս տասնյակ է, որոնք բերվում են ստորև. ԱԲԳԱՐ - Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին,. զի Աբգար թագաւորն հայոց նախքան զիաչն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - Գ.Հ - 549

ԱԳԱԹԱՆԳԵՂ - Եւ յա՛յտ է զի ագաթանգեղ, (յայնժամ լուաւ տրդատ եթէ հաւատաց ի քրիստոս կոստանդիանոս որդին կոստայ:) - Գ.Հ - 549.

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒՆԻ - Իսկ այլք ասեն թէ անանիա շիրակունին է ասացեալ: - Գ.Հ - 637.

ԱՐԻՍՏԱԿԷՍ - Եւ Պատրիարգունք էին անդ, Արիստակէս հայոց: - Գ.Հ - 542.

ԱՐՁԵՒԱՆ - Եւ Արջևան և Կորին թարգմանիչք բերին ի Հայս: - Գ.Հ - 658.

ԳԱՆԶԱԿԵՑԻ - Որպէս գանձակեցին գրէ ընթերցուածոց մեկնիչն: - Գ.Հ - 651.

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - Որպէս եղիայի. պօղի և անտոնի. և մերոյ լուսաւորչին Գրիգորի: - Գ.Հ - 220.

ԳՐԻԳՈՐ ՍՄԳԻՍՏՐՈՍ - Գրիգոր մագիստրոսն ի տարօնեկեղեցի է շինեալ. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եղեալ: - Գ.Հ - 639.

ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՌԱՅԻ - Հնգետասաներորդ՝ ի մէջ զիշերի՝ է յարութիւնն. որպէս ասէ ոսկեբերանն ի յարութեան ճառին, և

սուրբն նիսացին, և բարսեղ կեսարացին, և գրիգոր սկևռացին,
և այլք, - Գ.Հ - 514.

ԳՐԻԳՈՐ ՎԿՅԱՍՏԵՐ - Իսկ զխորհուրդն անճառ, և զմեծա-
հրաշն, գրիգոր վկայասերն: - Գ.Հ - 638.

ԳՐԻԳՈՐԻՈՍ - Իսկ հինգերորդ ժողովն եղն ի վիճակս
գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: - Գ.Հ - 545.

ԵԶՆԱԿ - Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի հայս պատմեցին
զամենայն ստուգութեամբ: - Գ.Հ - 543.

ԵԶՆԱԿ ԿՈՂԲԱՅԻ - Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի
թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնու-
պոլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի
ի ճանապարհէն որով գային ի Հայս. - Գ.Հ - 543.

ԵԶՆԿԱՅԻ ՊԼՈՒԶ ՎԱՐԴԱՊԵՏ - Հայր և Որդի և Հոգին սուրբ.
այսպէս ի մարդն միտքն բանն հոգին. ըստ եզնկացոյ պլուզ
վարդապետին: - Գ.Հ - 271.

ԵԶՐ - Ա՛րդ՝ եթէ ելանէ ի հօրէ և յորդոյ, լինի իբրն եզր և գ. և՛
ո՛չ իբրն զմիջին: - Գ.Հ - 64.

ԵԶՐ ԴՊԻՐ - Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի
բաբիլօնէ՛. այսինքն կիրոսիս սաղմանասարաւ. դարեհիւ
զօրաբաբէլ. արտաշէսի եզր դպիր և նէմի: - Գ.Հ - 448.

ԼՈՒՍԱՒՈՐԻԶ - Լուսաորիչն գրիգոր ի հոռմայ զահիցն
պատեցաւ: - Գ.Հ - 639.

ԽՈՍՐՈՎ - Իսկ խոսրով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ
էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - Գ.Հ - 658.

ԽՈՐԵՆԱՅԻ - Զայս ամենայն ոմանք անանիայի տան. և ոմանք
խորենացոյն: - Գ.Հ - 637.

ԿՈՐԻԻՆ - Եւ Արջևան և Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս: -
Գ.Հ - 658.

ԿՈՒՄԻՏԱՍ - Զհոփփսիմեանց անձինքն և զհարցն՝ տէր
կումիտասն: - Գ.Հ - 637.

ՄԱՇՏՈՑ - Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն սրբոյն
գրիգորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - Գ.Հ - 544.

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ – Երանելին մովսես խորենացի, որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ ճժ ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - Գ.Հ - 658.

ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՕՂ – Մովսես քերթօղն զծննդեանն, և զմեծացուցեքն, և զտեառնընդառաջին, և զփոխման առաջին պատկերն: - Գ.Հ - 637.

(Մեծն) ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ – Ո՞րպէս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տնկեաց և զտունկս իմանալեաց: - Գ.Հ - 221.

(Մեծն) ՄԱՀԱԿ – Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. զկնի է երորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - Գ.Հ - 544.

(Մեծն) ՎԱՐԴԱՆ – Այլ և զկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին: - Գ.Հ - 637.

ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՅԻ – Զերգեցեքն, տէր յակոբ կլայեցին: - Գ.Հ - 638.

ՅԱԿՈԲ ՄԾԲՆԵՅԻ – Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և զեօղն-արկուտի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - Գ.Հ - 295.

ՅՈՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ – Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղգմայ. և զգիրք. և զկնուսք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց զ ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ. - Գ.Հ - 659.

ՅՈՀԱՆՆ ՈՐՈՏՆԵՅԻ – Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի լոյս: - Գ.Հ - 773.

ՅՈՀԱՆՆԷՍՂԼՈՒԶ – Իսկ զներսեսին մեծի, և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն: - Գ.Հ - 638.

ՅՈՀԱՆ ՕԶՆԵՅԻ – Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, յոհան օձնեցին: - Գ.Հ - 637.

ՆԵՐՍԷՍ ԼԱՍԲՐՈՆԱՅԻ – Իսկ զայսօր յարեան, զնորոգեալ կղզիքն, և զթոռանցն, ներսէս լասբրօնացին: - Գ.Հ - 637.

ՆԵՐՄԷՍ ԿԼԱՅԵՑԻ - Եւ զվառին ներսէս կլայեցին: - Գ.Հ - 637.

ՆԵՐՄԷՍ ՄԵԾ - Իսկ զներսէսին մեծի, և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն: - Գ.Հ - 638.

ՆԵՐՄԷՍ ՇԻՆՈՂ - Երրորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հոռոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլէ նժ եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց. - Գ.Հ - 544.

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱՐԱՐԶ - Զհանգստեանն, և զմարտիրոսացն, պետրոս գետադարձն: - Գ.Հ - 637.

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԻԻՆԵՑԻ - Զաւագ օրհնութիւնքն զեօթն ձայնիցն, ստեփաննոս սիւնեցին: - Գ.Հ - 637.

ՎԱԶԱԳԱՆ ԱՐՔԱՅ - Վեցերորդ ժողով եղն յամս վաչագանայ արքայի աղուանից: - Գ.Հ - 545.

ՎԱՐԴԱՆ(սպարապետն)-Ժողովեալ իւ եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարգպանք, մեծամեծօքն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - Գ.Հ - 544.

ՎԱՐԴԱՆ (վարդապետն) - Այլ և ոմանք ի մենջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն գոլ ի միում տեղոջ զամենայն հոգիս. - 686.

ՏԷՐ ԵՂԻԱ - Եօթներորդ՝ ժողովն սիմեօնի աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: - Գ.Հ - 545.

ՏԷՐ ՄԻՍԷՆՆ - Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմեօնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամեն: - Գ.Հ - 545.

ՏԷՐ ՄԻՈՆ - Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց այնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցոյ, և բոնութեան իշխանաց: - Գ.Հ - 545.

ՕԶՆԵՑԻ-Զորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղն ի մանազկերտ. ի ճեղ թուականին. հրամանաւ և արդեամբք

գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցոյ: - Գ.Հ - 545:

Նկատենք, որ հայ գործիչների անվանացանկն ունի նաև պատմագիտական արժեք, որովհետև այստեղ տեղեկանում ենք, որ օրինակ՝ Քաղկեդոնի տխրահռչակ ժողովի մասին Հայաստան տեղեկություն բերել են Եզնիկ Կողբացին և Հովսեփ Փալանացին, որոնք թարգմանությունների համար գնացել էին Աթենք և Կոստանդնուպոլիս վերադարձի ճանապարհին պատահաբար ներկա են գտնվել քրիստոնյա եկեղեցու երկպառակտմանը:

Պատմագիտական տեղեկություններ ենք քաղում նաև շարականների մասին, թե որ շարականը երբ և ով է ստեղծել, տեղեկանում ենք նաև, որ մինչ նորերը ստեղծելը կատարվել է մեծ հավաքչական աշխատանք, մասնավորապես Սահակ Պարթևի հանձնարարականով երիտասարդ թարգմանիչների մի խումբ հատուկ ուղևորությամբ բերել են զանազան արարողակարգերի շարականներ, ինչպես Խոսրով թարգմանիչը Զրօրինէի շարականը, Արջևան և Կորյուն թարգմանիչները՝ Ապաշխարօղի շարականը:

Ինչպես նշեցինք, «Գիրք հարցմանց»-ում մեծ թիվ են կազմում նաև տեղանունների և տոների անվանումները, ինչպես նաև կրոնական արարողակարգերի, շարականների, ծիսակարգերի հատուկ անունները:

Տեղանուններ, աշխարհագրական անուններ

ԱԹԵՆՔ - Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ՚ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս. - Գ.Հ - 543.

ԱՐԱԲԻԱՅ - Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եղոմայ. զոր այժմ կոչի թիլզուրան. ուր գերեզման նորա է: - Գ.Հ - 327.

ԱՐԿՈՒՌԻ-Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեղն արկուտի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - Գ.Հ - 295.

ԱՓՐԻԿԷ - Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագոյն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - Գ.Հ - 348.

ՅՈՐՄԻ - զԹաղէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - Գ.Հ - 549.

ԲԱԲԻԼՈՆ - Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբելօնէ. այսինքն կիրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբաբէլ. արտաշէսիւ եզր դալիր և նէեմի: - Գ.Հ - 448.

ԲԱՔՈՒ - Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - Գ.Հ - 208.

ԴՎԻՆ - Նան ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - Գ.Հ - 631.

ԵՂՈՍ - Եւ է՝ ի մէջ արաբիոյ և եղոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՝ է: - Գ.Հ - 327.

ԵՐՈՒՍԱՂԷՄ - Իսկ խոսքով թարգմանիչ եբեր ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - Գ.Հ - 658.

ԹԷՈՂՈՒՊՕԼԻՍ - Երկրորդն է ժողովն թեղուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ոչ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթողիկոսն հայոց: - Գ.Հ - 544.

ԹԻԼԳՈՒՐԱՆ - Եւ է՝ ի մէջ արաբիոյ և եղոմայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՝ է: - Գ.Հ - 327.

ԻՍՐԱՅԷԼ - Ասէն ոմանք թէ ժ ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից, - 708.

ԿԱԳԻՍԱ - Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա. և իս օր յամեցին և մովսէս զիս պահեաց: - Գ.Հ - 353.

ԿԱԶԲԻԱԿԱՆ ՏՈՎ - Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - Գ.Հ - 208.

ԿԱՍԲԻՑ (ԼԵՌՆԵՐ) - Ասէն ոմանք թէ ժ ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից, - 708.

ԿԱՍԲԻՑ ԾՈՎ – Յասպիս՝ նման է զըմրիստի դեղնագոյն. գտանի յեզեր թորքումէտոս գետոյ յեզր կասքից ծովու: - Գ.Հ - 348.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ – Մետրոփանոս կոստանդնուպօլսի Աղեքսանդրոս աղեքսանդրու: - Գ.Հ - 542.

ԿՈՐԴԻԱՅ ԼԵԱՌՆ – Ասեն թէ՛ գոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս կորդուաց լեառն և ի պաղեստին և ի գամիրս: - Գ.Հ - 294.

ՀԱՅՔ – Եւ Արջևան և Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս: - Գ.Հ - 658. Իսկ յովսէփ և եզնակ եկեալք ի Հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: - Գ.Հ - 543. Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան գծողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի Հայս. - Գ.Հ - 543.

ՄԱՄԵՍՏԻԱ – Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, (սուրբ աստուած սուրբ և հօգօր սուրբ և անմահ որ իսաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ): - Գ.Հ - 632.

ՄԱՆԱԶԿԵՐՏ – Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանազկերտ. ի ճեղ թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցոյ: - Գ.Հ - 545.

ՄՕԲԻՆ – Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղնարկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - Գ.Հ - 295.

ՆԻԿԻԱՅ – Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի յժը՝ կամ յլ ամի ծննդեանն քրիստոսի. և ի ի ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - Գ.Հ - 542.

ՍԱՂԻՄ – Հօրն անունն մելքի, և մօրն սաղա. և քաղաքին սաղիմ: - Գ.Հ - 300:

(ՍՈՒՐԲ) ԳՈՂԳՈՂԵՅ – Եւ ծ ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեալ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթայ: - Գ.Հ - 294.

(ՍՈՒՐԲ) ԿԱՐԱՊԵՏ - Եւ բաժանեալ գտուրք տեղիս տնօրինական, ետուն գտուրք յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և գտուրք կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - Գ.Հ - 548.

(ՍՈՒՐԲ) ՅԱՐՈՒԹԻՒՆ - Տասներորդ՝ զի ղշխոյն հեղինէ որ շինեաց գտուրք յարութիւնն յերուսաղէմ: - Գ.Հ - 617.

ՎԱՂԱՐՇԱՊԱՍ - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրաքառ գաւառի ի վաղարշապատ քաղաքի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ ճծա ամի սրբոյն գրիգորի.՝զի մինչև ցայն հնովն վարեին: - Գ.Հ - 659.

ՎԱՐՍԳ - Տասներորդ խաչի դ տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարազայ խաչին. և խաչգիւտն: - Գ.Հ - 649.

ՏԱՐՕՆ - Գրիգոր մագիստրոսն ի տաբօն եկեղեցի է շինեալ. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եղեալ: - Գ.Հ - 639.

(ՔԱՂԱՔ) ԲԵԹԱՆԻԱՅ - Վասն այն եհան զաշակերտսն արտաքոյ քաղաքին բերանիոյ: - Գ.Հ - 519.

(ՔԱՂԱՔ) ԵՐՈՒՍԱՂԷՄ - Զի արտաքոյ երկնային քաղաքին երուսաղէմի է՝ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - Գ.Հ - 748.

(ՔԱՂԱՔ) ՆԱԽԻԶԵԻԱՆ - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և զեօղն արկուոի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - Գ.Հ - 295.

ՔԱՂԿԵՂՈՆ - Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայելի: - Գ.Հ - 543

ՓԵԳՈՎՐԱՅ - Փեգովքայ տեղի էր կոոց. և դնքն չտային թոյլ թաղէլ զմարմինն, մինչև սաստեաց միքայել հրեշտակապետն ասելով, (սաստեաց է թեզ տէր.) որպէս յա յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - Գ.Հ - 409.

ՓԻՍՈՆ ԳԵՏ - Զմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիսոն գետ. Ղնի՛ է և Յոհաննէս: - Գ.Հ - 348.

Այսպիսով, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Աստվածաշնչի բարձրարժեք մեկնություն լինելուց բացի, քրիստոնեության ընդունման և հետագա իրադարձությունների յուրահատուկ մի հանրագիտարան է, որտեղ կարևորագույն պատմական անցքերի վերլուծությունների մեջ հիշատակվում են երկու հայուրը գերազանցող վերոնշյալ հատուկ անունները:

Grigoryan Susanna – Special Names in the “Book of Questions” by Grigor Tatevatsi. -The “Book of questions” by Grigor Tatevatsi, in addition to being a valuable interpretation of the Bible, is a unique encyclopedia of the history of the adoption of Christianity and subsequent events, where two hundred proper names are given in the analysis of important historical excerpts.

In his commentary Tatevatsi cites about 240 new names that are either the first interpreters of the Bible, or the holy fathers, or the participants in the described events, which the Scripture does not name. There is also a large group of Armenian figures, saints and scribes standing at the forefront of Christianity, who are, as a rule, the creators of Christianity in Armenia. Significant numbers also include the names of holidays and festivals, as well as special names for religious ceremonies, hymns and rituals.

Григорян Сусанна - Собственные имена в "Книге вопрошений" Григора Татеваци. -"Книга вопрошений" Григора Татеваци», помимо того, что является ценным толкованием Библии, является уникальной энциклопедией истории принятия христианства и последующих событий, где в анализе этих событий, даются собственные имена. Татеваци в своем комментарии приводит около 240 новых имен, которые являются либо первыми толкователями Библии, либо святыми отцами, либо участниками описанных событий, которые в Святом Писании не приводятся. Существует также большая группа имен армянских деятелей и создателей христианства в Армении. Значительные цифры также включают названия праздников, а также специальные названия религиозных церемоний, гимнов и ритуалов.

ՀԱՅԵՐԵՆԻ Վ-ՄԿՁԲՆԱՀԼՉՅՈՒՆԻ
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայերենում հնչյուններ կան, որոնց ծագումը հատկապես որոշ դիրքերի համար բավարար չափով բացահայտված չէ։ Դրանցից է բառասկզբի վ-ն։ Կարծիք կա, որ եթե հայերենում բառը սկսվում է վ-ով, ուրեմն ամենայն հավանականությամբ իրանական փոխառություն է¹։ Այս կարծիքը վերածվել է նախապաշարման, քանի որ հաճախ ընդունվում է անքննադատորեն, առանց հանգամանալից քննարկման ու վերլուծության և պատճառ է դառնում բավական համոզիչ ստուգաբանությունների մերժման։ Այնուամենայնիվ կան այս նախապաշարման ճեղքման դեպքեր։ Վ- սկզբնահնչյունով մի քանի բառերի բնիկ լինելն այնքան անհերքելի է, որ դրանք անատարկելիորեն ընդունված են, սակայն որպես բացառություններ, շեղումներ²։ Արդյո՞ք

¹ Տե՛ս, օրինակ, ՀԼՊ ՆԺ, 557-558։

² Գ. Զահուկյանը հայերենում հ.-ե. *v-ի փոփոխության օրինաչափություններից շեղումների շարքում առանձնացրել է բառասկզբում *v > վ անցմամբ 23 արմատ (վազ «արշավ, հոսք, ցատկ» < *vegʰ- «շարժել, ընթանալ», վաղակ «ղաշույն, սուր» < *vel- «պատռել, պոկել, վիրավորել», վայել «արժանի, պատշաճ» < *vei- «ձգտել, տենչալ», վայր-ել «թափել, հոսեցնել» < *vegʷ- «խոնավ, թաց», վայր «տեղ, ցած, պահ» < *yer- «հեռու, ընդարձակ», վանդ-ել «վանել» < *yen- «խփել, վիրավորել», վաչ «մորթածածկ սայլ» < *vegʰ- «սայլ», վառ-ել «այրել» < *yer- «այրել», վառ-ել «զինել» < *yer- «ծածկել, պաշտպանել», վառ-ել «կպցնել» < *yer- «կապել, կախել», վարար «հորդ, ջրառատ» < *yer-/ʷer- «ջուր, անձրև, գետ», վար-արկ-ել «շրջապատել» < *yer- «ծածկել, պաշտպանել», վարզ «վազք, արշավ» < *yer-g- «ոլորել, ծոել», վարկ «հեղինակություն, կարծիք» < *yer-k- «ասել, հանդիսավոր խոսել», վարճոյս «վարսակ» < *yerd- «ճյուղ, արմատ», վեր «բարձր, վրա» < *yer- «բարձունք, վերև», վերջ «ավարտ, եզր» < *yer- «բարձունք, վերև», վերտ «հյուսված» < *yer-t- «պտտել, ոլորել», վեր-ք «խոց» < *yer- «պոկել, ճանկոկել, վիրավորել», վիզ «պարանոց» < *au-gh- «ծոծրակ» < *vei- «ոլորել, ծոել»,

դրանք ընդամենը բացատրություններ են, թե՞ կան չբացահայտված օրինաչափություններ:

Հ. Աճառյանը վ-ով սկսվող միայն երկու արմատի համար է ընդունել հ.-ե. ծագում՝ վեց (վաթսուն) < *k sʰek s- (ՀԱԲ, 4, 333, 293-294), վեր < *uwer < *uper- «վեր» (ՀԱԲ, 4, 329-331): Գ. Զահուկյանը ավելացրել է՝ վերջ < *uperio- «վեր» (ՀԱԲ, 709), վեր-ք < *(s)per- «կտրել, ծակել» (ՀԱԲ, 710-711) բառերը: Յ. Պոկոնոնու, ինչպես և Ս. Նիկոլանի բառարաններում կան նաև վառեմ < *xer- «այրել» (Պոկ., № 2173, xer-12), վանդեմ «ավերել» < *xen- (Պոկ., № 2070, *xen- «հարվածել, վիրավորել») և վայ < *xai- «ավաղ» (Պոկ., № 2078, xai, Նիկ., *(o)way) բառերը:³ Եթե փորձենք այս մի քանի բառերի նշված ստուգաբանություններում գտնել վ սկզբնահնչյունի հ.-ե. ծագումը բացատրող օրինաչափություն,

վիթ «այծյամ» < *uī-t- < *xēi-/xēiə-/xēi- «նետվել, որսալ», *վոք* «թեղի» < *xēng-/xēig-/xēig- «թեղի», *վոսազ* «շտապ» < *xer- «ոլորել, ծռել» (տե՛ս Գ. Джаукян, *Очерки по истории дописменного периода армянского языка*, Է., 1967, էջ 264-268): Գետազայում նա, հիմնականում փոխելով իր կարծիքը, «Հայերեն ստուգաբանական բառարանում» սրանց մի մասը փորձել է ենթադրաբար կապել իրանական կամ այլ աղբյուրների հետ (*վազ*, *վայել*, *վանդ-ել*, *վառ-ել* «այրել», *վառ-ել* «զինել», *վարզ*, *վարկ*, *վերտ*, *վիզ*), մի այլ մասը համարել է անհայտ ծագման (*վաղակ*, *վայթ-ել*, *վայր*, *վաչ*, *վառ-ել* «կպցնել», *վարար*, *վար-արկ-ել*, *վարձոխ*, *վիթ*, *վոք*, *վոսազ*) և միայն մի քանիսն է շարունակել համարել բնիկ (*վեր*, *վերջ*, *վեր-ք*) (տե՛ս ՀԱԲ, համապատասխան բառահոդվածները): Նա նույն կարգի շեղումներ է համարել նաև բարբառային *վաղանջ* (բուսանուն) < *xel- «ոլորել, փաթաթել, պատել», *վառ* «բամբակի չբացված հատիկ» < *xer- «ելուստ (երկրի կամ մաշկի վրա)», *վիլ(յ)ա(յ)* «թելը վրան փաթաթելու գործիք» < *xel- «ոլորել, ծռել, հյուսել, փաթաթել», *վրա(յ)* «անձրև» < *xer- «ջուր, անձրև, գետ» բառերը (տե՛ս Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 328): Ի դեպ, այս վերջին՝ *վրա(յ)* «անձրև» բառը, կարծում ենք, պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին արմատ, այլ *վեր(այ)* > *վրա(յ)* արմատի մի իմաստային զարգացում (հմմտ. Մալխ., 4, 376, *վրայ առնել*, *վրայ լինել* «սկսել տեղալ (ձիւն, անձրև)» [*վրայ* բառահոդվածում], 357, *վրայեկ* «թեթև անձրև», ՀԼՖՖ, 2, 94, *վրա անել* «տեղալ (ձյուն, անձրև)», *վրա առնել* «սկսել տեղալ (ձյուն, անձրև)», 102, *վրանեկ*, *վրաիկ*, *վրե(կ)* «անձրև»):

³ Հ. Մարտիրոսյանը կասկածով ավելացրել է վայել-ել բառը՝ առանց նախաձև նշելու (Մարտ., 591-592):

ապա կարող ենք արձանագրել, որ ըստ երևույթին բոլոր դեպքերում առկա է *w (ւ, u) > վ անցում, որ սկզբնապես կատարվել է ոչ թե բառասկզբում, այլ բառամիջում:⁵ Հետագայում վ-ին նախորդող անկայուն հնչյուն(ներ)ի անկման հետևանքով է այդ շփական բաղաձայն վ-ն հայտնվել բառասկզբում: Հայտնի է, որ բացարձակ բառասկզբում օրինաչափ է *w (ւ, u) > g* > q անցումը (*գետ, գետ, գալ, գայլ, գինի, գիր, գիւղ, գոյ, գորտ, գօտի, գռուգ, գրգիլ* են)՝ հնչյունական մի օրենք, որ որոշակի մի ժամանակահատված գործել է հավանաբար հնագույն հայերենում, ապա վերացել⁶: Սակայն այդ օրենքն այլևս չէր կարող տարածվել արդեն բաղաձայնի վերածված վ-ի վրա՝ ի տարբերություն ձայնորդ *w (ւ, u)-ի:

Փաստորեն կա հայերենի բառասկզբի վ-ի հնդեվրոպական ծագման բացատրության բանալի, որը մինչ այժմ դիտարկվել է որպես ոչ թե օրինաչափություն, այլ բացառություն: Եվ սա այն պարագայում, երբ վ սկզբնահնչյունով մի շարք բառեր մնում

⁴ Տարբեր հետազոտողներ միննույն արմատի միննույն հնչյունը հաճախ արտահայտում են տարբեր նշաններով: Տվյալ դեպքում ունենք *w/ւ,u տարբերակներ, որոնցից որևէ մեկի ընտրությունը սույն պարագայում համարում ենք պայմանական:

⁵ Եվ իսկապես, ոչ բառասկզբում սովորական է *w (ւ, u) > վ (ւ) անցումը (*կով, հովիւ, թովել, տելել, իւր, նաւ, խաւ, թաւ, տիւ, ցիւ* և այլն), թեև սովորական է նաև *w (ւ, u) > q անցումը (*կոզի, տայգր, տարգալ, լոզանալ, յագենալ, այգի, ստոյգ, տորգ, սագ* են) (տե՛ս ԼՔՀԼ, 492-493):

⁶ Ըստ Հ. Աճառյանի՝ մ.թ.ա. 4-րդ դարում դեռևս առկա էր *w (ւ, u) > g* > q անցման *w (ւ, u) > g* փուլը (ԼՔՀԼ, 425): Այս թվագրումը Հ. Աճառյանը կատարել է ելնելով այն փաստից, որ վրացերենը հայերենից փոխառել է ճշօճո [ղվինո] «գլինի» բառը, որի սկզբնահնչյունը դեռևս մաքուր g չէ, այլ մոտիկ է g*-ին, իսկ հայերենի և վրացերենի շփումների սկիզբը համարվում է մ.թ.ա. 4-րդ դարը (ԼՔՀԼ, 487-494, ՀԼՊ ՆԺ, 96-97): Ի դեպ, քարթվելական մյուս լեզուներում ևս առկա են հայերենից փոխառված *ճ՛ինի* բառի դվ-ով սկսվող տարբերակներ (տե՛ս ՀԱԲ, 1, 558-559): Պետք է նկատել նաև, որ խաղթյան սեպագրերով (մ.թ.ա. 9-6-րդ դդ.) վկայված հայերեն արմատներում դեռևս առկա չէ *w (ւ, u) > q անցումը՝ *wal > qալ, wat- > qաղ-, Ueliquni > Գեղաքունի* են (տե՛ս Ս. Այվազյան, Ուրարտերեն – հայերեն, Ե., 2008, էջ 36):

են չստուգաբանված (համարվում են անհայտ ծագման) կամ փոխառություն են համարվում ոչ թե փաստացի վկայված, այլ ընդամենը ենթադրյալ կամ հնարավոր ու անհնար սկզբնաղբյուրներից: Այս հանգամանքից ելնելով՝ ստորև կփորձենք ընդլայնել վերոհիշյալ բանալու կիրառության շրջանակը և ցույց տալ, որ հիշյալ նախապաշարումը թերիմացության հետևանք է:⁷

Անկայուն ձայնավոր սկզբնահնչունից հետո *w (ւ, ս) հնչյուն ունեցող հ.-ե. մի շարք արմատներից առաջացած հայերեն բառերի⁸ ուսումնասիրությունը բացահայտում է հետևյալ պատկերը, որ ցույց կտանք *(a)wə- «հոսել; թաց; ջուր» արմատի⁹ օրինակով: Այդ արմատի *wə- (առանց անկայուն սկզբնաձայնավորի) տարբերակից առաջացել են գետ [<*(a)wədo- (ՀՄԲ, 156)] գայր «ցեխ, տիղմ» [<*(a)wəer-s- (ՀՄԲ, 149)] բառերը, *awə- (անկայուն սկզբնաձայնավորով) տարբերակից ախշ [<*awə-skə- (ՀՄԲ, 102)], աղի (օղի) [<*awlio- (ՀՄԲ, 102)], ալր (օր) «մաղձ» [<*aw-ro- (ՀՄԲ, 104)], հաւառի «գետառ, մայր գետ» [<*awər-s- (ՀՄԲ, 454,

⁷ Կարծում ենք՝ չի բացառվում նաև այն վարկածը, որ բառասկզբում *w (ւ, ս) > վ (ւ) և *w (ւ, ս) > գ անցումները պարզապես բարբառային-տարածքային զուգաձևություններ են, որ հետո ընդհանրացել են հայերենում (ինչպես բառամիջում և բառավերջում *w (ւ, ս) > վ (ւ) և *w (ւ, ս) > գ զուգահեռ անցումները, *աբեգ/աբևե* զուգաձևությունը հայերենում, *w (ւ, ս) > g, *w (ւ, ս) > b զուգահեռ անցումները պարսկերենում (ԼՔՀԼ, 487-494) են): Այդ պարագայում պետք է ենթադրել, որ այն դեպքերում, երբ բառասկզբի *w (ւ, ս)-ն վերածվել էր շփական բաղաձայն v (վ)-ի, սա այլևս չէր կարող դառնալ գ, մինչդեռ որպես ձայնորդ պահպանված *w (ւ, ս)-ն ենթակա էր գ-ի վերածվելու:

⁸ Սահող s-ից հետո *w (ւ, ս) հնչյուն ունեցող արմատներից առաջացած բառերի քննությանը տեղի սղության պատճառով կանդրադառնանք մեկ այլ առիթով:

⁹ Այս արմատից ու նրա տարբերակներից են առաջացել հ.-ե. մի շարք լեզուների բազմաթիվ բառեր, որոնցից հիշենք մի քանիսը. անգլ. *water* «ջուր» [<*wōdr-] (ՎԲԱ, *water*), *wet* «թաց, խոնավ» [<*wēd-] (ՎԲԱ, *wet*), ռուս. *вода* «ջուր», *водка* «օղի» [<*wōdor-], *ведро* «դուլ» [<*wedor] (ՎԲՌ, *вода*), լատ. *vitrum* «ջրային», հ.հուն. *ὕδω* «անձրև», *ὕετός* «առատ անձրև», լիտվ. *vandenys*, լատվ. *ūdens*, նորվ. *vann*, ալբ. *ujë*, իռլ. *uisce* «ջուր», ռում. *uda* «թաց» են:

կասկածով)]¹⁰ բառերը: Վերոհիշյալ բանալին կիրառելու դեպքում ենթադրվում է, որ այս երկրորդ (*a- սկզբնահնչյունով) տարբերակի հայերեն ժառանգները զարգացման երկու տարբեր ուղիներով են ընթացել: Մի դեպքում ձայնորդ *w (յ, ա)-ն բաղաձայնից առաջ պահպանել է իր բնույթը (*աւղի, աւր «մաղձ»*) կամ ձայնավորների միջև մոտեցել բաղաձայն վ-ի (*աւիշ, հաւառի*), իսկ սկզբնաձայնավորը կայունացել է և նույնիսկ ամրապնդվել հ նախահավելվածով (*հաւառի*), մյուս դեպքում ձայնորդ *w (յ, ա)-ն միջձայնավորային դիրքում վերածվել է բաղաձայն *v-ի, իսկ սկզբնաձայնավորը առժամանակ պահպանվել է և ապա ընկել: Դրանից հետո բառասկզբում հայտնված բաղաձայն *v- > վ-ի վրա այլևս չէր կարող գործել *w (յ, ա) > գ հնչյունական անցման օրենքը: Այդ կերպ *(a)յե- «հոսել, թաց, ջուր» արմատից ծագած կարող են համարվել վէտ, վտակ, Վեդի, վայրել, վարար, վեժ, վարդավառ բառերը: Եթե առաջին երկու խմբերի արմատների (*գէտ, գայո, աւիշ, աւղի, աւր, հաւառի*) ստուգաբանությունները առկա են հայտնի բառարաններից (ՀԱԲ, ՀՄԲ, Պոկ., Նիկ.) առնվազն մեկում, ապա երրորդ խմբի արմատների ստուգաբանությունը ներկայացնում ենք ստորև:

Վէտ «մանր ավիք, այլակ, ծփանք, հոսք»¹¹ արմատի կապը գէտ բառի հետ վաղուց է նկատվել (Լազարդ, Տերվիշյան նն): Հ. Աճառյանը, սակայն, այդ վարկածը չի ընդունել (ՀԱԲ, 4, 336): Գ. Ջահուկյանն այս արմատը համարել է անհայտ ծագման, սակայն ավելացրել է՝ «կապ ունի՞ գէտ բառի հետ» (ՀՄԲ, 710), այսինքն՝ նա էլ է նկատել և հավանական համարել վէտ – գէտ առնչությունը: Վերոհիշյալ բանալիով բացատրվում ու հիմնա-

¹⁰ Անգլերեն Վիքիբառարանում հաւառի-ի համար տրված է *we-d-«ջուր» նախաձևի *h₂ep-sru- տարբերակը (ՎԲԱ, Root *h₂ep-):

¹¹ Կարծում ենք, որ սրանից պետք է տարբերել բառարաններում որպես երկրորդ իմաստ տրվող վէտ, վիտել «ցտել, դաջել, ծակել, ճեղքել (մարմինը, մաշկը, նաեւ պատը)» համանունը, ավելին առաջարկում ենք առաջինը («այլակ» իմաստով) գրել վէտ, որովհետեւ բարդություններում չի դառնում վիտ-, այլ լինում է վետավետել, վետվետալ, վետվետուն նն:

վորվում է այդ ակնհայտ կապը՝ **(a)ɣei-d-* > վէտ՝ նույն **d* աճականով, ինչ գէտ-ը:

Վտակ «1. գետակ, հոսող ջուր, 2. օժանդակ (գետ)» բառի արմատը թե՛ ձևով, թե՛ իմաստով մոտիկ է նախորդին: Պատահական չէ, որ մի շարք հետազոտողներ կապել են վէտ և կամ գէտ բառին (Պետերման, Մյուլլեր, Էմին, Հյուբման, Տերվիշյան, Շեֆտելովից և այլք)՝ համարելով բնիկ հայերեն: 2. Աճառյանը անընդունելի է համարել այդ կարծիքները «նախաձայն վ-ի պատճառաւ» և համարել փոխառություն՝ որպէս սկզբնաղբյուր «վերականգնելով» պահլավերեն **vitāk-* < **vi+tak* «հոսել» ենթադրյալ ձևը (ՀԱԲ, 4, 350): Գ. Զահուկյանը համաձայնել է այս կարծիքին և որպէս փաստացի վկայված ձև մատնանշել մ.պ. *vitāxtan* «հալչել» բառը, որը, սակայն, իմաստով հեռու է **վտակ**-ից: Վերոհիշյալ բանալին կիրառելով՝ առաջարկում ենք **(a)ɣē-d(h)-* > **վիտ+ակ** > **վտակ** ստուգաբանությունը:

Վեղի (Վետի, Վետե, Վադա) գետանվան թե՛ ձևային, թե՛ իմաստային նմանությունը նախորդներին ակնբախ է: Սակայն այդ բառը մինչ օրս ստուգաբանության չի արժանացել: Միայն «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» (Ե., 1988-2001) առանց սկզբնաղբյուր նշելու գրված է. «Ենթադրում են, որ Վեղի պարսկերեն նշանակում է «կիրճ»» (հ. 4, էջ 794): Վերոհիշյալ բանալին կիրառելով՝ առաջարկում ենք **(a)ɣe-d(h)-* > **Վեղ+ի (Վետ+ի)** ստուգաբանությունը: Նկատենք, որ -ի վերջածանցը շատ տարածված է հայերեն տեղանուններում՝ *Ողջի, Արածանի, Արգիճի, Բերկրի, Քղի, Մեղրի, Գառնի, Անի, Փարպի, Կարբի, Մոտնի, Ակոռի, Արենի, Բջնի, Արգնի, Գեղի, Արդվի, Պտղնի* ևն: Նկատենք նաև, որ «ջուր» նշանակող արմատով ունենք այլ գետանուններ ևս, որոնցից երկուսը՝ **Գետիկ, Գետառ**, փաստորեն նույնարմատ են **Վեղի**-ին:

Վայթել (վաթել, վոթել, վիթել, վեղի) «դուրս հոսել, հոսեցնել, պարպել թափել (ջուր)» բառի ձևաիմաստային առնչությունը նախորդներին նույնպես ակներև է, սակայն համարվել է անհայտ ծագման (ՀԱԲ, 4, 300, ՀԱԲ, 702-703), թեև Գ. Զահուկ-

յանը նախապես ներառել էր վ-ով սկսվող բնիկ հայերեն բառերի վերոհիշյալ ցանկում: Վերը կիրառված տրամաբանությամբ (բանալիով) առաջարկում ենք **(a)uə(i)-t- >վայթ-ել* ստուգաբանությունը: Հ. Աճառյանը սրա ածանցյալ է համարել վայթուկ (վայթուկ) «տղամարդու սերմ» բառը որպես հոսող թափվող հեղուկ (ՀԱԲ, նույն տեղում):

Վարար «հորդ (անձրև, ջուր), զեղուն» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 316): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման, սակայն վերապահում է արել. «Կապ ունի՞ հնդեվրոպական **(a)uēr-* «հոսել» արմատի հետ (ինչ-որ լեզվից փոխառություն)» (ՀԱԲ, 706): Փաստորեն նա կռահել է ճիշտ ստուգաբանությունը, սակայն այնուամենայնիվ տուրք է տվել վերոհիշյալ նախապաշարմանը՝ ենթադրելով միջնորդ լեզվի առկայություն: Վերոհիշյալ տրամաբանությամբ առաջարկում ենք **(a)uə-r-* (մասնակի կրկնությամբ) ստուգաբանությունը: Այս բառի փոխաբերական կիրառություն է համարվում վարար (վրիրակ) «վալաշոտ» բառը (ՀԱԲ, նույն տեղերում):

Վեժ (վիժել, վիրժել) «թափվելը, արտահոսք» արմատը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 335): Գ. Ջահուկյանը ենթադրաբար համարել է «փոխառություն իրանական աղբյուրից» «բայց բուն աղբյուրը չի հավաստված» վերապահումով (ՀԱԲ, 710): Սա հենց վերոհիշյալ նախապաշարման բնորոշ արտահայտություն է, երբ վ սկզբնահնչյունի առկայությունը մղել է բառը փոխառյալ համարելու նույնիսկ առանց որևէ սկզբնաղբյուր մատնանշելու: Նախորդ բառերի հետ ձևախմաստային նմանությունից ելնելով՝ առաջարկում ենք վեժ < **(a)uei-(r)-gʷh-* ստուգաբանությունը: Սրա ածանցյալներից հիշենք վիժանուտ «առատորեն հոսող՝ վիժող՝ թափվող» (Մալխ. 4, 340), վիժակ «ջրի հոսանք, բխում, ջրվեժ» (ՀԱԲ, 4, 335, 338-339) բառերը:

Վարդավառ (ջրապաշտական հնագույն տոն) բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը կապել են վարդ ծաղկանվան հետ (ՀԱԲ, 4, 318, ՀԱԲ, 706): Սակայն կարծում ենք, որ ավելի ճիշտ են նրանք, ովքեր այս բառի առաջին բաղադրիչի (*վարդ*) մեջ տես-

նում են «ջուր» իմաստը: Կարելի է առաջարկել վարդ- < *վարդ- < *vadr- < *(a)u-əd-er- «ջուր, հոսել» [հմմտ. անգլ. water «ջուր» < *wōdr- (ՎԲԱ, water)] ստուգաբանությունը: Նկատի ունենալով, որ այդ բառի հոմանիշն է բարբառային ճրճանք (ջրջանք < *ջրցանք) «ջուրցանոցի» բառը¹² [հմմտ. ճրճնել (ջրջնել, ճրճքնել, ջրցկնել, ջրցնքել) «ջուր ցանել» (ՀԼԲԲ, Գ, 421, Ե, 2039)] երկրորդ բաղադրիչի (*վառ*) հիմքում նախընտրում ենք տեսնել վարար-ի վար- «թափել, որել, ցայել» արմատը (բարբառներում այդ բաղադրիչը մեծ մասամբ ր-ով է), որի դեպքում հենց կունենանք «ջուրցանոցի» բնիմաստը: Իսկ բարբառներում թերևս ժողովրդական ստուգաբանությամբ ընկալվում է –ավոր ածանց [շատ ավելի տարածված են *վարթիվոր*, *վարթևոր*, *վարթվոր*, *վրթևուր*, *վրթեվիւր* և նման ձևերը (հմմտ. *ալևոր*, ՀԱԲ, 1, 93-94)], և վարդավառ բառը հասկացվում է իբրև «ջրավոր՝ ջրային՝ ջրվելու (տոն)»:¹³

Այս համաշարում կարելի է անդրադառնալ նաև աւազան և գուռ հոմանիշ բառերին, որոնց թե՛ ձևը, թե՛ իմաստը, թե՛ ւ-գ լծորդությունը թույլ են տալիս դրանք նախող բառերին համարմատ համարելու:

Աւազան «1. ջրամբար, 2. գուռ, մկրտարան, 3. ջրահավաք տարածք» բառը Հ. Աճառյանը Հյուբշմանի հետևողությամբ համարել է իրանական փոխառություն, որի «մայր ձևը յայտնի չէ» (ՀԱԲ, 1, 352): Գ. Ջահուկյանը փորձել է վերականգնել այդ ենթադրյալ ձևը՝ *a-vaz-ana՝ դա համեմատելով սողդ. āwaza «լիճ» բառի հետ (ՀԱԲ, 98): Հ. Մարտիրոսյանը կապ է տեսել արաբ. havz «լողավազան» (որից՝ հայ. բրբռ. *հավուզ*) բառի հետ (Մարտ., 150): Մակայն աւազան բառը վերոհիշյալ բանալիով օրինաչափորեն կարող էր առաջ գալ հ.-ե.

¹² Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Վարդավառ>:

¹³ Տե՛ս նաև Լ. Աւետիսեան, «Վարդավառ կամ երբ յայտաձուլում է մոռացուած ծաղկանունը» (<http://language.sci.am/hy/conferences/language-and-speech>):

նախաձևից **(a)ya-g h-ան>աւագան* բանաձևով, որն էլ առաջարկում ենք որպէս ստուգաբանական նոր վարկած:

Գուռ(ն) «ավագան, տաշտ» բառը Հ. Աճառյանը համարել է փոխառությունն ասորերէն *gūrā* «դուլլ, ջրաման» բառից (ՀԱԲ, 1, 597): Գ. Զահուկյանը համաձայն է նրա հետ (ՀՄԲ, 174): Սակայն ասորերէնի հետ այդ նմանությունը, կարծում ենք, պետք է համարել պատահական: Խնդիրն այն է, որ այս բառը լայնորեն տարածված է հայերէնի բարբառներում և մանավանդ ենթարկվում է ն-ով վերջացող բնիկ հայերէն բառերին բնորոշ *ա* ներքին հոլովման (*գուռն* – *գրան*) (ի-ով հոլովումը թերևս ավելի ուշ երևոյթ է): Հետևաբար ճիշտ կլինի այդ բառը ևս բխեցնել *հ.-է.* նախաձևից **(a)yōr-n->գուռն*:

Այս շարքին կարելի է ավելացնել ևս երկու բառ:

Ուղիս «հեղեղ, առատահոս ջուր, հեղեղատ» բառը Հ. Աճառյանը կասկածով համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (ՀԱԲ, 4, 597), իսկ Գ. Զահուկյանը՝ ուրարտերէն *ulhu-* արմատից (ՀՄԲ, 748-749): Նկատի ունենալով այս տարածայնությունը առաջարկում ենք **ուղիս** (**ուխ**) < *ul-kh- < *y-l- < *(a)y(e)- «հոսել, թաց, ջուր» ստուգաբանությունը¹⁴: Այս դեպքում *y սկզբնահնչյունը *գ-ի* փոխարեն *ու-ի* է վերածվել բաղաձայնից առաջ լինելու պատճառով: Մինչդեռ *y սկզբնահնչյունը *գ-ի* է վերածվել բոլոր այն դեպքերում, երբ նախորդել է ձայնավորի:

Ուրդ (**որդ**) «առու, ջրանցք, առվի ջուր» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 4, 616): Գ. Զահուկյանը համարել է անհայտ ծագման՝ քիչ հավանական համարելով կապը *յորդ* «առատ, վարար» (<*or-dh- «շարժել, հուզել, բարձրացնել») բառի հետ (ՀՄԲ, 753): Առաջարկում ենք **ուրդ** < *ur-dh- < *y-r- < *(a)y(e)- «հոսել, թաց, ջուր» ստուգաբանությունը:

¹⁴ Այս *աւ* – *ու* համապատասխանության համար հմտ. *աւղ* – *ուղի* (ՀԱԲ, 4, 612-613, օր), *աւղի* – *ուղի* (ՀԱԲ, 4, 613, օրի), *աւ* – *ուն-իւ* (ՀՄԲ, 102-103): Հմտ. նաև՝ *ուռկան* < *ur- < *uer- «կապել, կախել», *ուռան* «վառարան» < *ur-s- < *uer- «վառել» (ՀՄԲ, 751), *ուստիկ* < *us-ti-s- < *(a)ues- «հագցնել» (ՀՄԲ, 752), *ուղի* < *ulīo- < *au-lo- «փող» (ՀՄԲ, 748):

Արդ կարող ենք սահմանել հետևյալ օրինաչափությունը:
Հ.-ե. *(a)ս(e)- արմատը հայերենում զարգացման չորս տարբեր
ուղիներով է ընթացել.

1. *(a)ս- > գ- [(a)սe-d- >*wed- >*gwed- >գետ] (ձայնավորից
առաջ),
2. *(a)ս- > ու- [(a)ս(e)-l-kh- >*ulkh- > ուղխ (ուխ) «հեղեղ»]
(բաղաձայնից առաջ),
3. *ս- > աւ- [*սe-sk- > աւիշ] (*a > ա-ի պահպանմամբ),
4. *ս- > վ- [*սei-d- > *aveid- > *veid- > վետ] (*a-ի ուշ
անկմամբ):

Այս օրինաչափությունը հաստատվում է հ.-ե. նաև այլ
արմատներից ծագած հայերեն բառերի վերլուծությամբ: Սակայն
տեղի սղության պատճառով դա թողնում ենք մեկ այլ աղիթի:

Համառոտագրություններ

ՀԱԲ – Աճառյան Հ. Հ., *Հայերեն արմատական բառարան*,
հհ. 1-4, Ե., 1971-1979

ԼՔՀԼ – Աճառյան Հ. Հ., *Լիակատար քերականություն
հայոց լեզվի*, հ. 6, Ե., 1971

ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է, Ե.,
2001-2012

Մալխ. – Մալխասեանց Ս. Ս., *Հայերեն բացատրական
բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945

ՀՄԲ – Ջահուկյան Գ. Բ., *Հայերեն ստուգաբանական
բառարան*, Ե., 2010

ՀԼՊ ՆԺ – Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի պատմություն,
նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987

ՎԲԱ – Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>)

ՎԲՌ – Викисловарь (<https://ru.wiktionary.org/wiki>)

Նիկ. – Nikolaev S., *Database of Indo-European etymology* / <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=\data\ie\piet&first>

Պոկ. – Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 / <http://dnghu.org/indoeuropean.html>

Մարտ. – Martirosyan H., *Etymological dictionary of the Armenian inherited lexicon*, «Leiden Indo-European Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008

Hovhannes Zakaryan – About Indo-European Origin of the Armenian Initial Sound վ-. – In Indo-European studies it is generally accepted that the Armenian words with the initial sound վ- are non-original, with the exception of about a dozen words that are considered deviations from the norm. The present article dwells upon phonetic, morphemic and semantic analyses and reveals the regularity of the origin of native (inherited) Armenian words with the initial sound վ-, due to which the following new etymologies are put forward: վեժ «light wave, ripple» < *(a)uei-d- < *(a)ue- «to flow, to wet; water», վտակ «small river, water (flowing), tributary» < *(a)ue-d(h)-, Վեճի (a potamonym) < *(a)ue-d(h)-, վայրել «to flow out, to spill» < *(a)ua(i)-t-, վարար «pouring, torrential» < վար-վար < *(a)uə-r-, վեժ «pouring out, outflow» < *(a)uei-(r)-gʷh-, ուղի «flood, ravine» < *ul-kh- < *u-l- < *(a)u(e)-, ուղ «brook, canal» < *(s)uə-r- < *ur-dh- < *u-r- < *(a)u(e)- etc.

Оганес Закарян – Об индоевропейском происхождении начального звука վ- армянского языка. – В индоевропеистике общепринято мнение, что в армянском языке слова с начальным звуком վ- являются неисконными, за исключением примерно десятка слов, которые считаются отклонениями от нормы. В настоящей статье, однако, на основе фонетического, словообразовательного и семантического анализов вскрывается закономерность происхождения исконно армянских слов с

начальным звуком ψ -, благодаря чего предлагаются следующие новые этимологии: $\psi\acute{e}u$ «лёгкая волна, зыбь, рябь» < $^{*}(a)\psi ei-d$ - < $^{*}(a)\psi e$ - «течь; мокрый; вода», $\psi u\psi\acute{e}$ «речка, проточная вода, приток» < $^{*}(a)\psi \acute{e}-d(h)-$, $\psi\acute{e}u\acute{e}$ (потамоним) < $^{*}(a)\psi e-d(h)-$, $\psi\psi\psi\acute{e}$ «вытекать, пролить» < $^{*}(a)\psi a(i)-t-$, $\psi\psi\psi\psi$ «проливной, многоводный» < $^{*}\psi\psi\psi-\psi\psi\psi$ < $^{*}(a)\psi \acute{e}-r-$, $\psi\acute{e}d$ «выливание, истечение» < $^{*}(a)\psi ei-(r)-g^{w}h-$, $\psi\psi\psi$ «потоп, поток, овраг» < $^{*}ul-kh-$ < $^{*}\psi-l-$ < $^{*}(a)\psi(e)-$, $\psi\psi\psi$ «ручей, канава» < $^{*}ur-dh-$ < $^{*}\psi-r-$ < $^{*}(a)\psi(e)-$ и т. д.

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ–ՏԵՐՄԻՆՆԵՐԻ՝ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԻԳՈՐԻՍԻ «ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ
ՑԱՒՈՑ» ԲԺՇԿԱՐԱՆՈՒՄ

Միջնադարյան բժշկարաններում փոխառյալ և նորաստեղծ *բառ-տերմինների* կողքին զգալի թիվ են կազմում նաև *բառակապակցություն-տերմինները*¹: Վերջիններս, թեև տերմինի հասկացության իմաստն արտահայտում են նկարագրորեն, սակայն կարևորվում են օտար տերմինի հայերեն համարժեքը տալու տեսանկյունից, բացի այդ՝ վերջիններս մատնացույց են անում նաև հայկական բժշկական տերմինների կազմավորման ուղին², մասնավորապես բառակապակցությունից անցումը իսկական բարդության, ինչպես օրինակ՝ *թաթ ոտիցն - ոտնաթաթ, ճակատին ոսկր - ճակատոսկր, ողնաշարի ուղեղ - ողնուղեղ, ստամոքսի բերան - ստամոքսաբերան, սրտի դզալ - սրտագդալ*: Բժշկապատմաբան Ս. Վարդանյանը, անդրադառնալով XII դարի բժշկարաններում (Հերացի, Աբուսայիդ) կիրառված բառակապակցական տերմիններին, վերջիններս անվանում է տերմին-նկարագրություն՝ կարծիք հայտնելով, որ դրանք երբեմն պարզունակության են հասնում³: Այնքան էլ համամիտ չլինելով նշված մոտեցմանը՝ պետք է նկատել, որ Մխիթար Հե-

¹Նյութը շարադրելիս կիրառել ենք էդ. Աղայանի դասակարգմամբ առանձնացված *բառ-տերմին* և *բառակապակցություն-տերմին* հասկացությունները:

²Տե՛ս էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 338:

³Տե՛ս Ս. Վարդանյան, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 180:

³ Տե՛ս Ս. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 194-196:

րացին, ապա նաև Կիլիկյան բժշկագիտական դպրոցի մյուս ներկայացուցիչները, կարևորելով բժշկությունը ժողովրդին հասկանալի լեզվով շարադրելու գործը, այնուամենայնիվ, կարողացան ստեղծել հայերեն նոր կազմություններ: Դրանից շատերը թեև չամրագրվեցին իբրև բժշկական տերմիններ, բայց երևույթի բացատրությամբ իրենց հերթին նպաստեցին հետագայում տվյալ հասկացություններին համարժեք տերմին ստեղծելու գործին⁴: Այս տեսանկյունից արժեքավոր կարող է լինել նաև միջին հայերենի շրջանում կիրառված բառակապակցություն-տերմինների լեզվական քննությունը:

XIII դարում նոր բառակապակցություն-տերմինների կիրառությամբ աչքի է ընկնում Հերացու հետևորդ և կիլիկյան բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչ Գրիգորիսի «*Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց*» բժշկարանը⁵, որտեղ գործածված բառակապակցությունները հիմնականում հիվանդության անվանում ցույց տվող և կազմախոսությանը վերաբերող հասկացություններ են: Առանձնացրել ենք տվյալ բժշկարանում վկայված այն բառակապակցությունները (49 տերմին), որոնք չեն հանդիպում ավելի վաղ, մասնավորապես XII դարում ստեղծված բժշկարաններում: Նշենք, որ դրանց մի մասն է միայն (20-ը) տեղ գտել «Միջին հայերենի բառարան»-ում⁶, հենց սույն բժշկարանի կամ ավելի ուշ ստեղծված բժշկարանների

⁴ Հերացու և Աբուսայիդի կիրառած բառակապակցություն-տերմինների մասին տե՛ս Հ. Թադևոսյան, *Կազմախոսական նորաստեղծ բժշկական տերմինները 12-րդ դարի բժշկարաններում (Մ. Հերացի, Աբուսայիդ)*, «Հայագիտության հարցեր», N 3 (12), Երևան, 2017, էջ 132-141:

⁵ Գրիգորիս, «*Քննութիւն բնութեան մարդոյ և նորին զանազան կրից և պատճառանաց ցաւոց*», աշխատասիրությամբ Ա.Ս. Կծոյանի, Ե., 1962: Բժշկարանից բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

⁶ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին Հայերենի բառարան* (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009:

վկայմամբ:

Նկատի ունենալով նշված բժշկարանի բնույթը՝ Գրիգորիսի գործածած բառակապակցություն-տերմինները ներկայացրել ենք երկու խմբով՝ կազմախոսական և ախտաբանական:

Կազմախոսական բառակապակցություն-տերմինները հիմնականում անվանական են, կազմված են որոշիչ-որոշյալ և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ:

Որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կիրառվել են հետևյալ բառակապակցություն-տերմինները.

Անօթի աղիք // պահք աղի «բարակ աղիների վերնամասը, սնաղի». «Եթե այս ելս, որ ելնե՛ սկաւ խառնուրդ ունե՛ ի յարենե՛ և ի շարավե, նա զանն ի *յանօթի աղիք* է, որ է *պահք աղի*» (139): «..*անօթի աղիքն* և աւագ երակքն, որ ճանապարհ են լերդին, սպրկիկ լինին և ուժով» (152):

Աւագ աղիք (հավանաբար ուղիղ աղիքն է). «և ծանրանայ անօթի աղիքն և վարե զքամութն, որ յինքն կայ՝ ի *յաւագ աղիքն*, և *աւագ աղիքն* վարե և հանե արտաքոյ մարմնոյն» (152):

Աւագ երակ «դռներակ, փորոք, լյարդն մտնող երակ». «...նայ վարե զինքն բնութիւն ի *յաւաք երակէն* և թափի ի լերդն» (1): «Կամ վարե զինքն ի յերիկամունսս և անտից ի *յաւաք երակն*, որ անուանի աճուաֆ, որ է փորոք. և ի յայս երակս յիստակի գոգն գատ ի յայլ մաղձերոյն և թափի ի փաղայբուշտն» (13,14):

Ուշագրավ է, որ երակի տեսակները (երակ, զարկերակ) բժշկարանում տարբերակվում են ըստ զարկի (պուլս). առանձնացվում են **անշարժ երակ** «երակ» և **շարժողական երակ** «զարկերակ» տերմինները, ինչպես՝ «արիւնն ի ներսե երակացն է, որ են *շարժողականք և անշարժք*» (18): «լնու սիրտ տաքութեամբ. և ի *շարժողական երակացն* լցուին ամեն անդամքն տաքութեամբ» (10): «Եւ այս պատահմունքս...ի *յանշարժ երակսն* ի

մօտ լինի, նայ սակաւ ցաւ ունենայ, քան զայն, որ ի *շարժողական երակսն* ի մօտ լինի, զի *շարժողական երակսն* շատ զգաստություն ունենան, քան անշարժսն» (29):

«Կերակրափող» հասկացության համար կիրառվել են աւագ ստամոքքերան և հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ *դուռն ստամոքաց* բառակապակցություն-տերմինները. «Եւ որ կերակրողական անդամունքն են՝ այս նն. յառաջ *աւագ ստամոքքերանն*, որ անուանին ստուկք» (123): «..և այլ վնաս՝ որ հասնի իւր ցաւն ի ստոյքն, որ է *դուռն ստամոքացն* և ի ստամոքն» (97):

«Գլխուղեղ» հասկացությունն արտահայտվել է *թափանցիկ հոգի* և *թափանցիկ անդամ* բառակապակցություններով. «Զի այս մաղձերու գոլորշին է, որ *զթափանցիկ հոգին*, որ կայաբան ղղին է՝ պղտորէ և զցնորն շատցնէ» (65): «Եւ այս են նեղերք ըղեղանն և *թափանցիկ անդամոցն*» (6):

Ծածուկ մարմին «առնանդամ». «և յերբ այս օձս խայթէ զմարդն, նայ *ծածուկ մարմինն* ուտենայ և կանգնի» (49): «և թուլնան *ծածուկ մարմին*, և պաղի մատունքն» (50):

Բառակապակցությունը նույն դարաշրջանում կիրառել է Վարդան Այգեկցին, ավելի ուշ գտնում ենք նաև Ամասիացու բժշակարաններում⁷:

Շնողական անդամք «սեռական օրգաններ»⁸. «Այս են ցաւերն ծնողական անդամոցն» (174):

Հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ կիրառված տերմիններից են.

«Լինդ» կազմախոսական բառին զուգահեռ Գրիգորիսը գործածել է *ակոռային տակ* բառակապակցություն տերմինը.

⁷Տե՛ս ՄՀԲ, էջ 340

«Եթէ ցան ի ջլէն է, որ ի *յակոբային տակին* վերայ կա, ոչ կարէ ջիլն վարել ցան» (100):

Գրիգորիսին հաջորդող բժշկարաններում արդեն գտնում ենք այս տերմինի բառաբարդմամբ տարբերակը՝ *ակոստակ // ակոայտակ*, որն էլ հենց արձանագրված է ՄՀԲ-ում⁸:

Ելք մագի «մագարմատ». «և արձակեցնէ շնչահանքն, որ են *ելք մագի*» (15):

Թոքին եղեգ «բրունիս». «Եւ նեղեր ի շնչական անդամոցն այս են, որ լինին ի թոքն և են որ լինին *յեղեգն թոքացն*» (102): «Եւ հազն ի շատ նեղերոյ լինի.... և կամ ի կծու կերակրոց, կամ ի փոշոյ, և կամ ի մխէ, կամ իրաց, որ *ի թոքին եղեգն* իջնու» (107):

Լուսոյ կայարան «աչքի ոսպնյակ». «և կալնու զլուսայմտին ծակն, և արգիլէ գտեսողական ոգին, որ յասանի ի ճլիտին, որ է *լուսոյն կայարանն*: ... Եւ այս ջեղս, որ *կայարանք է լուսոյն* և ինքն է, որ վերցնէ զաչսն և վեց տափակ ջիլքն, որ շարժողք են աչիցն» (89):

Չվոց քսակ «ամորձապարկ». «աղիքն իջնու ի մէկ հետ ի *ձվոյն ի քսակն*... և աղեացն իջնուլն, և *ձվոցն ի քսակն* չլինի մէկ հետ» (166):

Ողնաշարի էջք «պոչուկ». «և յոլով քեր և եռ ընծայի ի ձեռն մատունսն, ի յարմնգունքն և *ողնաշարին էջքն*, որ ի նստոտեղն է ի մօտ» (39):

Ողնաշարի ըղեղ «ողնուղեղ». «Իսկ այժմ յիշեմք *ողնաշարին ըղեղին* պատճառսն և զցաւսնն զնշանսն» (69): «...և կարէ լինել խայտառն ի քամոյ, որ արգիլի ներքն *ողնաշարին զղեղն* և կալնու զղեղն, որ չկարէ շարժողական զօրութիւնն հասանել ի նայ» (72):

⁸Տե՛ս ՄՀԲ, էջ 24:

Ողնաշարի ըղեղին ի գլուխն «ծոծրակ»։ «Եթե *ողնաշարին ըղեղին ի գլուխն*, որ է ծործորակն, լցուի պլղամն, նայ թուլնան այն անդեամքն, որ ի յերեսն ի յար են» (69):

Մերման աման «ընկերք»։ «Էւ արգանդին ի դուրս գալոյն պատճառն...ի դրուցէ լինի այն է, որ այն պարկուճն, որ *սերման ամանն* է քաշեն ի ծննդեան ժամն» (173):

Սրտի անդամ բառակապակցությամբ Գրիգորիսը արտահայտել է «*սրտանոթ*» հասկացությունը. «ն այլ նշան՝ *սըրտին* ամեն *անդամքն* թուլնան վասն պլղամէն գիջութեան» (60):

Սրտի դըգալ «սրտագդալ»։ «Խափանել ստամոքացն, և ցաւել *սրտին դըգալին*...և այս ստամոքքերնին նեղերն են» (125):

Նկատենք, որ բժշկարանում զուգահեռ գործածվում է նաև տերմինի համադրական տարբերակը՝ *սրտադգալ*. «Զի կայ նեղ, որ ասեն իւրն *սրտադգալի* ցաւ...որ պատահէ ստամոքքերնին, վասն այնոր ասեն *սրտադգալի* ցաւ» (130-131):

Կազմախոսական վերոնշյալ բառակապակցություն-տերմիններից հայերենի բառապաշարում իսկական բարդության ձևով պահպանվել և ամրագրվել են երկուսը՝ *ողնուղեղ*-ը և *սրդագդալ*-ը:

Ախտաբանական բառակապակցություն-տերմինները նկարագրորեն արտահայտում են որոշակի հիվանդությունների կամ դրանց ախտանշանների անվանումները: Այս խմբում առանձնացրել ենք անվանական և բայական բառակապակցությունները: Անվանականների հիմնական մասը արտահայտված են հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ:

Առիւծոյ ցալ կամ առիւծու նեղ ախտանունը մատնանշում է «*բորոտություն*» վարակիչ հիվանդությունը, որը առաջացնում է մաշկի և հյուսվածքների քայքայում, իսկ մարդու դեմքը անճոռնիանում և առյուծի դեմքի է նմանվում: Տեր-

մինը կիրառվել է արաբերեն *դայ-ըլ-ասատ*-ի պատճենմամբ (հիվանդությունը առյուծ (ասատ). «Եւ այս նեղքս անուանեն իմաստունքն *առիծու նեղ*, զի գայ ժամանակ, որ առիծն գողենայ: Եւ նշան գողութեան, որ լինին աչից սպիտկուցն մքգոյն, և բոլորի պտտոլն և աչքն նմանէ ի առիծու աչք, նայ վասն այնոր կու ձայնեն առաջին իմաստունքն *առիծու ցաւ*» (36):

Նշենք նաև, որ 17-րդ դարում Ասար Սեբաստացու բժշկարանում գտնում ենք նաև հոմանիշ *ասլանցաւ* բառը⁹: *Առյուծի ցաւ* կամ *առյուծացաւ* տերմինը, չունենալով լայն կիրառություն, չի պահպանվել, տեղ չի գտել նաև բառարաններում:

Արեան ուռեց // արինային ուռից «հեմատոմա». «Ասեն առաջին իմաստունքն վասն արեան այտոցին անուն ֆելդամունի, որ է *արեան ուռեց*» (28): «Եւ թէ այս *արինիս ուռիցն* ի յղուղն լինի նա անուանի սարսամ» (30):

Անկամայ ելն գոգին «անմիզապահություն». «Նեղեր, որ ի փաղայբուշտն լինին՝ քարն է և գոգարգելն, և կաթ-կաթ գո-գելն, և *անկամայ ելն գոգին*» (160):

Զքավորիլ աչաց (աչքի հիվանդություն է). «Բայց աչքն փոքրնայ և մաշի և իւր անուն ասեն *չքավորիլ աչաց*» (84):

Խաշիլ աչից կոպաց «կոպաբորբ». «Եւ ցաւերն, որ ի կոպքն լինին, որ է սըվախ՝ որ է *խաշիլ աչից կոպացն*» (85):

⁹Ասար Սեբաստացի. *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993, էջ 326:

Նկատի են առնվում հետևյալ բառարանները. *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1846, *Նոր բառգիրք հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1836-37, Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971-1979, Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, Հ. Աճառեան, *Հայերեն գաղափարական բառարան*, Թիֆլիս, 1913, *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Ե., 2001-2012, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին Հայերենի բառարան*, Ե., 2009:

Խելացն կորսնեւն «ուշագնացություն» «և լինի *խելացն կորուսանեւն* վասն յոլով և սուր տաքութեան, որ ելանէ բուխարն ի դուղն, և դուղն չկարէ վարել զվատն, զի վատուծ է» (57):

Խելաց շուրջ գալ «զխապտույտ». «և տուար, որ է *խելացն շուրջ գալ*» (183):

Խելաց պղտորումն «մելամաղծություն». «Եւ զոր ասցաք ի յառաջդ մալանխուլիայ, որ է *խելաց պղտորիլն*» (65): «Հետ այս ուռիցինս *խելացն պղտորումն* լինի և մտացն կորուսնեւ» (119):

Կանանց կարգի արին «դաշտան». «նայ այն *արիւնն* է արգիլել, որ ի *կանանց կարգի* լինի» (170):

Շան ստամոք «շատակերություն». «և է որ քաղցենայ յոլով և անուանի շան ստամոք» (127):

Սրտի ելունդ տերմինով Գրիգորիսն արտահայտել է բժշկության մեջ հայտնի սրտապարկի բորբոքման ելունդավոր տեսակի (կոծիծավոր էնդոկարդիտ)¹⁰ հասկացությունը, իսկ սրտի թալնալ (գրբ. թուլանալ) տերմինի տակ ըստ երևույթին հասկացել է «սրտամկանի թոռշոմածություն» հիվանդությունը¹¹. «Եւ (*սրտի*) *թալնալն* այն է զոր ասէ Գաղիանոս և Բագարատ, զի արձակի անասնական զօրութիւն յանկարծակի և ընդ մինն վաթի» (121): «Եւ լինի *թալնալն* ի կանանցն ի յայնժամն, որ որովայնն ծննդականին խեղդի» (122): Նկատենք, որ բժշկարանի «*Վասն սրտին նեղերոյն պատճառացն եւ նշանացն*»¹² գլխում հաճախ բառակապակցության փոխարեն կիրառվել է միայն երկրորդ բաղադրիչը՝ այդպիսով արտահայտելով ընդհանուր բառակապակցության իմաստը:

¹⁰Ա. Կծոյան, *Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցալոց*, Ներածություն, Ե., 1962, էջ LXVI:

¹¹Տե՛ս նույն տեղում:

¹²Տե՛ս նույն տեղում, էջ 119-123:

Սրտին խաղալ «սրտխառնոց». «Եւ այս ցաւերս պատահին կոլնջին՝ յոլով խոցտուկ, և սրտին խաղալ և վերաբերութիւն և պնտութիւն փորոյն» (141):

Սրտին ձգել // ձգել սրտին «փսխում». «...զի թէ էլա-յուսն ի ուռիցէ լինի՝ յոլով ցաւ, և խոցտուկ, և փքոել աղեացն, և ձգել սրտին, և ձգել աղբն» (142):

Տուրևառ // տուրևառութիւն շնչոյ «շնչառություն» «Եւ խեղդիլն որովայնին այն է, որ չկարէ և խափանեալ է և տուրևառութիւն շնչոյ» (168): «...և երբ այս ցաւս յոլով լինի, նայ տուրևառ շնչոյն սուր սուր և սիրտն խոկայ» (62):

Որոշիչ-որոշյալ հարաբերությամբ արտահայտված բառակապակցություն-տերմիններից առանձնացրել ենք երկուսը.

Անխել քուն «կոմա». «Նայ սապաթ առնէ, որ ասէն անխել քուն» (9):

Դեղին ջուր «շիճուկահեղուկ». «Թէ հիւանդին քթէն դեղին ջուր կարէ և կամ կանանչ՝ մահու նշան է» (207):

Ախտաբանական բժշկական տերմինների շարքում առանձնանում են նաև հիվանդության ախտանշան արտահայտող բայական բառակապակցությունները, որոնք դարձվածի արժեք ունեն և հանդիպում են նաև բարբառներում ու ժողովրդախոսակցական լեզվում:

Աչքը նստիլ «տեսողությունը վատանալ». «Հետ այտոր խորունայ և ապայ նստի աչքն և այլ չտեսանէ» (88):

Երկու հոգի լինել «հղի լինել». «Եւ թէ այս նեղս պատահէ կանանց, որ երկու հոգիք լինին և յարժամ ծնանի տղայն, նայ ազատին ի ցաւոյն» (64): Այս դարձվածը կենսունակ է բարբառներում և ժողովրդախոսակցական բառապաշարում¹³:

¹³Տե՛ս նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Ե., 2001, էջ 390: Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 219:

Ելնել ներքև և ելնել վերև բառակապակցություն-տեր-
մինները բժշկարանում գործածվել են «արտաթորել» և «փսխել»
նշանակություններով. «Զոր *ելնէ* ի մարդոյն *վերև* և կամ *ներքև*»
(136):

«Ուշաթափվել» հասկացության համար Գրիգորիսը կի-
րառել է իմացքն կորուսանել, խելքն անցնիլ և խելքն կորու-
սանել համարժեք դարձվածները. «Թէ հիւանդին *խելքն անցնի*ն
զիմացքն կորուսանէ, և երբ արթնու՝ *խելքն ի վերայն գայ*, նայ
բարոյ նշան է» (213-214): «...և այս է նշանս, որ քնանայ և յուշ
արթնու, և յուշ տայ պատասխան, և *զխելս կորուսանէ*» (58): «զի
այս երկու ուղիցս *զխելսն կորուսանէ*» (119):

Խելքն ի վերայն գալ «ուշքի գալ». «Երբ արթնու՝ *խելքն ի
վերայն գայ*, նայ բարոյ նշան է» (214):

Միրտն շարժիլ «սրտխառնոց ունենալ». «...իւր նշանն
այն է, որ կսկծի ստամոքքերանն, և սիրտն շարժի» (129):

Նշենք, որ վերջին դարձվածը հայերենի բառապաշարում
ամրագրված է այլ՝ «հուզել» իմաստով¹⁴:

Այսպիսով՝ ամփոփելով ևս մեկ անգամ նշենք, որ Գրի-
գորիսի բժշկարանում կիրառված վերոհիշյալ բառակապակ-
ցություն-տերմինները կարևորվում են ոչ միայն օտար տերմի-
նի հայերեն համարժեքը թեկուզ նկարագրորեն ներկայացնելու,
այլ նաև միջին հայերենի լեզվափուլում բժշկական տերմինա-
բանության զարգացումը մատնանշելու առումով: Քննված ան-
վանական բառակապակցություններից երկուսը՝ *ողնաշարի ու-
ղեղ*-ը և *սրտի դգալ*-ը, արդի հայերենի բառապաշարում ամրա-
գրվել են համադրական բարդության ձևով (*ողնուղեղ*, *սրտա-
գղալ*), իսկ բայական բառակապակցություններից մի քանիսը

¹⁴Տե՛ս Ա. Գալստյան, *նշվ. աշխ.*, էջ 530:

(երկու հոգի լինել, խելքը անցնել, խելքը կորցնել, խելքը վրան գալ) այսօր էլ կիրառելի են բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում:

Tadevosyan Hasmik -Use of the Term-phrases in the Grigoris' Medical Book "Analysis of Human Nature and His Aliments". - In the medical book of Grigoris, one of the greatest representatives of the 13-th century Cilician medical school, besides of borrowings and newly-formed word-terms were used a lot of term-phrases. Despite the fact, that they express the term's conceptual meaning by the description, but it is important for the giving Armenian equivalent, besides that, they indicate the way in which Armenian medical terms are formed, in particular, the transition from a phrase to its proper compound word. This article discusses the term-phrases that are not found in the 12-th century's medical books. They are presented with two groups: anatomical term-phrases and pathological term-phrases.

Татевосян Асмик - Употребление терминов словосочетание в лечебнике Григориса "Анализ природы человека и его недугов". - В лечебнике Григориса - одного из крупнейших представителей киликийской медицинской школы 13-ого века, кроме заимствованных и новообразованных слов-терминов употреблялось значительное количество терминов-словосочетаний. Последние выражают значение термина описательно, но они важны с точки зрения предоставления армянскому эквиваленту иностранного термина, в дополнение к указанию пути формирования армянских медицинских терминов, в частности перехода от словосочетания к реальной сложности. В статье рассматриваются термины словосочетание, которые не встречаются раньше, особенно в лечебниках 12-го века. Они представлены в двух группах: анатомические термины-словосочетания и патологические термины-словосочетания.

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՐՈՇ
ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ինչպես հայտնի է, հնաբանություններ են համարվում լեզվի զարգացման տվյալ փուլի համար հնացած, ակտիվ գործածությունից դուրս մղված բառերն ու դարձվածային միավորները, որոնք սովորաբար ընկալվում են իբրև լեզվի զարգացման ավելի վաղ շրջանի մնացուկներ: Հնաբանությունները առարկաների և հասկացությունների այնպիսի անվանումներն են, որոնք ամենևին չեն հնացել, բայց որոնք արտահայտելու համար ներկայումս գործածվում են այլ բառեր:

Գ. Զահուկյանը, «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ քննելով հայերենի բարբառների բառային հնաբանությունները, դրանք բաժանում է մի քանի խմբի՝ 1. գրաբարից տարբեր, տվյալ բարբառի հնչյունափոխության սովորական օրենքներով չբացատրվող հնչյունական կերպարանք ունեցող բառեր, 2. գրաբարից տարբեր կազմություն ունեցող, գրաբարյան բառիմաստից տարբեր՝ նրան զուգահեռ կամ նրանից հին բառիմաստ, 3. գրաբարում չպահպանված կամ գրաբարից տարբեր ձևով պահպանված հին փոխառություններ, 4. նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ:

Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներն էլ գիտնականը իր հերթին տարանջատում է երկու խմբի՝ 1. արմատներ, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով՝ ենթարկվելով հայերենի ընդհանուր օրինաչափություններին, 2. արմատներ, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից՝ ենթադրելով օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին

փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ էլ դեռ հայտնի չէ¹:

Սույն հոդվածում մենք անդրադառնալու ենք Համշենի բարբառում առկա որոշ հնաբանությունների, որոնք բաժանել ենք երկու խմբի՝ 1. գրաբարյան բառեր, որոնք գրական հայերենում այսօր գործածական չեն, սակայն պահպանվել են Համշենի բարբառում, 2. գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ, որոնք առ այսօր գործառում են Համշենի բարբառում:

Համշենի բարբառի բառապաշարում իբրև հնաբանություններ իրենց յուրահատկություններով առանձնանում են ազգակցական հարաբերություններ արտահայտող որոշակի բառանուններ, որոնցից քննելու ենք *հօրու*, *մօրու*, *նէր*, *մօմար*, *դալար*, *բուլիզ* և այլն:

Մօրու: Ըստ Գ. Զահուկյանի՝ վաղնջահայերենը պիտի ժառանգած լիներ մարդու սեռի, տարիքի և ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ հնդեվրոպական հիմնական անվանումները՝ իհարկե, տարածքային որոշակի սահմանափակումներով: Վաղնջահայերենում լայնորեն պետք է որ լինեին ազգակցական տերմինների սկզբնական շատ ձևեր՝ *հայր*, *մայր*, *ուստր*, *դուստր*, *որդի եղբայր*, *քույր*, *հաւ*, *հան «տատ»*, *թոռն*, *սկեսուր*, *հարսն*, *նու*: Բավական շատ են նաև խորթ ազգականների անվանումները՝ *յաւրայ*, *մաւրու*, *ուրջու*²:

2. Աճառյանը փաստում է, որ դեռևս Հովհան Ռսկեֆերանի «Մեկնութիւն թղթոցն Պօղոսի» աշխատության մեջ վկայված է բնիկ հայերեն *մօրու*-ն (գրված է նաև *մուրու*)՝ որպես «խորթ մայր» հասկացության բառանուն: Գիտնականը վկայակոչում է նաև Հյուբշմանին, ըստ որի՝ այն ձևավորված է

¹ Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետ՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 277-283:

² Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 260:

մայր արմատի սեռական հոլովածնից մօր<մայր<հնխ. mātrós, իսկ մօրու-ն մայրու< հնխ. mātruyā ձևից³:

6-11-րդ դարերում *յարայ*, *մայրու*, *ուրջու* բառանունների կիրառությունը աստիճանաբար նվազում է, ավելի հաճախ գործածվում են *յետնամայր*-ը, *հայրագիր*-ը, որոնք հետագայում համալրվում են բառակազմական հարացույցի մյուս անդամներով՝ *մայրագիր*, *եղբայրագիր*:

Ինչպես հայտնի է, գրաբարյան *յարայ*, *մայրու*, *ուրջու* բառանունները արդի գրական հայերենում չեն գործածվում: Հակառակ գրական հայերենի՝ *մօրու* բառանունը պահպանվել է բարբառային հայերենում՝ *խորթ* բառի պես որոշչային կիրառությամբ և հիմնականում դրսևորված բաղադրյալ բառաձևերով: Օրինակ՝ Շատախում գործածվել է *մուրումեր*, Բուլանըխում, Մուշում՝ *խօրթումուրու*⁴, իսկ այսօր, Կարնո բարբառի բարբառախոսների վկայությամբ, նաև՝ *խօրտումօրի* բառանունները:

Հետաքրքրական է, որ Խոտրջուրի և Համշենի մի շարք խոսվածքներում բառանունը պահպանված է գրաբարյան տարբերակով՝ *մօրու-ն*՝ որպես «խորթ մայր» հասկացության նշանակելի⁵: Խաչատուր Թահմազը փաստել է նաև *մօրու* բառից ձևավորված *մօրուտտին*՝ «խորթմայրություն», նշանակությամբ բառանունը⁶:

Հօրու բառանունը ավանդված է միջին հայերենից և առաջին անգամ հանդիպում է Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Հիմքեր կան, սակայն, ենթադրելու, որ այն կիրառական է եղել հետդասական գրաբարում և իհարկե կառուցված է *մօրու* բառի համաբանությամբ: Ձևաիմաստային

³ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 246:

⁴ Տե՛ս նույնը, էջ 247:

⁵ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հ. Դ, Ե., 2007, էջ 80, Հ.Աճառյան, *Քննություն Համշենի բարբառի* (այսուհետ՝ ՔՀԲ), Ե., 1947, էջ 246:

⁶ Խաչատուր Թահմազ, *Ձենիզի բարբառի բառարան*, Սոչի, 2014, էջ 144:

ընդհանրության շնորհիվ դրանք ընկալվում են որպես *հայր* և *մայր* բառերի ածանցյալներ, իսկ հիմքի ընկալելիությունը նպաստում է բառերի կիրառականությանը: Կարծում ենք՝ *հորու* բառը խոսակցական նորակազմություն է, որն էլ գրավոր խոսքից աստիճանաբար դուրս է մղել իմաստային հարացույցում ձևով մեկուսի գրաբարյան *յորայ*՝ խորթ հայր բառանվանը: Ինչպես նշեցինք, արդի գրական հայերենում մեկուսացել և կիրառումից դուրս են մղվել ստուգաբանորեն *հայր* բառի սեռական հոլովաձևից սերող *հորու* և *մայր* բառից սերող *մորու* բառանունները: Անառարկելի փաստ է, սակայն, որ հինհայերենյան յուրօրինակ այս բառաձևերը նույնությամբ գործածական են եղել և՛ Համշենի բարբառում, և՛ Խոտրջուրի խոսվածքում:

Ներ-ը համարվում է բնիկ հայերեն բառ, ու ինչպես վկայում են Նոր Հայկազեան բառարանը և Հ.Աճառյանը, *ներ* բառի սկզբնական նշանակությունն է եղել «ամուսնու մյուս կինը կամ հարսնակից կանայք երկու եղբայրների»⁷: ՆՀԲ-ում բառը համարվում է նու+եր «նուեր, նուանք» հարսներ ձևից առաջացած՝ «հարսնակից կանայք երկուց եղբարց կամ միևնույն առն ի հին օրենս»⁸: Եվ արդեն 5-րդ դարում հասարակական ընկալմամբ «տեգոր կինը» և «ամուսնու մյուս կինը» բոլորովին տարբեր հասկացություններ են: Ո՛չ արդի գրական հայերենում և ո՛չ էլ հայերենի բարբառներում չի գործառում գրաբարյան «ամուսնու մյուս կինը» նշանակությունը, քանի որ այս նշանակելին այլևս բնորոշ չէ ազգակցական իրական համակարգին: «Ամուսնու մյուս կինը» իմաստը աստիճանաբար հնանում է, և *ներ* բառի կիրառությունը սահմանափակվում է միայն *տեգորկին* իմաստով:

Հարկ է արձանագրել, որ արևմտյան խմբակցության բարբառախմբերի խոսվածքներում լայն գործառություն է

⁷ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ. 3, էջ 443:

⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ), հ.2, Ե., 1981, էջ 414:

ունեցել հինհայերենյան *նէր* բառանունը (Քեսաբ, Բեյլան, Հաջըն, Խարբերդ, Երզնկա և այլն): Ի դեպ, Քեսաբի և Սվեդիայի բարբառներում արձանագրված են անգամ *նէր* արմատից բաղադրված *նիրդըզէն*, *նուրդըզէն* բառանունները, այսինքն՝ այն *նէր+տիկին* կաղապարով կազմված բաղադրյալ բառանուն է: Կարծում ենք՝ *տալտիկին*, *նէրտիկին* և նման կաղապարներով առաջացած բառերը վկայում են երբեմնի ազնվականական-իշխանական ընտանեկան բարքերի մասին, որոնց վերացումից հետո դրանք պահպանվել են իբրև մնացուկային երևույթներ և աստիճանաբար ստացել ընդհանրական կիրառություն:

Մեր խնդրո առարկա բարբառում, մասնավորապես Աբխազիայի տարածաշրջանում բնակվող համշենահայերի խոսվածքներում, այսօր էլ գործածական է *նէր* բառանունը՝ «*տեգորկին*» նշանակությամբ (Նիրեճը ագոըն ցավիր գու)⁹:

Դալար: Լեզուները կամ բարբառները ըստ անհրաժեշտության ճշգրիտ նկարագրական անվանումներ են ստեղծում հատկացուցիչ-հատկացյալի, որոշիչ-որոշյալի համադրությամբ: Այս տրամաբանությամբ գրաբարից վկայված է *քեռայր* գեղեցիկ հնաբանությունը, որը գործածվել է Խորենացու երկում՝ «*քրոջ ամուսին*» նշանակությամբ:

Ինչպես արևմտահայ գրական լեզվում, այնպես էլ արևմտյան որոշ բարբառներում, օրինակ, Նիկոմեդիայի Ադաբազարում գործառել է հիշյալ բառանունը: Արևմտյան որոշ բարբառներ (Քեսաբ, Սվեդիա) *քեռայր* կաղապարի համաբանությամբ և իրենց յուրօրինակ լեզվամտածողությամբ «*հորաքրոջ ամուսին*», «*մորաքրոջ ամուսին*» հասկացությունների դիմաց ստեղծել են եռակի միջնորդավորված *հորքուրար*, *մորքուրար* բաղադրյալ բառանունները: Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» աշխատությունում արձանագրել է ոչ միայն *մորկուրար*, *հորկուրար*

⁹ Տե՛ս տետրեր հհ. 52, 94, 252, 336:

բառանունները, այլև *տալ+այր կաղապարով ձևավորված դալար*¹⁰ բառանունը՝ որպես «*տալոջ ամուսին*» հասկացության նշանակելի¹⁰:

Բուլիզ: Բարբառային հայերենում *աղջիկ* հասկացության բառանուն է դիտարկվել *բուլիզ* բառանունը: Այն առկա է Համշենի Ունիեի շրջանի Բալլուղ գյուղում և առ այսօր գործառում է Աբխազիայում բնակվող համշենահայերի բարբառում. իհարկե, բարբառին բնորոշ հնչյունափոխությամբ խուլը դարձել է ձայնեղ՝ պուլիկ>բուլիզ (օրինակ՝ Ի նձ ունիս, մօ նձ, տա՞ *բուլիզ*): Հ.Աճառյանը իր աշխատության մեջ ևս արձանագրում է *պուլիկը*¹¹՝ որպես «աղջիկ» հասկացության բառանուն: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ *բուլիզը* միայն 1-4 տարեկան փոքրիկ աղջնակին տրվող անվանումն է:

Գ. Ջահուկյանը բարբառների բառային հնաբանությունների մեջ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների շարքում ներառել է նաև հիշյալ *պուլիկ* բառանունը: Գիտնականը կարծում է՝ սա այն արմատներից է, որոնք շեղվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններից և ենթադրում են օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից հին փոխառություն, որի աղբյուրը չի պահպանվել կամ դեռևս հայտնի չէ: Ըստ գիտնականի՝ *պուլիկը* և *պլուզը* առնչակից են և ծագել են հ. -ե. πο(υ)λος «ձագ»՝ που՝ «փոքրիկ, մանր» արմատից¹¹: Արևմտյան բարբառներից, օրինակ, Կիլիկիայի բարբառախմբում *պուլիկ* բառանունը *պլուզ*, *պուլուզ*, *պլեզ* հնչատարբերակներով է գործածվել, և «մանուկ» հասկացության նշանակելին է եղել: Մարաշում, Հաջընում, Ջեթունում ևս առկա է եղել հիշյալ բառանունը՝ *բուլուզ*, *բըլուզիկ* հնչաձևերով՝ որպես «երեխա» հասկացության բառագուգաբանություն:

¹⁰ Հ.Աճառյան, ԲՀԲ, էջ 254:

¹¹ Գ.Ջահուկյան, ՀԲՆ, էջ 319:

Անագան: Հին մատենագրության մեջ ավանդված է «ուշ մնացած, յետին, երեկոյ եղած, տարաժամ» նշանակությամբ: Գործածվել է հիմնականում ուղիղ ձևով, միայն ուշ վկայություններում է դրսևորված սեռական հոլովով: Վկայված են նաև այս բառից բաղադրված *անագանութիւն*, *անագանիմ*, *անագանեմ* բառանունները¹²: Բարբառային հայերենում սույն բառանունը գործածության լայն ընդգրկում ունի: Մոկսում՝ *հաննակման*, Մուշավա՝ *անգ'ան*, Խարբերդ՝ *անքան*, Ալաշկերտ, Մուշ՝ *յանգ'ան*, Զեյթուն՝ *անգ'ոն* և այլն. հիշատակված բոլոր վայրերում բառանունը գործածվել է «ուշ» նշանակությամբ: Մարաշում բառն ունի «երեկո» հասկացության գործառույթ՝ *Անգան* ատեն ո՞ւր կերթաս: Բարբառային հայերենում գրաբարյան *անագան* բառից կազմված բայերը ևս գործածական են՝ *անգննալ*՝ Խրբ., Վան «ուշանալ, ուշ մնալ», Մարաշ՝ «երեկո լինել, տարաժամիլ» (Օրը *անգնցալ*), Մուշավա՝ *անգրնվիլ* «երկար տևել, ուշանալ» (Մեղանը պիտի *անգնուի*)¹³: Հիշյալ բառանունը Համշենի բարբառում դրսևորված է *օնկօն* հնչաձևով (*Օնկօն* տընտումը սադոեծի՝ տնկեցի) և բառիմաստային ճյուղավորմամբ ձեռք է բերել «աշնան ուշ ցանված ցանք» նշանակությունը¹⁴: Ի դեպ, հին մատենագրության մեջ հիշատակված ունենք *անագանավար*՝ ուշ ցանված իմաստով բառանունը¹⁵, թերևս այս բառանվան իմաստից է Համշենի բարբառում բառս այդ նշանակությունը ստացել:

Վրա: Համշենի բարբառի բառային հնաբանություններից է նաև *վրա*՝ «անձրև» նշանակությամբ բառանունը: Այն գրաբարյան մատենագրության մեջ վկայված չէ:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշ բառեր կարող են դուրս մղվել գործածությունից և չփոխանցվել հետագա փուլերին, սակայն կարող են գործառական

¹² Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 177:

¹³ Տե՛ս նույնը, էջ 178:

¹⁴ Հ. Աճառյան, ԲՀԲ, էջ 42., Խ. Թահմազ, էջ 214:

¹⁵ Հ. Աճառյան, ՀԱԲ, հ. 1, էջ 178:

ակտիվություն ունենալ և շարունակել կիրառվել բարբառային հայերենում: Այսպիսին է *վրա* բառանունը, որը Գ.Ջահուկյանը բարբառային հնաբանություն է համարում. «Վրա՝ «անձրև» (Տր.)- ավ. *vār* «անձրև» (հ.-ե. *aṣer* «ջուր, անձրև, գետ»)»¹⁶: Հ.Աճառյանը ևս Գավառական բառարանում արձանագրել է «անձրև» հասկացությունը՝ *վրայ*, *վըրայեկ* բառանուններով, որոնք գործածական են Համշենում և Տրապիզոնում: Ըստ նրա՝ *վրայեկը* «հասարակ թեթև անձրևն է», ավելի սաստիկը «թաթալ»-ն է: *Վըրա* բառային հնաբանությունից էլ բաղադրված է *վըրայ անեկ*՝ անձրևել (*Վրայ* ըրալ թրջուեցա) բայանունը¹⁷:

Փաստենք, որ, ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերի, Համշենի մի քանի խոսվածքում վկայված է Գ.Ջահուկյանի հիշատակած *վըրա* բառանունը՝ «անձրև» նշանակությամբ¹⁸: Հարկ է նշել, որ վերջինս Համշենի միայն մի խոսվածքում է *վըրա* հնչաձևով հիշատակված¹⁹, այնինչ խոսվածքների մեծ մասում *վըրա* բառանունը արձանագրված է *վըրայեկ*, *վըրեգ*, *վըրայիգ*, *վըրյեգ*, *վըռայիգ* հնչատարբերակներով (*Վըրայեգը* զրդոեծավ: Տուսը *վըրայեգ* զրնա: *Վըրայեգին* դագ թատվեծա (թրջվեցի)²⁰:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառերը հաճախ ենթարկվում են կառուցվածքային փոփոխությունների, որի պատճառը շատ հաճախ բառիմաստի մթագնումն է: Մեր կարծիքով՝ Համշենի բարբառում առկա *վըրայեգ* բառանվան մեջ ևս տեղի է ունեցել «անձրև» իմաստով *վրա* բառի մթագնում, և այն պատկերավոր լեզվամտածողությամբ ընկալվել է որպես *վրա+եկ* (այսինքն՝ *վրան եկող*) արմատների համադրումից առաջացած բառանուն:

¹⁶ Գ.Ջահուկյան, ՀԲՆ, էջ 328:

¹⁷ Հ.Աճառյան, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 1005-1006:

¹⁸ Տե՛ս տետրեր հ.39, 52, 94, 252, 336, 187:

¹⁹ Տե՛ս տետր հ.94, *Օրդուի խոսվածք*:

²⁰ Տե՛ս նույնը:

Ուշագրավ օրինակներ են վկայված նաև Հայոց լեզվի բարբառային բառարանում. *վըրաիկուտ*, որ Համշենում նշանակում է անձրևից թրջված (*Վըրաիկուտ* հավիլնին փոխից), *վըրախիկ*, որ գործածվել է Վանում՝ նշանակելով դրսի դռան վերևի մասում դրված փոքր ծածկ, որը պաշտպանում է դուռը անձրևից, ձյունից²¹: Մեր համոզմամբ՝ հիշյալ բառանունները աղերսվում են *վըրա*՝ «անձրև» իմաստով բարբառային հնաբանությունը:

Այսպիսով՝ քննելով Համշենի բարբառի բառապաշարը, նկատել ենք, որ այս բարբառը, կղզիացած ու մեկուսացած լինելով, իր բարբառային գանձարանում անաղարտորեն պահել ու պահպանել է հինհայերենյան հարուստ բառապաշարի շատ յուրօրինակ բառանվանումներ: Դրանցից որպես հնաբանություններ ենք դիտարկել գրաբարյան *հորու*, *մորու*, *դալար*, *ներ*, *անազան* բառերը, որոնք այսօր գրական հայերենի բառապաշարում ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել ակտիվ գործածությունից, սակայն պահպանվել են Համշենի բարբառում:

Այստեղ առկա են նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական մի շարք արմատներ, որոնցից որպես բարբառային հնաբանություն ենք դիտարկել նաև *վրա* և *պուլիկ* բառանունները, որոնք առ այսօր գործառում են հիշյալ բարբառում:

Khachatryan Hasmik - On dialectal archaisms of the Hamshen dialect.

This article studies the dialectal archaisms that appear in the Hamshen dialect. As such, we have discussed the following words in Old Armenian (Grabar): *հորու* [*horu*] (stepfather), *մորու* [*moru*] (stepmother), *ներ* [*ner*] (wife of brother-in-law), *դալար* [*dalar*] (husband of sister-in-law). We have also discussed the words *վըրա*

²¹ ՀԼԲԲ, հ., 2, Ե., 2010, էջ 102:

[vera] (rain) and բուլիկ [bulig] (little girl) of Indoeuropean roots not present in Old Armenian which are being used in the Hamshen dialect till now.

Хачатрян Асмик. Вокруг архаизмов в говорах амшенского диалекта. В данной статье исследуются архизмы, встречающиеся в говорах амшенского диалекта. В качестве таковых мы рассмотрели лексемы грабара: հորնի (хору -отчим), մորնի (мору- мачеха), ներ-жена деярся), դշւիք (далар - муж золовки) а также неотмеченные в грабаре лексемы с индоевропейскими корнями վերա (дождь), բուլիկ (булиг- маленькая девочка), которые в диалекте Амшена существуют по сей день.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ-ԽՈՍԱԿՑԱԿԱՆ
ԲԱՌԵՐ Ղ. ՓԱՐՊԵՑՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայերենի գրավոր շրջանի սկզբից ի վեր, պայմանավորված թարգմանությունների հետևանքով այլ լեզուներից կրած ազդեցությամբ, զիր ու գրականության մշակների արհեստական միջամտությամբ, բառակազմությամբ և այլ հանգամանքներով, ձևավորվել են գրական-գրքային իրողություններ՝ հակադրվելով բարբառային-խոսակցական երևույթներին:

Ցավոք սրտի մենք ծանոթ չենք առաջին ձեռագրերին, ուստի լիարժեք պատկերացում չունենք այն ժամանակվա հայերենի վերաբերյալ. հիշենք, որ մեզ փոխանցված ամենահին ամբողջական ձեռագիրը պատկանում է 9-րդ դարին: Մի շարք երկեր նույնիսկ հայտնի են միայն աշխարհաբարյան շրջանի ձեռագրերով: Եթե հաշվի առնենք, որ միևնույն երկի, հաճախ նույնիսկ անմիջականորեն իրարից ընդօրինակված ձեռագրերում առկա են լեզվական մի շարք տարբերություններ, ինչպես և կփաստենք ստորև, ապա պետք է հասկանալ, որ տասնյակ և ավելի դարերի ընդօրինակություններով փոխանցված ձեռագրերը մեզ կարող էին հասնել լրջագույն փոփոխություններով:

Փարպեցու Պատմությանը տարբեր առումներով անդրադարձողները նկատում են, որ այլ երկերի համեմատ շատ են կիրառվել աշխարհիկ-խոսակցական իրողություններ: Այս առումով հատկապես ուշագրավ են Ա. Այտընյանի նկատած փաստերը¹: Արձանագրելով, որ շատ տեղեր և առավելապես երկխոսության մեջ երևան են գալիս աշխարհաբարյան լեզվական տարրեր, գրում է. «Իւր տկար գրաբարին քով՝ զորն որ ջա-

¹ Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Ե., 1987:

նալով ու նմանելով կուզէ ճարտարել, շատ առոյգ եւ միանգամայն շատ գեղեցիկ ու զարդարուն է մեզի աւանդած աշխարհիկ լեզուն. եւ յայսմ է այն գրութեանց բուն բանասիրական արժէքն ու գլխաւոր արդիւնքը»²:

Հետագայում Փարպեցու գործերում տեղ գտած աշխարհիկ իրողություններին անդրադարձել է նաև Վ. Առաքելյանը՝ նկատելով. «Փարպեցին իր գիրքը գրել է շատ մաքուր գրաբար հայերենով, միայն երբեմն կիրառել է ժողովրդախոսակցական բառեր, դարձվածքներ, քերականական ձևեր, շարադասություն ու համաձայնություն, որոնք Բուզանդի հետ կիրառել են նաև մյուս հեղինակները, բայց ավելի՛ պակաս չափով, քան Փարպեցին ու Բուզանդը»³:

Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարը» գրքում նույնպես անդրադարձել է Փարպեցու երկերի բառապաշարին եզրակացնելով. «Քննությունը ցույց է տալիս, որ նա հենց միայն բառապաշարում հակված է նաև դեպի գրականը, աշխարհիկ տարրերին հակադրվող ոճերն ու բառամթերքը: Այսինքն՝ նրա երկը կրում է իր ժամանակի կնիքը, ինչպես Խորենացու գործը և թարգմանական բազմաթիվ աշխատանքներ»⁴: Ապա և «Գրական նորմային հարող բառապաշար» բաժնում ներկայացնում է տասնյակ բառեր, որոնք շեղվում են գրական-գրքային բառապաշարից⁵:

Բառապաշարի քննությունը, բնականաբար, կատարել ենք ըստ Փարպեցու երկերի քննական բնագրերի⁶, որոնք Ստ. Մալխասյանցը և Գալուստ Տեր-Մկրտչյանը կազմել են հրապա-

² Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 59:

³ Վ. Առաքելյան, *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության*, (V դար), Ե., 1981, էջ 199:

⁴ Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառապաշարը* (V դար), Ե., 2006, էջ 155-156:

⁵ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 182:

⁶ Ղազարայ Փարպեցու *Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան* (աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան), Տիֆլիս, 1904:

րակում եղած մի քանի ձեռագրերի հիման վրա⁷: Ինչպես համեմատության արդյունքներն են թույլատրում նրանց եզրակացնելու, թե՛ Պատմության և թե՛ Թղթի՝ մեզ հայտնի ձեռագրերի Մայր օրինակը 1672 թ. Գրիգոր երեցի ձեռքով Բաղեշում ընդօրինակվածն է⁸: Հայտնի է, որ Պատմությունը առաջին անգամ հրատարակվել է 1793թ. Վենետիկում⁹, սակայն 1774թ. էջմիածնում Սիմեոն կաթողիկոսի պատվերով Մայր ձեռագրից ընդօրինակված սխալաշատ տարբերակի հիման վրա, ուստի Փարպեցու երկերի քննական բնագրերի հրատարակիչները առաջին անգամ օգտագործել են Մայր ձեռագիրը՝ տողատակին տալով տարբեր ձեռագրերում առկա ընթերցումները:

Իրականում Փարպեցու երկերը գրված են խոսակցական-բարբառային և գրական-գրքային իրողությունների ներդաշնակ միահյուսմամբ: Հնարավոր չէ որևէ հատված առանձնացնել, որը լեզվաոճական առումով խիստ տարբերվում է: Փորձենք վերհանել և քննել բառապաշարի այն շերտը, որ կաբելի է համարել բարբառային-խոսակցական:

Վ. Առաքելյանը, վկայելով հոմանշային ճոխ համակարգի տարբեր բարբառներից գալու հանգամանքը, ավելացնում է. «Բարբառային տարրերը իրենց զգացնել են տալիս նաև հնչյունաբանորեն: Որքան էլ որ հրատարակությունների մեջ հրատարակիչները սրբագրում են ըստ գրաբարի, այնուամենայնիվ նկատում ենք կանոնիկության սահմաններից դուրս միտվող հնչյունական տարբերակումներ, որոնք այլ կերպ չեն կարող բացատրվել, քան այն, որ բարբառային հնչյունափոխական ե-

⁷ Գ. Տեր-Մկրտչեան, *Ղազար Փարպեցու ձեռագրերը*, Արարատ, 1901, էջ 542-549: Նույնը՝ էջմիածին, 1902:

⁸ Մ. Մալխասեանց, 1904թ. հրատարակության «Յառաջաբան», էջ Ժ:

⁹ Այս և նշվելիք այլ հրատարակությունների մասին նույն տեղում, ինչպես նաև՝ Պ. Մուրադյան, Կ. Յուզբաշյան, *Ղազար Փարպեցու նորահայտ պատմոհիկը*, Բանբեր Մատենադարանի, 1973 (№ 11), էջ 7-32, Տ. Գոյումճյան, *Ղազար Փարպեցի. Մատենագիտություն*, Ե., 1999:

րևույթներ են»¹⁰։ Այնուհետև լեզվաբանը նկատում է. «Փարպեցու լեզուն V դարի գրական լեզվի ընդհանուր օրինաչափություններից շեղվում է մասամբ նաև հնչյունական փոփոխություններով, որոնք նույնպես սկիզբ են դնում լեզվական նոր որակի առաջացման»¹¹։ Մի շարք բառեր շեշտավոր վանկում անգամ հնչյունափոխված են *դդեկ, խարտեշ, քարածեռ, գոնէ* և այլն¹²։ Մի քանի բառերի մեջ էլ նկատվում է հակառակ երևույթը. շեշտագուրկ վանկում, իբրև գրական լեզվից շեղում, հնչյունափոխություն չի կատարվել *անօրէնութիւն, լեառնախոյս, լեառնակողմն, դայեակորդի, ախոյեանաբեկ* և այլն։

Ա. Այտընյանը, միևնույն լեզվի հին և նոր լեզվավիճակների տարբերակիչ գծերից մեկը համարելով բառերի «կերպարանքը», գրում է. «Նոր բառերն առհասարակ ամփոփմամբ, սղմամբ, կրճատմամբ պարզուած կըլլան հիներուն բաղդատութեամբ»¹³։ Որպես այս գործընթացի բաղկացուցիչ տարրեր՝ դիտված են նաև հոդակապի սղումը և «ն վերջատրութեան թողուիլն ըստ ռամկօրէն լեզուի սովորութեան»¹⁴։ Փաստացի օրինակներում են Փարպեցուց քաղված հետևյալ բառերը՝ *չարկամ, վատտոռհմիկ, տգետխորհուրդ, խոհկերութիւն, նախգոյն*, առանց ն-ի՝ *շաղաւաշուրթ, ոսկեհուռ*։ Գրական լեզվի օրինաչափությունից շեղված բառերի շարքում Վ. Առաքելյանը նույնպես նկատի է առնում անհոդակապ բաղադրությունները՝ վերջիններս որակելով հոդակապի սղմամբ առկայացած կազմություններ և Փարպեցուց վկայելով հետևյալ բառերը՝ *սրտմե-*

¹⁰ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 82։

¹¹ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 208։

¹² Քանի որ կան նաև քննական բնագրերի համաբարբառները, ուստի նյութը չենք ծանրաբեռնել էջերի նշումով և, ընդ որում, չենք առանձնացրել երկու երկերի բառերը. *Հայկական համաբարբառ, «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց»* (№6), կազմ. Ա. Մարգարյան, Ե., հ.1-3, 1975-1978, «Ղազարայ Փարպեցոյ թուղթ առ Վահան Մամիկոնեան» (VI-2), կազմ. Հ. Հովհաննիսյան, Ե., 1973։

¹³ Ա. Այտընեան, նշվ. աշխ., էջ 72։

¹⁴ Նույն տեղում, էջ 73։

ռեալ, վատտոհմակ, ծունդդրություն, արդարատություն, երկայն-
մատություն: Պետք է ավելացնենք նաև՝ աշխարհոգություն, աղ-
քատսիրություն, աստուածգիտություն, լրջմտություն, շատխո-
սություն, ձեռնհաս: Անշուշտ, անհոգակապ տարբերակները
բնորոշ են կենդանի խոսակցական լեզվին:

Հետաքրքրություն է առաջացնում *մուրուք* (մօրուք) բա-
ռը, որի օ հնչյունով տարբերակն, ըստ բառարանային տվյալ-
ների, ոչ միայն V դարից է հայտնի, այլև ավելի տարածված է
եղել և, ըստ երևույթին, փոխանցվել է արդի գրական հայերե-
նին, իսկ վերոնշյալը մնացել է բարբառներում, այդ թվում և՝
Փարպիի խոսվածքում: Հետևյալների երկրորդ անդամները, ի
տարբերություն առաջինների, նույնպես բարբառային-խոսակ-
ցական բառաշերտին են պատկանում ճիշտ այնպես, ինչպես և
մեր օրերում. *երկար - երկայն, երկարեմ - երկայնեմ, մոխրանոց*
- մոխրոց, կիսամահ - կիսամեռ:

Բացի հնչյունական և բառակազմական տարբերակնե-
րից՝ պետք է նկատի առնել հետևյալը. «Գրաբարի համանիշա-
յին ճոխ համակարգը նույնպես թելադրում է մեզ մտածելու այն
մասին, որ դրանք եկած պիտի լինեն տարբեր բարբառներից»¹⁵:
Ա. Այտընյանը իր ընտրած երկերից ներկայացնում է նաև այն-
պիսի բառեր, որոնք բարբառային-խոսակցական են հոմանիշ-
ների առկայության պայմաններում. Փարպեցու գործածությամբ
են՝ *շատ* (փխ. *բազում* կամ *առաւել*, և հատկապես մակբայի
կամ ածականի վրա, փխ. *յոյժ* կամ *կարի*). *շատ* պարզև, *շատ*
վտանգ, նաև՝ *շատ* հեռի են, *շատ* օգուտ էր. *շալակ, բարակ,*
մօտիմ (փխ. *մերձենամ, մատչիմ*):

Ամենայն հավանականությամբ ժամանակի բարբառա-
յին հայերենի բառեր են նաև Փարպեցու գործածած հետևյալ
հոմանիշների ընդգծված անդամները. չարախօս - բանսարկու -
քսու - շոգմոգ, խոնաւութիւն - *գիճութիւն*, գերեզման - *շիրիմ -*
դիր, նշխար - փխրանք - խրխտր, քարուտ - աւազուտ - կոպ-

¹⁵ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 78:

ճուտ, կռան - ուռն «մուրճ, ուրագ», ոչխար - օղի, սակաւ - դոյզն - սուղ - խուն , փութամ - ճեպեմ - աճապարեմ - վաղվադեմ, խորհիմ - խոկամ - խոճոճեմ, հետազօտեմ - խուզեմ - կրկտեմ, զուարճանամ - ցնծամ - քրքուիմ, նեղեմ - խուեմ, թաքչիմ - ծածկիմ - սալարիմ , տկարանամ - մաշիմ - հաշիմ - ծիւրիմ, լռեմ - պապանձիմ - կարկիմ, վանեմ - պուղեմ, յօշեմ - քանցեմ, խայտամ - վերտիմ, նաւ - թարշամիմ (թառամել), թարթափիմ (դեգերել), սոնքանամ (գիրանալ), պասքիմ (ծարավել):

Որոշ ածանցների առկայությունն նույնպես վկայում է տվյալ բառերի՝ բարբառային-խոսակցական ծագման մասին: Նշվածին է առնչվում հետևյալը. «Այնպիսի անսովոր ուրիւններ ունինք, որոնք թէ իրօք ռամկական էին, թէ գաւառական էին, թէ անձնական, թէ սխալական գործածութիւններ, դժուար է որոշ մեկնութիւն մը տալ»¹⁶: Լ. Հովհաննիսյանը այդպիսիք համարում է այն բառերը, «որոնք առանց այդ ածանցի էլ կիրառվում են նույն իմաստով, կամ *ուրիւն*-ը ըստ էության հոգնակերտ մասնիկ է»¹⁷: Փարպեցու երկերում նկատվում են հետևյալները. *կատակութիւն, կարօտութիւն, դիտութիւն, ցերեկութիւն, ցրտութիւն, մարդկութիւն*: Նույնը վերաբերում է նաև *-անք*-ով նմանօրինակ կազմություններին. *թախանձանք, ծանականք, կատականք, կարօտանք, կասկածանք, ողորանք, պատճառանք, սխալանք*: Եթե մի դեպքում ածանցների առկայությունն է որոշում պատկանելությունը խոսակցական-բարբառային շերտին, ապա այլ պարագաներում առանց ածանցի դրսևորումներն են հարում հիշյալներին, իսկ ածանցներովը գրական-գրքային արժեք ունեն: Խոսակցական լեզվին են պատկանում հետևյալների առաջին անդամները՝ *բռնի - բռնաբար, ժառանգ - ժառանգաւոր - ժառանգորդ*: Նույն իմաստը կարող է արտահայտվել ինչպես հոլովական վերջավորությամբ, այնպես էլ որոշ ածանցների միջոցով: Առաջիններն ընդգրկում են խո-

¹⁶ Ա. Այտրնեան, նշվ. աշխ., էջ 74-75:

¹⁷ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 186:

սակցականի ոլորտը, իսկ երկրորդները՝ գրական-գրքայինի. *փութով* - *փութանակի* - *փութապէս*, *լիով* - *լիապէս*, *ճշգրտիւ* - *ճշգրտապէս*, *ստուգիւ* - *ստուգապէս*, *նենգով* - *նենգութեամբ* - *նենգաւորութեամբ*: Ըստ ՆՀԲ-ի և V դարի ինքնուրույն գրականության համաբարբառների տվյալների հետյալ բարբառային բառերի միակ վկայությունները պատկանում են Փարպեցուն.

Գահող բառը նույն *գահեմ* «ուժգին հարկանել» բայի ենթակայական դերբայն է, որը ՆՀԲ-ում տրված է առանձին գլխաբառով՝ որպես «գործի գահելոյ կամ գահակելոյ» նշանակությամբ գոյական: Հիրավի, տեղին է այդպիսի նշումը, մանավանդ որ այն Փարպեցու երկում ենթակայական դերբային ոչ հաստով՝ գործիականի - *ով* վերջավորությամբ է կիրառվել. «Երագագիւքն և *գահողուքն* ելեալ ի յորս»: ՀԼԲԲ-ում¹⁸ նշված *գահել* «ուժով խփել, հարվածել» բայը նույնպես արձանագրված է, սակայն որևէ տարածք նշված չէ: *Գդզիկ* «գծիկ կամ հերձիք փետրոյ նետին, որ յենու ի լարն աղեղան. ստորին ծայր նետի» - *գդզըկով* պառնակ: Նույնկերպ է մեկնված նաև ՀԱԲ-ում¹⁹: Այդ բացատրությունը ենթադրություն համարելով՝ Վ. Առաքելյանը գրում է. «Գդզիկը գրգիկ բառն է, որ կա շատ բարբառներում, նաև մեր խոսվածքում՝ գրոզիկ հնչումով. սա մի բույս է, որի թուփը ճիշտ սնձի նման է, գետնին կպած, և ունի բռնաքարի չափ արմատապտուղ, որը պատված է հաստ կոշտ կեղևով: Փարպեցին ակնարկում է ահա այդ արմատապտուղը, որը կարող է նետվել իբրև բռնաքար և թշնամուն հաղթել»²⁰: Մենք կարծում ենք, որ այստեղ *գուղձ* «հողակոշտ» բառի նվազականն է՝ *ձ*-ի /դզ/ պարզեցմամբ, որ կարող էր տեղի ունենալ *գդձիկ* - *գդզըկով*: *Խեկբեկս* - ՆՀԲ՝ մ. «իբր խեղ և բեկեալ, խեղաթիւրս կամ կաղալով իմն». «զի երթայր *խեկբեկս* յընթացի»: Հասկա-

¹⁸ Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, հհ. Ա-Ձ, Ե. 2001-2012 (այսուհետև՝ ՀԼԲԲ):

¹⁹ Հ.Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Ե., 1971-1979 (այսուհետև՝ ՀԱԲ):

²⁰ Վ. Առաքելյան, Բառաբանական դիտողություններ, ՊԲՀ, 1979, №4, էջ 35-45:

նալի է դառնում, որ *խեղ* բառարմատի *ղ*-ն հաջորդ արմատի *կ*-ի ազդեցությամբ փոխվել է *կ*-ի, այսինքն տեղի է ունեցել բաղաձայնների առնմանություն: Ըստ ՀԼԲԲ-ի՝ *խեկբեկ* բառը գործածվել է Վանի բարբառում «տձև, ճաքճքած խեցեղեն աման» նշանակությամբ: *խոճոճեմ* «մտմտալ» - ՆՀԲ-ում նշված է, որ լծորդ է *խոկամ* բային, որն էլ «լտ. *գոճի* բառէ», մեկնությունն է «որպես խորհիլ, վարանիլ ի խորհուրդս»։ «Ինքեանք միայն *խոճոճելով* առանձին զարմացմամբ որպես յանգզայութիւն ընկղմէին»: *խրխոր* «փշուր, մասունք»։ «Թէն փոքր *խրխոր* ինչ ունի, չար ինչ ի նա ոչ մերձենայ»: ՀԱԲ-ում նույնն է համարվում նաև *խրխիր* «փխրուն» տարբերակը, վերջում երկբայորեն տրված է նաև *խրխուր* որպես Շիրակի խոսվածքին բնորոշ բառատարբերակ: ՀԼԲԲ-ում նույնի համար նշված է նաև Արարատյան բարբառը, իսկ *խրխիր*-ի դեպքում նաև տրված է, որ Մշո բարբառում գործածվել է «աղաբիթ» նշանակությամբ: *կոպճուտ* «քարուտ, աւագուտ» - ընդ քարածեռ *կոպճուտ* տեղիս լանջակողմանցն: ՆՀԲ-ում մեկ վկայությամբ արձանագրված է նաև *կոպիճ* «խիճ» արմատը: ՀԼԲԲ-ում նույնպես վկայված են *կոպիճ* «կավէ ամանները հղկելու կոկ քար, կոկիչ» և *կոպճուտ* «խճով՝ կոպիճով ծածկած», սակայն նշված չէ, թե որ բարբառներում են հայտնի: *ճիտակ* - ՆՀԲ «որպես թէ ճիտտակ, վզնոց»։ «*Ճիտակս* կանայք քրիստոնէիցդ չհամարին ինչ հանել յանձանց» : Ուշագրավ է Վ. Առաքելյանի հետևյալ միտքը. «Աճառյանը համարում է *ճիտ*-ի հետ կապ չունեցող իրանական փոխառություն, իսկ *ճիտ* բառն էլ ընդունում է իբրև արաբական փոխառություն, որ թվում է անտեղի: Ինչպես երևում է, *ճիտ* արաբատյան խոսվածքին հատուկ մի գավառական բառ է, որ այսօր էլ այնքան հարազատ է հնչում Աշտարակում, Փարպիում և *ճիտակ*, որ վզնոց է նշանակում, հենց այդ *ճիտ*-ից է կազմված»²¹: *Շափառուկ* «զձեօք այդպես ամպ մթազին և շափառուկ անկաւ»։ ՆՀԲ-ն մեկնում է. «Թուի որպես պրս. շէպառուզի, գիշեր և տիւ. իբրև

²¹ Վ. Առաքելյան, *Ակնարկներ.....*, էջ 79:

մթութիւն գիշերոյ հասեալ ի տուրնջեան, կամ տըխրութիւն յուրախութեան»: Վ. Առաքելյանը նկատում է, որ Թումանյանը գործածել է բանաստեղծություններից մեկում. «Մթնեց հոգուս երկինքն անհուն, Սիրտս պատեց մեծ շափառուկ», որից և եզրակացնում է. «Եթե Թումանյանը բառարանից չի օգտվել, ապա արարատյան բառ պետք է համարել մառախուղ, մեզ նշանակությամբ»²²: Չի բացառվում, որ Թումանյանը ծանոթ է եղել Փարպեցու երկում արձանագրված տվյալ բառին, ուստի և գործածել է իր բանաստեղծական տողերում: *Պատշիր - ՆՀԲ՝ «դաշն. ուխտ»* (որպես և պ. *բատաշ՝* է փոխարեն, և թ. *պատաշ, դաշն*). «զգործդ զայդ քեզ *պատըշքաւ* տամ մինչև յաւիտեանս»: ՀԱԲ-ի մեկնությունն է՝ «մի արտօնութիւն հաստատելու համար տրուած թագաւորական թուղթ»: Թերևս կազմված է *պատաշ* և *իր* «առարկա» բառերից: *Քերթաքաղ - ՆՀԲ՝* «բառ անյայտ. գուցէ որպէս ի պրս. քեարթէն, որ է սարդ, ծագեալ *ի քերթէնէ*, սարդիոստայն». «բայց յոլովք ի նոսա անպիտանք են և *քերթաքաղ* իշակարեան»: Աճառյանը ՀԱԲ-ում մեկնում է «հին ու մին քուրջեր՝ ցնցոտիներ հաւաքող», ապա հավաստում, որ նույնը Օրբելին գործածել է *քրթաքաղ* ձևով՝ բերելով վկայությունը ամբողջական նախադասությամբ: Բայց և հավելում է. «Ըստ իս պետք է ուղղել փերթաքաղ. սխալը յառաջացած է ազդեցությամբ *ք*-ի. ըստ այսմ արմատն է *փերթ*՝ «հին շորի են կտոր»»: Հ.Աճառյանի «Հայերէն գաւառական բառարան»-ում²³ տրված է նաև *քերթ* բառը, որի չորրորդ իմաստը նշված է «զգեստի մը կուրծքին վրայի մասը»: Մեր կարծիքով՝ *քերթ*-ը կարող էր նշանակել նաև «կաշի, մորթի», իսկ *քերթաքաղ*-ը՝ «կաշի, մորթի հավաքող»:

Պատմիչը գրեթե հավասարապես գործածել է հարադրական և համադրական բայեր: Խոսակցական լեզվին առավել բնորոշ է առաջինների գործածությունը: Հետևյալները գործածել

²² Վ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 203:

²³ Հ.Աճառյան, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913:

է համապատասխան համադրականներին զուգահեռ. *աշխատ, աղօթս, հալածական, այպն, ծաղր, ծառայութիւն, չու, պատիժ, սկիզբն, վնաս, շնորհ, յայտ, էլնելս (առնեն), հրաման, պատուէր, վկայութիւն (տամ), խնամ, հոգ (տանեն), ժոյժ, սպաս (ունիս), ձեռն, հիմն (արկանեն), բողոք արկանեն // բողոք բառնամ, հանգիստ առնում, սաղմոս ասեն, շուրջ գամ, պաշտօն մատուցանեն, երկիր պագանեն, ուշ դնեն*: Առկա են նաև տամ բայի հարադրությամբ և ածանցավոր պատճառականի ձևեր, ինչպես *մօտել, շրջել, սայթաքել (տամ) - մօտեցուցանեն, շրջեցուցանեն, սայթաքեցուցանեն*:

Վ. Առաքելյանը դարձվածքների վերաբերյալ գրում է. «Շատ սակավ են այն դարձվածքները, որոնց մասին կարելի է պնդել, թե գալիս են բարբառներից: Ամբողջ դարձվածքային հարստությունը մնում է իբրև գրաբարի սեփականություն»²⁴: Առաջիններից են նրանք, որոնք «մինչև այսօր մնացել են բարբառներում և այսօր էլ դեռևս պահպանել են իրենց բարբառային արտահայտչությունը»²⁵: Լեզվաբանը Փարպեցուց նկատել է հետևյալները *ուշ դնեն, դեղ դնեն, յոզուց հանեն*: Պետք է ավելացնենք նաև *հոգ տանեն, յուղի անկանիւմ, ունչս առնեն* «ծաղրել», *աչս ածեն* «շուրջը նայել, զննել»:

Հայերենագիտության մեջ տարածված է այն տեսակետը, որ գրաբարը 5-11-րդ դարերի համաժողովրդական խոսակցական լեզուն է: Բնականաբար, սկզբնական շրջանում պետք է գրառվեր խոսակցական լեզուն: Սակայն գրավոր ավանդույթի սկզբնավորման օրվանից ի վեր այն մշակության է ենթարկվել, ինչպես որ հետագայում տեղի է ունեցել աշխարհաբարի դեպքում: Կազմվել են նոր բառեր, ի հայտ են եկել նոր երևույթներ մասամբ պայմանավորված այլ լեզուների ազդեցությամբ: Այդ բոլորի խառնարանում, թեև մեծ դժվարությամբ, հնարավոր է առանձնացնել բառապաշարի՝ նեղ բարբառային, ընդհանուր

²⁴ Վ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 81:

²⁵ Նույն տեղում, էջ 81:

խոսակցական և գրական-գրքային շերտեր: Անկասկած, դարերի ընթացքում շատ բան է նենգափոխվել, մի շարք նորամուծություններ են արվել ընդօրինակողների կողմից: Կարծում ենք, որ առկա երկերը սկզբնական շրջանում լեզվական առավել ակնառու տարբերություններ են ցուցաբերել, բայց և հետագայում, հատկապես ուշ շրջանում (17-18-րդ դարերում) գրի և գրչության երախտավորները, որոշակի ուղղումներ անելով, մասնակի, նեղ բարբառային երևույթները տարածված և հիմնական ձևերով փոխարինելով, ձեռագրերում առաջացրել են զգալի ընդհանրություն: Մասամբ այդ են վկայում նաև Փարպեցու Պատմության ավելի վաղ դարերի պատառիկները (11- 15-րդ դդ.): Հիրավի, քննված նյութի ակունքը բարբառային-խոսակցական հայերենն է: Արձարծված հարցերի շրջանակում, անշուշտ, հայոց լեզվի պատմությունը շատ անելիքներ ունի:

Khachatryan Valentin - Dialectic-spoken words in the works of Gh. Parpetsi - The words in the scientific manuscript of the Gh. Parpetsi have been examined in the following article. These words are considered dialectical-colloquial by their phonetic, word-formation features, by popularity, and by their relation to the dialects of our time.

Хачатрян Валентин – Слова разговорного диалекта в произведениях Л. Парпеци – В данной статье проведен анализ тех слов из трудов Л. Парпеци, которые согласно звуковым и словообразовательным особенностям, а также по распрот-траненности и соотношению с нынешними диалектами рассматриваются как элементы разговорного диалекта.

ՀԱՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնաբանությունների մասին: Հայ լեզվաբանության մեջ հնաբանություններ են համարվում այն բառերը, արտահայտությունները, դարձվածքները, քերականական ձևերը, որոնք, գործածությունից դուրս եկած լինելով, որոշակի անհրաժեշտությամբ նորից կիրառվում են, ընդ որում՝ խոսողը սովորաբար գիտակցում է դրանց հնացած լինելը¹: Հնաբանությունների մեջ առանձնացվում են գրաբարաբանությունները՝ իբրև գրաբարյան համակարգի կառույցներ, ինչպես՝ *ի հեճուկս, խնդրո առարկա, հականե հանվանե, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման* և այլն²: Ըստ Է.Աղայանի՝ գրաբարաբանությունները գործածվում են ոճաբանական նպատակներով՝ խոսքին վսեմություն, հնատիպություն հաղորդելու, պատմական միջավայրի տպավորություն ստեղծելու համար, իսկ երբ նման ձևերը, հաճախական գործածությամբ կորցնելով իրենց ոճական առանձնահատկությունները, դառնում են գործուն շերտի գրքային կամ բանաստեղծական բառեր (ինչպես *քաղաքամայր, ըստ այդմ, ընդ որում, համենայն դեպս*), այդ դեպքում վերածվում են գրաբարյան փոխառությունների³: Առանձին իրողություն է համարվում քերականական ձևերի քարացումն ու բառացումը, երբ բառի քերականական որևէ ձև, կորցնելով իր քերականական իմաստը, վերածվում է ինքնուրույն բառի և ստանում նոր իմաստ, ինչպես տեղի է ունեցել օրինակ, *հավատամք, հասցե, կեցցե, իրոք, մասին* և նման այլ

¹ Տե՛ս Պետրոսյան Հ., *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 381: Տե՛ս նաև Աղայան Է., *Լեզվաբանության հիմունքներ*, Ե., 1987, էջ 420-422:

² Տե՛ս Պետրոսյան Հ., նշվ. աշխ., նույն տեղում:

³ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 422:

ձևերի պարագայում⁴: Այլ կերպ են մեկնաբանվել բարբառային հնաբանությունները: Գ. Ջահուկյանը այս անվան տակ նկատի ունի բարբառային բնույթի հնչյունական, քերականական և բառային այն առանձնահատկությունները, որոնք, գրաբարում ավանդված չլինելով և գրաբարի իրողություններից տարբերվելով, գալիս են հայոց լեզվի զարգացման հնագույն (նախագրային) շրջանից⁵:

Հնաբանությունների դիտարկում լայն առումով: Փաստորեն, բերված իրողությունները, լինելով լեզվի զարգացման նախորդ որևէ համակարգի տարրեր, դրսևորվում են հաջորդ որևէ փուլում՝ լեզուն գործածողների որոշակի նպատակադրումով կամ ըստ անհրաժեշտության, իսկ բարբառային հնաբանությունների դեպքում՝ ուղղակի անցնելով փուլից փուլ ու նոր փուլի օրինաչափություններով դառնալով ոչ բացատրելի: Կարծում ենք՝ լայն առումով «հնաբանություններ» ընդհանուր անվան տակ կարելի է հասկանալ ոչ միայն մոռացված բառերն ու արտահայտությունները, որ գործածվում են ըստ անհրաժեշտության (դրանց թվում՝ գրաբարաբանությունները, այսպես կոչված գրաբարյան փոխառությունները), այլ նաև քերականական քարացած ձևերը, բարբառային հնաբանությունները, այսինքն՝ լեզվական այն իրողությունները, որոնք գալիս են նախորդ փուլերից՝ իբրև դրանց համակարգային օրինաչափություններով բացատրելի միավորներ: Մյուս կողմից թերևս բարբառային հնաբանություն կարող է համարվել բարբառային լեզվում որևէ պահի դիտարկվող ցանկացած իրողություն, որը լեզվի զարգացման նախորդ փուլի միավոր կամ երևույթ է և բացատրելի է նախորդ համակարգին հատուկ օրինաչափություններով: Այդ առումով՝ բարբառային հնաբանություններ են արդի բարբառային հայերենում գործածվող ոչ միայն հնդեվրոպական, այլ նաև հինհայերենյան ու միջինհայերենյան համա-

⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 365:

⁵ Տե՛ս Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 260:

կարգերը ներկայացնող և հենց դրանց օրինաչափություններով մեկնաբանվող, նաև զարգացման ընթացքից դուրս մնացած բոլոր իրողությունները⁶: Օրինակ, Մեղրիի բարբառում հնաբանություններ են *առէս* (*առ* նախդրով կազմություն՝ *առ իս*), *դուրք* (*դուռն* բառի հոգնակիի ձև, որ բարբառում ունի եզակիի իմաստ), *գիտիվիր* (*ի* նախդրով կազմություն՝ *գետ ի վեր*) ձևերը, որ բացատրելի են հինհայերենյան օրինաչափություններով: Այդ կարգի օրինակներ են նաև Դիադինի, Խոյ-Մարադայի բարբառներում, Ալաշկերտի խոսվածքում գործածվող *դէս*, *դէտ*, *դէն* (*այս կողմ*, *այդ կողմ*, *այն կողմ*) ձևերը, որ առաջացել են հին *ընդ այս*, *ընդ այդ*, *ընդ այն* կառույցներից, նաև Վանի, Խոյ-Մարադայի, Դիադինի, Բայազետի բարբառներում գործածվող *դոր* (*ուր*) ձևը, որ առաջացել է հին *ընդ որ* կառույցից և այլն: Բայազետի բարբառում տասնավորները միավորներին միանում են առանց շաղկապի (օրինակ՝ *տըսներկու*, *տըսնիրեք*, *տըսնութ*, *քըսանխինգ*), սակայն հանդիպում են նաև *ու* շաղկապով *տըսվերկու*, *տըսվիրեք* ձևեր, որոնք պետք է համարել միջինհայերենյան համակարգից եկող հնաբանություններ (հմմտ. միջին հայերենի *տասնումեկ*, *տասնվերկու*, *տասնվիրեք*, *տասնուչորս* և այլ ձևեր)⁷: Հիշյալ բարբառում միջինհայերենյան Ու հոլովումն արտացոլող հնաբանություններ են նաև *հախու* (վախից), *հիրա գըլխու* (ինքնագլուխ), *լուսու դէմ* (լուսադեմին) քարացած ձևերը և այլն:

⁶Բնականաբար, խոսքը չի վերաբերում հնից եկող և կայուն գործառու համակարգային հատկանիշներին (այդպիսին է. օրինակ, բառասկզբում ձայնեղների դիմաց խուլերի գործածությունը մի շարք բարբառներում) կամ պատմական զարգացման ընթացքում ձևավորված հատկանիշներին (օրինակ, Արծափի խոսվածքում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է որոշյալ տրականով դ աշտին, գ եղին, ընդ որում այս հատկանիշը պետք է համարել հետագա զարգացումը հինհայերենյան *ի+եզակի տրական* կառույցի, որով արտահայտվում էր նշյալ հոլովական իմաստը):

⁷Միջինհայերենյան համակարգի մասին տե՛ս Ղազարյան Ս., *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 1981, էջ 244:

Բարբառային հնաբանությունների տեսակների մասին: Գ. Ջահուկյանը բարբառային հնաբանությունների երկու խմբի է անդրադառնում՝ հնչյունաքերականական և բառային⁸: Լեզվաբանը հնչյունական և բառային հնաբանությունները (բոլորն էլ՝ նախագրաբարյան շրջանին վերաբերող) ներկայացրել է բազում օրինակներով⁹: Ինչ վերաբերում է քերականական հնաբանություններին, նշվում է, որ դժվարություններ կան այդպիսիք վեր հանելու հարցում¹⁰: «Միակ գուգաբանությունը,- գրում է Գ. Ջահուկյանը,- որին կարելի է խոր հնություն վերագրել, թերևս *-ուի* հոգնակերտն է, որ հանդես է գալիս որպես երկակի մնացորդ»¹¹: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Գ. Ջահուկյանը միայն նախագրաբարյան շրջանին վերաբերող իրողությունները չէ, որ համարում էր հնաբանություններ: Այդ է վկայում, օրինակ, նրա հետևյալ դիտարկումը. «Հին հայերենի *ք* հոգնակերտը աշխարհաբարում վերածվում է պարզապես ածանցի՝ դրվելով միայն սահմանափակ թվով բառերի վրա. *ի-ով* վերջացող բառերի՝ *ք* հոգնակերտն ստանալը (*գյուղացիք, քաղաքացիք* և այլն) պետք է արդեն արխայիզմ համարել»¹²:

Առաջարկություն: Հաճախ լեզվի պատմական ընթացքի նախորդ փուլերի օրինաչափություններով են բացատրելի ոչ միայն բառերի սկզբնաձևերը, այլ նաև հոլովման կամ խոնարհման հարացույցի որևէ անդամ կամ անդամներ: Օրինակ, *հայր, մայր, եղբայր* բառերի սեռականի *հոր, մոր, եղբոր* ձևերը բառերի թեքման արդի օրինաչափություններով բացատրելի չեն: Գրաբարի օրինաչափություններով բացատրելի չէին նաև *հօր, մօր, եղբօր* կամ *հաւր, մաւր, եղբաւր*

⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 260-330:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նշվ. աշխ., էջ 276:

¹¹ Նույն տեղում:

¹² Գ. Ջահուկյան Գ., *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, Ե., 1959, էջ 136-137:

սեռականները¹³, որոնք համարվում էին անկանոն հոլովման դրսևորումներ¹⁴: Այդպես արդի հայերենում անկանոնություններ են համարվում, օրինակ, *ծնունդ, դուստր* բառերի սեռականները (ծննդյան, դստեր) կամ *ելնել, տեսնել* բայերի եզակի հրամայականի ձևերը (ե՛լ, տե՛ս), որոնք բացատրելի են գրաբարի հոլովման ու խոնարհման օրինաչափություններով: Կարծում ենք թեքման հարացույցներում դրսևորվող հիշյալ կարգի իրողությունները նույնպես, ներկայացնելով լեզվի նախորդ փուլերի օրինաչափություններ, կարող են դիտվել իբրև հնաբանություններ: Ասվածը մեզ թույլ է տալիս ավելի ընդարձակել հնաբանությունների ըմբռնումը՝ այն լրացնելով *հարացուցային հնաբանություններ* հասկացությամբ: Այսպիսով, մենք *հարացուցային հնաբանություններ* ենք անվանում քերականական այն իրողությունները, որոնք հանդես են գալիս բառերի հոլովական կամ խոնարհման հարացույցներում՝ իբրև նախորդ համակարգերին բնորոշ օրինաչափությունների դրսևորումներ, քերականական փոփոխության ժամանակ արտահայտվող երևույթներ, որոնք քերականական ձևերի բնականոն զարգացումը չեն ներկայացնում:

Բարբառային հայերենի հարացուցային հնաբանությունների խմբավորման փորձ:

Բարբառային հայերենում հարացուցային հնաբանությունները մեծ տարածում ունեն և կարող են իբրև այդպիսիք դիտվել տարբեր հիմքերով: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Ա. Հարացույցի որևէ անդամի (կամ անդամների) կազմում նախորդ փուլին (կամ փուլերին) բնորոշ հնչյունական տարրի կամ իրողության դրսևորում.

¹³ Ինչպես հայտնի է, այս ձևերի առաջացումը պայմանավորված է հնդեվրոպական նախալեզվի հնչյունական կազմության յուրահատկություններով (տե՛ս Ջանուկյան Գ., նշվ. աշխ., էջ 258-259):

¹⁴ Տե՛ս Աբրահամյան Ա., *Գրաբարի ձեռնարկ*, Ե., 1976, էջ 52-55:

Քերականական փոփոխությունը կարող է ուղեկցվել նախորդ համակարգին բնորոշ հնչյունական իրողության վերականգնումով: Օրինակ, ինչպես գրական հայերենում, այնպես էլ շատ բարբառներում հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է միավանկ բառերի կորցրած հինհայերենյան *ն* վերջնահնչյունը, ինչպես՝ *գառ* (>*գառն*) - *գառներ*, *դուռ* (>*դուռն*) - *դռներ* և այլն¹⁵: Հոգնակի մասնիկի հետ *ն*-ի գործածությունը արդի հայերենի օրինաչափություններով պայմանավորված չէ (օրինակ, *բառ*, *ճառ*, *տառ*, *բուռ*, *ծուռ* բառերի հոգնակիի ձևերն են՝ *բառեր*, *ճառեր*, *տառեր*, *բռեր*, *ծռեր*), հետևաբար հնաբանություն է: Հնաբանության դրսևորում պետք է համարել Վանի, Մշո, Դիադինի, Արարատյան, Բայազետի և մի շարք այլ բարբառներում բառավերջի *ա* ձայնավորի՝ հոդերից և *ք* հոգնակերտից առաջ է դառնալը (օրինակ՝ փեսա<փեսեք, տղա<տղդես, երէխա<երէխեն): Բարբառային հայերենի ներկա օրինաչափություններով այս իրողությունը չի բացատրվում, այն արձագանքն է միջին-հայերենյան շրջանում ծավալված մենաբարբառացման միտումի և *այ>է* անցման, որն ընդգրկում էր նաև բառավերջի *այ* կապակցությունը, երբ բառն ստանում էր հոդ կամ *ք* հոգնակերտ (փեսայ>փեսայք>փեսեք, տղայ>տղայն>տղեն)¹⁶:

Բ. Նոր հարացույցում նախկին հարացուցային միավորի պահպանում.

Լեզվի պատմական զարգացման ընթացքում շատ բառեր փոխել են քերականական փոփոխության իրենց եղանակը կամ միջոցը: Օրինակ, գրաբարում *այծ*, *գայլ*, *էշ* բառերի սեռական հոլովի ձևերն էին՝ *այծի*, *գայլոյ*, *իշոյ*, միջին

¹⁵ Սրանց նմանությամբ բարբառներում հոգնակիի կազմության ժամանակ *ն*-ի հավելում են ունենում այլ բառեր ևս: Օրինակ, *ծառ* բառը *ն*-ով հոգնակիի (ծառներ) է կազմում Խոյ-Մարադայի, Վանի, Դիադինի, Բայազետի բարբառներում, Լոռու, Ալաշկերտի, Շատախի խոսվածքներում և այլն: Հասկանալի է, որ նման ձևերը հնաբանություններ չեն կարող համարվել:

¹⁶ Միջինհայերենյան շրջանին վերաբերող այս հնչյունափոխության մասին հանգամանորեն տե՛ս Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 155-162:

հայերենում՝ *այծու, գայլոյ/գայլու, իշոյ/իշու*¹⁷: Վանի, Խոյ-Մարադայի, Մշո, Դիադինի բարբառներում գործածվում են *էծու/իծու, գ՛իլու/վիլու, իշու/էշի* ձևերը, որոնցից էլ այդ բարբառներում *անք* մասնիկով կազմվում են հոգնակիի այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ *իշվանք, իծվանք* (*էշ>իշու>իշվանք, էծ>իծու>իծվանք*) և այլն: Բայազետի բարբառում ևս գործածվում են *իծվանք, գ՛իլվանք, իշվանք* հոգնակիները, սակայն այստեղ *էծ, գ էլ, էշ* բառերը անցել են Ի հոլովման (*իծի, գ իլի, իշի*): Հետևում է, որ այս բարբառում - *վանք* կազմիչով հոգնակիի ձևերը չեն կարող բխեցվել սեռականի արդի ձևերից¹⁸ և հնաբանություններ են:

Գ. Տեղաշարժ հարացույցում.

Նախորդ համակարգը ներկայացնող և սկզբնաձև չհանդիսացող հարացուցային որևէ միավոր կարող է գոյատևել իբրև նոր հարացույցի սկզբնաձև կամ ձևավորել այդ սկզբնաձևը՝ այդկերպ ներկայանալով իբրև հնաբանություն: Օրինակ, *բանալի, տանիք* բառերի հինհայերենյան շրջանի հայցական հոլովի ձևերի (*բանալիս, տանիս*), արտացոլումն են արդի բարբառներում գործածական *բալնիս, տանիս* ուղղականները¹⁹: Բայազետի բարբառն ունի *երեցել* (այրվել) բայ և չունի *այրել* ձևը: Այս բայը անցյալ կատարյալում խոնարհվում է կրավորաձև՝ *երեցա, երեցար, երեցավ, երեցանք, երեցաք, երեցան, և* սրանք կարող են համարվել *այրել* բայի հինհայերենյան կրավորականի ձևերի (*այրեցայ, այրեցար, այրեցաւ, այրեցաք, այրեցայք, այրեցան*) շարունակությունը՝ միջինհայերենյան հնչյունական ձևավորմամբ: Հավանաբար անցյալի կրավորական ձևերից էլ կազմվել է հարացուցային

¹⁷Տե՛ս Ա Աննարկներ միջին զրական հայերենի պատմության, Խ.Բ. Ե., 1975, էջ 18-25:

¹⁸Ավելի հանգամանորեն տե՛ս Կատվայան Վ., *Բայազետի բարբառը և նրա առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե., 2016, էջ 271-275:

¹⁹Այսպիսի հնաբանությունները չպետք է շփոթել բարացած ձևերի հետ, որոնք փոխել են քերականական իմաստը և վերաիմաստավորվել (օրինակ՝ հասցե, ի վերջո, հավատամք և այլն):

նոր սկզբնաձև՝ *էրէցէլ*²⁰ (այրվել) անորոշ դերբայի ձևը, որը իբրև հնաբանություն կարող է դիտվել ինչպես սկզբնաձևում դրսևորված անցյալի հիմքով, այնպես էլ կրավորաձև խոնարհումից պահպանված կրավորական սեռի իմաստով:

Դ. Բայի ներկայի և անցյալի հիմքերի տարաբնույթ կամ անհամաչափ զարգացման առկայություն.

Բավականին տարածված է այն երևույթը, երբ անորոշ դերբայը և անցյալի հիմքը ենթարկվում են հնչյունական տարաբնույթ փոփոխությունների, և ժամանակի ընթացքում առաջ է գալիս քերականական անհամապատասխանություն ու խզում ներկայի և անցյալի հիմքերի միջև: Օրինակ, *գիտենալ* նախնական ձևը Բայագետի բարբառում թերևս *գիտնալ* <*գիդնալ* անցումներով հանգել է *գիդալ* անորոշի ձևին (այս հիմքով ձևերից են՝ *գիդում եմ*, *կգիդամ*, *գիդի*): Այս բայի անցյալի հիմքն է՝ *գից*, որից կազմվող ձևերից են *գիցա*, *գիցար*, *գիցի*, *գիցեր եմ*, *գիցուկ* և այլն: Այս հիմքը պետք է առաջացած լինի հետևյալ ճանապարհով՝ *գիտեցա*<*գիտցա*<*գիցա* (գից-ա): Նման դեպքերում անորոշի ձևը պետք է համարել բառի պատմական զարգացման արդյունք, իսկ անցյալի հիմքը և նրանով կազմվող ձևերը՝ հնաբանություններ, որովհետև վերջիններս բացատրելի են ոչ թե ներկայիս անորոշի կազմությամբ, այլ նախորդ հարացույցի ձևերով: Այդպես նաև նույն բարբառում գործածական *կանալ* անորոշի ձևը (այս հիմքով կազմվող ձևերից են՝ *կանում եմ*, *կանամ*, *պըտի կանաս*) առաջացել է միջինհայերենյան *կարենալ* ձևից թերևս *կարնալ*<*կառնալ*<*կանալ* անցումներով: Մակայն անցյալի ձևերը ունեցել են այլ զարգացում, ինչպես՝ *կարեցա*<*կաոցա*՝ այդպիսով ձևավորելով անցյալի *կաոց* հիմքը (կաոցա, կաոցար, կաոցի, կաոցեր, կաոցուկ), որով կազմված ձևերը հնաբանություններ են:

²⁰2. Աճառյանը Մշո, Վանի բարբառների *իրիցել* ձևը բխեցնում է միջին հայերենի *այրոցել* /այրել/ ձևից, որը, իր իսկ վկայությամբ, ՆՀԲ-ն չունի (տե՛ս Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, էջ 175):

Եզրակացություններ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում հնաբանությունների կարող են վերածվել ոչ միայն բառերի սկզբնաձևեր, այլ նաև հոլովման կամ խոնարհման հարացույցի անդամներ: Մեր կողմից *հարացուցային հնաբանություններ* անվանված նման իրողությունները լայն տարածում ունեն հայերենի ինչպես գրական ու խոսակցական, այնպես էլ բարբառային դրսևորումներում: Հարացուցային հնաբանությունների առաջացման պատճառ կարող են դառնալ թեքման ժամանակ նախորդ փուլերին հատուկ հնչյունական իրողությունների ի .հայտ գալը, նոր հարացույցում նախորդին հատուկ անդամի պահպանումը, հարացույցի անդամների տարաբնույթ զարգացումները և այլն: Հարացուցային հնաբանությունների ըմբռնումը կարող է նպաստել լեզվի պատմության որոշ հարցերի նորովի մեկնաբանմանը, այս դիտանկյունով տարբեր կարգի շեղումների, անկանոնությունների քննությունը կարող է հետաքրքրական արդյունքների հանգեցնել:

V. Katvalyan - Paradigmatic Archaisms in the Dialectal Armenian Language. - In the course of historical development of the language, not only initial forms of words, but members of declension and conjugation paradigms also, can become archaisms. These phenomena, called paradigmatic archaisms by us, are widespread in the literary and colloquial as well as in the dialectal manifestations of the Armenian language.

The understanding of paradigmatic archaisms can be useful in new interpretations of certain issues in the history of language. From this viewpoint, an examination of different types of deviations and anomalies can lead to interesting results.

В.Катвалян - Парадигматические архаизмы в диалектном армянском языке.- В процессе исторического развития языка архаизмами могут стать не только начальные формы слов, но и члены парадигм склонения и спряжения. Явления, названными нами парадигматические архаизмы, широко распространены во всех проявлениях армянского языка.

Понятие парадигматических архаизмов может быть полезным при уточнении некоторых вопросов истории языка. Рассмотрение разных видов аномалий с этой точки зрения может привести к интересным результатам.

ԳՐԱԲԱՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶՈՒՆՔՆԵՐԸ

Գրաբարի բառապաշարի լիակատար և ամբողջական ուսումնասիրության, լեզվական փաստերի համաժամանակյա և տարաժամանակյա քննության տեսակետից կարևոր նշանակություն ունի էլեկտրոնային բառարանագրության արդի չափանիշներին համապատասխան գրաբարի էլեկտրոնային պատմական բառարանի ստեղծումը: Բառարանի զլխավոր նպատակը պետք է համարել հայ հին մատենագրությամբ ավանդված բառապաշարի վկայությունների ժամանակագրական հերթականությամբ ներկայացումը: Գրաբարի բառարանների համեմատությամբ գրաբարի էլեկտրոնային պատմական բառարանի ունեցած տարբերությունները կվերաբերեն ինչպես բառարանի ընդգրկած բառապաշարի ծավալին, այնպես էլ բառահոդվածի կառուցվածքին:

Հայ բառարանագրության մեջ իր բացառիկ տեղն ունեցող «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանն է ընկած գրաբարի բոլոր բառարանների կազմության հիմքում: Հայ հին մատենագրության իր ժամանակին հայտնի ձեռագիր և տպագիր հուշարձանների լիակատար բառագանձն ամփոփող, իր դարաշրջանի համար գիտական ամենաբարձր մակարդակով կազմված բառարանը շուրջ մեկուկես դար եղել է հայագիտությամբ զբաղվողների ուղեցույցը ինչպես գրաբարի, այնպես էլ հայոց լեզվի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում: Ուղիղ կես դար է տևել Հայկազյան բառարանի կազմումը. դրա հիմքում ընկած են Մխիթարյան միաբանության մատենադարանում եղած շուրջ հազար ձեռագրեր: Հայ հին մատենագրության այն ժամանակ տպագրված մատյաններից բառաքաղությամբ, հնագույն աղբյուրներից մինչև

նոր ժամանակների գրչագրական տարբերակների համեմատությամբ և բառաքնական ուսումնասիրություններով կազմվել է մի ընդարձակ բառարան, որը բաղկացած է տասներկու ձեռագիր հատորներից: Բառարանի մեծ արժեքը պայմանավորված է բանասիրական, բառաքնական և լեզվաքնական այն խորահմուտ աշխատանքով, որ կատարել են հեղինակները: Սակայն ինչպես Մ. Մեբաստացին բառարանի առաջաբանում գրում է, օգտագործված մատենագրական աղբյուրները բավական չեն գրաբարի լիակատար բառարան կազմելու համար: Ուստի հանձնարարում է իր հաջորդներին հայտնաբերվող նոր աղբյուրների հիման վրա լրացնել իր գործը, նորանոր վկայություններով ճշգրտել այն ամենը, ինչը որ ինքը հնարավորություն չի ունեցել անելու ստեղծելով գրաբարի ամբողջ բառապաշարը ճշգրտորեն ներկայացնող բառարան¹:

Հայկազյան բառարանի հրատարակությունից հետո հետազոտողները տարբեր առիթներով անդրադարձել են այդ բառարանում չընդգրկված «նորահայտ» կամ «նոր բառերին»: Կազմվել են գրաբարի բառարաններ, որոնք ներկայացնում են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակում չընդգրկված բառերը: Պետք է ընդգծել սակայն, որ *գրաբարի բոլոր բառարանները լիակատար չեն և չեն ընդգրկում գարաբարալեզու մատենագրության ողջ բառապաշարը*, քանի որ կազմվել են սահմանափակ թվով մատենագրական աղբյուրների հիման վրա: Հետևաբար, գրաբարի լիակատար սլատմական բառարան կազմելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել գրաբար ինքնուրույն և թարգմանական գրականության ներկայացուցիչների երկերի բառացանկ-համաբարբառների էլեկտրոնային մեծածավալ շտեմարան: Պատմական բառարանում ընդգրկվելիք բառանյութը պետք է որոշել գրաբարալեզու մատենագրության ընդհանրական

¹ Գ. Աւետիքեան, Խ. Մխրմբէան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. Ա-Կ, Վենետիկ, 1836, էջ 3:

բառացանկի հիման վրա: Տեխնիկական միջոցների բացակայությամբ պայմանավորված՝ նախկինում նման աշխատանքի իրականացումը կարող էր անհնար թվալ, սակայն հիմա դա լիովին իրագործելի է:

2003 թվականից Մատենադարանում հրատարակվում է մատենագիտության և առհասարակ հայագիտության համար բացառիկ նշանակություն ունեցող «Մատենագիրք Հայոց» բազմահատոր մատենաշարը, որտեղ ներկայացվում է 5-18 դդ. ստեղծված հայ ողջ մատենագրական ժառանգությունը: Արդեն հրատարակվել են հարյուրից ավելի հեղինակների մի քանի հարյուր բնագրեր, որոնց մեծ մասը առաջին անգամ է տպագրվում: Հայագիտական ուսումնասիրություններին օժանդակելու համար համարակալվել են տեքստերի բոլոր նախադասությունները: Բոլոր բնագրերին նախորդում են առաջաբաններ, մատենագիտական համառոտ ցանկեր և բաղդատված ձեռագրերի համարներ: Մասնագետների կանխատեսումների համաձայն՝ ողջ հայ մատենագրության հրատարակման դեպքում կունենանք մոտ հարյուր հատորից բաղկացած հսկայածավալ մատենաշար²: Քննական-համեմատական այս հրատարկությունը անփոխարինելի և եզակի աղբյուր է հայագիտական ուսումնասիրությունների համար ընդհանրապես, հայերենի պատմական բառարանի կազմության համար՝ մասնավորապես:

Պատմական բառարանի ստեղծման հիմքում պետք է ընկած լինեն «Մատենագիրք Հայոց»-ում ընդգրկված մատենագրական աղբյուրները, որոնցից անհրաժեշտ է համապատասխան բնագրային վկայություններով մեքենական եղանակով կազմել բառացանկ, մշակել այն, ջնջել կրկնությունները, բառացանկից դուրս թողնել դերբայները (*գտող, գտեալ* են), միևնույն բայի տարբեր ձևերից (*անցանել, անցանեմ, անցեալ*) թողնել միայն անորոշ դերբայը, գոյականի եզակի և

² Տե՛ս <http://www.matenadaran.am/?id=83&lng=3>:

հոգնակի ձևերը (*անց* և *անցք*) ներկայացնել մեկ գլխաբառի տակ՝ եզակի թվով, հարադրություններն ու կապակցությունները (*առնել հրաման, առնել յանձն*ևն) տալ համապատասխան գլխաբառի տակ և ոչ թե առանձին գլխաբառերով:

Բոլոր հեղինակների երկերի բառացանկը մշակելով՝ պետք է ստեղծել բառացանկ-համաբարբառների էլեկտրոնային մեծածավալ շտեմարան: Այս առումով կարևորագույն նշանակություն կարող է ունենալ «Հայ մատենագրության էլեկտրոնային համաբարբառը», որպես էլեկտրոնային համաբարբառ-բառացանկերի մեծածավալ շտեմարան, և concordance.am կայքի ծրագրաշարը: Դրա օգնությամբ հնարավոր է ցանկացած երկ վերածել բառաձևերի ցանկի՝ բնագրային համապատասխան վկայություններով, իմանալ բառաձևի գործածության քանակը:

Միայն նոր աղբյուրների օգտագործումը բավարար չէ պատմական բառարանի կազմության համար: Գրաբարի բառապաշարի և լեզվական համակարգի կրած փոփոխությունների լիակատար ուսումնասիրության տեսակետից պետք է կարևորել պատմական բառարանում ընդգրկվելիք բառայության դասակարգումը և խմբավորումը՝ ըստ տարբեր ժամանակաշրջանների, ճիշտ գնահատել մատենագրական աղբյուրների լեզուն:

Հայտնի է, որ հայ մատենագրության՝ մեզ հասած ձեռագիր հուշարձաններում շատ բառեր ունեն զանազան գրչություններ՝ գրային տարբերակներ, աղճատումներ. դրանց ճշգրտումները մատենագրության տվյալների հիման վրա առաջնահերթ խնդիր է: Մատենագրական տպագիր աղբյուրներում եղած բազմաթիվ, բազմազան աղավաղումները և սխալագրությունները ևս պետք է ուղղել գիտական հրատարակությունների օգնությամբ:

Այսպիսով՝ հայերենի պատմական բառարանում ընդգրկվելիք ողջ բառապաշարը կարելի է որոշել «Մատենագիրք Հայոց»-ում ընդգրկված մատենագրական

երկերը concordance.am կայքի ծրագրաշարի օգնությամբ բառացանկի վերածելով, ավելին՝ բառացանկը գրաբարի առկա բառարանների հետ համեմատելով՝ նույնիսկ հնարավոր է մեքենական եղանակով դուրս բերել գրաբարի բառարաններում չվկայված բառերը:

Գրաբարի բառարանների համեմատությամբ էլեկտրոնային պատմական բառարանի հաջորդ սկզբունքային տարբերությունը վերաբերում է բառահոդվածի կառուցվածքին, իմաստային և հասկացական հարաբերությունների ներկայացմանը:

Էլեկտրոնային բառարանի յուրաքանչյուր բառահոդված պետք է ներկայացված լինի մի քանի դաշտերով, որոնք կապահովեն տվյալ բառի լիակատար իմաստային և ձևաբերականական, անհրաժեշտ չափով նաև շարահյուսական նկարագրությունը:

Հնչյունական բնութագիր

Գրաբարի տպագիր բառարաններում բառի հնչյունական բնութագիրը որևէ կերպ չի ներկայացվում: Էլեկտրոնային բառարանում հնչյունական բնութագրի մեջ պետք է ներկայացնել գլխաբառի արտաքին հնչյունական կոդմի նկարագրությունը՝ ուղղագրական տարբերակներ, հնչույթային կազմ, վանկային կազմ (վանկերի քանակը)՝ յուրաքանչյուր վանկի կառուցվածքային կադասարով, հիմքակազմական տարբերակներ (հնչյունափոխություն և հերթագայություններ), տառադարձում: Հնարավոր է ամբողջությամբ մեքենայացնել բառամիավորների գիտական տառադարձումը, հնչույթային կազմի նկարագրությունը, մասամբ՝ վանկատումը:

Բառագիտական բնութագիր

Գրաբարի տպագիր բառարաններում բառահոդվածի բառագիտական բնութագրերից ներկայացվում է միայն բառիմաստի բացատրությունը: Էլեկտրոնային բառարանում գլխաբառի բառագիտական բնութագրի ներկայացման ժամանակ պետք կարևորել իմաստային, հասկացական

հարաբերությունների, բառակազմական, ստուգաբանական
 բնութագրերի ներկայացումը: *Իմաստային բնութագրի* մեջ
 պետք է ներկայացնել բառի ուղիղ և փոխաբերական
 իմաստները, համանունները, հարանունները, հականիշները:
 Համանունները պետք է տրվեն առանձին գլխաբառերով,
 համարակալված: Բազմիմաստ բառերի տարբեր իմաստները
 պետք է ներկայացնել նույն բառահոդվածում՝ առանձին
 համարներով: Եթե իմաստների մեջ կան խոսքիմասային
 տարբերություններ, խոսքի մասի նշումը պետք է տալ իմաստն
 առանձնացնող համարից հետո: Եթե խոսքիմասային
 պատկանելությունը հստակ չի որոշվում, կարելի է նշել իրար
 կողքի (գ. ա. կամ ա. մ.)՝ ըստ հնարավորին՝ առանձնացված:
 Եթե տվյալ խոսքի մասն իր հերթին ունի մի քանի իմաստներ,
 խոսքի մասերը պետք է առանձնացնել հոռմեական
 թվանշաններով (I. գ. 1. ... 2. ... 3. ... II. ա. 1. ... 2. ...): Նույնիմաստ
 բառերի հնչունական տարբերակ-ները, եթե այբբենական
 կարգը չեն խախտում, պետք է ներկայացնել իրար տակ՝
 ստորակետերով բաժանված: Առավել լուրջ է բառերի միջև
 գոյություն ունեցող իմաստային-հասկացական հարաբերու-
 թյունների ներկայացումը: Ընդհանուր առմամբ՝ իմաստային
 խմբերի մանրագնին քննությունը կարևորվում է նախ և առաջ
 տվյալ լեզվի բառապաշարը համապարփակ ներկայացնելու
 առումով: Գրաբարի բառապաշարի մինչայժմյան ուսումնասի-
 րությունները սահմանափակվել են միայն բառերի բառակազ-
 մական, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկոթ-
 յունների նկարագրությամբ, տարբեր բառաշերտերի (բնիկ,
 փոխառյալ, ժողովրդախոսակցական, բարբառային և այլն)
 քննությամբ: Համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվել
 բառապաշարի հասկացական դասակարգմանը և իմաստա-
 բանական վերլուծությանը: Հետազոտողներն ուսումնասիրել
 են թեմատիկ որոշ խմբեր, մինչդեռ գրաբարի բառապաշարի
 իմաստային-հասկացական դասակարգման ընդհանրական
 սկզբունքներ չեն մշակվել:

Բառապաշարի հասկացական դասակարգումը և իմաստային վերլուծությունը պահանջում են միասնական տեսական սկզբունքներ, քանի որ ընդունելի չի լինի տարբեր սկզբունքներով կատարել լեզվի բառապաշարի իմաստային-հասկացական դասակարգումը այդ նույն լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում: Մինևույն ժամանակ պետք է նկատել, որ ամբողջ բառապաշարն ընդգրկող վերլուծության միասնական սկզբունքների մշակումը բավական բարդ է, եթե հաշվի առնենք հատկապես երկու խնդիր. ա) ժամանակակից իմաստաբանական տեսությունները (սերող իմաստաբանություն, բաղադրական վերլուծություն) չեն առաջարկում բառապաշարի միասնական վերլուծության և դասակարգման անհակասական սկզբունքներ: բ) Գրաբարի բառարանները չեն ընդգրկում գրաբարի ողջ բառապաշարը, հետևաբար ցանկացած դասակարգման ժամանակ իմաստային դաշտում ընդգրկված բառերը չեն կարող ամբողջական լինել:

Ինչ վերաբերում է գրաբարի բառապաշարի խոսքի-մասային դասակարգմանը, պետք է նշել, որ հայերենի բառապաշարի բառաքերականական դասերի խոսքի մասերի համակարգը նրա գրավոր ժամանակաշրջանի պատմական զարգացման ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել, թեև յուրաքանչյուր խոսքի մասի կազմում նկատելի են որոշ տեղաշարժեր և փոխհարստացումներ՝ մեկից մյուսը կատարված անցումների հետևանքով: Բառաքերականական այդ դասերից յուրաքանչյուրի ներկայացումը էլեկտրոնային բառարանում կունենա իր առանձնահատկությունը՝ գլխաբառերի բացատրության և բառահոդվածների միջև եղած իմաստային կապերի տեսակետից, որը պայմանավորված է բառերի հասկացական իմաստների և նրանց հիմնական քերականական գործառույթների բնությով:

Բառակազմական բնութագրի ժամանակ պետք է ներկայացնել բառի ձևությամբ կազմը՝ հիմնական և երկրորդական ձևային արմատ, ածանց, հոդակապ, ներույթ և այլն:

Կարևոր է նաև որոշել բառակազմական հիմքերի քանակը, բառակազմական քայլերի հաջորդականությունը և բառակազմական պատճառաբանվածությունը, սերող, բաղադրող հիմքերը և այլն: Բառակազմական բնութագրի ներկայացման ժամանակ հնարավոր է մեքենայացնել ածանցավոր կազմությունների բառակազմական վերլուծությունը: *Ստուգաբանական բնութագրի* մեջ պետք է ներկայացնել բառի ստուգաբանությունը և ըստ հնարավորին՝ իմաստային զարգացումը:

Քերականական բնութագիր

Գրաբարի տպագիր բառարաններում գլխաբառից հետո տրվում են հոլովման և խոնարհման ձևերը՝ ստորակետներով բաժանված, խոսքի մասի նշումով:

Էլեկտրոնային բառարանում պետք է ներկայացնել քերականական հատկանիշները՝ հատկապես կարևորելով ձևաբանական բնութագիրը (նշել բառի խոսքիմասային պատկանելությունը, այդ խոսքի մասին հատուկ քերականական կարգերի արտահայտման միջոցները): Գրաբարի բառապաշարի ձևային նկարագրությամբ հնարավոր է ամբողջությամբ մեքենայացնել բառամիավորների հոլովումը և խոնարհումը: Այդպիսով կներկայացվի բառի հոլովման և խոնարհման ամբողջական պատկերը՝ ի տարբերություն տպագիր բառարանների, որոնցում տրվում են միայն գլխաբառի խոսքիմասային պատկանելությունը, հոլովման և խոնարհման տիպի նշումը, շեղումները հարացուցային ձևերից (անկանոնություններ):

Այսպիսով՝ գրաբարի բառարանների համեմատությամբ էլեկտրոնային պատմական բառարանի ունեցած տարբերությունները, ինչպես տեսանք, վերաբերում են բառարանի ընդգրկած բառապաշարի ծավալին և բառահոգվածի կառուցվածքին:

Բառարանի բառացանկն առաջարկվում է կազմել գրաբարալեզու ինքնուրույն և թարգմանական գրականության ներկայացուցիչների երկերի, թվայնացված ձեռագրերի

բառացանկ-համաբարբառների հիման վրա: Մա ենթադրում է, որ էլեկտրոնային բառարանում կընդգրկվեն գրաբարի բառարաններում չվկայված մեծաթիվ բառեր:

Բառահոդվածի կառուցվածքը մշակելիս կարևորվում է գլխաբառի հնչյունական, բառագիտական և քերականական սպառիչ բնութագրերի ներկայացումը: Առաջարկվում է բառամիավորները նկարագրել առանձին դաշտերով՝ ըստ բառերի իմաստային և ձևաքերականական բնութագրերի:

Hakobyan Frida - Principles of the creation of an electronic historical dictionary of Old Armenian.- The purpose of the article is to present the principles of the creation of an electronic historical dictionary of Old Armenian. It is stated that the phonetic, lexical and grammatical characteristics of the keyword should be presented. It is suggested to describe the words in separate fields according to the formal and semantic characteristics of the words.

Фрида Акопян - Принципы составления электронного исторического словаря древнесармянского языке.- Целью статьи является представление принципов создания электронного исторического словаря древнесармянского языка. Указывается, что должны быть представлены фонетические, лексические и грамматические характеристики слова. Предлагается описывать слова в отдельных полях в соответствии с формальными и семантическими характеристиками слов.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ
ԲՈՒՍԱՆՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայերենի բուսանունների առաջին ծավալուն ցանկը գետեղված է Ղևոնդ Ալիշանի գրքում¹: Ցանկը ներառում է 3400 բուսանուն՝ հայերենի տարբեր փուլերից ու բարբառներից:

Մեր հաշվումներով միջինհայերենյան գրավոր աղբյուրներում վկայված է մոտ 500 բուսանուն, Ղարաբաղի (Արցախի) բարբառում՝ 250 (երկու դեպքում էլ չհաշված գրաբարյանները)²:

Գրաբարյան վկայությունները ավելի քիչ են՝ մոտ 100 բուսանուն³:

Միջին հայերենի բուսանունների մեծաթիվ լինելը պայմանավորված է երկու գործոններով.

ա) միջին հայերենը գրական կանոնարկված լեզու չէր, և այդ շրջանից զանազան աղբյուրների վկայությունները կարող են լինել բարբառային:

բ) միջինհայերենյան շրջանում բազմաթիվ են պարսկերենից, արաբերենից, մասամբ և թյուրքական լեզուներից կա-

¹ Ղևոնդ Ալիշան, *Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն*, Վենետիկ, 1895:

² Միջինհայերենյան (այսուհետև՝ ՄՀ) վկայությունները քաղել ենք գրավոր աղբյուրներից և *Միջին հայերենի բառարանից* (Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Երևան 2009): Ղարաբաղի բարբառի (այսուհետև՝ ՂԲ) տվյալները՝ *Ղարաբաղի բարբառի բառարանից* (Ա. Մարգարյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Երևան, 2013):

³ Ըստ Նոր բազիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ) տվյալների: Հաշվարկների մեջ կարող են լինել չնչին տարբերություններ:

տարված փոխառությունները: Նշենք նաև որ ՆՀԲ-ում վկայված բազմաթիվ բուսանուններ միջինհայերենյան շրջանից են, ինչպես *ախունա, ապրսամ, ասորեակ, բաղշտակ, գառնադմակ, խոզկաղին, մերուշան* կամ եզակի վկայությամբ՝ *գերերի, մամուխ, մաշկամիրգ...*

Ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենի և Ղարաբաղի բարբառի բուսանվանական համակարգերում նկատելի են հետևյալ առանձնահատկությունները.

Մեծ թիվ են կազմում նոր փոխառությունները: Նպատակահարմար չգտնելով ներկայացնելու փոխառյալ ամբողջ բառաշերտը՝ բերենք միայն մի քանի օրինակներ:

Արաբերեն, պարսկերեն բառեր:

ՄՀ-ում՝ *ամլաճ, այրասա* «հիրիկ», *անապ* «խաղող», *ասիուր, իսլիխ* «հափրուկ», *հազազ* «մորմազգի թփաբույս», *զազ, զազար, դարապղպեղ, զամբաղ* «հիրիկ», *զարտալու* «ծիրան», *խարբիզակ, ճակնդեղ, նարճիլ* «կոկոս», *նուման* «կակաչ», *տարտար* «թեղի»:

ՂԲ-ում՝ *զամբաղ, լալա, խաշխաշ, խիյար, դօրայ* «խակ խաղող», *մահլուճ* «բարձրորակ բամբակ»:

ՄՀ-ում կան հունարենից փոխառյալ մի քանի բառեր. *աղիմա, ասարոն, աղրանիա, կեռաս, կիմինոն, վասիլիկոն* «ռեհան», *տաֆնի* «դափնի»:

ՂԲ-ում՝ ռուսերեն կամ ռուսերենի միջոցով բարբառին անցած բառեր. *ակացի, բանան, բուռակ* «ճակնդեղ», *զըվերաբոյ* և այլն:

Բարդ բառեր (հիմնականում երկարմատ)՝ անջատ կամ կցական գրությամբ:

ՄՀ-ում՝ *ազատդրախտ, խաշնդեղ, խարբիզակ* // *խարբզակ, խնկածաղիկ, խնկեղեզն, խնկողկուզակ, ծնեբեկ, հաց-*

համեմ, հացի փայտ «հացենի», հինդի ընկույզ, շահպալութ, ջալզի հնդի, ջղախոտ, ջրկոտեմ, Սողոմոն իմաստունի ծառ «մանրագոր», վայրի ազարիոն, վայրի բագուկ, վայրի բակլայ, վայրի գինձ, վայրի խիյար, վայրի խնձոր:

ՂԲ-ում՝ բաբափարթ, բըղըհացե, թրթնշուկ, լըղկըծաղեզ, կընձմընձուկ, կըտըվախօտ, մըղըրատանձ, մոամօշ, մօլլաբաշի... :

Կենդանանուններով, թռչնանուններով կազմված բուսանուններ:

ՄՀ-ում՝ աղունեսաձուք «խոլորձ», գայլխոտ, գառնալեզու, եզան լեզու, եզի ազի, եզի աչք, եզի խոտ, իշու խիյար, իշու վարդ, ագռաւու ճանկ, ագռաւու ոտք:

ՂԲ-ում՝ կոփլո (գայլի) խաղող, կոփլո խօտ, կոփլո ծաղեզ, կոփլո սոյնը, ըղվըսաքօլ լեռնային (փշոտ թուփ է), իծըմօրե, իծամօշ, իշըլօֆի, իշըկաթնուկ, իշըկածուկ, իշըպլանուկ, օղտու կածուկ «ուղտափուշ»^{*}:

Գունանուններով կազմված բառեր:

ՄՀ-ում՝ դեղին ծաղիկ, դեղին սուսան, դեղնախունկ, կարմիր կապար, կարմիր մասիա, կարմիր տակ, կարմիր ցորեն, կապույտ սուսան, սև բողկ, սև վրացու կոճ (գետնազգիներին պատկանող բույս), սպիտակ տուղտ, սպիտակ մանանեխ:

ՂԲ-ում՝ սըվըկմարի, սըվենե «սև խաղողի, թզի տեսակ»:

Գունանուններով կազմություններում ակնհայտորեն շեշտվում է տվյալ բույսի հիմնական հատկանիշը՝ գույնը: Կենդանանուններով կազմված բուսանունների դեպքում այդ հատ-

^{*} Ա. Ամիրխանյանը նշում է, որ, սննդի մեջ չկիրառվող անունները առնչվում են վայրի կենդանիներին: Տե՛ս «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2019, էջ 10:

կանիշը հստակ չէ: Մի դեպքում այն կարող է լինել որևէ կենդանու կամ նրա մարմնի մասի արտաքին նմանությունը. հմմտ. *Էզան լեզու, ուղտի աչք, աղուեսաձուք*, այլ դեպքում՝ տվյալ կենդանու ճաշակին հարիր բույսը, ինչպես՝ *ուղտափուշ, խոզկաղին*:

Մի շարք բուսանուններ ունեն հոմանիշներ, որոնք թերևս բարբառային տարբերակներ են. *խոլորձ - աղուեսաձուք, որձամատ - պուզիտան, խաշնդեղ - արտիգոլէ, եզնախոտ - արեղախոտ*:

Ղ. Ալիշանը, թվարկելով լօշտակ-ի հոմանիշները, գրում է. «Տակին կամ արմատին կես իրաւ կարծեցեալ ձեւովն իբրև մարդու նման կոչուած է *մարմնատակ* կամ *մարդատակ, մարդախոտ, մարդածաղիկ* և ստուգապէս *մանրագոր*» (Հայբուսակ, 229):

Միջին հայերենի բուսանունները վկայված են հիմնականում բժշկարաններում՝ որպէս դեղամիջոց: Բերենք օրինակներ Մխիթար Հերացու աշխատությունից՝ «Ա՛ռ *անխտն* և *կարմիր կապրի տակ, սաղճ* և *օշինդր, սումպուլ* և *լեղի նուշ, կարօսի ունդ* և *ըռագիանի ունդ*» (85): «Ա՛ռ *քապուլի հալիլայ* և *սև հալիլայ* ի կորիզէն հանած... և *ամլաճ.* և *մարուխի տակ* և *հոռոմ օշինդր* և *եզնալեզու* և *պատրանպօյէի տերև* և *պասպայիճ*» (126): «Ա՛ռ *յունապ, սալորաչիր, քերած պասպայիճ, ... հացհամեմի հունդ, տուղտ, թորթ, մանիշակ, նոնֆար*» (147):

Մարեմխոտ-ը բուժիչ է եղջերուների համար: Այդ մասին

¹ Ղարաբաղի բարբառում լօշտակ / լօշորակ-ը նաև ածականական կիրառություն ունի. *լօշտակ ընգուճնէ* (լայն ու երկար ականջների մասին, ՂԲԲ, 257):

² Մխիթարայ բժշկապետի Հերացույ , *Ջերմանց մխիթարություն*, Վենետիկ, 1832: Բերվող օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

նշում է Ալիշանը՝ մի ուշագրավ դիտարկումով. «Եղջերուն յոր-
ժամ հիւանդանայ՝ *մարեմա խոտ* ուտէ և լաւանայ...ՅԻտալիա
մարեմայ խոտ կանուանեն պատերու վրա բուսած խոտ մը
...գոր քաղեն Համբարձման կամ Վերափոխման օր և իրենց
ննջարանի մէջ կախեն: Այսպիսի բոյս մ'ալ ի Փոանկաստան
Marie-bregue կոչին: Ուրիշ շատ բուսոց Տիրամօր անունը կու
տան եվրոպացիք» (Հայբուսակ, 428):

Երբեմն երկբառ բուսանունների առաջին բաղադրիչի
բառային իմաստը մնում է անբացատրելի կամ ենթադրելի,
օրինակ՝ *ջիլ/ջիղ* բառը ունի մի շարք իմաստներ. *մկան, նյարդ,*
ըստ ՆՀԲ–ի՝ նաև ուժ, գորություն: Պարզ չէ *ջղախոտ* բառի
ջիղ–ի իմաստը:

Միջին հայերենում վկայված այս բառը ՆՀԲ–ում հղվում
է՝ տե՛ս *գաղտիկուր*: Այսինքն՝ *ջղախոտ և գաղտիկուր* բառերը
հոմանիշներ են: ՆՀԲ–ում բերվում է նաև արաբերեն համապա-
տասխանակը: *Գաղտակիր* բառահոդված ՆՀԲ–ում չկա: Բուսա-
նունների բառարանում՝ գաղտրիկ, «գաղտիկուր, թարթիկ»⁵:
Միջին հայերենի բառարանում՝ *գաղտիկուր* «ջղախոտագգինե-
րին պատկանող բազմամյա բույս, եզան լեզու, ջղախոտ» (132):

Վրացի կոճ «մրտի տակ, խարբակ, եղոբորոս» (ՆՀԲ):
ՄՀԲ–ում՝ «շուշանագգիների ընտանիքին պատկանող բույս,
կեղծ դանձլամեր» (741): Բուսանունների բառարանում՝ դանձ-
լամեր «եղեբորոս, մրտի տակ, քրիստոսածաղիկ» (61): Մի խոս-
քով՝ հստակ չէ այս բույսի տեսակը, նաև *վրացի* բառի բուն
նշանակությունը. Վրաստանի⁶, Վրաստանում աճո՞ղ, թե՞
վրացիների սիրելի բույս:

Ուշագրավ է *Սողոմոն իմաստունի ծառ անվանման*՝

⁵ Ռ. Ղազարյան, *Բուսանունների բառարան*, Ե., 1981, էջ 19:

Ամիրտովլաթ Ամասիացու մեկնությունը: Նշելով այդ բուսան-վան հայերեն, լատիներեն, պարսկերեն անվանումները՝ նա գրում է. «...զխոցերն աղեկցնէ ... Ասցել են թէ *Սողոմոն իմաստ-նայ ծառն* է, և իր մատնուն ակին ներքեն էր. այս ծառէն այնոր ամենայն գազանք և անասունք նորա հրամանքն էր և իշխան-ութիւն կառնէր ամենայն գազանաց և անասնոց»⁶:

Ըստ երևույթին, այս ծառատեսակը կամ նրանից պատրաստված փայտը խորհրդանշական երանգ ունի: Ա. Ամասիացին հավելում է. «Ասցած է, թէ Աղէկսանտր թագաւորն՝ զթագաւորութիւնն այս ծառովս ունէր և զայս փայտն ի հետն ունէր»:

Միջին հայերէնում բուսանունները առկայանում են նաև առակներում. «Յանդիմանել սկսաւ *դեղձի զսերկելի*՝ ասելով. Դեղին ես տեսլեամբ եւ դժուարութեւի մարդկան: Իսկ ես՝ բարետես և դիւրաճաշակ: Եւ նա ասէ. Կեղծաւոր ես ամենեւին և պատրիշ մարդկանս քաղցր երեւիս ի ճաշակել և մտեալ յորովայն՝ բազում վնաս գործես, իսկ ես դեղին եմ, զի ցաւակցիմ հիւանդաց՝ ի տես երթալով և զհիւանդութիւն բառնալով, և ոչ որպէս դու հալածեալ ի հիւանդաց»⁷:

«*Գնդածաղիկ և կորնզան և խոլորձ, սեզ և նմանք սոցին ծաղր առնէին զցինկ՝ ասէին, եթէ զի՞ է, զի մեք զուարճացեալ կամք և նա ծիրեալ դեղնութեամբ: Եւ լուեալ պատասխանեաց. զի անմիտք էք... ոչ խորհիք, եթէ վասն մեր սուրք սրեն գերանդեաց, իսկ ես խոկալով յայտոսիկ՝ զարհուրեալ դեղնիմ*» (39-40):

«*Նոնենի և թզենի առ միմեանս սէր ունել կամեցան և*

⁶ Ամիրտովլաթ Ամասիացոյ *Սնգիտաց անպէտ կամ բժշկական նիւթոց*, ի լոյս էած հանդերձ ծանոթագրութեամբ Կ. Բասմաջեան, Վիեննա 1826, էջ 506:

⁷ *Մուսկք Մխիթարայ Գռշի*, Վենետիկ, 1834, էջ 17:

քաղցրութեամբ հաւասարեցան, բայց ընդ թրոութեան *նոնեն-
տյն* տաղտկացաւ *թզենի* և լուծաւ դաշինքն» (12):

Ղարաբաղի բարբառում կան բուսանուններով կազմված դարձվածներ:

Խաշխաշ ինիլ / տըճոնալ: 1. Մասերի վերածվել. «Հիլին վեր ա ըղնում, *խաշխաշ տըճոնում*»: 2. Մարմինը պատառոտվել, մեռնել⁸ (213):

Խօտան կըծել «արբունքի հասնելով՝ առաջին անգամ սեռական հարաբերության մեջ մտնել». «Տըղան վեր *խօտան կըծից*, էլ տիժէր ա տանը պահելը» (228):

Մին ըմսական պէխկ «գեղեցիկ (անձ)»:

Տըրաքած շըմբալուր «մեկից՝ մի բանից նեղացած, վիրավորված (մարդ)». «*Տըրաքած շըմբալուր* ը՞ս, հու վա՞՞ էշիտ չու ասալ» (493):

Ցօրէն արտը կօրեկ տըռնալ «գործերը ձախողվել, հիասթափվել» (503):

Մըռամօշ շինիլ «հնազանդեցնել, խեղճացնել». «Տըղան էտ կըտաղած ծիյին էնքան քըշում ա *մըռամօշ ա շինում*» (360):

Մըռամօշ բառի մասին Ալիշանը գրում է. «Թերևս *մորամոշ* ըսելու է, վասն զի *մոշի* և *մորի* նման պտուղ բերե երկայնաձև, ճղերն ի գետին տարածուին» (Հայբուսակ, 448):

ՂԲԲ-ում բառը բացատրված է «մոշք՝ մոշենու տեսակ, որի պտուղները ավելի խոշոր են և կարծես պատված են մառով՝ մշուշով» (513):

ՄՀ-ի որոշ գրավոր աղբյուրներում արաբերեն, պարս-

⁸ Ա. Սարգսյան, Շ Մինսայան, *Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան*, Ե., 2017, էջ 213: Բառարանում կան նաև այլ բուսանուններով դարձվածներ: Բերվող օրինակների էջերը նշվում են փակագծերում:

կերեն բառերի ձայնեղ բաղաձայնները գրվում են խուլերով, ինչպես՝ արաբերեն *badinjan* - պատինճան, *badruj* - պատրուճ, *jade* - ճատե, *dulb* - տուլպ, պարսկերեն *bānāfš* - պանաֆշ, *gav-zaban* - կօզուպան, *jadvar* - ճատվար, *dar-felfel* - տարապղպղեղ:

ՂԲ-ում այդ շրջանից կատարված փոխառություններում ձայնեղները հիմնականում պահպանվում են. կան նաև չնչին բացառություններ, ինչպես՝ *բադրմջան* /պատրմճան, որն, անշուշտ փոխազդեցական հնչյունափոխության արդյունք է:

Գրաբարի բառավերջի ն-ն ՄՀ-ում հաճախ չի պահպանվում (*նուռն* - *նուռ*, *խոլորձն* - *խոլորձ*, *սիսեռն* - *սիսեռ*), իսկ բարբառում ն-ն մնում է:

Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ ն-ով վերջացող ոչ հնդեվրոպական բառերը կարող են անցած լինել ուրարտերենի միջոցով. այդ կարգի բառերի շարքում նշված են *խուրձն*, *կոտիմն*, *ոլոռն*, *ոսպն*, *եղերդն*, *եղեզն* բառերը⁹:

Կարելի է որոշ վերապահությամբ ընդունել մեծ գիտնականի այս դրույթը.

ա) ուրարտական բուսանվանական համակարգին վերաբերող փաստեր, ըստ էության, արձանագրված չեն,

բ) գիտնականի նշած բառերից *եղերդն*, *եղեիին*, *խուրձ(ն)*, *սիսեռն* *հ.է. ծագում ունեն*¹⁰:

Հայերենի բոլոր փուլերի և բարբառների համար ընդհանրական են ծառանունների *-ենի*, կամ *-ի* վերջավորությամբ կազմությունները:

⁹Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 440:

¹⁰ Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ, 213, 350, 618:

Ումանք ծառանունների -ենի վերջածանցին փորձում են վերագրել ուրարտական ծագում: Գ. Ջահուկյանը դա մերժելի է համարում¹¹:

Հավանորեն -ենի -ով նախապես կազմվել են միավանկ բառեր. *թուլթ - թթենի, տանձ - տանձենի, նուշ - նշենի*:

ՂԲ-ում բոլոր մրգատու ծառանունները կազմվում են հիմնականում -ի-ով, երբեմն էլ՝ ի>է հնչյունավորությամբ. *տանձի, խնձորի, ծիրանի / ծիրանէ, թուլթէ*: Այդ -ի-ն հ.ե. ծագում ունի: Բարբառներում -ի-ով կազմություններն այնքան հին են և տարածված, որ այդպես կազմվում են նաև նոր փոխառությունները:

Ամփոփում: Բառերի ծագումնաբանական և բառակազմության տեսանկյունից ՄՀ-ի և ՂԲ-ի բուսանվանական համակարգին բնորոշ են բարդ (հիմնականում երկարմատ) բառերը, արաբապարսկական փախառությունները:

Կենդանանուններով, կենդանու մարմնի մասերով կազմված բառերը կարող են լինել զուտ հայկական լեզվամտածողության արգասիք կամ օտար բառերի թարգմանություն-պատճենումներ (հստակ տարբերակման համար կողմնորոշիչ փաստեր չկան):

ՄՀ-ի հիշյալ փոխառությունները հայերենին են անցել և՛ գրավոր (օտար աղբյուրների թարգմանությամբ), և՛ բանավոր

¹¹Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 439:

՝Բարբառում-ենի-ով երբեմն կազմում են նույն մրգի տարբեր տեսակի ծառանունները. Օրինակ՝ *ծըմառենի, շուրթենի, յեմիշենի* բառերը տանձի տարբեր տեսակների ծառանվանումներ են:

հաղորդակցմամբ, ՂԲ-ում՝ բանավոր ճանապարհով, արաբերեն բառերը՝ պարսկերենից կամ թյուրքական լեզուներից:

Hovhannisyan Lavrenti - Contrastive Study of the Phytonyms of Middle Armenian Language and Karabakh (Artsakh) dialect. - There are general features of word formation in Middle Armenian and Karabakh dialect phytonyms, such as compound words, word-combination, idioms with phytonyms, phytonyms including zoonyms and colour names. The phytonyms in the Middle Armenian language and Karabakh dialect are borrowed from Arabic and Persian languages, while phytonyms in the Old Armenian Language are borrowed mainly from Middle Persian Language.

Оганесян Лаврентий - Сопоставительное исследование фитонимов среднеармянского языка и Карабахского диалекта. - В фитонимах среднеармянского языка и Карабахского диалекта существуют общие словообразовательные конструкции /сложные слова, словосочетания, идиомы с фитонимами, а также фитонимы в составе которых имеются зоонимы и цветные названия. Фитонимы среднеармянского языка и карабахского диалекта заимствованы в основном из арабского и персидского языков, а в древнеармянском - преимущественно из среднеперсидского.

ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
(Ըստ ձեռագիր բառարանների)

Գևորգ Ջահուկյանը, անդրադառնալով միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ որոշ բառերի առաջարկված ստուգաբանությունների, ճշտելով և կատարելով բառաքննական դիտողություններ, նշում է, որ «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանների ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս հայոց լեզվի պատմությանն ու ստուգաբանությանը»¹: Ասվածն անվերապահորեն կարելի է վերագրել նույնանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններին²: Այս ձեռագիր բառարանները (այսուհետև՝ ՁԲ) չունեն բնագրային օրինակներ, հետևաբար փորձ է արվում այդ բառերի գոյությունը հաստատելու հայերենի բառակազմության

¹ Գ. Ջահուկյան, *Ստուգաբանական դիտողություններ միջնադարյան բառարաններում տեղ գտած նորահայտ բառերի մասին*. - Լրաբեր հասարակական գիտությունների, 1976, 12, Ե., էջ 41:

² Ըստ Ս. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են նույնանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով՝ «Նշանաբռնումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառիս» (Ձեռ. 566 (I), 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթեոսի վ. Բաղդիրք հոմանիշ բառից» (Ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի միախառնեալ Մատթեոսի գերերջանիկ վարդապետէ» (Ձեռ. 873, 185ա-220բ և Ձեռ. 775, 53ա-80ա): Նշվածներին հարկ է հաւելել նաև Ձեռ. 6762-ում գետեղված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս և Ձեռ. 566-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Այսուհետև ձեռագրահամարը և էջերը տրվում են շարադրանքում՝ փակագծերի մեջ: Պահպանվում է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

առանձնահատկություններով, հետագայում լույս տեսած բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաև բնագրային օրինակներով³, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային զարգացումները և փոփոխությունները:

Դիւթ. հմայօղ. կիւս. որովայնակոչ. հաւահարց. թովիչ. ջատու. գարընկէց. կախարդ. իղձ. վիռկ նույնանիշային շարքում (այսուհետև՝ ՆՇ. ՄՄՁ 6762, 105բ. 566 (I), 241բ) առանձնանում են թրահմայ, ձեռնադիւթ, ձեռնահմայ, ջրահմայ, վիճակընկէց, օդահմայ, արդընկէց բարդ բառերը:

Վերոհիշյալ բառերի մի խումբը բաղադրված է, Հ.Աճառյանի վկայությամբ, համապատասխանաբար «բնիկ հայ» *ձեռն, ջուր, օղ* արմատներով և «(անեզաբար գործածուած) «կախարդութիւն, կախարդական գուշակութիւն» նշանակությամբ՝ «= Պիլ. humāy- ձևից» *հմայ* «օտար փոխառեալ» բառով⁴ (Հ.Աճառյանը նշում է *կիւսահմայ, լերդահմայ, հաւահմայ* բառերը):

Թրահմայ-ի համար կարելի է թերևս ենթադրել *թրել* բայի *թուր⁵ և վերոհիշյալ *հմայ* արմատներով բաղադրված լինելը: Հ.Աճառյանի վկայությամբ՝ «ԹԲԵԼ «ալիւր շաղուել, խմոր շինել» =Նախնական նշանակութիւնն է «թրջել» և այս իմաստով կապում է թուրմ և թուրջ ձևերի հետ. բոլորի պարզ արմատը լինում է *թուր, որից թրել, և մ, ջ աճականներով՝ թուրմ, թուրջ, թրմել և թրջել» (ն.տ.): Բառի կազմության ենթադրելի բացատրության օգտին է վկայում նաև *ալիւրադիւթ* բառը, որ Նոր հայկազյան բառգիրքը մեկնում է իբրև «Դիւթիչ ալերբ. որ հմայ է ի ձեռն ալերբ»⁶, այսինքն՝ «ալյուրով գուշակություն անող»:

³ Դրանք քաղելու հնարավորություն է ընձեռում «Գրահավաք» կայքի «հայերեն բնագրերի առցանց շտեմարանում» հայերեն բառերի որոնումը:

⁴ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե., 1977, էջ 103:

⁵ ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 213:

⁶ Գ.Աւետիքեան, Խ.Միրզեյեան, Մ.Ազեբեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 14: Տե՛ս նաև ՀԱԲ, հ. 1, Ե., 1971, էջ 671:

Հարկ է արձանագրել, որ ՁԲ-ներում առկա է նաև *Թրել. թրմել. զանգել. շաղել. հայս հարկանել* ՆՇ-ն (6762, 108բ. 566 (I), 246ա):

Կարելի է նաև հավանական համարել բառի՝ «բնիկ հայ» *թիռ* («թռիչ, թռչիլը». ՀԱԲ, հ. 2, էջ 184) բառով և փոխառյալ *հմայ* արմատով բաղադրված լինելը, այսինքն՝ ենթադրել, որ *թրահրմայ*-ը ուղղելի է թռահմայ, ասել է՝ «թռչունների թռիչքով զուշակություն անող», քանի որ, ինչպես վկայում է «Բառարան Սուրբ Գրոց»-ը, «Գուշակութիւնը քանի մը տեսակ էր. ջրով, հրով, հողով և օդով: Գուշակութիւն կըլլար նաև հաւերու թռիչէն...»⁷:

Հ.Աճառյանը ձեռնահմայ բառը հիշատակում է «նոր բռներ»-ի շարքում (ՀԱԲ, հ. 3, էջ 149): Բառն արձանագրում են Հ. Ավգերյանը՝ *Chirógraphist* -ը հղելով Chirógrapher-ին, վերջինս էլ բացատրելով *ձեռնահմայ*⁸, Հ.Ավգերյանը՝ «ձեռնահմայ-Chiromancer»⁹, Ա. Խուդաբաշյանը՝ "Хиромантик" բացատրություններով¹⁰, այնուհետև նաև Ս.Գաբամաճյանը՝ աստղանիշով հավաստելով բառի «նոր շինուած ըլլալը»¹¹: Ստ.Մալխասյանը, ի տարբերություն Հ.Աճառյանի, *ձեռնահմայ*-ը համարում է «հին բառ» և հղում «ձեռնահմայութիւն անող» նշանակությամբ *ձեռու-*

⁷ Հմմտ. *Բառարան Սուրբ Գրոց*, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 109:

⁸ *Բառարան անգղիարէն եւ հայերէն*, աշխատասիրեալ ի Հ. Յ. վարդապետ Աւգերեան, հ. Ա, Վենետիկ, 1821, էջ 142:

⁹ *Բառարան հայերէն եւ անգղիական*, աշխատասիրեալ ի Յ.Պրէնտեան անգղիացի ասպետէ. Ձեռնտութեամբ Հ.Յ. վարդապետի Աւգերեան, հ. Բ, Վենետիկ, 1825, էջ 381:

¹⁰ Ա.Խուդաբաշեանց, *Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ* (այսուհետև՝ ԽԲՀՌ), հ. 2, Մոսկուա, 1838, էջ 92:

¹¹ Ս.Գաբամաճեան, *Նոր բառագիրք հայերէն լեզուի* (այսուհետև՝ ԳՆԲՀԼ), Կ. Պոլիս, 1910, էջ 855:

հրմայ-ին¹²: Բառը վկայում են նաև հայոց լեզվի այլ բառարաններ¹³:

Մ. Ջախջախյանը ջրահմայ-ը վկայում է իբրև «նոր բառ»՝ «որ ջրով հմայութիւնս՝ դիւթութիւնս գործէ: Idromante»¹⁴ նշանակությամբ, Ստ. Մալխասյանցը նույնպես հիշատակում է բառը՝ «ջրով հմայութիւն անող, կախարդ»¹⁵: Մ. Գաբամաճյանը նշում է «Ջրոյ միջոցաւ հմայութիւն.... (hydromancie)» նշանակությամբ *ջրահմայութիւն* բառի «նոր շինուած ըլլալը»-ը (ԳՆԲՀԼ, էջ 1167):

Ստ. Մալխասյանցը «հին բառ» է դիտում «Օդահմայութիւն անող, օդի միջոցով հմայող» նշանակությամբ *օդահմայ-ը* (ՄՀԲԲ, հ. 4, էջ 601), թեև, որքան հաջողվեց պարզել, ըստ բառարանային տվյալների՝ այն վկայում են Մխ. Մեքաստացին՝ «հմայօղ օղով. նա՝ որ ըստ շարժման. կամ ըստ որպիսութեան օղոյ գուշակէ զապագայ. կամ զծածուկ ինչ» նշանակությամբ¹⁶, Մ. Ջախջախյանը¹⁷ և Հ. Ավգերյանը¹⁸: Մ. Գաբամաճյանը այն հիշա-

¹² Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 3, Ե., 1944, էջ 164-165:

¹³ Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ ՀԼՀԲ), Ե., 1967, էջ 412: Պ. Ճիգմեճեան, *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, Հալեպ, 1957, հ. 2, էջ 902: Գ. Ճերեճեան, Փ. Տօնիկեան, Ա. Տէր Խաչատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրուք, հ. 2, 1992, էջ 16:

¹⁴ Մ. Ջախջախեան, *Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական* (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1221:

Բառը նորակազմություն է դիտվում նաև Լ. Հարությունյանի հոդվածում. Լ. Հարությունյան, *Մանուէլ Ջախջախյանի «Հայերեն-իտալերեն բառարանի» տեղը հայ բառարանագրության մեջ*.- Պատմա-բանասիրական հանդես, 2, 2003, էջ 135:

¹⁵ ՄՀԲԲ, հ. 4, Ե., 1945, էջ 148:

¹⁶ Մխ. Մեքաստացի, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԲՀԼ), հ. 1, Վենետիկ, 1749, էջ 1239:

¹⁷ Մ. Ջախջախեան, *Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ բարբառ*, Վենետիկ, 1804, էջ 10:

¹⁸ *Բառարան անգղիարէն եւ հայերէն*, աշխատասիրեալ ի Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, հ. Ա, էջ 956:

տակում է իբրև «նոր շինուած»՝ «օդահմայութիւն ի գործ դնող մարդ» նշանակությամբ (ԳՆԲՀԼ, էջ 1386): Ա. Խուդաբաշյանցն արձանագրում է միայն *օդահմայութիւն*-ը՝ "Воздуховолхновение" բացատրությամբ (ԽՀՌԲ, հ. 2, էջ 500):

«Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում *ձեռնահմա*-ն, *ջրահմա*-ն, *օդահմա*-ն հիշատակվում են *ձեռնագուշակ*, *ջրադոյութ*, *օդադոյութ* հոմանիշներով և «(սնոտ.)» նշումով (ՀԼՀԲ, էջք 412, 560, 679). այս բառերը նույն նշումով են նաև Հ. Բարսեղյանի բառարանում¹⁹:

Վերոնշյալ բառերից արդի հայերենի բացատրական բառարաններում առկա է միայն *ձեռնահմա*-ն՝ համապատասխանաբար՝ «Նույնն է՝ *Ձեռնագուշակ*», «տե՛ս *Ձեռահմա*» հղումներով²⁰:

Նշված բառաշարքից առանձնացված բառերից երկուսը բաղադրված են գրաբարյան՝ «ձգել, վայր գցել, նետել» նշանակությամբ *ընկենուլ* բայի (ՀԱԲ, հ. 2, էջ 128) անցյալ կատարյալի *ընկէց* ցոյական հիմքով:

«Բախտագուշակ, բախտ գցող» նշանակությամբ վիճակընկէց-ի առաջին բաղադրիչը «վիճելի մի խնդրի կարգադրութիւնը՝ բախտի նայելով կամ քուէ ձգելով. 2. բախտ, բախտի բերմունք....» նշանակություններով *վիճակ* փոխառյալ արմատն է («= Պիլ. vāīchak «վիճակ» բառից») ²¹. բառն ամենայն հավանականությամբ կազմվել է ՁԲ-ներում առկա *գարընկէց* բառի համաբանությամբ (Հ.Աճառյանը վկայում է *գէնընկէց*, *գետընկէց*, *լծընկէց*, *կարթընկէց*, *դիւցընկէց* և այլ բառեր. ՀԱԲ, հ. 2, էջ 128) հիշեցնելով «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ում «1. Բախտ գուշակել, բախտ բացել.... 2. Վիճակ հանել» նշա-

¹⁹ Հ.Բարսեղյան, *Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան*, Ե., 1973, էջք 608, 964, 802:

²⁰ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 919: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 3, Ե., 1980, էջք 410 և 411:

²¹ ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 340:

նակություններով վկայված *Վիճակ գգել*-ը²²: Սա է հուշում նաև Մխ. Սեբաստացին *Վիճակընկեց* բառահոդվածի վերջում նշելով՝ «ռամկ. վիճակ ձգող» (ԲՀԼ, հ. 1, էջ 1076): Եվ դարձյալ բառը հիշատակում են Մ. Ջախջախյանը²³ և Յ. Ավգերյանը²⁴, Ա. Խուդաբաշյանը՝ "Кидающій жребіи, гадающій; колдун, чародѣй" բացատրությամբ (ԽՀՌԲ, հ. 2, էջ 420): *Վիճակընկեց* բառն առկա է նաև ՄՀԲԲ-ում՝ «հագուադեպ բառ» և «Տ. Վիճակարկու» նշումներով (ՄՀԲԲ, հ. 4, էջ 342), վերջինս «Նա որ վիճակ է ձրգում, վիճակ է հանում, վիճակահանութեան մասնակից» բացատրությամբ (ն.ս.): Բառը նույն բացատրությամբ և (հզվդ.) նշումով վկայում է Հ.Բարսեղյանը²⁵:

Արդընկեց բառի համար ենթադրելի է *արդ* «և. յօրինուած» (ՆՀԲ, հ. 1. էջ 345. ՀԱԲ, հ. 1, էջ 306) արմատով և վերը հիշատակված *ընկեց*-ով բաղադրված լինելը՝ բառի հավանական «ձևացնող, ստությամբ, խաբեությամբ դյուրող, հմայող» նշանակությամբ:

Բառարաններն արձանագրում են *արդընկեց* բառը՝ «գեղարդ ձգող՝ նետող (կռուի կամ խաղի մեջ)» իմաստով (ՆՀԲ, հ. 1, էջ 351)²⁶:

Ձեռն և *դիւթ* «վիուկ, կախարդ» (ՀԱԲ, հ. 1, էջ 671) արմատներով բաղադրված ձեռնադիւթ-ը՝ կազմված *ձեռնահմայ*-ի, այլև

²²Ա. Սուրբիասյան, Ս.Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան* (այսուհետև՝ ՀԼԴԲ), Ե., 1975, էջ 551:

²³Մ.Ջախջախեան, նշվ. բառ., էջ 755:

²⁴Բառարան համառոտ ի հայէ ի գաղղիական, աշխ.-մբ Հ. Յ. վ. Աւգերեան, հ. 2, Վենետիկ, 1817, էջ 613:

²⁵Հ.Բարսեղյան, նշվ. բառ., էջ 875:

²⁶ՄՀԲԲ, հ. 1, Ե., 1944, էջ 260: Տե՛ս նաև Մ.Աւգերեան, Գ.Ճիւլեան, *Առձեռն բառգիրք հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 134: Հարկ է նշել, որ Վ.Համբարձումյանը XVII դ. «ղատինաբան հայերենում» առանձնացնում է *սանձընկեց* «նորակազմ» բարդ բառը՝ *ընկեց* «բայարմատ բաղադրիչ» հիմքով. Վ.Համբարձումյան, *Հատինաբան հայերենի պատմություն* (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 213:

ՉԲ-ներում հիշատակվող *գարեդիւթ*-ի համաբանությամբ և «ձեռքին նայելով գուշակություն անող» նշանակությամբ, բառաբաններում չի վկայվում:

Միայն ՄՄՁ 3110-ում (95բ)՝ *Կամաւ իւրով. կամաւորաբար իւրովի. կամակոր մըտօք. ինքնակամ մտօք. գիտութեամբ կամաց. կամովին. յօժարամիտ սրտիւ. ի սրտէ. մտադիւր. ախորժելով* ՆՇ-ում է առկա յօժարակամ բառը, որը բաղադրված է *յօժար* «սրտով սլատրաստ, հաճ և հաւան» արմատով (ՀԱԲ, հ. 3, էջ 413) և փոխառյալ *կամ* «ուզելը. յօժարութիւն, ցանկութիւն» («= Պիլ. kām «կամք, կամեցողութիւն». ՀԱԲ, հ. 2 էջ 498) բառով: Գրաբարի տպագիր բառարանները վկայում են *կամայօժար*-ը բացատրելով որպէս «յօժարակամ» (ՆՀԲ, հ. 1, էջ 1041)²⁷: Միւ. Սեբաստացին *յօժարակամ*-ը մեկնում է՝ «ունօղ զյօժար կամս. կամ յօժարամիտ. և կամ յօժարասիրտ» (ԲՀԼ, հ. 1, էջ 733)՝ բառն օգտագործելով նաև *յօժարասէր*-ը բացատրելիս (ԲՀԼ, ն.տ.): Այն առկա է Մ. Չամչյանի աշխատության մեջ՝ «...և ո՛չ ժողովուրդ ինչ այնպէս յօժարակամ և գուարթամիտ մատուցին սատար օգնականութեան...»²⁸, հետագայում Գ.Ավետիքյանի «Նարեկ աղօթից» երկասիրության մեջ՝ «... որ մատուցանես զքեզ պատրաստ կամ յօժարակամ բաշխմամբ ի բազմապատիկ տեսակս բարեաց»²⁹: Բառը «Տ. Յօժար» հղումով իբրև «նոր բառ» է նշում Մ. Ջախջախյանը (ՋԲ, էջ 1049), այլև Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, էջ 416): Ա. Խոտաբաշյանը *յօժարակամ*-ը հղում է "добровольный" իմաստով *յօժարամիտ*-ին (ԽՀՌԲ, հ. 2, էջ 213): ՆՀԲ-ն *յօժարակամ*-ն օգտագործում է *յառաջակամ*-ը բացատրելիս³⁰: Բառը

²⁷ Նաև՝ Ռ.Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հ. 1, Ե., 2000, էջ 624:

²⁸ Պատմութիւն հայոց Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեստն 1784 Յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդապետէ չամչեանց կոստանդինուպօլսեցոյ..., հ.Գ Վենետիկ, 1786, էջ 526:

²⁹ Նարեկ աղօթից հարազատ և գգուշատր լուծմամբք նորոգ բացայայտեալ, ի նպաստ բանասէր աղօթատրաց, աշխ.-մբ Գաբրիելի Աւետիքեան Կոստանդինուպօլսեցոյ, Վենետիկ, 1801, էջ 620:

³⁰ ՆՀԲ, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 334:

վկայում են Ստ.Մալխասյանցը (ՄՀԲԲ, հ. 3, էջ 423), արդի հայերենի բացատրական բառարանները (ԱՀԲԲ, էջ887. ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 370):

Գերծել. կամ գերծուլ. փոքրել զհերս. վարսաւիրել.* սափրել. սրբել. ածիլել (եթէ մկրատիս) խուզել. յապաւել ՆՇ-ում (ՄՄՁ 566 (I), 240ա. 6762, 104բ) առկա վարսաւիրել բայը բաղադրված է, ըստ Հ.Աճառյանի, փոխառյալ *վարս* «երկար մազեր, ծամ» («= Պիլ. vars, սոզդ. vars (յատկապէս գլխի)» (ՀԱԲ, հ. 4, էջ 324) և *վիրալ* «սափրել, գերծուլ, մազերը կտրել» («= Պիլ. պազ. vīrāyam (անորոշը vīrāstan) «պատրաստել, կարգաւորել, յարդարել»». ՀԱԲ, հ. 4, էջ 343)³¹ արմատներով: Մի. Սեբաստացին այն նշում է բառգրքում՝ «.... սափրել. կամ գերծուլ, որ է փոքրել զհերս, այսինքն՝ ածելեօք հատանելով՝ ի բաց ձգել. ուսմկ. ածիլել. կամ թրաշ ընել» (ԲՀԼ, հ. 1, էջ 1057), և գրաբարի քերականության մեջ³²: Հետագայում Ա. Խոտաբաշյանցը վկայում է բառը՝ "Брить бороду" բացատրությամբ (ԽՀՈԲ, հ. 2, էջ 410), Ստ.Մալխասյանցը՝ «Տ. Սափրել» հղումով և «հագուադէպ բառ» նշումով (ՄՀԲԲ, հ. 4, էջ 316), ՀԼՀԲ-ն՝ իբրև *սափրել*-ի, «(բրբ.)» նշումով *թրաշել*-ի հոմանիշ (ՀԼՀԲ, էջ 603):

Ուշագրաւ է, որ XVII դ. «լատինաբան հայերենում» արձանագրվում է *-իչ* վերջածանցով «վարսավիր» նշանակությամբ «նորակազմ» *վարսիչ* բառը³³, իսկ նույնանիշների՝ XVIIIդ. ավանդված ՁԲ-ներում՝ «մազերը կտրել. սափրել, ածիլել» նշանակությամբ, բայց բառարաններում չվկայված *վարսել*-ը³⁴ (ՄՄՁ 775-ում (56բ), 873-ում (189բ)):

* ՄՄՁ 566 (I)-ում *վարսաւորել* տարբերակն է:

³¹ «Նշանակության զարգացման համար» տե՛ս ՀԱԲ, ն. տ.:

³² *Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի*, Շարադրեցեալ աշխատասիրութեամբ Մի. Սեբաստացոյ, Վենետիկ, 1730, էջ 573:

³³ Վ.Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն*, էջ 226:

³⁴ Ն.Հովհաննիսյան, *Բառարաններում չվկայված մի քանի բառի քննություն*.-Ջահուկյանական ընթերցումներ. Հ.Աճառյանի 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ, Ե., 2011, էջ 169-170:

Կարելի է հավանական համարել, որ վարսաւիրել բայը գործածվել է հայերենում՝ արձանագրվելով XVIII դ. և հետագայում հրատարակված բառարաններում:

Հ.Աճառյանը *վատահամբաւ* բառը համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. 4, էջ 311): Նույն դիտարկումը վերագրելի է *Պարսաւել լուտալ. վատաբաւնել. պախարակել. քամահել. զքամահանս դնել. ի վերայ չարախօսել. տես և զարհամարհել*ն ՆՇ-ում (ՄՄՁ 566 (I), 268ա-268բ. 6762, 123ա) առկա վատահամբաւել բային, որը բաղադրված է փոխառյալ *վատ* «գէշ, չար. անպիտան, ծոյլ, անարի, թոյլ» («= Պիլ. vat, պագ. vad պրս. ۞ bad «գէշ, չար, վատ». ՀԱԲ, հ. 4, էջ 311) և հայերեն *համբաւ* «հոշակ, տարածուած անուն, լուր» (ՀԱԲ, հ. 3, էջ 24) արմատներով: Բայն օգտագործում է Խաչատուր Էրզրումեցին «Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան» երկասիրության մեջ՝ «Արդ չէ օրէն վատահամբաւել զոք առանց պատճառի»³⁵: Այնուհետև Հ. Վիլլոտը լատիներեն *dedecoro*-ն բացատրելիս հիշատակում է նաև *վատահամբաւել* -ը³⁶: *Վատահամբաւել*-ը վկայում է Միս. Սեբաստացին՝ «վատահամբաւ առնել. կամ ապականել զանուն ուրուք» բացատրությամբ (ԲՀԼ, հ. 1, էջ 1048): Հետագայում երկլեզվյան բառարաններում այն հիշատակում են Մ. Ջախջախյանը՝ իտալերեն *infamare infamato* -ն թարգմանելով «վատահամբաւել»³⁷, և Հ.Ավգերյանը՝ նույն կերպ թարգմանելով անգլերեն *To Stain*-ը³⁸: Բայն առկա է Միսիթարյան միաբանների կազմած քառալեզու բառարանում (*Diffamare* - վատահամբաւել....)³⁹, ԽՀՌԲ-ում՝ "Поносить, обезчестить, злословить, опозо-

³⁵ Համառօտութիւն բարոյականի աստուածաբանութեան, շարադրեցեալ ի Խաչատուր Էրզրումեցոյ, Վենետիկ, 1709, էջ 367:

³⁶ J. Villotte, *Dictionarium Novum Latino-Armenium*, Roma, 1714, էջ 196-197:

³⁷ Մ. Ջախջախեան, նշվ. բառ., էջ 415 :

³⁸ *Բառարան անգղիարէն եւ հայերէն*, աշխատասիրեալ ի Հ. Յ. վարդապետէ Աւգերեան, հ. Ա, էջ 816:

³⁹ *Nuovo dizionario italiano-francese-armeno-turco*, 1846, Vienna, էջ 266:

ритъ" բացատրությամբ (ԽՀՌԲ, հ. 2, էջ 404), ՄՀԲԲ-ում՝ «Տ. Անուանարկել» հղումով (ՄՀԲԲ, հ. 4, էջ 304): Նույն նշանակությամբ, թեև «(հնգ.)» նշումով են վկայում արդի հայերենի բացատրական բառարանները (ՄՀԲԲ, էջ 1362)⁴⁰, այլև Թ. Գայաջանի «Գանձարան հայերեն լեզուի» բառարանը⁴¹: Այսինքն՝ կարելի է հավաստել, որ բառը գործածվել է հայերենում:

Այսպիսով, քննությամբ պարզվում է, որ XVIII դ. ավանդված ՁԲ-ներում առկա *թրահմայ*, *ձեռնադիւթ*, *ձեռնահմայ*, *ջրահմայ*, *օդահմայ*, *վիճակընկեց*, *արդընկեց*, *յօժարական*, *վարսաւիրել*, *վատահամբաւել* բառերն արձանագրվել են Հ. Վիլլոտի, Միս. Սեբաստացու, նաև Մխիթարյան հայրերի՝ XIX դ. հրատարակած թարգմանական բառարաններում, քերականական և պատմական տարբեր երկերում. ըստ բառարանային տվյալների՝ մի քանիսը պահպանվել են հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

Hovhannisyan Nazik- Lexicological Notes (Based on the Material of Manuscript Dictionaries).- Gevorg Jahukyan, reviewing and refining the proposed etymologies of some "recently found" words, testified in medieval dictionaries, notes that the study of lexicographic monuments of medieval Armenia provides important material for the history of Armenian language and etymology. This can be unconditionally attributed to manuscript dictionaries of synonyms of the XVIII century. There are no textual examples in these dictionaries, therefore an attempt is made to establish the existence of words by structures of the Armenian language formation, dictionaries published later, and, to the extent possible, textual examples.

The words *trahmay*, *dzernadyut*, *dzernahmay*, *jrahmay*, *vitshakankets*, *odahmay*, *ardankets*, *hozharakam*, *varsavirel*, *vatahambavel* are considered.

Considering the aforementioned words, it turns out that some of these words are testified in the dictionaries of J.Villotte, Mkh.

⁴⁰ ԺՀԼԲԲ, հ. 4, Ե., 1980, էջ 371-372:

⁴¹ Թ.Գայաջան, *Բառարան գանձարան հայերեն լեզուի*, Գահիրե, 1938, էջ 468:

Sebastatsi (XVIII century), fathers of the Mekhitarists (XIX century) and according to dictionary data some of these words are preserved in Eastern and Western Armenian variants of the Armenian language.

Оганесян Назик -Лексикологические заметки (на материале рукописных словарей).- Геворк Джаукян, рассматривая и уточняя предлагаемые этимологии некоторых "недавно найденных" слов, засвидетельствованных в средневековых словарях, отмечает, что изучение лексикографических памятников средневековой Армении даст важный материал для истории армянского языка и этимологии. Сказанное безоговорочно можно отнести к рукописным словарям синонимов XVIII века. В этих рукописных словарях нет текстуальных примеров, поэтому делается попытка установить существование рассматриваемых слов словообразованием армянского языка, словарями, опубликованными позднее, и, по мере возможности, текстуальными примерами.

Рассмотрены слова *trahmay*, *dzernadyut*, *dzernahmay*, *jrahmay*, *vitshakankets*, *odahmay*, *ardankets*, *hozharakam*, *varsavirel*, *vatahambavel*.

Анализируя вышеупомянутые слова выясняется, что некоторые из этих новосозданных слов засвидетельствованы в словарях Дж. Виллотта, Мх.Себасти (XVIII век), отцов -мхитаристов (XIX век) и по словарным данным некоторые сохранены в восточноармянском и западноармянском вариантах армянского языка.

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀԱԳՈՒՍ»
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ

Հայոց լեզուն, լինելով աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից մեկը, անընդհատ հարստացել ու զարգացել է՝ կատարելագործելով իր քերականական կառուցվածքն ու համալրելով իր բառապաշարը: Բառապաշարում տեղի ունեցող փոփոխությունները միշտ էլ ուշադրության ու մանրակրկիտ ուսումնասիրության առարկա են եղել: Մեր նպատակը սույն հոդվածի միջոցով այդպիսի ուսումնասիրության մի փորձ կատարելն է քննելով «հագուստ» իմաստային դաշտը:

Հաշվի առնելով գործածականության կամ հաճախականության սահմանափակվածությունը, ժամանակի կամ տարածության տարբեր հատվածներում՝ առանձնացրել ենք «հագուստ» իմաստային դաշտում սահմանափակ գործածություն ունեցող այնպիսի բառեր՝ *հնաբանություններ*, որոնք պատկանում են մեր լեզվի ոչ կենսունակ, ոչ գործուն (պասիվ) բառաշերտին: Դրանք այն բառերն են, որոնց մի մասը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով դուրս է եկել գործածությունից (երբեմն հանդիպում ենք գեղարվեստական գրականության մեջ՝ որոշակի նպատակադրմամբ), մի մասն էլ թեև հնացել է գրական արևելահայերենի համար, սակայն պահպանվում է բարբառներում, մասամբ՝ գրական արևմտահայերենում: Ըստ այդմ էլ «հագուստ» իմաստային դաշտի հնաբանությունները ներկայացնում ենք առանձին խմբերով:

Առաջին բառախմբում առանձնացրել ենք «հագուստ» իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ այն բառերը, որոնք գործածվել են գրաբարում, միջին հայերենում, այժմ՝ չկան բարբառներում ու արդի գրական լեզուների մեջ, ինչպես՝

ա) *գրաբարյան բառեր*¹ արկանելի՝ «վրայի հագուստ, վերարկու, մեկնոց, ծածկոց» (ԳԲ, 1, 214), գաբեղեն «թաղիքե վերարկու» (ԳԲ, 1, 302), գրզի «քրքրուած՝ պատառոտուած հինու-մին հագուստ, ցնցոտի, քուրջ» (ԳԲ, 1, 343), աղաբողոն (յուն.) «հոգևորականի վերնագգեստ փարաջայ, փիլոն» (ԳԲ, 1, 27), կոդոբ (յուն.) «անթն կարճ գգեստ» (ԳԲ, 1, 667), մենթան (պիլ.) «գգեստ, հանդերձ» (ԳԲ, 2, 174), մովկք «լայն վարտիք» (ԳԲ, 2, 202), փադան (պիլ.) «գլխաշոր, լաչակ, շղարշ, քոդ» (ԳԲ, 2, 588), չուխագգեստ «չուխայից կարուած գգեստ հագած, բրդեայ հագուստով» (ԳԲ, 2, 376), պոդիրի (յուն.) «մինչև ոտքերը հասնող երկար հագուստ» (ԳԲ, 2, 420), սուդար (լատ.-յուն.-ից) «1. քրտինք սրբելու թաշկինակ, վարշամակ, 2. կանանց գլխի ծածկոյթ, գլխաշոր, լաչակ» (ԳԲ, 2, 466), վտաւատ «առանց թևերի տնային ներքնագգեստ, որի վրայից հագնում էին թագաւորական կամ իշխանական քղամիդ» (ԳԲ, 2, 532) և այլն,

բ) *միջինհայերենյան բառեր*² ասպապ (թուրք.) «շոր, գգեստ, հագուստ» (ՄՀԲ, 79), աքական (եկեղց.) «մինչև կրունկները հասնող սպիտակ ներքնագգեստ. շապիկ» (ՄՀԲ, 100), եախայ «օձիք» (ՄՀԲ, 177), ասպապ² (թուրք.) «շոր, գգեստ, հագուստ» (ՄՀԲ, 79), աքական (եկեղց.) «մինչև կրունկները հասնող

¹ Բերված բոլոր օրինակները համեմատել ենք հետևյալ բառարաններով. Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա-Դ, Ե., 1971, *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Ե., 1969-1980, Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետ՝ ԱՀԲԲ), Ե., 1976, Ռ. Մաքապետոյեան, *Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան* (այսուհետ՝ ԱԱՆԲ), Ե., 2011, Ա. Մարգարյան, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, Գ. արքեպիսկոպոս Ճերեմեան, Փ. Կ. Տոնիկեան եւ Ա. Տեր Խաչատուրեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, հհ. 1-2, Պէյրուք, 1992, Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան* (այսուհետ՝ ԳԲ), 2 հ., Ե., 2000, Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետ՝ ՀԲԲ), հհ. 1-4, Ե., 1944-1945, *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետ՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Ե., 2001-2012, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետ՝ ՄՀԲ), Ե., 2009:

² *Ասպապ* բառանունն արձանագրված է ԺՀԼԲԲ-ում՝ «(բւք.) վայրի ունաբի մի տեսակ» իմաստով, հ. 1, էջ 187:

սպիտակ ներքնագգեստ. շապիկ» (ՄՀԲ, 100), եախայ «օձիք» (ՄՀԲ, 177), եասմայ (թուրք.) «գլխի ծաղկակար թաշկի-նակ» (ՄՀԲ, 178), խաբդան³ (թուրք.) «կանանց երկար վերնագգեստ» (ՄՀԲ, 298), խիլախ (արաբ., թուրք.) «իբրև նվեր տրվող զգեստ, խալաթ» (ՄՀԲ, 320), խուշախ (թուրք.) «գոտի» (ՄՀԲ, 334), ճգմայ/ջըգմայ «կօշիկ» (ՄՀԲ, 472), մաշկեկ (գրբ. մաշկեակ) «մաշկեղեն զգեստ, մուշտակ» (ՄՀԲ, 495), պալափուշ (պրսկ.) «թիկնոց, վերարկու» (ՄՀԲ, 634), ուռուպա (թուրք.) «զգեստ, հագուստ» (ՄՀԲ, 620), սաքուլա (պրսկ.) «գդակ» (ՄՀԲ, 692), վեդր-գտակ «կրոնավորի սրածայր գլխարկ» (ՄՀԲ, 735), վիռոն (հուն.) «փիլոն» (ՄՀԲ, 739) և այլն:

Երկրորդ բառախմբում առանձնացրել ենք «հագուստ» իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ այն բառերը, որոնք արձանագրված են «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»՝ *հնց.* նշումով, ինչպես՝ *գրաքարից*՝ փեղոյր «տղամարդու կամ կնոջ գլխարկ» (ԺՀԼԲԲ, 4, 645), լոդիկ (յուն.) «թեթև վերարկու, թիկնոց» (ԳԲ, 1, 546), գրատ «երկար ու լայն թիկնոցանման վերնագգեստ, պատմուճան, վերարկու» (ԳԲ, 1, 343), մեկնոց «վերևի հագուստ, վերարկու, թիկնոց» (ԳԲ, 2, 170), մուճակ (պիլ.) «կանացի կօշիկ» (ԳԲ, 2, 203), պախճաւանդ (իրան.) «սեղմիրան» (ԳԲ, 2, 378), պատմուճան (պիլ.) «1. երկար ու լայն վերնագգեստ, պարեգոտ, 2. փառաւոր զարդարուն զգեստ, 3. ընդհանրապես զգեստ» (ԳԲ, 2, 396), վտավակ «1. Տակի զգեստ, շապիկ, 2. (եկեղց.) ուսանոց, վակաս, 3. Վերար-կու» (ԳԲ, 2, 532), վառ (պիլ.) «նուրբ՝ ընտիր կտորից զարդարուն քօղ» (ԳԲ, 2, 502), փակեղն (յուն.) «1. գլխի փաթաթան, փաթթոց, 2. կանանց և կոյսերի գլխի ծածկոց» (ԳԲ, 2, 589), օդիկ «ոչխարի մորթի կամ ոչխարի մորթուց մեկնոց՝ թիկնոց» (ԳԲ, 2, 649), օթոց «1. օթևանելու գիշերելու տեղ, օթևան, սենեակ, ննջարան,

³ *Խաբդան* բառանունն արձանագրված է ՀԼԲԲ-ում՝ «Պլ., Ակն. 1. նավապետ, կապիտան, 2. առաջնորդ, ղեկավար, 3. փխբ. նավապետի կամ առաջնորդի հագուստ» իմաստներով, հ. 2, էջ 258:

2. անկողնու ծածկոց, 3. հագուստի վրայից հագնելու վերնագգեստ (վերարկու, թիկնոց են)» (ԳԲ, 2, 649), վարշամակ (պիլ.) «1. Թաշկինակ, 2. սրբիչ, դաստառակ, 3. գլխին փաթաթելու կապելու շոր, գլխաշոր, 4. գլխի փաթոյթ, ապարօշ» (ԳԲ, 2, 509) և այլն, *միջին հայերենից* մանդիլ (արաբ., պրսկ.) «գլխաշոր, վարշամակ» (ՄՀԲ, 491) և այլն:

Երրորդ բառախմբում առանձնացրել ենք «հագուստ» իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ այն բառերը, որոնք թեև դուրս են եկել գործածությունից, բայց դեռևս պահպանվում են բարբառներում: Այսպես.

Շար (պրսկ.) «մետաքսից թափանցիկ ու նուրբ գործուածք, շղարշ, քոզ» (ԳԲ, 2, 309): Այս բառանունը բարբառներում տարբեր իմաստներ ունի, ինչպես «1. նուրբ ազնիվ կտոր, մետաքս, բեհեզ (Ար., ՆՆ., Եվդ. (Ամս.), Սբ., Կր. (Ջվիս.), Հմշ., Վն., Մկս.), 2. այդ կտորից կարած նուրբ շապիկ (Վն.), 3. նուրբ մետաքսյա թաշկինակ, որ հարսանիքի ժամանակ կապում են փեսայի վզին (ՆՆ., Խրբ. (Չրս.)), 4. սպիտակ շղարշե ծածկոց, որով հարսները փաթաթվում են ոտից գլուխ՝ երբ գնում են բաղնիք՝ եկեղեցի կամ այլ տեղ (Սվ.)» (ՀԼԲԲ, 4, 210):

Աղլուխ/եաղլխ (թուրք.) «թաշկինակ, գլխաշոր» (ՄՀԲ, 30) բառանունը բարբառներում գործածվում է «1. ձեռքի թաշկինակ (Ար., Թբ., Ղրբ., Մշ., Կր., Հմշ. և այլն), 2. գլխաշոր, լաշակ, 3. բարակ կտոր, որ հարսանիքի ժամանակ կապում են սկեսրայրի վիզը (Հմշ.)» իմաստներով (ՀԼԲԲ, 1, 39):

Բաբուճ (պրսկ.) «անկրունկ կոշիկ, հողաթափ» (ՄՀԲ, 102) բառանունը Սեբաստիայի և Պոլսի բարբառներում նույն իմաստով է գործածվում, իսկ Խոտուրջուրի բարբառում՝ «գեր, պարարտ» և «ծիրանի չիր» իմաստներով (ՀԼԲԲ, 1, 143):

Այդպես նաև՝ ախլըզ (Ար.) «բամբակե անթև հագուստ, որ մեծ մասամբ հագնում են չուխայի տակ» (ՀԼԲԲ, 1, 20), անձնեկ (Քսբ.)//անձնաք (Սվ.) «օձիք» (ՀԼԲԲ, 1, 63), ապլախ (Մշ.) «կանացի մետաքսե գլխաշոր» (ՀԼԲԲ, 1, 94), մանդիլ (ՀԼԲԲ, 4, 22), ջուպայ//ճուպայ (արաբ.) «արևելյան տարազի

երկար և լայն վերնազգեստ» (ՄՀԲ, 671), քամար/քեմեր/քեմար (պրսկ., թուրք.) «գոտի, մեջկապ» (ՄՀԲ, 798) հնաբանությունները հիմնականում գործածվում են բարբառներում, իսկ հալա «հագուստ, զգեստ, շոր» (ԳԲ, 2, 12), մուճակ, լոդիկ, արախճին (պրսկ.) «թասակ գլխարկ (սովորաբար ասեղնագործ)» (ՄՀԲ, 84), շմաթ (պրսկ.) «բարակ կրծկալ, որ ծածկում են կանանց կուրծքը» (ՄՀԲ, 597), բառերը գործածվում են նաև արևմտահայերենում:

Չորրորդ բառախմբում առանձնացրել ենք «հագուստ» իմաստային դաշտի բնիկ և փոխառյալ այն բառերը, որոնք թեն դուրս են եկել գործածությունից, բայց գործածվում են գրական արևմտահայերենում, արձանագրված են, օրինակ, ԱՄՆԲ-ում՝ առանց *հնգ.* նշումի՝ ի տարբերություն գրական արևելահայերենի, ինչպես՝ փեղոյր «գլխարկ, գլխանոց» (ԱՄՆԲ, 359), պախճաւանդ «1. կրծկալ, 2. սեղմիրան» (ԱՄՆԲ, 297), վտաւակ «1. ներքնազգեստ, 2. շապիկ, 3. եկեղեցում հագնելու կարճ շապիկ՝ վակաս, 4. վերարկու» (ԱՄՆԲ, 340), ագանելիք «հագնելիք, հագուստ» (ԱՄՆԲ, 14), վարշամակ «1. թաշկինակ, 2. գլխաշոր, 3. լաթ, սրբիչ, 4. պատանք» (ԱՄՆԲ, 336) իմաստներով և այլն:

Հինգերորդ բառախմբում առանձնացրել ենք այնպիսի բառեր, որոնց մի իմաստն է հնացել, մյուս իմաստը գործածվում է արդի գրական հայերենում, ինչպես՝ բաճկոն «1. պիջակ, 2. (հնգ.) կարճ զգեստ, որ հագնում են վերնաշապիկի վրայից, ժիլետ» (ԺՀԼԲԲ, 1, 276), բեհեզեղեն «1. զանազան տեսակի բեհեզներ, 2. բեհեզից պատրաստած հագուստեղեն, 3. (հնգ.) բեհեզյա, բեհեզից պատրաստված» (ԺՀԼԲԲ, 1, 311), երկարափանդերձ «1. (հզվդ.) երկար հագուստ ունեցող, 2. փխբ. (հնգ.) հոգևորական» (ԺՀԼԲԲ, 1, 586) և այլն:

Ինչպես հայտնի է, հնաբանությունները բաժանվում են երկու խմբի՝ պատմաբառեր և հնաբառեր: «Հագուստ» իմաստային դաշտում պատմաբառեր ենք համարել բոլոր այն բառերը, որոնք պատմության գիրկն անցած, միայն տվյալ

պատմական ժամանակաշրջանին հատուկ հագուստի անվանումներ են: Այս բառերը, դուրս գալով գործածությունից, ժամանակակից գրական լեզվի բառապաշարի մեջ կամ չունեն իրենց հոմանիշ ձևերը, քանի որ այդ առարկաներն ու հասկացություններն արդեն գոյություն չունեն, կամ էլ նրանց իմաստն արտահայտվում է ուրիշ բառերի միջոցով: Դրանցից են՝ զար «սպիտակ սավան, որ կանայք փողոց ելնելիս վրան էին առնում» (ԺՀԼԲԲ, 2, 11), *աշխարավանդ* (հանգոյց) «այն ժապավենը, որ ճակատի կողմից սկսուելով՝ պատում էր թագաւորական խոյրը և յետնի կողմում հանգոյց ձևաւորելով՝ երկու ծայրերով ցած էր կախում» (ԳԲ, 1, 155), *ծիրանի* «ծիրանի կարմիր ներկով ներկուած կտոր և սրանից կարուած թագաւորական երկար ու անթևք զգեստ» (ԳԲ, 1, 611), *եմփիտ-րոն* «(եկեղ.) երկայն և լայն ուրար, խաչերով զարդարված, որ եպիսկոպոսները կրում են շուրջառի վրայ, պատելով ուսերն ու լանջը» (ՀԲԲ, 1, 562), այծենի «1. այծի մազից գործուած՝ հիւսուած՝ պատրաստուած, 2. մազեղէն զգեստ՝ հագուստ, խարազն, 3. այծի մազ» (ԳԲ, 1, 58), արջենի «արջի մորթ. Մուշտակ՝ արջի մորթից պատրաստված» (ՀԲԲ, 1, 280), այդպես նաև՝ *մուճակ*, *պարեգոտ*, *փակեղ*, *պատմուճան* և այլն:

«Հնաբառերը այն բառերն են, որոնց նշանակած գաղափարներն այժմ էլ կան, գոյություն ունեն, սակայն արտահայտվում են այլ բառերով և կամ մեր լեզվի զարգացման ներքին օրենքներին համապատասխան ձևափոխվել են, և ներկա ձևն ու հին ձևը տարբեր ոճական երանգավորումներ ունեն»⁴, ինչպես՝ ազանելիք «հագնելիք, հագուստ» (ԳԲ, 1, 11), ագուցանել «հագնել տալ, հագցնել» (ԳԲ, 1, 12), ծոցկալ «ծոցագրպան» (ՄՀԲ, 350), թիչիկնետ «թաշկինակ» (ՄՀ, 245) և այլն:

Ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, «հագուստ» իմաստային դաշտի հնաբանությունները կարող են լինել ինչ-

⁴ Պ. Պողոսյան, *Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ*, Ե., 1990, հ.1, էջ 150:

պէս արմատական բառեր (մենթան, փադան, ասպապ, խիլախ, կոդոք, սաքուլա, պատմութեան և այլն), այնպէս էլ բաղադրյալ բառեր.

1. *ածանցավոր բառեր*՝ համահանդերձ «նոյնանման» միատեսակ հանդերձ ունեցող կամ հազած» (ԳԲ, 2, 21), փեղուրավոր «գլխին փեղույր դրած, փեղույր կրող», (ԺՀԼԲԲ, 4, 645), կրկնոցակ «անշուք կրկնոց» (ԳԲ, 1, 681), սանդալիկ «առանց կրունկի ոտնաման, հողաթափ, մուճակ, մոյլ» (ԳԲ, 2, 443), հանդերձիկ «անշուք, աղքատիկ զգեստ» (ԳԲ, 2, 37), հալվեղէն «հագուստների ամբողջությունը, հագուստեղէն, զգեստեղէն» (ՄՀԲ, 397) և այլն,

2. *բարդություններ*՝ թղթաշոր (հնց., ազգգր.) «կանանց ճակատակալի թավիշի տակ կարված խաղաքարտ ունեցող շոր, որ թավիշը ամուր է պահում» (ԺՀԼԲԲ, 2, 210), միապատմութեան «միայն մէկ պատմութեան՝ հանդերձ ունեցող, միահանդերձ» (ՄՀԲ, 518), միապարեգօտ «միայն մի պարեգօտ ունեցող, մի զգեստով, միահանդերձ, միաձորձ» (ԳԲ, 2, 187), փեսայազգեստ «փեսայի զգեստ հազած» (ՀԲԲ, 4, 495), փեսանլաթ «փեսայութեան լաթ, այն զգեստը, որ փեսան հագնում է հարսանիքի ժամանակ» (ՀԲԲ, 4, 496), խրթնազգեստ «սև կամ կոպիտ զգեստ հազած» (ԳԲ, 1, 596), մեկնահանդերձ «մէկ հատ՝ միայն մի հանդերձ շոր վրան հազած» (ԳԲ, 2, 169), միաձորձ «միայն մէկ ձորձ՝ հագուստ ունեցող, միահանդերձ» (ԳԲ, 2, 184), գօտեկապ «գոտի, մեջկապ» (ՄՀԲ, 155) և այլն, Այսպիսով, թէն հագուստ իմաստային դաշտի վերոնշյալ բառանունները դուրս են եկել գործածությունից, դարձել են հնաբանություն, սակայն պետք է նշել, որ երբեմն դրանք անհրաժեշտաբար կարող են կենսունակություն ձեռք բերել և օգտագործվել կենդանի խոսքում կամ ոճական երանգավորման նպատակով գործածվել գեղարվեստական երկերում:

Համառոտագրություններ

Լեզուներ

արաբ. - արաբերեն

թուրք. - թուրքերեն

իրան. - իրաներեն

լատ. - լատիներեն

յուն. - հունարեն

պիլ. - պահլավերեն

պրսկ. - պարսկերեն

Բարբառախոս վայրեր

Ակն. - Ակն

Ամս. - Ամասիա

Ար. - Արարատյան

Եվդ. - Եվդոկիա

Թբ. - Թբիլիսի

Խրբ. - Խարբերդ

Կր. - Կարին

Հմշ. - Համշեն

Ղրբ. - Ղարաբաղ

Մկս. - Մոկս

Մշ. - Մուշ

ՆՆ. - Նոր Նախիջևան

Չրս. - Չարսանձազ

Պլ. - Պոլիս

Ջվի. - Ջավախք

Մբ. - Սեբաստիա

Սվ. - Սվեդիա

Վն. - Վան

Քսբ. - Քեսաբ

Lusine Ghamoyan – The archaisms in the "clothing" semantic field.
 - A large part of the vocabulary in the "clothing" semantic field has been active in Grabar, some names have only been used in Middle Armenian, which have been out of use for various reasons (they may be used in dialects, Western Armenian literary language, and sometimes in Eastern Armenian literary language for stylistic purposes). These words can be separated into two groups: historical words and archaic words, which are radical, complex and derivative in composition.

Лусине Гамоян - Архаизмы в семантическом поле «одежда». - Большая часть словарного запаса в семантическом поле «одежда» была активна в Грабаре, некоторые имена использовались только в среднеармянском языке, которые не использовались по разным причинам (они могут использоваться в диалектах, литературе западноармянского языка, а иногда и в восточноармянском литературном языке в стилистических целях). Эти слова можно разделить на две группы: исторические слова и архаичные слова, которые являются коренными, сложными и производными по составу.

«ՄԱՍՆԱ ԾՌԵՐ»-Ի ԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայտնի է, որ անունների շուրջ հյուսված ավանդազրույցները, որոնք հիմնականում ժողովրդական ստուգաբանության օրինակներ են, շատ կարևոր աղբյուր են տվյալ տեղանքի, ցեղի, ժողովրդի, երկրի ծագումը, պատմությունը, քաղաքակրթական տարբեր ազդեցությունները ճիշտ հասկանալու և գնահատելու համար: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան ունի իրեն բնորոշ անունները, որոնք կարող են չկրկնվել հաջորդ պատմական փուլում: Օրինակ, Խորենացու կողմից գրի առնված հնագույն առասպելներում և «Վիպասանքում» հիշատակված հայտնի անունները՝ Հայկ, Արամ, Արա, Վահագն, Արտաշես, Տիգրան, Հարմա, Արամանյակ, Արամայիս և այլն, հիմնականում չեն կրկնվում հետագա շրջանների ավանդազրույցներում: «Պարսից պատերազմում» շատ տարածված և հայտնի անունները, հիմնականում՝ պարսկական (Խոսրով, Տրդատ, Տիրան, Արշակ, Սահակ, Սմբատ, Վարդան, Վասակ, Վահան և այլ), բացակայում են «Մասնա ծռեր» էպոսում: Այս փաստերը գալիս են հուշելու, թե երբ են ձևավորվել և պատմվել այս կամ այն ավանդություններն ու զրույցները, կամ որ պատմական իրադարձությունների ու դեպքերի ազդեցությունների արդյունքն են դրանք: Այսինքն՝ անունների ստուգաբանությունը, եթե անգամ այն ժողովրդական է, ունի տիեզերագիտական, էթնիկական, ծագումնաբանական, պատմական մեծ արժեք և նշանակություն: Այս տեսանկյունով՝ ուսումնասիրությունները շարունակվել և այժմ էլ շարունակվում են նաև «Մասնա ծռեր» էպոսի անունների շուրջ՝ նպատակ ունենալով բացահայտելու վեպի ձևավորման ժամանակաշրջանը, հնագույն շերտերը և այդ շերտերում

թաքնված պատմությունը, կերպարների պատմական կամ առասպելական ծագումը:

Պեսոք է նշել, որ «Մասնա ծոեր» էպոսը, ի տարբերություն նախորդ ավանդազրույցների, մեզ է ավանդվել բացառապես բանավոր ճանապարհով և միջնադարյան որևէ մասշանկում այդ մասին չկա որևէ հիշատակություն¹: Բացառություն են այն մի քանի հիշատակումները ասացողների կողմից, թե իրենք տեսել են կամ լսել են այն գրքի մասին, որտեղ պատմվում է Դավթի պատմությունը²:

Ստացվում է, որ մեր էպոսի համար իբրև հավաստի աղբյուրներ են ծառայում միայն անունները՝ անձնանունները, տեղանունները: Եվ հայ էպոսագիտության ուսումնասիրությունները սկսվեցին նաև հենց այդ անունների ուսումնասիրություններից: Էպոսագիտության ռաիվիրա և առաջին գրի առնող Գ. Սրվանձտյանը իր փոքրիկ գրքույկի առաջաբանում

¹Նկատի չունենք Սանասարի, Աղրամելեթի, Դավթի մասին այն առանձին հիշատակությունները, որոնք որոշ դրվագներով մեզ են հասել Աստվածաշնչի, Խորենացու, Թ. Արծրունու, Լաստիվերտցու Պատմությունների միջոցով: Նաև նկատի չունենք պորտուգալացի երկու ճանապարհորդների հաղորդած տեղեկությունները Դավթի և Խանդուրի մասին, որոնք հայ հասարկությանը հայտնի դարձան միայն անցյալ դարի 60-ական թթ.:

² Մասունի Ճախրկան գյուղից ասացող Թամո Դավթյանը վկայում է, որ «Դավթի գիրքը» գոյություն է ունեցել, իր պատմածները գրքից են քաղված, և ինքը տեսել է այդ գիրքը, որը «մեկ լիտր կը քաշեր ու պահվում էր Գոմաց վանքում»: Հետագայում՝ կոիվների ծամանակ, քրդերը գիրքն այրել են («Մասնա ծոեր», հ. Բ, Ա մաս, էջ 156): Մասունցի մեկ այլ ասացող Գենջո Գրիգորյանը, նույնպես վկայում է, որ ինքը տեսել է գիրքը, իր պապերը կարդացել են այդ գիրքը և վեպը գիտեն այդ գրքից: Հազարյից մի չարչի է եկել Սարեկան և ամեն երեկո կարդացել է Մասնա Դավթի պատմությունն այդ գրքից: Այդ գիրքը Ճախրկանցի քուրդ Ալիխանե Հասոն սեփականացրել է, իսկ հորեղբայր Մուրադը՝ Ափո Մուրադ, մի կով է տվել քուրդ Հասոյին և գիրքը հետ գնել: Գենջոն վկայում է, որ գիրքը եղել է մեծադիր, կաշեկազմ, կարմիր մետաքսե աստառով, մոմած: Էրգրից գաղթելիս Գենջոն այն մոմել է, դրել է ճամպուրակի մեջ և թաղել մի քարայրում, որի վրայով ջուր է հոսել («Մասնա ծոեր», հ. Դ, Եր. էջ 378):

շատ ճշգրիտ դիտարկում է անում՝ նշելով Աստվածաշնչից մեր վեպին անցած՝ Ասորեստանի թագավոր Մենեքերիմի և նրա որդիների՝ Սանասարի և Ադրամելիքի հայտնի պատմությունը³։ Հետագա ուսումնասիրողները՝ Աբեդյան, Խալաթյանց, Կանայանց և ուրիշներ, էպոսի պատումների քննության արդյունքում կարողացան վեր հանել և ցույց տալ վեպի տողատակերում թաքնված պատմական անձանց և պատմական իրադարձությունների վերաբերյալ ուղղակի կամ անուղղակի արձագանքները, որոնք էլ ի վերջո հանգեցրին այն եզրակացության, որ էպոսը ձևավորվել է 8-13-րդ դդ.։ Մասնավորապես, խորապես ուսումնասիրվեցին վեպի գլխավոր հերոսների կամ Սասնա տան հերոսների անունները՝ Սանասար, Ադրամելիք, Բաղդասար, Մեծ և Փոքր Սիերներ, Դավիթ, Ձենով Հովան, Քեռի Թորոս, Վերգո, որոնք վեպում արձագանքն են իրենց պատմական կամ առասպելական նախատիպերի։

Այս աշխատանքում մենք խնդիր ենք դրել անդրադառնալ հայ էպոսագիտության մեջ վեպի կին հերոսների անունների վերաբերյալ եղած ստուգաբանություններին՝ մեր դիտարկումներով փորձելով հաստատել դրանք կամ առաջ քաշել նոր վարկածներ։

Հայտնի է, որ «Սասնա ծռեր» վեպի կանանց կերպարները միայն վիպական կամ առասպելական ծագում ունեն, սակայն վեպում դրանք տեղայնանում են, պատմականանում՝ կապվելով որևէ տեղանքի կամ պատմական իրադարձության հետ։

Մյուս կողմից՝ անունների բացատրության կամ ստուգաբանության մեջ կարևոր է, թե որ լեզվական շետերից են դրանք մտել վեպի հյուսվածք, օրինակ, Մենեքերիմ, Սանասար, Ադրամելեք, Մելիքսեթ, Հովան, Դավիթ, Սաոյե անունները սեմական ծագում ունեն, նշանակում է՝ սրանց ստուգաբանու-

³ Գ. Սրվանձոյանց, *Երկեր*, հ 1, Եր. 1978, էջ 85։

թյունների մեջ պետք է ճշտել սեմական նշանակությունը⁴: Անունների հետ կապված երկրորդ կարևոր իրողությունն այն է, որ վիպական անունները հիմնականում մականուններ են և սկզբնապես հասարակ անունների նշանակություն են ունեցել, ինչը հատուկ է ժողովրդական մտածողությանը: Ժողովուրդը անձին կամ առարկային բնորոշում է ոչ թե ներկայացնելով, թե ինչպիսին է նա, ինչ տեսք ունի, այլ թե ինչից է կամ ինչի է կոչված, այսինքն՝ անունը հիմնականում դրվում է նրա գործառույթից ելնելով⁵:

Այս տրամաբանությամբ պետք է մոտենալ նաև էպոսի հերոսուհիների անունների ստուգաբանությանը:

Վեպի առաջին կին հերոսը Շովինարն է: Այս անվան հետ կապված՝ պետք է նշել, որ այն, որքան էլ զարմանալի լինի, շատ քիչ է տարածված վեպի պատումներում: Մոկաց պատումներում ընդհանրապես *Շովինար* անուն գոյություն չունի: Հերոսուհին հիմնականում ներկայանում է *խաչապաշտի սողջիկ* բնութագրումով, հազվադեպ՝ *Սառան խաթուն*, *Արմաղան*, *Սանդուխ* *Խաթուն* անուններով, ում հետ ցանկանում է ամուսնանալ խալիֆը կամ կռապաշտ թագավորը, քանի որ վեպի առաջին ճյուղի հիմնական սյուժետային գիծը կռապաշտ-խաչապաշտ հակադրությունն է⁶: Վեպի հրատարակված պատումների Ա և Բ (մաս Ա, Բ) հատորների բոլոր պատումների մեջ *Շովինար* անունը հանդիպում է միայն մեկ պատումում⁷ (գրի է առնվել գոլախաչցի /Քավառ-Մարտունի/ Դանիել Ղազարյանից), որտեղ Շովինարը խաչապաշտ Գորգիզ թագավորի քույրն է, որի ծառան՝ թոփալ Գոգեն, Շովինարին

⁴ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Ը, Եր., 1985, էջ 32:

⁵ Ինչպես նշում է իրավունքի շվեյցարացի տեսաբան Հ. Յ. Բահովենը, առասպելները պատասխանում են ոչ թե «ինչու», այլ «որտեղից» հարցին (E. Варданян, Женищина в древнем мире, М., 1990, с. 12):

⁶ Կ. Մելիք-Օհանջանյան, *Հայ ժողովրդական վիպական բանաստեղծությունը*, Եր., 2006, էջ 37:

⁷ «Սասնա ծռեր», հ. Բ, մաս Ա, Ե., 1944, էջ 135-142:

փախցնում է կռապաշտ Սինամքար թագավորի համար: Այնուհետև, արդեն 1979թ. հրատարակված վեպի պատումների Գ հատորում, Ծովինար անունը հանդիպում ենք Մասիս ավանում ծնված մոկացի Թովմաս Մարգսյանի, Արտաշատի Քաղցրաշեն գյուղում ծնված շատախցի Մարթա Փիրումյանի, Արարատի Շաղափ գյուղում ծնված շատախցի Ռաշո Ջալոյանի, Էջմիածնի Վերին Ջեյվա գյուղում ծնված մշեցի Մարտիրոս Գրիգորյանի պատումներում: Ինչպես նկատվել է, նշված բոլոր ասացողները Արևմտյան Հայաստանից եկածների առաջին սերունդն են, որոնք ծնվել են Արևելյան Հայաստանում: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ հրապարակված համահավաք տեքստը⁸ կարող էր որոշակի ազդեցություն ունեցած լինել ասացողների վրա վեպի հերոսների անուններն ընտրելիս: Այդ ազդեցությունը որոշակիորեն զգացվում է նաև շարադրանքի վրա, օրինակ, Մարթա Փիրումյանի ռճի մեջ մշակվածություն է նկատվում: Էպոսի Դ հատորում, որտեղ գետեղված են միայն Մասնա պատումները, Ծովինար անունը որևէ պատումում դարձյալ չի հանդիպում: Պատճառը, կարծում ենք, այն հանգամանքն է, որ սասունցի ասացողները 1915թ. եղեռնից մազապուրծ եղածներն են, այսինքն՝ չեն ծնվել Արևելյան Հայաստանում, Էրզրից եկած սերունդն են դեռևս, մաքուր բարբառախոս և, բնականաբար, համահավաք տեքստին ծանոթ չեն: Այս միտումը դիտարկվում է նաև Արմաղանի, Իսմիլի անունների հետ կապված, քանի որ պատումների գերակշիռ մասում սրանք հանդես են գալիս Ջոջ Մհերի կին-Դավիթի մամ, Ջոջ Մելիքի կին-Պզդիկ Մելիքի մեր անվանումներով, սակայն արդեն 1970-ականներին գրի առնված պատումներում այդ հերոսները հանդես են գալիս Արմաղան, Իսմիլ անուններով: Փոխարենը կայուն են և ավելի

⁸ Համահավաք տեքստում, որ հրապարակվել է 1939թ., խաչապաշտ թագավորի դուստրը՝ երկվորյակների մայրը, կրում է Ծովինար անունը:

հաճախադեպ գործածություն ունեն Խանդութ Խաթուն/խանմ, Չմշկիկ Սուլթան, Սառյե, Գոհար անունները:

2. Օրբելին *Ծովինար* անվան դիմաց փակագծերի մեջ ուղղակի գրում է *ծովածին, ծովազն* (ծովից ծնված, ծովի սերունդ)՝ որևէ բացատրություն չտալով⁹: Ծովինար անունը, ըստ Ղափանցյանի, պետք է բացատրել իբրև ծովի-նար՝ ծովի ոգի, ինչը ըստ էության կապվում է ջրային տարերքի հետ: Լեզվաբանը, *նար* արմատը կապելով Նանե աստվածուհու անվան հետ (օր. Հոյ Նար, Նար-ոյ-հոյ երգերում), *ծովը* համարում է մակդիր¹⁰: Ըստ Մ. Աբեղյանի՝ *Ծովինարը* աղջկա հատուկ անուն է, իբրև հասարակ անուն նշանակում է *կայծակ*: Հավանորեն ծագում է *ծով* բառից, իբրև ծովային: Ժողովրդական հավատալիքներում այն հանդիսանում է իբրև ամպրոպի, կայծակի ու փայլակի անձնավորում, մի պաշտելի առասպելական էակ, հրաշյա և հրեղեն մի կին, որ վերին երկնքումն է ապրում և, ամպրոպի ժամանակ խաղալով, վայրկենապես ցույց է տալիս իր երեսը, որից և փայլատակում է¹¹: Հեղինակը *Ծովինար* կամ *Ծովյալ*-ը համարում է *Ծովյան* անվան աղճատված ձևը, որը սկզբնապես եղել է ամպրոպային կամ կայծակի աստվածության մականունը և ցույց է տվել նրա ծովային ծագումը: Այդ պատճառով պատահական չէ, որ վեպի

⁹ Հ. Օրբելի, *Հայկական հերոսական էպոսը*, Եր., 1956, էջ 13:

¹⁰ Г. Капанцян, *Историко-лингвистические работы*, т. I, Ер., 1956, ст. 295-300: Սպարկերտցի ասացող Կանչոյի պատումում, որը գրի է առել Տ. Զիթունին, Ծովի Լուսիկ թագուհին արևը մայր մտնելուց հետո նստում էր պատշգամբում և գիշերը լուսավորում: Միակ պատումն է, որտեղ խաչապաշտ Պապի աղջիկը, ով հղանում է աղբյուրի երկու բուռ ջրից, կոչվում է Ծովի Լուսիկ թագուհի: Ըստ հեղինակի՝ անունը հայ. Արեգի շումերերեն թարգմանությամբ լինում է՝ a-ar-egi (Ջրի լուսավոր թագուհի), a-u-egi (Ջրից ելնող թագուհի). այսինքն ծովը դառնում է մակդիր: Հեթիթները երկնային արևից գատ, ունեին երկրային և ջրի մի արև էլ՝ իբրև դիցուհի (Գ. Կյուլբենկյան, *Մեկնաբանություն «Մանասար և Բաղդասար» դրուցականերգության, ի լույս սյումերա-հայ բարբառի*, ՊԲՀ, 1964, թիվ I, էջ 73-90):

¹¹ «Սասնա ծռեր», հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 845:

մեջ կայծակի աստվածուհու այդ անուններով կոչվել է հենց ամպրոպային կամ կայծակի հերոսի մայրը¹²: Ի դեպ, ինչպես նշում է Բարբառագետ Ն. Խաչատրյանը, մինչև այժմ լոռեցիները կայծակին *ծովյան* են ասում: Ն. Աճառյանը նշում է, որ անունը գործածվել է 15-16-րդ դդ., և այս անվան ստուգաբանության հետ կապված՝ ընդունելի է համարում Աբեղյանի մեկնաբանությունը: Ըստ Աճառյանի՝ *Ծովինար* բառը նշանակում է *փայլակ*, բաղադրված է հայերեն *ծով* և արաբերեն *nar*՝ *հուր*, *կրակ*, արմատներից¹³: Մյուս կողմից՝ *ծով* արմատը փոյուգերենում նշանակում է *աղբյուր*¹⁴: Բարձր Հայքում միշտ էլ եղել է աղբյուրների պաշտամունք¹⁵, և Ծովինարը, որքան էլ անվամբ կապվում է ծովի հետ, սակայն վեպում՝ միշտ հղիանում է աղբյուրի երկու բուռ ջրից, կամ երկու աղբյուրների ջրից:

Խանդութ անվան ստուգաբանության հետ կապված՝ հայ էպոսագիտության մեջ կան տարբեր մեկնաբանություններ, որոնք հիմնականում ընդունելի են, սակայն, ըստ Կ. Մելիք-Օհանջյանի, այս անունը դեռ կարոտ է ստուգաբանության: Ըստ Ն. Աճառյանի՝ այս անունը վկայված է 15-րդ դարից, սակայն այն կարող էր դրանից առաջ էլ հայ կենցաղում գոյություն ունենալ: Աճառյանի կարծիքով՝ անունը կարող է բաղկացած լինել պրս. *x-an* /իշխան/-*d-ude* /մեծ ցեղ, հին տոհմ/ բաղադրիչներից, և

¹² Մ. Աբեղյան, *Երկեր.*, հ. Ա, Եր., 1966, էջ 415 :

¹³ Նկատենք, որ հայկական առասպելաբանության մեջ երկնային ծովի կամ ծիրանի ծովի անձնավորումը դրսևորվում է Վահագնի առասպելից սկսած: Այսինքն՝ Ծովինար-ծիրանի ծովը Վիշապաբաղ Վահագն ծնողն է, սառցանիստ լեռան գագաթին երկունքով բռնված ծիրանագույն զգեստով կինը վիշապամայրն է, որի ծնած եռյակից երրորդը՝ Տիգրանը, վիշապ հեծած հարձակվում է վիշապ Աժդահակի վրա, Ծովինարը նույն ինքը անապական հղիությամբ երկվորյակ ծնող երկնային ծովի ոգին է՝ Ծովյան է, փայլակը, կայծակը, որից պիտի ծնվի Թուր Կեծակի թրով ծովից ելնող, ծովածին վիշապասպան Մանասարը:

¹⁴ Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 2, Եր. 1973, էջ 468:

¹⁵ Ս. Հմայակյան, *Վանի թագավորության պետական կրոնը*, Եր. 1990, էջ 50-55:

ստացվում է, որ Խանտուտ նշանակում է *իշխանատոհմ*, *իշխանկան տոհմից*։ Նաև նշում է, որ անունը գրված է զանազան ձևերով (Խանտուտ, Խանդուր, Խանթուր, Հանդուր), սակայն ճիշտ ձևը համարում է *Խանդուր*¹⁶։ *Խանդուր* անունը կարող է բացատրվել *Խուանդ-Խոնդ-Խանդ-Խունդի խաթուն* բառերով, որոնք պրս. Xudavand՝ *տեք* բառից են, և այդ անվան հիշատակությունները հասնում են մինչև 13-րդ դ¹⁷., ընդ որում՝ xuda քրդերեն նշանակում է *աստված*, *տիրակալ*¹⁸։ Ըստ Կ.Մելիք-Օհանջանյանի՝ Խանդուրը կարող է բացատրվել *խանդ* արմատով, որը նշանակում է *սիրով, գութով, նախանձով, Խանդուր-Խանդուտ*, բայց նրա խանդոտությունը որևէ տեղ չի դրսևորվում¹⁹։ Մյուս կողմից՝ Խանդուր-Խանդուտը թերևս կարող է ծագած լինի պրս. Xandan՝ *կարդալ* բառից, այսինքն՝ *կարդացող*, վեպի մեջ Խանդուրը երբեմն ներկայանում է իբրև իմաստուն, գրագետ, ավելի հաճախ՝ գուշակություն անող կամ գրքաց²⁰։ Այս հատկանիշները, ի դեպ, բնորոշ են Սասնա կանանցից Շովինարին, Դեղձունին, Խանդութին, Գոհարին, նաև՝ Քեռի Թորոսին։

Գուցե և հնարավոր է *Խանդուր*, *Խանտուտ* անվան ծագումը կապել քրդերենի հետ։ Այս անունը, որի հնագույն վկայությունը հասնում է մինչև 15-րդ դդ., կարող է ունենալ քրդական ծագում՝ բաղկացած լինելով *xan՝ խան*²¹, *իշխան* և *dod՝ դուստր*²², *աղջիկ* բաղադրիչներից՝ *խանի աղջիկ, խանի դուստր* իմաստով։ Նման մեկնաբանությունը կարող է հիմնավորվել

¹⁶ Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Եր. էջ 465:

¹⁷ Նույն տեղում, էջ 549:

¹⁸ Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, Եր. 2016, էջ 199:

¹⁹ «Սասնա ծռեր», հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 842-843:

²⁰ Նույն տեղում:

²¹ Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան, Եր. 2016, էջ 187:

²² Նույն տեղում, էջ 116:

պատմական այն իրողությամբ, որ արդեն 14-րդ դարից քրդական ցեղերը բնակություն էին հաստատում և արագ տարածվում Մասունում²³, բացի այդ՝ Կ.Մելիք-Օհանջանյանը ենթադրում է, որ Խանդութ անվան ստուգաբանությունը պետք է որոնել հարևան լեզուներում, քանի որ Խանդութը պատում-երում այլազգի է, հայ չէ²⁴։ Իսկ այդ դարերում սասունցիների ամենամոտ հարևան ժողովուրդը քրդերն էին, ուստի տրամաբանական է անունը քրդերենով բացատրելը։ Մանավանդ, որքան էլ ընդունենք պարսկական տարրի ազդեցությունը, նոր վեպում շատ քիչ անուններ են փոխանցվել հնից, այն էլ միայն ոչ գլխավոր հերոսների մակարդակով։ Այնուամենայնիվ, գիտնականը չի բացառում, որ *Խանդութ* անունը կարող է առաջացած լինի պարսկերեն *խան+դուխտ*-ից (խանի աղջիկ, խանի դուստր), ընդ որում՝ *Խանդութ խաթուն/խանում* կապակցության մեջ *դուխտ*-ի *խ*-ն կընկնի նախորդ և հաջորդ *խ*-երի ազդեցությամբ, և կստացվի *Խանդութ խաթուն կամ խանում*²⁵։ Արված դիտարկումները միմյանց չեն հակասում, եթե հաշվի առնենք, որ քրդերենը իրանական լեզու է։

Վեպի կին հերսուհիներից Դեղձուն Օամը իր անվամբ արդեն առասպելական ծագում ունի և լրացնում է արևի խորհրդանիշ կերպարների շարքը Մեծ և Փոքր Մհերների, Քառասուն Ճող Օամ Գոհարի հետ։ Վեպում Դեղձունի շուրջ հյուսված միջադեպերը հիմնականում վիշապամարտ են հիշեցնում, երբ «ամպրոպի և կայծակի որդի վիշապամարտիկ» Մանասարը գնում է ազատելու դռներ չլուսեցող առասպելական քաղաքի արքայադստերը կամ թագուհուն՝ արև-աղջկան, որը փակված էր վիշապի կողմից. քաղաքը ամբողջովին սևերի մեջ էր, իսկ վիշապին սպանելուց քաղաքը լուսավորվում է և լցվում է ջրով։

²³ «Մասնա ծոեր», հ. Դ, Եր. 1999, էջ 10:

²⁴ «Մասնա ծոեր», հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 842-843:

²⁵ «Մասնա ծոեր», հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 842:

Դեղձուն-դեղձան բառը, ըստ Աճառյանի, բնիկ հայերեն կազմություն է՝ *դեղ* արմատով, որը նշանակում է *դեղին*, իր կազմում ունի ունի ձ աճական և –ան մասնիկ: Դեղձան /դեղնագույն, ոսկեգույն, կարմրի զարնոդ դեղին/ բառից ունենք *դեղձանամագ, դեղձանահեղճ*²⁶, այլ կերպ ասած *դեղին ծամ*, և սրա հետ նույնն է՝ *դեղձուն ծամ*:

Դեղձունը և Քառասուն ճուղ Ծամը առասպելական մակարդակում հոմանիշներ են, երկուսն էլ արևի խորհրդանիշն են, և դա ակնհայտորեն դրսևորվում է վեպում: Մագերի առասպելությոնը սերտորեն կապվում է արևի և բնության ուժերի աստվածությունների հետ, ինչը դրսևորվում է ժողովրդական բանահյուսության շատ ժանրերում, այդ թվում՝ նաև հանելուկներում, ինչպես՝

Ձի ծառըմ կար Հնդաց քաղաք,
Ճղիր թալեր էր քաղքե-քաղաք,
Հմեն ճղին սինամոր հավք: /Արև, Շատախ/
Մեյ ծառըմ կա հնդու քաղաք,
Ծամեր ձգե քաղքե-քաղաք,
Ամեն ծամին ջուխտ մե ճրագ: /Արև, Վան/²⁷

Քառասուն ճուղ Ծամի հետ վեպում համադրվում է ոչ միայն Դեղձունը, այլ նաև Գոհարը, ընդ որում՝ պետք է նշել, որ պատումներում Դեղձուն Ծամը հիմնականում Բաղդասարի կինն է, Աստղունքի, ապա Խոր Մանուկի կինը: Սանասարի կինը Քառասուն Ծամ Գոհարն է, Քառասուն ճուղ Ծամը՝ Պղնձե քաղաքի թագավորի աղջիկը, Քառասուն ճուղ Դեղձուն Ծամը կամ տարբեր թագավորների աղջիկներ:

Գոհար անունը, ըստ Աճառյանի, փոխառյալ է պարսկերենից, իբրև անձնանուն գործածական է 12-րդ դարից: Բառը նշանակում է *ազնիվ քար, ակունք*²⁸, և այդպիսով կարող

²⁶ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Եր., 1971, էջ 651:

²⁷ Ս. Հարությունյան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, Եր., 1965, էջ 4-5:

²⁸ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, 1942, Եր., էջ 481:

է կապվել երկնքի, ակն-արեգակի հետ, ինչը երևում է նաև Նարեկացու տաղում. *Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից. Գոհար վարդը, ըստ Աճառյանի, մի տեսակ վարդ է*²⁹(չի նշում՝ ինչ տեսակ, սակայն բառը կարող է նաև ածականի կամ մակդիրի իմաստ ունենալ, որպես *թանկագին, ազնիվ, երկնային*, որը իր գույնն ստանում է արեգակի վեհ վարսերից /վեհ-աստվածային, վեր³⁰/): Վեպում հանդիպում է նաև Ջոհար/Ջուհար անունը, որը արաբերենին փոխանցվել է պարսկերենի *Գոհար* ձևից³¹:

Վեպի պատումներում *Սառա* անունը գործածվում է *Սառան, Սառյա, Սառե* տարբերակներով: Այս հերոսուհին վեպում հիմնականում հանդես է գալիս իբրև Ձենով Հովանի կին, որոշ պատումներում՝ Սասնա թագավորի աղջիկ, Առյուծաձև Մեերի կին: Կարծում ենք՝ անունը վեպ է մտել Աստվածաշնչից: Ըստ Հ.Աճառյանի՝ *Սառա* անունը առաջին անգամ վկայված է 12-րդ դարից, իսկ 14-15-րդ դդ. այն լայն գործածություն է ունեցել: Առաջացել է եբրայերեն *Սարրան* ձևից, որը նշանակում է *իշխանուհի, տիրուհի*, նաև՝ *նախամայր*³²:

Արմաղան անունը վեպում հանդիպում է միայն առաջին ճյուղում: Այդ անունը կրում է Փամբակի ձորի Տեր Խաչիկի աղջիկը, որը երկվորյակ եղբայրների՝ Ադնամելիքի և Սանասարի մայրն է, Քեռի Թորոսի քույրը: Ըստ Աճառյանի՝ անունն առաջացել է պարսկերեն *armagan* բառից, որ նշանակում է *նվեր*, հիշատակված է միայն մեկ անգամ՝ 17-րդ դարում: Ի դեպ, Երզնկայի բարբառում նույնպես *արմաղան* բառը առկա է *նվեր* իմաստով³³:

Չմշկիկ Սուլթան անվանը տարբեր պատումներում համապատասխանում են այլ տարբերակներ՝ *Չմրկեր*

²⁹ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Եր., 1971, էջ 572:

³⁰ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 4, Եր., էջ 327-328:

³¹ Տե՛ս Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Եր., 1971, էջ 572:

³² Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բարառան*, Եր., 1942, էջ 396-397:

³³ Դ. Կոստանյան, *Երզնկայի բարբառ*, Եր. 1979, էջ 151:

Սուլթան, Շմբշկե Սուլթան, Շըմշըմե Սուլթան, Սըփըկե Սուլթի, Ջամշու Սուլթան, Ջիմջիմի Սուլթանը, Ճիմճիմի Սուլթանը, Սուլան Չմուսն և այլ: Այս գանազանությունը հավանաբար պայմանավորված է ն՝ բարբառների հնչյունական իրողություններով, և՛ հարևան լեզուների ազդեցություններով: Տարակարծությունների տեղիք է տվել *սուլթան* բառը հատկապես անվանակրի սեռի առնչությամբ: Կ. Մելիք-Օհանջանյանը նկատել է, որ *սուլթանը* թագավորական տիտղոս է, որը տրվում է նաև ընտանիքի իգական ներկայացուցիչներին, և այդ դեպքում տիտղոսը դրվում է անունից հետո, օրինակ՝ *Ճաթմա սուլթան*, ի տարբերություն արական ներկայացուցիչների, երբ անունը դրվում է տիտղոսից հետո, օրինակ՝ *սուլթան Մուրադ*³⁴: Հ.Աճառյանը չի մեկնում *Չմշկիկ* անունը, բայց անդրադառնում է անվան ստուգաբանությունը *չմուշկ* (հողաթափ) բառի հետ կապված³⁵: Այլ տեղում լեզվաբանը հիշատակում է նաև *չմշկենի*³⁶ բառը, որը *խաղողի դեղնած, չորացած ողկույզն* է, և կարծում ենք՝ որևէ ընդհանուր բան չունի Չմշկիկի հետ: Հետաքրքրական է, որ քրդերենում կա *cimcimi /շըմշըմի/* բառը, որը նշանակում է *խիզախ, անվախ, քաջ*³⁷, ինչը, կարծում ենք, մեզ հետաքրքրող հերոսուհու հետ ընդհանրություններ ունի, քանի որ ասացողները Չմշկիկին «գոգալ, փահլևան» են որակում: Միաժամանակ, հետաքրքիր է այն փաստը, որ Ալաշկերտի երկու պատումներում (Մ. Թորոյանի և Կ. Թամոյանի) հանդես են գալիս *Ճիմճիմի Սուլթան, Ջիմջիմի Սուլթան* անուններով հերոսներ, որոնք արական սեռ ունեն, ավելին՝ վերջինը նույնիսկ սիրում է խանդութին: Կարծում ենք սա կարևոր մի փաստ է՝ քրդերենի ազդեցությունը արձանագրելու համար: Այս անվան հետ կապված՝ Մ. Աբեղյանը,

³⁴ «Մասնա ծոեր», հ. Բ, մաս Բ, Եր. 1951, էջ 870-871:

³⁵ Հր. Աճառյան, *Հայերեն արմատական բարառան*, հ. 3, էջ 629:

³⁶ Նույն տեղում, էջ 882:

³⁷ *Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան*, Եր. 2016, էջ 70:

հիշատակելով Բ. Խալաթյանցի կարծիքը, նշում է, որ «հունաց Հովհաննես Չմշկիկ կայսեր շուրջ հյուսված ավանդությունը³⁸ ժողովուրդը անգիտակցաբար փոխադրել է Դավթի վրա, բայց թե ինչու Չմշկիկ Սուլթանը, այսինքն Չմշկիկ թագավորը դարձյալ դարձել է Դավթի նշանած, այդ չի պարզվում, և երբեք չի պարզվի»³⁹:

Իսմիլ կամ Իզմիլ խաթունը վեպի հզոր կանանցից մեկն է, որի հետ են կապվում երկրի մասին հոգ տանելու և իր երեխաներին պաշտպանելու գաղափարները: Այս անվան ստուգաբանության հետ կապված՝ լեզվաբան Վ. Կատվալյանը կարծիք է հայտնել, որ այն կարելի է բխեցնել աստվածաշնչյան Իսմայիլից: Գրեթե նման կարծիքի ենք հանդիպում վեպի պատումների ժողովածուի Դ հատորում (աշխատակցությամբ՝ Մ. Հարությունյանի, Ա. Մահակյանի), որտեղ նշվում է, որ այս անունը, հավանաբար, ունի էթնիկական իմաստ՝ ծագած միջնադարում հայերի կողմից արաբներին տրվող «իսմայելացի» անունից, (իսմայելացի - Իսմիլ): Այսպիսով՝ *Իսմիլ խաթուն* անունը ընկալվում է իբրև իսմայելացի կամ իսմայիլյան տիկին⁴⁰:

Այսպիսով, հարկ է նշել, որ Էպոսի կին հերոսների անունները, ի տարբերություն տղամարդկանց անունների, վկայված են ավելի ուշ շրջանից՝ 12-14-րդ դարերից: Բոլոր հերոսուհիների անունները չեն, որ վեպում կայուն են և հաճախադեպ: Կայուն են հիմնականում վեպի երրորդ ճյուղի հերոսուհիների անունները, ինչպես տղամարդկանց անունների

³⁸ Չմշկիկը Խոզան գավառից էր, որ այժմ Չմշկածագ է կոչվում: Կայսրը հարձակվում է Ամիդ քաղաքի վրա, որի տերը կին էր, նույնպես չմշկածագեցի, որի հետ կայսրը անցյալում հանցավոր կապեր էր ունեցել, և որպեսզի չքանդի քաղաքը, քանդում է գետի վրա գցված կամուրջը և բազում ոսկի ու արծաթ վերցնելով՝ թողնում է Ամիդը՝ այդ կնոջ սիրույն (Մ. Ուտիայեցի, *Ժամանակագրություն*, Եր. 1973, էջ 12):

³⁹ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ 1, Եր., 1966, էջ 543-544:

⁴⁰ «Մասնա ծոեր», հ. Դ, Եր. 1999, էջ 406:

դեպքում է, իսկ մնացած դեպքերում շատ հաճախ շեշտվում է հերոսուհիների գործառույթը, հերոսների մայր կամ կին լինելը:

Հավելենք, որ ոչ միայն անձնանունների, այլև ոչ հայերեն բառերի ստուգաբանությունների ժամանակ թերևս պետք է հաշվի առնել նաև քրդերենի գործոնը, որը, ինչ խոսք, այդ ժամանակաշրջանում կարող էր կենցաղի և տնտեսական շփումների միջոցով որոշակի ազդեցություններ ունենալ ժողովրդական բանահյուսության լեզվի վրա, մանավանդ որ մեր գրեթե բոլոր ասացողները շատ լավ քրդերեն են իմացել և քրդերենով են պատմել «Ռուստամ Զալը»:

A. Gharibyan - On the Names in "SasnaTsrer". - The article examines the interpretations of the names given to the female characters in the epic "SasnaTsrer" in the Armenian environment; in some cases new versions are introduced. The names of the female characters of the epic, as compared to the names of men, are testified from a later period from 12th to 14th centuries. The names of the heroines in the third chapter of the epic are mostly stable, and in the rest of the cases the role of the heroines - being mother or wife of the heroes - is often emphasized.

А.Гарибян – Об именах эпоса «Сасна Црер». - В статье рассматриваются интерпретации имен женщин эпоса в армянской действительности, в отдельных случаях выдвигаются новые гипотезы. В сравнении с именами мужчин, имена женщин эпоса засвидетельствованы с более позднего периода – с 12-14 веков. В основном стабильны имена женщин третьей ветви эпоса, в остальных случаях часто подчеркиваются функции женщин в эпосе, то, что они являются матерями или женами главных героев.

ԱՐԱԲԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ¹

(ըստ Աշտարակի շրջանի 10 գյուղերի խոսվածքների)

Հայերենի բարբառային միավորների համակողմանի քննության համատեքստում կարևորվում է նաև օտար ազդեցությունների՝ փոխառությունների ուսումնասիրությունը: Փոխառությունները, բնորոշ լինելով լեզվին նրա պատմական զարգացման տարբեր փուլերում, լեզվի և լեզվամտածողության հարստացման միջոցներից են: Փոխառյալ շատ բառեր ժամանակի ընթացքում դառնում են լեզվի անգամ հիմնական բառաֆոնդի անբաժանելի մասը և այլևս չեն գիտակցվում որպես փոխառված: Փոխառությունների մյուս մասը՝ էկզոտիզմները, բնութագրական լինելով օտար միջավայրի համար, հազվադեպ են կիրառվում այդ համատեքստից դուրս և այդպես էլ չեն ընդգրկվում լեզվի ակտիվ բառապաշարի կազմում: Հաճախ լեզուն իր ներքին, բառակազմական միջոցներով ստեղծում է փոխառյալ բառերի ճիշտ համարժեքները՝ փոխառություններին աստիճանաբար դուրս մղելով ակտիվ կիրառությունից: Այս դեպքում խոսքը հիմնականում լեզվի գրական (գրավոր) տարբերակի մասին է, որն անընդհատ կանոնարկվում և հղկվում է և որին մասամբ հակադրվում են լեզվի բարբառային (տարածքային) տարբերակները: Բարբառները՝ որպես բանավոր, կենդանի խոսքի արտահայտու-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

յուններ, բարբառային բառերից գատ ունեն շատ փոխառություններ:

Հարկ է նշել, որ բարբառագիտական կամ, առհասարակ, հայերենագիտական ուսումնասիրություններում հեղինակները փոխառություններին անդրադառնալիս հաճախ սահմանափակվում են սոսկ այս կամ փոխառյալ բառի փոխատու լեզուն նշելով և օտար բառերի թվարկմամբ՝ առանց տվյալ լեզվում դրանց համարժեքները ներկայացնելու: Այդ պատճառով հստակ պատկերացում չի ձևավորվում փոխատու և փոխառու լեզուներում բառերի հնչյունական, ձևափոխության համապատասխանությունների կամ անցումների վերաբերյալ, որն էլ դժվարացնում է նրանց համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը:

Ստորև դիտարկել ենք Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի բարբառային մի շարք միավորներում արաբերեն մի քանի փոխառությունների հնչյունական և բառիմաստային առանձնահատկությունները²: Արաբերեն ուղղակի և

²Արագածոտնի մարզի տարածքը, ըստ բրոնզե դարով թվագրվող գտածոների, բնակեցված է եղել դեռ նախապատմական ժամանակաշրջանից (տե՛ս <https://biodivers-southcaucasus.org>): Առաջին մեծ պետությունը Մեծ Հայքն է, որի մասին հիշատակություններում նշվում է պատմական այս տարածքը: Ներկայիս Արագածոտնի մարզն իր անունը ժառանգել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտն գավառի անունից: 9-11-րդ դդ. այս տարածքը պատկանել է Պաղատյանների իշխանական տանը: 14-րդ դարում այն կողոպտվել և ավերվել է Լենկթեմուրի բանակի կողմից, իսկ 16-րդ դ. պատկանել է Իրանին: 1828 թ. Արևելյան Հայաստանի մյուս տարածքների հետ անցնել է Ռուսաստանին:

Ներկայումս Արագածոտնի մարզը գտնվում է 22 տարածքի հյուսիսարևմտյան մասում՝ մայրաքաղաք Երևանի և Հայաստանի ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև: Մարզն ընդգրկում է քաղաքային 3 համայնքներ՝ Թալին, Ապարան, Աշտարակ. վերջինը մարզկենտրոնն է: Մարզն ունի նաև գյուղական 112 համայնքներ: Խոշորացված համայնքները չորսն են՝ Ալազյազ (11 բնակավայր), Ապարան (21 բնակավայր), Արագածավան (4 բնակավայր) և Ծաղկահովիտ (10 բնակավայր) (տե՛ս <http://aragatsorn.mtad.am>):

միջնորդավորված փոխառությունները հայերենի տարածքային տարբերակներում բազմաթիվ են. այստեղ անդրադարձել ենք վերոհիշյալ տարածքում գործառության տեսակետից առավել կենսունակ բառերից մի քանիսին³: Բառային միավորներն առանձնացրել ենք ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի⁴: Հատկանշական է, որ այս տարածքի խոսվածքներում գործածվող արաբերեն բառերը հիմնականում միջնորդավորված փոխառություններ են, քանի որ Աշտարակի շրջանի բնակավայրերի մեծ մասի բնակչությունը, ինչպես ուսումնասիրությունն է ցույց տալիս, 1828թ. Պարսկաստանից և 1915թ. Արևմտյան Հայաստանից գաղթել և վերաբնակություն է հաստատել այստեղ: Կան նաև քիչ թվով տեղացի բնակիչներ: Եվ այսպես՝

1. Հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ. Հայերեն բարբառներում այս՝ նշանակությունն արտահայտելու համար կիրառվում է *մակարներ*, *մանկըտիք*, *մոմկըտիք*, *ազաբներ* գոգաբանություններից որևէ մեկը⁵:

Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանը ներառում է 1 քաղաքային՝ Աշտարակ և 26 գյուղական բնակավայրեր՝ Ագարակ, Անտառուտ, Ավան, Արտավան, Արուճ, Բազմաղբյուր, Բյուրական, Լեռնարոտ, Կարբի, Կոշ, Ջորափ, Մուղնի Նոր Ամանոս, Նոր Եղեսիա, Նազրվան, Շամիրամ, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սաղմոսավան, Սասունիկ, Տեղեր, Ուշի, Ուջան, Փարաի, Օհանավան, Օշական, Օրգով:

³Արաբերեն փոխառություններն ուսումնասիրել ենք՝ հիմք ընդունելով Արագածոտնի տարածաշրջանի բարբառախոսներից ստացած տվյալները՝ պերցեպտիվ՝ ընկալողական մեթոդի կիրառմամբ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ ՀԱճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա բարբառային համապատասխան ձեռագիր նյութերի (տետրեր) մատուցած փաստերը:

⁴Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, (այսուհետ՝ ՀԲԱ ծրագիր), Ե., 1977, 141 էջ:

⁵ Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 38:

Աշտարակի շրջանի Սաղմոսավան⁶, Կարբի⁷, Տեղեր⁸, Բյուրական⁹ բնակավայրերում գործածում են *ազաբներ / անգաններ* տարբերակը (օր.՝ *անգանները էթան փեսի կուշտը*): Ուջանում¹⁰, Ձորափում¹¹ կիրառվում է *ազաբչարի* բառը՝ «ամուրի երիտասարդների գլխավորը» իմաստով: Կոշ¹², Անտառուտ¹³ գյուղերում *ազաբբաշի* բառաձևն է կիրառելի, կրկին վերը նշված իմաստով (քանի որ առանձին ազաբներ

..

⁶Ըստ գրանցող բարբառագետի վկայության՝ Սաղմոսավան գյուղի բնակիչները 1826-28թթ. Պարսկաստանի Քիշմիշթափայից եկել և վերաբնակվել են այստեղ, խոսում են Քիշմիշթափայի խոսվածքով: Սաղմոսավանում կան նաև Մշո և Վանի (գյուղերի) խոսվածքների կրողներ: Այդ բնակիչների միջև խոսվածքը միատարր է (տե՛ս տետր հ. 46):

⁷Կարբի գյուղի բնակիչները, ըստ բարբառակիր գրանցողի վկայության, գաղթել են 1829թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ նահանգից: Խոսվածքը միատարր է (տե՛ս տետր հ. 254):

⁸Ըստ վկայության՝ նախնիները գաղթել են Ալաշկերտից, Վանից, Կարսից, Մուրմալուից: Հիմնականում գործածվում է Վանի խոսվածքը: Բառապաշարով, հնչյունական համակարգով շատ մոտ է Վանի տարածքի խոսվածքներին (տե՛ս տետր հ. 261):

⁹Աշտարակի շրջանի ամենամեծ գյուղի՝ Բյուրականի բնակչությունը ևս 1828թ. գաղթել է Պարսկաստանի Խոյի նահանգից: Նշվում է, որ այս խոսվածքում որոշ չափով նկատելի է Երևանի խոսվածքի ազդեցությունը (տե՛ս տետր հ. 70):

¹⁰Ուջանում հիմնականում բնակվում են Արևմտյան Հայաստանի Սասուն գավառի Հազգո գյուղի գաղթականները, որոնք տեղահանվել են 1915թ. (տե՛ս տետր հ. 119):

¹¹Ձորափ գյուղի ողջ բնակչությունը 1915թ. գաղթել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի տարբեր գյուղերից (տե՛ս տետր հ. 74):

¹²Կոշը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է: Գյուղի բնակչությունը հիմնականում տեղաբնակ է, խոսում է Արարատյան բարբառի խոսվածքով, սակայն կան նաև տարբեր ժամանակներում գաղթածներ, որոնք լեզվական անհամասեռության որոշ երևույթների պատճառ են հանդիսացել (տե՛ս տետր հ. 83):

¹³Ըստ բարբառակիր անհատի վկայության՝ Անտառուտ գյուղի բնակիչները 1828թ. Պարսկաստանի Խոյի նահանգից գաղթած հայեր են (տե՛ս տետր հ. 73):

չկան): Օշականում¹⁴՝ *ազափներ*, որոնցից մեկը՝ *ազաբբաշի* կամ *փեսախսպէր*: Այսինքն՝ փոխառյալ բառին զուգահեռ կիրառվում է նաև հայերեն բարբառային համարժեքը: Փարալիում¹⁵ վերոնշյալ հասկացության համար բարբառախոսներն օգտագործում են միայն *ախսպերտինք* հայերեն բարբառային ձևը, իսկ նրանց «գլխավորը»՝ *փեսախսպէր*, *խաչախսպէր*:

Արաբերենում 'azab նշանակում է «ամուրի երիտասարդ»: Հատկանշական է, որ փոխատու հիմնական լեզվում չկա բառիմաստի այն մասնավորեցումը, որով բառը կիրառվում է հայերեն բարբառներում: Հավանաբար սա միջնորդ լեզվի ազդեցության հետևանք է:

Ուշագրավ է, որ վերոնշյալ բնակավայրերից Փարալին է, որի բնակչությունը բնիկ է, նրա կազմում էական տեղաշարժեր չեն եղել, այդ պատճառով այստեղ կիրառվում են միայն հայերեն բարբառային համարժեքները:

2.Համրիչ. Հայերենի բարբառային միավորներում *համրիչ* բառի համար գործածվում են *տերոդորմյա/տոդորմա*, *թեզբեհ*, *թըզբէխ* զուգաբանություններից որևէ մեկը¹⁶:

Արաբերենում *համրիչ* բառի իմաստն է՝ tasbīh «1.փառաբանում, գովերգում, 2.տերոդորմյա, համրիչ»:

Աշտարակի շրջանի Սաղմոսավան, Կարբի, Տեղեր, Անտառուտ, Բյուրական, Ուջան, Ձորափ¹⁷, Կոշ գյուղերում գործածական է *թըզբէխ* փոխառյալ բառը (օր.՝ *հայրիկը նըստէր էր քարին ու թըզբէխ էր քաշըմ*): Փարալիում փոխառված և հայերեն բարբառային համարժեքները

¹⁴Օշական գյուղի բնակիչների մեծ մասը բնիկներ են, կան նաև 1915թ. մազապուրծ գաղթականներ (տե՛ս տետր հ. 20):

¹⁵Փարալիի բնակչությունը բնիկ է, և ըստ տվյալների՝ նրա կազմում խոշոր տեղաշարժեր չեն եղել, լեզվական առումով համասեռ է (տե՛ս տետր հ. 9):

¹⁶Տե՛ս ՀՖԱ նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 37:

¹⁷Ձորափ գյուղի ողջ բնակչությունը 1915թ. գաղթել է Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի տարբեր գյուղերից (տե՛ս տետր հ. 74):

կիրառվում են զուգահեռաբար՝ *թըզբէխ, տէրօղօրմի*, իսկ Օշականում հայերեն բարբառային տարբերակն է գործածական՝ *տօղօրմա*:

Հնչյունաբանական առումով առկա է հ>խ հնչյունափոխություն: Ուշագրավ է, որ փոխառված բառի երկրորդ իմաստն ավելի կենսունակ է:

3.Ժամանակ. Հայերեն բարբառներն ունեն նույնանշանակ մի քանի տարբերակներ՝ *ժուկ, ատեն, պահ, գահ/գ'նիխ, վախտ*¹⁸:

Արաբերեն *waqt* նշանակում է «ժամանակահատված, ժամանակ, պատեհություն»: Աշտարակի շրջանի վերոնշյալ գյուղերում գործածվում *վախտ / վն'խտ* տարբերակը (օր.՝ *վն'խտին տէղ խանսնք*): Կարբիում կա նաև *գ'նիխ* ձևը: Հասկանշական է, որ վերոնշյալ տասը գյուղերից միայն Փարպիում է, որ զուգահեռաբար գործածվում է հայերեն *ժամանագ* բարբառային ձևը:

Արաբերեն բառի հետ համեմատությամբ գ>խ հնչյունափոխությունը մեր դիտարկմամբ միջնորդ լեզվի, այս դեպքում՝ պարսկերենի ազդեցություն է: Պարսկերենից է փոխառվել նաև որոշ բնակավայրերում հանդիպող *բէվախտ* բառը՝ «վատ ժամանակ, ուշ ժամանակ» իմաստով: Օր.՝ *էս ինչ բէվախտ էս էկէ*:

4.Անասուն. Հայերենի բարբառային տարբերակներն են՝ *էսսօն, տավար, ապրանք, հայվան, մալ*¹⁹ և այլն:

Արաբերեն փոխառություններ են *հայվան* (*hayawān*) և *մալ* (*māl*) բառերը: Աշտարակի շրջանի Սաղմոսավան, Անտառուտ, Ձորափ և մի շարք այլ գյուղերում գործածում են *տավար* բառը: Կարբի գյուղում գործածական են *տավար, մալ, հայվան* զուգաբանությունները: Օր.՝ *Տավարը կուշտ ուտում ա: Խեղճ հայվանը սատկում ա:* Սաղմոսավանում, Փարպիում և այլ

¹⁸ Տե՛ս ՀՔԱ նյութերի հավաքման ծրագիր, էջ 51:

¹⁹ Տե՛ս ՀՔԱ նյութերի հավաքման ծրագիր, էջ 41:

գյուղերում *հայվան* բառը կիրառվում է այլ՝ «անհասկացող» իմաստով, այսինքն՝ որպես վիրավորական արտահայտություն. *ինչօր հայվան հըլնի, ընդսր ասի, էլի հիրսն էշը քշեց*: Կարող ենք արձանագրել, որ փոխատու լեզվի համեմատությամբ փոխառված բառի իմաստի ընդլայնում է տեղի ունեցել:

Բառիմաստային ուշագրավ զարգացում ունի նաև *մալ* բառը (Ուջան գյուղում միայն այս ձևն են կիրառում: Օր.՝ *մըր մալէր էգէր ին*): Արաբերենում *māl* նշանակում է «1.հարստություն, 2.ունեցվածք, ապրանք, սեփականություն»: Ըստ Հ. Աճառյանի, բառը մեկ անգամ «եգ, տավար» իմաստով հանդիպում է դեռևս Մագիստրոս քերականի երկում: Ըստ Ստ.Մալխասյանցի, *մալը*, որը փոխառված բառ է արաբերենից, առաջին իմաստով նշանակում է «գույք, հարստություն», իսկ բառի երկրորդ իմաստն է՝ «խոշոր եղջերավոր անասունների խումբ», որը, ըստ էության, գյուղացու հիմնական հարստությունն է²⁰: Բառիմաստի զարգացման առումով հետաքրքիր է, որ Օշականում որպես բառային զուգաբանություններ են կիրառվում *տավար, մալ, հայվան, ապրանք* բարբառային ձևերը:

5.Ամուր - ՀԲԱ-ն նշում է բարբառային ձևերից մի քանիսը՝ *պինդ, պիրկ, պարկ, դայիմ*²¹: Աշտարակի շրջանի՝ մեր ուսումնասիրած տարածքային տարբերակներում գործածում են դրանցից երկուսը՝ *պինդ* և *դայիմ* (միայն Ուջանում կա նաև *ամբուր* բառը). Կարբիում, Ձորափում, Օշականում, Փարպիում դրանք զուգահեռ կիրառություն ունեն: Օրինակ՝ *դայիմ պարան* կամ *պինդ պարան*: Մյուս բնակավայրերում հանդիպում է այդ տարբերակներից որևէ մեկը, որոնցից *դայիմ* բառը ծագում է արաբերեն *qā'im* «1.կանգուն, 2.ուղիղ, ուղղաձիգ» բառից:

²⁰ Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագիր, էջ 291:

²¹ Տե՛ս ՀԲԱ նյութերի հավաքման ծրագիր, էջ 52:

Արաբերենի գ (կաֆ) հնչյունը, չունենալով հայերեն համար-
 ժեքը, բարբառներում հաճախ փոխարինվում է կ, դ, խ
 հնչյուններով: Հայերենի որոշ տարածքային տարբերակներ
 մասամբ դեռ պահպանում են ^փ արտասանությունը, սակայն
 Աշտարակի շրջանի վերոնշյալ բնակավայրերի
 խոսվածքներում, ըստ ձեռագիր նյութերի և մեր լսողական
 ընկալման, այս հնչյունն արդեն չի պահպանվել, թեև տարեց
 բարբառակիրների խոսքում . երբեմն, այնուամենայնիվ,
 հնարավոր է զգալ այդ հնչյունի առկայությունը փոխառյալ
 բառերում:

Ամփոփելով Աշտարակի շրջանի վերոնշյալ բնակա-
 վայրերի բարբառային միավորներում արաբերեն միջնոր-
 դավորված մի քանի փոխառությունների տարածման և
 գործածման սահմաններն ու օրինաչափությունները՝ արձա-
 նագրենք, որ դրանք փոխկապակցված են տվյալ տարածքի
 բնակչության պատմականորեն ձևավորված հանգամանքների
 հետ: Վերոնշյալ տարածքի բնակչության հիմնական մասը
 գաղթականներ են, և հատկապես այն գյուղերում (Ուջան,
 Կարբի, Չորափ), որոնց բնակչությունը գաղթել է Արևմտյան
 Հայաստանից, որտեղ ապրում էր օտար լծի տակ, շատ
 երևույթներ և հասկացություններ բարբառախոս բնակչության
 խոսքում անվանվում են օտար բառերի միջոցով: Այն
 վայրերում, որտեղ բնիկների կողքին ապրում են նաև
 գաղթականներ, լեզվական անհամասեռության որոշ երևույթ-
 ներ, հայերեն ու փոխառյալ բառերի զուգահեռ կիրառության
 դրսևորումներ կան (Օշական, Կոշ): Դիտարկվող
 բնակավայրերից միայն Փարպին է, որի բնակչությունը բնիկ է,
 և հայերենի բարբառային տարբերակն այստեղ ավելի
 անաղարտ է պահպանվում:

Mikayelyan Sona - Arabic Borrowings in the Dialectal Units of
 Ashtarak District in the Region of Aragatsotn. - This article presents
 the boundaries and patterns of the distribution and use of several

mediated Arabic borrowings in ten settlements of Ashtarak District. It is noteworthy that they are interconnected with the historical circumstances of the population development in the area. Here, the majority of the population consists of refugees, and many phenomena and concepts in their dialectal speech are called by foreign words especially in the villages (Ujan, Karbi, Dzorap) with population migrated from Western Armenia where they had lived under foreign rule. In places with immigrants living alongside the natives, there exist some phenomena of linguistic variations and manifestations of simultaneous use of Armenian and borrowed words (Oshakan, Kosh). Of the settlements in question, only Parpi, with mainly native population, has preserved the dialect of the Armenian language purer.

Микаелян Сона - Арабские заимствования в говорах города Аштарак, Арагацотской области. В данной статье представлены закономерности и границы распространения арабских нескольких заимствований, которые употребляются в говорах города Аштарак, Арагацотской области. Надо сказать, что употребление заимствований взаимосвязанно с историческими обстоятельствами населения этой территории, потому что основная часть населения – мигранты, и особенно в тех местах (Уджан, Карби, Дзорап), жители которых мигрировались с Западной Армении, где жили под влиянием чужой власти, число заимствованных слов – значительно. В тех местах (Ошакан, Кош), где рядом с местными жителями живут мигранты, существует языковая неоднородность. Из рассматриваемых мест жительства только население Парпи – местное и хорошо хранил подной говор.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ս. Գրքի հայերեն թարգմանության ժամանակի, նախօրինակի, թարգմանիչների և այլ հարցերի մասին հանգամանակից տեղեկություններ են հաղորդում պատմիչներ Ագաթանգեղոսը, Կորյունը, Մ. Խորենացին, Ղ. Փարպեցին: Կասկածից վեր է, որ Ս. Գիրքը Հայաստանում գործածվել է գրերի գյուտից շատ առաջ՝ IV դարի սկզբից, քանի որ հայ եկեղեցին այդ շրջանում արդեն ձևավորված կառույց էր¹: Նշված ժամանակաշրջանում Աստվածաշնչի ընթերցման լեզվի խնդրին անդրադառնալիս անհարժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե ո՞ր լեզուն էր գրավոր շրջանառվում Հայաստանում: Ըստ Ագաթանգեղոսի. «Տայր հրաման թագաւորն Տրդատ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկտոյ ածել յարուեստ դպրութեան... Եւ զնոսա յերկուս բաժանեալ. զմանս յասորի դպրութիւն կարգեալ, և զմանս ի հելլեն»²: Հայոց Արշակունյաց պալատում գրավոր լեզուները ևս եղել են հունարենը և ասորերենը: Ղ. Փարպեցին վկայում է, որ «ասորի եւ հոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց արքունի դպիրքն, զվճռոցն եւ զհրովար-տակացն»³: Եկեղեցական ծիսակարգում նույնպես գործածվում էին հունարենն ու ասորերենը: «...Յունականան

¹Պ. Անանեան, *Քրիստոնէութեան հետքեր Հայաստանի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէ առաջ* (պատմական ուսումնասիրութիւն), Վենետիկ, 1980, էջ 27:

²Ագաթանգեղայ *Պատմութիւն Հայոց*, աշխատ. Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ստ. Կանայեանի, Տփղիս, 1909, էջ 437-438:

³Ղազարայ *Փարպեցոյ Պատմութիւն Հայոց ու Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, աշխատ. Գ. Տեր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Տփղիս, 1904, էջ 13:

վարէին եկեղեցւոյ կարգք», - գրում է Խորենացին⁴: Ղ. Փարպեցու Պատմության մեջ կարդում ենք. «Պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս»⁵: Պատմիչների վկայությամբ հայոց գրերի բացակայության պայմաններում հայ հոգևորականները մինչև IV դարի վերջը քրիստոնեական արարողությունները կատարելիս ստիպված բավարարվում էին բանավոր քարոզով: Տրդատ թագավորի հրամանով հիմնված հեյլեն և ասորի դպրոցներում, ամենայն հավանականությամբ, պատրաստում էին նաև թարգմանիչներ, որոնք մասնագիտանում էին այլալեզու ընթերցման մեջ⁶:

Մ. Օրմանյանի վկայությամբ՝ հայոց եկեղեցւում եղել է թարգմանիչների դաս, որը բանավոր թարգմանել և ժողովրդին է հասցրել Մ. Գրքի օտարալեզու ընթերցումները⁷:

Գրերի գյուտից հետո առաջնային էին նախ՝ Աստվածաշնչի, ապա՝ եկեղեցւում օգտագործվող ծիսամատոյանների, ինչպես նաև Սուրբ Գրքի բովանդակությունը բացատրող մեկնողական երկերի հայացումը:

Հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է գրերի գյուտից անմիջապես հետո՝ մասամբ ասորերեն և մասամբ հունարեն բնագրերից (405/406–420 թթ. մինչև Եփեսոսի տիեզերական ժողովն ընկած ժամանակաշրջանը): Ինչպես վկայում է Կորյունը. «Օրենսուսոյց Մովսէս մարգարեական դասուն ու յառաջադէմն Պաղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, յանդերձ աշխարհակեցոյց Աւետարանան Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն (այն է

⁴Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատ. Մ. Աբեղեանի եւ Մ. Հարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 301:

⁵Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն..., էջ 17:

⁶Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն..., էջ 317:

⁷Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը եւ ներկայ կացութիւնը, Կ.Պոլիս, 1912, էջ 33:

Սահակ եւ Մեսրոպ) հայաբարբառք հայերէնախօսք գտան»⁸: Կորյունն այդ թարգմանությունը անվանում է «գլառաջագոյն գլանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս»⁹: Խորենացին ևս նշում է. « Զոր առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի, յանդերձ նոքօք վերստին հորինեալ նորոգմամբ»¹⁰: *Փութանակի թարգմանությունը* մեր մատենագրության մեջ հայտնի է որպէս Ս. Գրքի առաջին թարգմանություն:

Երկրորդ թարգմանությունը նախորդի վերանայումն ու սրբագրումն էր՝ Եփեսոսի ժողովից հետո (432-438թթ.) Բյուզանդիայից բերված հունարեն բնագրերի հիման վրա¹¹:

Եթէ նախաեփեսոսյան շրջանում բավական զգալի հեղինակություն էր վայելում ասորական կողմնորոշումը, և Ս. Գրքի որոշ ծիսական նշանակություն ունեցող բնագրերը թարգմանվում էին ասորերենից, ապա հետեփեսոսյան շրջանում բոլորը խմբագրվում են հունարեն օրինակների հիման վրա: Դա հետևանք էր ասորական ազդեցության թուլացման և հունական ազդեցության հզորացման: Աստվածաշնչի թարգմանությունը բավականին բարդ և դժվար գործընթաց էր: Բավարար չէր միայն լեզվի իմացությունը: Անհրաժեշտ էր նկատի ունենալ, որ Ս. Գիրքը բաղկացած էր բազմաթիվ գրքերից, որոնք ստեղծվել էին մոտ մեկ հազարամյակի ընթացքում: Անհրաժեշտ էր նաև ճիշտ ուսումնասիրել այդ հազարամյակի պատմությունը, այն միջավայրը, որտեղ գրվել են սուրբ գրքերը: Կարելի է ենթադրել, որ Ս. Գիրքը հարյուրամյակներ բանավոր է

⁸Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 13:

⁹Նշվ. աշխ. էջ, 28:

¹⁰Մովսիսի Խորենացույ Պատմութիւն..., էջ 337:

¹¹Ե. Տեր-Մինասյան, *Հայոց գրերի գյուտի թվականին այլ հարակից հարցերի մասին*, Բանբեր Մատենադարանի, N 7, Ե., 1964, էջ 25-48:

¹¹Զարեհ արք. Ազնաուրեան, *Աստուածաշունչին վերաբերեալ ուսումնասիրություններ*, 2007, Պեյրուք, էջ 95- 97:

ավանդվել առանձին կտորներով կամ մասերով: Չի բացառվում նաև, որ այդ ընթացքում տեքստը կարող էր նաև փոփոխվել: Բացի այդ, ինչպես նշում են Մխիթարյան հայրերը, Ս. Գրքի թարգմանիչները տարբեր գավառներից էին և ինչպես իրենց երեկերում, այնպես էլ թարգմանության մեջ «բացի դասական ուստանիկ լեզուին՝ մուծեր ագուցեր են իրենց տեղական կամ գաւառական բառերը եւ ասացուածքները, որոնք կը լսուին տակաւին հայ ժողովրդական լեզուին մէջ»¹²:

Աստվածաշնչի հայերեն թարգմանության հարցը բազմիցս եղել է թե՛ հայ, թե՛ օտար հետազոտողների ուշադրության կենտրոնում: Պատմիչների վկայությունների հիման վրա մասնագետները կատարել են տարաբնույթ հետազոտություններ և հանգել հաճախ տարբեր, իսկ երբեմն էլ իրարամերժ եզրակացությունների: Պատճառն այն է, որ գրերի գյուտի և Աստվածաշնչի հայերեն թարգմանության մասին մեր պատմիչները շատ ժլատ տեղեկություններ են հաղորդել: Մասնագետները նշում են, որ Աստվածաշնչի մի շարք գրքեր սկզբում թարգմանվել են ասորերենից, հետո սրբագրվել ըստ հունարեն բնագրերի: Սրբագրության ժամանակ, բնականաբար, որոշ իրողություններ կա՛մ դուրս են մնացել թարգմանիչների ուշադրությունից, կա՛մ համարվել անկարևոր: Այդ մասերը որպես ասորաբանություններ պահպանվել և առանձին շերտ են կազմել Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ: Դրանք նկատելի են հատկապես Հին Կտակարանի մի քանի գրքերի հայերեն թարգմանություններում¹³:

Մինչև օրս Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը վերաբերող որևէ հարցի անդրադառնալիս կրկին բախվում ենք բնագրի ընտրության խնդրին:

¹²Ն. Յ. Թորոսեան, *Հայ ոսկեդարը եւ Աստածաշունչի թարգմանութիւնը*, Բազմավեյ, 1935, N 9-12, էջ 305:

¹³Ն.Քյոսեյան, *Սուրբգրային վկայակոչումները Կորյունի «Վարք Մաշտոց» ում*, Էջմիածին, Դ-Ե-Զ, 1993, էջ39, 44:

Հայ բանասիրության մեջ տարածված կարծիք կա հոգուտ ասորական բնագրի: Հին Կտակարանի «փութանակի», «յանկարծագիւտ» թարգմանությունը կատարվել է այդ բնագրի հիման վրա: Թարգմանությունների առաջին շրջանում, ամենայն հավանականությամբ, Հայաստանում ընդունված է եղել Աստվածաշնչի ասորական կանոնը¹⁴: Խորենացու տեղեկության, ինչպես նաև հայերեն Աստվածաշնչի ասորերենից թարգմանված լինելու գիտական փաստերով է հիմանվորում Հ. Անասյանն իր կարծիքը, թե «Անկախ այն խնդրից, թե հայերեն թարգմանությունները, ո՞ր լեզվից էին կատարվել, ասորերենից, թե հունարենից, -կանոնի հարցում անկասկած ենթարկված էին ասորականին, որի ներկայացուցիչը Պեշիտտան էր»¹⁵:

Պետք է նշել, որ Ասորի եկեղեցիները Հայաստանում ազդեցություն է ունեցել միայն մինչև 5-րդ դարի կեսերը: Սկսած 6-րդ դարից Հայոց եկեղեցին, ընդհակառակն, ինքն է «ազդեցութիւն գործում բաժան-բաժան եղած ասորական Եկեղեցու թուլացած հատուածների վրայն վերջիններիս կողմից ճանաչում իբրև ուղղափառ և օրինակելի Եկեղեցի»¹⁶:

Ամայանը նշում է, որ «Աստվածաշնչի թարգմանության առաջին շրջանը ոչ միայն ասորական կամ հունական եզակի բնօրինակներից թարգմանելու, այլև կատարված թարգմանությունները տարբեր խմբագրության պատկանող օտար բնագրերով ստուգելու շրջան էր: Դա հայերեն Աստվածաշնչի լինելության շրջանն էր, մինչդեռ երկրորդը՝ հիմնականում սրբագրումներ կատարելու, ճշգրտելու և յոթանասնիցի կանոնի հաստատման շրջան էր»¹⁷:

Կորյունը և Ղ. Փարպեցին ակնարկում են, որ Աստվա-

¹⁴Հ. Ս. Անասյան, *Հայկական մատենագիտություն*, հատ. Բ, Ե., 1976, էջ 313-314:

¹⁵Նույն տեղում:

¹⁶Ե. Տեր-Մինասեան, *Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ*, Էջմիածին, 1908, էջ 62:

¹⁷Հ. Ամայան, *Մականաբայեցվոց գրքի հայերեն թարգմանության ժամանակի և հեղինակի մասին*, «Էջմիածին», Ա, 1980, էջ 48:

ծաշնչի հայերեն թարգմանության հարցում սուրբ հայերը նախապատվություն են տալիս հունարեն Յոթանասնից ճշգրիտ ու վավերական բնագրին: Միայն Խորենացին իր Պատմության 3-րդ գրքում անդրադառնում է ասորական բնագրից կատարած թարգմանություններին¹⁸:

Անշուշտ, սրանով չեն սպառվում Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ գործածված բնագրի ընտրությանն առնչվող դժվարությունները: Մասնագետներն այսօր էլ փաստում են ասորերենի, եբրայերենի հետքեր, Յոթանասնից թարգմանությանն առնչվող անհամաձայնություններ: Փաստ է, որ կան Հին Կտակարանի գրքերի ավելի հին թարգմանություններ՝ ասորերենից, օր՝ հայտնի են Ն. Բյուզանդացու թարգմանությունները (Առակաց գիրք, Ժողովող, Երգ երգոց)՝ համեմատություններով ու ծանոթագրություններով¹⁹: Մ. Գարագաշը վկայում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը եբրայերեն բնագրի հետ համեմատելիս «թեպետեւ թարգմանութիւն մեր զհետ երթայ բազում հաւաստեաւ եւ ճշտիւ զթարգմանութեանն Յոթանասնից, ուրեք ուրեք խոտորեալ ի նմանէ, մերձենայ եբրայական բնագրին ընդգծումը մերն է – Գ.Մ.»²⁰: Կարելի է ենթադրել, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության ժամանակ մեր հոգևոր հայերը որոշ հատվածներում նախապատվություն են տվել ասորական և եբրայական տեքստերին: Բացի այդ Ս. Գիրքը հարյուրամյակներ բանավոր է ավանդվել՝ առանձին մասերով, հատվածներով: Այդ ընթացքում չի բացառվում, որ տեքստը կարող է նաև փոփոխվել:

Ս. Գրքի՝ հայերեն թարգմանությանն առնչվող ուսումնասիրությունները բաժանվում են երկու մասի. ա) հայերեն

¹⁸Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, էջ 337:

¹⁹Ն. Բյուզանդացի, *Կորին վարդապետ եւ նորին թարգմանութիւնք*, Տփղիս, 1900:

²⁰Մ. Գարագաշ, *Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կտակարանաց*, Կոստանդնուպոլիս, 1895, էջ 55:

թարգմանության արտաքին հանգամանքներին վերաբերող ուսումնասիրություններ, ք) բուն բնագրի քննությանը նվիրված հետազոտություններ: Պետք է ասել, որ գերակշռում են Ս. Գրքի հայերեն թարգմանության արտաքին հանգամանքներին, այն է՝ թարգմանության ժամանակին, կանոնին, թարգմանիչ-ների ինքնությանը և բնագրի հետագա պատմությանը նվիրված ուսումնասիրությունները: Հիշատակելի են Գ. Զարբհանալյանի²¹, Մես. Տեր-Մովսիսյանի²², Ն. Ակիսյանի²³, Ն. Պողարյանի²⁴, Հ. Անասյանի²⁵, Հասպալյանի²⁶ և այլոց աշխատությունները: Անհամեմատ քիչ են բուն բնագրի քննությանը նվիրված աշխատանքները: Այդպիսին են օտար հետազոտողներ Ֆ. Մակլերի²⁷, Լիոնեի²⁸, Լըլուարի²⁹ հետազոտությունները՝ նվիրված Ավետարանների հայերեն թարգմանությանը:

Հին Կտակարանի առանձին գրքերի հայերեն թարգմանությունը ևս ենթարկվել է հանգամանալից քննության: Այդպիսիներից է Ս. Կոզյանի Մակաբայեցոց Բ գրքի³⁰, Հ.

²¹Գ. Զարբհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց դար Դ-ԺԳ*, Վենետիկ, Ս. Ղազար, 1889:

²²Մ. Տեր-Մովսիսեան, *Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան*, «Արարատ», N 2, 1904, էջ 125-136:

²³Ն. Ակիսեան, *Մատենագրական հետազոտութիւններ*, Ա, Վիեննա, 1922:

²⁴Ն. Պողարեան, *Հայ գրողներ Ե-ԺԷ դդ.*, Երուսաղէմ, 1971:

²⁵Ն. Անասյան, *Սստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը*, Էջմիածին, N 1, 1966, էջ 71-97:

²⁶Պ. Հասպալեան, *Տատիանի համաբարբառն և հայերեն ավետարաններու առաջին թարգմանութիւն*, 1937:

²⁷*Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par Frédéric Macler*, Paris, 1908.

²⁸Lyonnet, Stanislas. *Un important témoin du texte Césaréen de Saint Marc: la version Arménienne*. Imprimerie Catholique, 1935.

²⁹Լուի Լըլուար, *Առաքելական պարականոն գրքերի հայերեն հրատարակությունը (1904) և նրա ֆրանսերեն թարգմանությունը (1986)*, թարգ. Պ. Շահբազյան, Էջմիածին, Հ, 1987, 51-58:

³⁰Հ.Ս. Կոզեան, *Մակաբայեցոց Բ գրքին հայերեն թարգմանութիւնը*, Վիեննա, 1923:

Ոսկյանի Երգ-Երգոցի³¹, Բաումշ-տարկի³², Լ. Տեր-Պետրոսյանի Սաղմոսաց³³, Ա. Զեյթունյանի Ծննդոց գրքի³⁴ հայերեն թարգմանությունների մասին հետազոտությունները: Մ. Սթոունը հրատարակել և ուսումնասիրել է Հին Կտակարանի պարականոն բնագրերը³⁵:

Անառարկելի է, որ հայերենը որոշակի նպաստ է բերում մասնավորապես Աստվածաշնչի հունարեն բնագրի ուսումնասիրությանը: Այս իրողությունը գիտակցվել է ԺԸ դարից: Այսպես, նշանավոր արևելագետ և պատմաբան Լա Կրոզը, Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունը համարելով «Թագուհի թարգմանութեանց», ընդգծում է, որ դրա միջոցով կարելի է վերա-կանգնել հունարեն բնագրի նախնական ընթերցվածները³⁶: Մ. Գրքի հայերեն թարգմանությունը նույնքան կարևոր է ասորերեն և վրացերեն Աստվածաշունչ մատյանների թարգմանությունների ուսումնասիրության ոլորտում: Ուշագրավ է Ն. Մառի կարծիքը Աստվածաշնչի հայ-վրացական բնագրի առնչությունների վերաբերյալ. «Անկարելի է աշխատել հայերեն բնագրի քննության ուղղությամբ առանց գիտենալու վրացերեն

³¹Չ. Ոսկեան, *Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմա-նութիւնը*, ուսումնասիրութիւն եւ բնագիր, Վիեննա, 1924:

³² Baumstark Anton, *On the Historical Development of the Liturgy*, Foreword by Robert F. Taft, Introduction, Translation, and Annotation by Fritz West, by Order of Saint Benedict, Collegville, Minnesota, Liturgical Press, 2011.

³³Լ. Տեր-Պետրոսյան, *Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորինակը*, Էջմիածին, Ա, Դ, Զ, 1975:

³⁴ Գիրք Ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ս. Զեյթունյանի, Երևան, 1985:

³⁵ Պարականոն բնագրեր եւ աւանդութիւններ, աշխատասիրությամբ Մ. Սթոունի, Երևան, 2014:

³⁶ James Townley, *Illustrations of Biblical Literature. Exhibiting the History and Fate of the Sacred Writings, From the Earliest Period to the Present Century; Including Biographical Notices of Translators and Other ...* Biblical Scholars, Vol. 1, p. 163.

բնագիրն իր զանազան խմբագրություններով կամ վերարտադրել Ս. Գրքի վրացերեն թարգմանության պատմությունը՝ չիմանալով հայերեն թարգմանությունն ու նրա բարդ պատմությունը»³⁷:

Ակնհայտ է, որ աշխատասիրողները բարձր են գնահատում հայերենի բերած նպաստը օտար բնագրերի քննության գործում: Այսինքն՝ առկա բնագրային շերտերը հնարավորություն են ընձեռում վեր հանելու օտար մշակութային հարաբերությունների վաղնջական փուլը հատկանշող առանձնահատկություններ:

Gayane Mkhitryan - On the Issue of the Armenian Bible Translation. - The issue of Armenian Bible translation often became the subject of attention of both Armenian and foreign researchers. It is an indisputable that Armenian language helps to learn foreign Bible texts. The importance of ancient Armenian Bible translations is not only limited by Armenian studies. Armenian Bible translations have also great value in terms of the study of world culture, as the original texts of many monuments of Greek, Assyrian and Georgian literature have been survived and became the property of modern civilization exclusively thanks to these translations.

Гаяне Мхитарян - К вопросу об армянском переводе Библии.- Вопрос армянского перевода Библии часто становился предметом внимания как армянских, так и иностранных исследователей. Неоспорим тот факт, что армянский язык способствует изучению иностранных библейских текстов. Значение древних армянских переводов Библии не ограничивается только арменоведческими соображениями: они также представляют большую ценность с точки зрения исследования мировой культуры, так как многие памятники греческой, асситийской и грузинской литературы, подлинники которых утеряны, сохранились и стали достоянием современной цивилизации исключительно благодаря этим переводам.

³⁷ Հ.Ս.Անասյան, *Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը*, Էջմիածին, Ա, 1971, էջ 78:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄԵՐ

(Տերմինային արտահամակարգային բազմիմաստություն)

Հասարակական գիտություններում կան բազմաթիվ փոխառյալ տերմիններ, որ զուգահեռաբար գործածվում են տարբեր տերմինահամակարգերում¹: Դրանք ձեռք են բերել առանձին միավորի կարգավիճակ և համակարգային հարաբերությունների մեջ են տվյալ մանրահամակարգի մյուս անդամների հետ: Այս դեպքում գործ ունենք տերմինային արտահամակարգային բազմիմաստության հետ²: Արտահամակարգային բազմիմաստության երևույթը հասարակական-քաղաքական հարաբերությունների, մշակույթի, գիտության զարգացման, նոր գիտակարգերի առաջացման անմիջական հետևանքն է: Երևույթը շատ է հանդիպում գիտության հարակից բնագավառներում: Այսպես՝ թատերագիտությունը առնչվում է գրականագիտությանը, բալետին, կրկեսին, կինոյին, և, բնականաբար, տերմինային արտահամակարգային բազմիմաստությունը այս բնագավառներում անխուսափելի է, հմմտ. *արտիստ* (թատերագիտություն, երաժշտություն, կինո), *ռեժիսոր* (թատերագիտություն, կինո, օպերա, օպերետ, կրկես), *բենեֆիս* (թատերագիտություն, երաժշտություն)³ և այլն:

¹ Հասարակական գիտությունների տարբեր տերմինահամակարգերից՝ տնտեսագիտական, իրավաբանական, լեզվաբանական, գրականագիտական, արվեստի ենթաձյուղեր, հավաքել ենք 100-ից ավելի տերմինային արտահամակարգային բազմիմաստության դեպքեր:

² Էդ. Աղայան, *Հնդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 50-51:

³ Հատկապես մեծաթիվ են գրականագիտության, թատերագիտության և կինոյի համակարգերում հանդիպող տերմինային արտահամակարգային բազմիմաստության դեպքերը, հմմտ. *անձնավորում*, *դրամա*, *եռերգություն*, *երկխոսություն*, *զավեշտ*, *խաղառճ*, *խաղացանկ*, *կատակերգություն*, *կոնֆլիկտ*, *մելոդրամա*, *մենախոսություն*, *ողբերգություն*, *սյուժե* և այլն: Տե՛ս

Կարող են այդպիսի դրսևորումներ լինել թատերագիտության և ոչ հարակից բնագավառներում, ինչպես՝ *ակուստիկա* (թատերագիտություն, ճարտարապետություն), *գործողություն* (թատերագիտություն, մաթեմատիկա, բժշկություն) և այլն:

Ճիշտ է, տերմինը գիտական հասկացություն նշանակող բառ է և հասկանալի է նաև համատեքստից դուրս, սակայն արտահամակարգային բազմիմաստության դեպքում համատեքստի դերը կարևոր է դառնում, որտեղ ավելի կոնկրետանում է նրա իմաստը:

Դիտարկենք մի քանի փոխառություններ այլ բնագավառներից:

Ակցիա: Այս բառը ռուսերենի միջնորդությամբ փոխառություն է ֆրանսերենից՝ *action*⁴: Բառացի նշանակում է «գործողություն»: Հայերենը փոխառել է ֆրանսերեն բառի տերմինային իմաստները: Ընդհանրապես փոխառու լեզուն վերցնում է օտար բազմիմաստ բառի մեկ-երկու իմաստները: Հայերենում *ակցիա* բառը զուգահեռեբար հանդես է գալիս ֆինանսական և դիվանագիտական տերմինահամակարգերում՝ «1. (ֆին.) Բաժնետոմս, արժեթուղթ, որ ձեռք են բերում որևէ ձեռնարկության ննի մեջ՝ որոշ գումար ներդնելով՝ այդ ձեռնարկության եկամուտից բաժին ստանալու համար: 2. (դվնգ.) Գործողություն՝ միջոցառում, որը կատարվում է քաղաքական

Ս.Պապիկյան, *Թատերագիտական տերմինների համակարգային և կառուցվածքային մաստաբանական քննություն*, Ե., 2008, էջ 60-62:

⁴ Բառը ֆրանսերենում բազմիմաստ է՝ «1. Գործողություն, գործ: 2. Կոիվ, ելույթ, օպերացիա: 3. Իրավք. Գործ, գործողություն: 4. Ֆին. Բաժնետոմս, բաժնեթուղթ»: Տե՛ս Ганшина К. , *Французско-русский словарь*, М., 1977, с. 22: Պետք է նշել, որ անգլերենից բազմաթիվ լեզուների անցած *էքշըն* կինոտերմինը ևս *action*-ից է՝ «Կինեմատոգրաֆիական ժանր, որտեղ մեծ տեղ է հատկացվում գլխավոր հերոսի պայքարին ընդդեմ բռնության, սպնության, անարդարության նն. լի է կասկադորական հնարանքներով, մարտաֆիլմ»: Տե՛ս Ս.Պապիկյան, *Թատերական և կինեմատոգրաֆիական տերմինների համառոտ բառարան*, Ե., 2015, էջ 43:

կամ տնտեսական նպատակներ իրականացնելու համար»⁵: Էդ. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»⁶ *Ակցիա* գլխաբառը բացատրվում է. «1. Բաժնետոմս, բաժնեթուղթ: 2. Տե՛ս Գործողություն»:

Բերենք օրինակներ⁷ քաղաքագիտությունից: «Կարծում եմ, սա լուրջ քաղաքական *ակցիա* կարող է դառնալ» (Առաւօտ, 2005.05.27): «Երեկ «Նոր ժամանակներ» կուսակցությունը միաժամանակյա *ակցիա* էր կազմակերպել ՀՀ-ում ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Գերմանիայի, Չինաստանի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իրանի, Իտալիայի դեսպանատների մոտ» (Առաւօտ, 2005. 04. 23): «Օդանավակայանում կազմակերպվելու է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչերով բողոքի *ակցիա*» (Ազգ, 2008. 09, 05):

Քաղաքագիտության մեջ գործածական *բողոքի ակցիա* բառակապակցությունը լայն գործածություն ունի, հանդիպում է մամուլում և հեռուստատեսությունում. *ակցիա*-ն շատ դեպքերում կարելի է փոխարինել *գործողություն* բառով՝ ոչ թե *բողոքի ակցիա*, այլ՝ *բողոքի գործողություն*, ոչ թե *միաժամանակյա ակցիա*, այլ՝ *միաժամանակյա գործողություն*: Պետք է ասել, որ *բողոքի ակցիա* և *բողոքի գործողություն* բառակապակցական տերմինները հանդես են գալիս զուգահեռաբար: Որոշ հեռուստաալիքներ և լրատվամիջոցներ նախընտրում են հենց *բողոքի գործողություն*-ը:

Տնտեսագիտական տերմինահամակարգում ստեղծվել են *ակցիա* փոխառյալ տերմինի հայերեն համարժեքներ՝ *արժեթուղթ* և *բաժնետոմս*⁸, որոնք զուգահեռ գործածություն ունենին:

⁵ Ա. Հայրապետյան, *Օտար բառերի բացատրական բառարան*, Ե., 2011, էջ 34:

⁶ Էդ. Ադայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976, էջ 18:

⁷ Օրինակները բերված են www.eanc.net/EANC/search/?interface_language=am-hy:

⁸ «Բաժնետոմս – լատ. action, акция. արժեթուղթ, որը վավերացնում է բաժնետիրական ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրված մասնաբաժինը և իրավունք է տալիս ստանալու այդ ընկերության շահույթի

Այժմ, կարելի է ասել՝ տնտեսագիտական տերմինահամակարգում *ակցիա* բառի հայերեն համարժեքներն արդեն հաղթել են, և փոխառյալ բառի գործածությունը կարելի է համարել օտարաբանություն:

Բառիմաստի փոփոխության հետևանքով *ակցիա* բառը ձեռք է բերել նոր իմաստ. հմմտ. «Թեժ ակցիա Վեգա խանութների ցանցում», այն է՝ *գների իջեցման գործողություն*:

Ակցիա բառի իմաստների զարգացման գործընթացը պայմանականորեն կարելի է համարել նաև միջգիտական համանունություն, քանի որ «բազմիմաստությունը այնքան է հեռանում, որ հանգում է համանունության»⁹:

Ասիմիլյացիա – Այս բառի արտահամակարգային բազմիմաստությունը ոչ հարակից բնագավառներում է՝ «1. (լեզվբ.) Առնմանում: 2. (քոք.) Ձուլում՝ մի ժողովրդի՝ մեկ ուրիշի մեջ ձուլումը: 3. (կենսբ.) Անաբուլիզ՝ բուսական և կենդանական օրգանիզմների արտաքին միջավայրից ընդունած պարզ տարրերի յուրացումը և փոխակերպումը ավելի բարդ նյութերի»¹⁰:

Բառը ծագում է լատիներեն assimilation-ից: Հայերենին անցել է ռուսերենի միջնորդությամբ: Լեզվաբանության մեջ վաղուց հաղթել է բառի հայերեն համարժեքը՝ *առնմանում* / *առնմանություն*, հնչյունափոխության տեսակ. հնչյունական շղթայում որևէ հնչյունի ազդեցությունը մյուսի վրա՝ նմանեցնելով կամ նույնացնելով իրեն:

Քաղաքագիտություն - Այս տերմինահամակարգում *ձուլում* և *ասիմիլյացիա* տերմինները գործածվում են հավասարապես, այսպես՝ Ալբերտ Նալչաջյանը գրում է «Հաջորդ շարադրանքում մենք որպես հավասարազոր հասկացություններ կօգտագործենք և՛ «ձուլում», և՛ «ասիմիլյացիա»

մի մասը՝ դիվիդենդների տեսքով»: Դ.Ջհանգիրյան, *Բանկային տերմինների բացատրական բառարան*, Ե., 2003, 20:

⁹ А.Реформатский, *Введение в языковедение*, М., 1967, с. 88.

¹⁰ Տե՛ս Ա. Հայրապետյան, նշվ. աշխ., 55:

տերմինները (Ա.Նալչաջյան, Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001): Այլ օրինակներ՝ «Մշակութային *ասիմիլյացիա* (կամ ակուլտուրացիա). սա էթնիկական փոքրամասնության մշակույթի փոփոխությունն ու հարմարեցումն է տիրապետող էթնոսի մշակույթին, որն անվանում են նաև «միջուկային մշակույթ» (Ա.Նալչաջյան, նույն տեղում): «Կառուցվածքային *ասիմիլյացիա*, նոր էթնոսների անդամների ներթափանցում տիրապետող էթնոսի կազմակերպությունների մեջ՝ ընդհուպ մինչև առաջնային խմբերի մակարդակը» (Ա., Նալչաջյան, նույն տեղում): Ինչպես նկատելի է, *ասիմիլյացիա* տերմինով կազմվում են տարբեր մանրահամակարգեր՝ *մշակութային ասիմիլյացիա*, *կառուցվածքային ասիմիլյացիա* և այլն, որտեղ այն դառնում է տերմինային միջուկ:

Կենսաբանության մեջ իշխում է օտար՝ *ասիմիլյացիա* տերմինը՝ «նյութափոխանակության արգասիքներ, նյութափոխանակության միջանկյալ նյութեր, որոնք առաջանում են կենդանի բջիջներում և մասնակցում *ասիմիլյացիա*ի ու դիսիմիլյացիայի հետագա պրոցեսներին»¹¹:

Ինչպես տեսնում ենք, տարբեր՝ ոչ հարակից տերմինահամակարգերում գործառող *ասիմիլյացիա* տերմինը զարգացման ոչ միատեսակ գործընթաց է ունեցել. մի տերմինահամակարգում հաղթել է հայերենը, մյուս տերմինահամակարգում հայերենն ու փոխառյալը գործածվում են զուգահեռաբար, երրորդ դեպքում՝ կենսաբանության մեջ, առայժմ ավելի գործածական է օտար բառը:

Մոնիթորինգ / մոնիտորինգ: Բառը փոխառություն է անգլերենից: Հիմնականում գործածվում է քաղաքագիտության և տնտեսագիտության մեջ՝ «1. (քղք.) Ինչ-որ գործընթացի կամ վիճակի հետևելը: 2. (տնտսգ.) Դիտորդում՝ անընդմեջ վերա-

¹¹Ասիմիլյացիան (անաբոլիզմ) ապահովում է օրգանիզմների աճը, զարգացումը, վերափոխումը, էներգիայի աղբյուր ծառայող պաշարների կուտակումը: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Ե., 1974, հ.1, էջ 562:

հսկողություն տնտեսական գործընթացների նկատմամբ»¹²: Մոնիթորինգը գործընթաց է, որի միջոցով գնահատվում է ծրագրի կամ ծառայության իրականացումը դրանց՝ պլանի (պայմանագրի, բյուջեի, քանակական ցուցանիշների և այլնի) համաձայն կատարումը ստուգելու նպատակով¹³: Բառիմաստի ընդլայնման հետևանքով բառն սկսել է գործածվել նաև այլ գիտակարգերում՝ բնապահպանական (արտաքին միջավայրի, էկոհամակարգերի և ընդհանրապես կենսոլորտի փոփոխությունների երկարաժամկետ դիտարկումների համակարգ) և բարեվարքության (նախքան աշխատանքի ընդունվելը կամ աշխատանքի ընթացքում ձեռնարկվող միջոցներ, որոնք նպատակ ունեն գնահատել անձի հակումն ու հատկանիշը ազնիվ, ոչ ազնիվ կամ ոչ արդյունավետ վարքագծի հետ կապված»¹⁴:

Բերենք օրինակներ:

Քաղաքագիտություն - «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) հասարակական կազմակերպությունը մայիսի 2-ից մինչև հուլիսի 30-ը սկսել է իրականացնել ընտրական վեճերի լուծման դատական պրակտիկայի *մոնիթորինգ*» (Առաւօտ, 2007. 05): Տնտեսագիտություն - «Հետաքրքրվեցինք նաեւ, թե ինչպէս է ծախսվել կառավարության կողմից մշակութային նախարարությանը հատկացված 6 մլն դրամը, որը պիտի ծառայեր մարզերում մշակութային կյանքի վերաբերյալ *մոնիթորինգ* անցկացնելուն» (Առաւօտ, 2007.04.04): «Բացի այդ, ասֆալտապատումն ավարտելուց հետո սովորաբար անցկացվում է աշխատանքների *մոնիթորինգ*» (Հայկական ժամանակ, 2006.09.28): «Մեր հանձնաժողովը կունենա մոնիթորինգային գործընթաց» (Միքայել Մելքումյան, «Էպիկենտրոն», 31. 10. 2019):

¹² Ա. Հայրապետյան, նշվ. աշխ., էջ 373:

¹³ Տե՛ս *Բարեվարքության եզրույթների բառարան* (թարգմ.՝ Նարինե Ալեքսանյան), Ե., 2016, էջ 49:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

Ընդ որում, *մոնիթորինգ* տերմինը կարծես ապատերմինացման գործընթացի մեջ է. հմմտ. «Եթե *մոնիթորինգ* անցկացվի (և, կարծում եմ, որ կանցկացվի) կպարզվի, որ մասսայական լրատվամիջոցներում մյուս բոլոր թեկնածուները հայտնվել են ոչ հավասար պայմաններում» (Իրավունք, 2003. 01):

Մոնիթորինգ փոխառյալ բառի դիմաց արդի հայերենում գործառում են *դիտարկում* (դիտորդում) կամ *մշտադիտարկում* բառերը: Վերջերս մամուլում և հեռուստատեսությունում հաճախական է դարձել *մշտադիտարկում*-ը, որը ցույց է տալիս՝ *դիտարկում*-ն սկսել է գործածվել որպես սերող հիմք, և նրանով կարող են բաղադրվել նոր տերմիններ, հմմտ. «ՄԻՊ-ն ամփոփել է մշտադիտարկման արդյունքները» (« Լուրեր», 1-ին ալիք, 14.10. 2019):

Ժամանակի ընթացքում *մոնիթորինգ* - *մշտադիտարկում* (*դիտարկում*) զուգահեռ գործածությամբ տերմինազույգից հաղթանակով է դուրս եկել հայերեն համարժեքը (թեև մամուլում և հեռուստատեսությամբ երբեմն գործածում են *մոնիթորինգ*-ը):

Նախընտրելի պետք է համարել *մշտադիտարկում* (դիտարկում) տերմինը, որը չեզոք է, պատճառաբանված և հասկանալի լեզվակիր հանրությին:

Համառոտագրություններ

դվնգ. – դիվանագիտություն

լեզվբ. – լեզվաբանություն

կենսբ. – կենսաբանություն

տնտսգ. – տնտեսագիտություն

քղք. – քաղաքագիտություն

ֆին. – ֆինաանսական

Papikyan Silva – Terminological observations (Terminological extra-systemic polysemy). - In the social sciences there are many borrowed terms used in parallel in different terminological systems. They have acquired a status of separate unit and are in systemic relationship with

other members of the given mini system, i. e. they are manifestations of terminological extra-systemic polysemy. The phenomenon, which is the result of the development of social-political life, science and culture, exists both in related and non-related fields.

We have distinguished the terms *action*, *assimilation*, *monitoring*, which extra-systemic polysemy is in non-related fields. Each of these words has had its own meaning development process.

Папикян Сильва – Терминологические наблюдения (Терминологическая внесистемная многозначность). - В общественных науках существуют много заимствованных терминов, используемых параллельно в разных терминологических системах. Они приобрели статус отдельной единицы и находятся в системной связи с другими членами данной микро-системы, т.е. они являются проявлениями терминологической внесистемной многозначности. Феномен, являющийся результатом развития общественно-политической жизни, науки и культуры, встречается как в смежных, так и в несвязанных сферах.

Мы рассмотрели термины *акция*, *ассимиляция*, *мониторинг*, которые являются проявлениями внесистемной многозначности в несвязанных сферах. Каждое из этих слов имело свой собственный путь смыслового развития.

«ՎԱՀԱԳՆԻ ԵՐԳ»-Ի ԱՆԱԳՐԱՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Ֆերդինանդ դը Սոսյուրը, քննելով հնդեվրոպական (հատկապես հին հնդկական, իրանական, հունական և լատինական) բանաստեղծական լեզվի առանձնահատկությունները, ցույց է տվել, որ նրանում գործել է մի կարևորագույն սկզբունք. բանաստեղծության մեջ հնչյունների և հնչյունախմբերի կրկնությամբ գաղտնագրվել է անունը այն աստծու կամ հերոսի, որին վերաբերվում է այդ տեքստը¹:

Հայոց ավանդույթում հնդեվրոպական տաղասացության դրսևորումներին ընդգրկուն կերպով անդրադարձել է Սարգիս Հարությունյանը²: Հին հայկական բանաստեղծության մեջ այս համատեքստում առավել մանրամասնությամբ ուսումնասիրվել է Խորենացու մոտ պահպանված Վահագն աստծու ծնունդը պատմող հին հեթանոսական հիմքը՝ «Վահագնի երգը», որը համարվել է հնդեվրոպական բանաստեղծություն-

¹Starobinski J., *Les mots sous les mots. Les anagrammes de Ferdinand de Saussure*, Paris, 1971, p. 35-39, 59-60, 126-127; Сосиур Ф. де 1977, *Труды по языкознанию*, М., с. 639-645; Гамкрелидзе Т. В., Иванов В. В. 1984, *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси, с. 837-839; Иванов В. В. 1999, *Теория анаграмм в индоевропейском стихе, Избранные труды по семиотике и истории культуры*, т. 1, М., с. 617-627: Ահա մի քանի օրինակ. Հոմերոսի հետևյալ տողում՝ ὄρσας ἀργαλέων ἀνέμων ἀμείγατον αὐτμήν («Ողիսական» XI.400) ակնարկվում է Ἀγαμέμνων (Ագամեմնոն), Սցիպիոն Մորուքավորի դամբարանի լատիներեն սատոտնական բանաստեղծության *Taurasia Cisauna Samnio cepit* տողում՝ *Սցիպիոն (Scipio), իսկ «Ավեստայի»* *vīspā tā pərəsəṣ yaθā ašāt hacā gəm vīdaī* տողում (Յասնա, 51.5) *Vištāspa* (Վիշտասպա) անունները:

²Հարությունյան Ս. *Հնդեվրոպական տաղաչափության մի քանի առանձնահատկությունների դրսևորումները հայ հին բանաստեղծության և բանահյուսության մեջ*, Պատմաբանասիրական հանդես, 1987, N4, էջ 48-60:

թյան առավել վառ արտահայտված օրինակներից մեկը³:

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ուներ,
Բոց ուներ մօրուս, •
Եւ աչկունքն էին արեգակունք:

Այստեղ ամեն ինչ շնչում է հնդեվրոպական վաղնջականությամբ՝ և՛ երկնքի, երկրի ու ծիրանի ծովի կողմից ծնունդ առնող աստվածը (ի միջի այլոց, Ռիզվեդայում այդպես՝ երկնքից, երկրից ու ջրից է ծնվում կրակի աստված Ագնին)⁴, և՛ աստծու հուր՝ հրակարմիր մորուքը (բնորոշ հնդկական, սլավո-

³Иванов В. В., *Использование для этимологических исследований однокоренных слов в поэзии на древних индоевропейских языках*, *Этимология*, 1967, М. 1969, с. 47-56; 1983; Топоров В. В., *Об отражении одного индоевропейского мифа в древнеармянской традиции*, *Историко-филологический журнал*, 1977, N 3, с. 100-103; Հարությունյան Ս., նշվ. աշխ., 53-54. Պետրոսյան Ս. «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, N4, 78-88. Նույնի՝ *Արեգակի առասպելաբանական ըմբռնման արտացոլումը Թումանյանի և Չարենցի երկերում*, Չարենցյան ընթերցումներ Գյումրիում, Գյումրի, 1997, 108-122, Petrosyan A., *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington DC, 2002, p. 34-36. Ivanov V. V. *A Probable Structure of a Protoform of the Ancient Armenian Song of Vahagn*, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 2011, N 6/1, 7-23. Վահագնի երգի և հնդեվրոպական բանաստեղծության ակնառու նմուշներ համարվող հին հնդկական հիմների ընդհանրությունների մասին տե՛ս հատկապես Эмин Н. О. *Вахагн-Вишапаках՝ армянской мифологии есть Индра-Vritrahan Риг-Веды*, *Исследования и статьи Н. О. Эмина*. М., 1986, с. 61-84. Աբեղյան Ս., *Երկեր*, հ. Ս, Երևան, 1966, էջ 81-82.

⁴Petrosyan Ս., նշվ. Աշխ., էջ 38:

նական, բալթիկ և սկանդինավյան ամպրոպի աստվածներին)⁵, և՛ արևը որպես «աստծու աչք» պատկերացումը (ինչպես հունական ավանդույթում Հելիոս-արևը կարող է համարվել «Ջևսի աչք»): Հիմնի առաջին տողերի աչքի ընկնող առանձնահատկությունը *երկ*-վանկի բազմակի կրկնությունն է, որն ակնարկում է *երկու* բառը և երկնքի ու երկրի՝ տիեզերական մեկ ամբողջության երկու մասերը համարելու պատկերացումը: Ակնհայտ է, որ շեշտվում է երկվության գաղափարն գաղափարն ընդհանրապես և, հաշվի առնելով առասպելաբանության մեջ երկվորյակ աստվածությունների ու հերոսների լայն տարածվածությունը, կարելի է կարծել, որ այստեղ ակնարկ կան երկվորյակության վերաբերյալ: Մյուս կողմից, հայերենում այս *երկ*-ը այսպես թե այնպես հանգում է հնդեվրոպական *dw-ին, և, քանի որ հիմնը պատմում է աստծու ծննդյան մասին, այդ վանկի կրկնությունը կարող է դիտվել նաև որպես հնդեվրոպական լեզուներում «լուսավոր երկնքի/արևի աստված», «աստված» նշանակություններով հանդես եկող և d ու w/u հնչյունները պարունակող բառերի անագրամ, հմմտ. *deiwos «աստված», *dyēus ph₂ter «լուսավոր երկնքի հայր աստված», «լուսավոր երկինք» և «ցերեկային լույս» նշանակող *dyeu-արմատից⁶:

Հայկական առասպելաբանության մեջ դիցաբանական երկվորյակները հանդես են գալիս մի քանի տարբերակներով (Երվանդ-Երվազ, Սանասար-Բաղդասար, Մամիկ-Կոնակ են)⁷, որնցից հանրահայտը և առավել վառ արտահայտվածը «Մասնա ծոերի» Սանասարը և Բաղդասարն են: Սանասարը հին ամպրոպի աստծու վիպական ժառանգն է⁸, իսկ նրանց մոր՝

⁵ West M. L. *Indo-European Poetry and Myth*, Oxford, 2007, p. 246-247.

⁶ Երկին «երկինք» բառի՝ հնդեվրոպական նույնարմատ *d(i)ui-n- նախաձևից հավանական ծագման մասին տե՛ս Ջանիկյան Գ. *Հայերեն ստուգաբանական բառարան*, Երևան, 2010, էջ 227:

⁷ Հարությունյան Ս. *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, 2000, էջ 338-355:

⁸ Աբեղյան Ս., *Նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 414-418, հ. Է, էջ 72-73:

Ծովինարի անունը բարբառներում նշանակում է «փայլակ, կայծակ», և հերոսուհին ինքն էլ այդ երևույթների մարմնավորումն է, ամպրոպի աստծու կանացի համապատասխանությունն ու զուգակիցը: Բանահյուսության մեջ նա հանդես է գալիս որպես երկնայինմի դիցուհի, որն ամպրոպի ժամանակ «խաղում» է ամպերի մեջ իր հրեղեն ձիու վրա, իսկ որոտն ընկալվում է որպես նրա ձիու սմբակների դոփշուն⁹:

Ծովինարը այլապես կոչվում է Ծովյան (Էպոսում՝ Ծովյալ), նա հղիանում է երկվորյակներով ջուր խմելով ծովային հրաշափուխ աղբյուրից, իսկ Էպոսի հերոսները՝ Մանասարը և նրա զարմը իրենց անվանում են «ծովային»¹⁰: Մի շարք տարբերակներ ունեցող հայկական մի հանելուկում անձրևաբեր ամպը և նրա որոտը ներկայացված են որպես մի վիթխարի երկնային կով և նրա բառաչ:

Կով մի ունիմ հանա-հանա,

Կոտոշները Մարխանա,

Կաթնաղբյուրեն ջուր կրխմա

Արյունածովեն ձեն կըհանա¹¹:

Հին Փոքր Ասիայում, Միջագետքում և բազում հնդեվրոպական, ավանդույթներում ամպրոպի աստծու զխավոր սիմվոլն էր ցուլը: Ուրեմն, կովն այս հանելուկում կարող է դիտվել որպես աստծու իգական զուգորդի՝ ամպրոպային դիցուհու սիմվոլը: Իսկ ըստ ժողովրդական պատկերացումների, «արյունածովը» կամ «արյուն ծովը» գտնվում է ամպերում՝ երկնքի և երկրի միջև և այլ կերպ կոչվում է «ծիրանի ծով»: Դա երկնային տիեզերական ծովն է ամպրոպի ժամանակ, ամպրոպի աստվածության և նրա հակառակորդների մարտա-

⁹Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, հ. է, Երևան, 1975, էջ 70-72:

¹⁰Մասունի հերոսների՝ ծովի և ջրի հետ ունեցած կապի վերաբերյալ տես Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 406-409:

¹¹Հանելուկի քննարկումը Ծովինարի կերպարի առնչությամբ տե՛ս Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 77, հ. է, էջ 66. Հարությունյան Ս. *Հայ առասպելաբանություն*, էջ 80-82:

դաշտը, բայց նաև արշալույսի ծիրանագույն երկինքը¹²: Էպոսում հաճախ հիշատակվում է Սասնա լեռների կաթնաղբյուրը, որից, մարտի գնալուց առաջ, ջուր են խմում և հզորանում Սանասարի ժառանգներ Մհերն ու Դավիթը: Առասպելական տրամաբանությամբ Սասնա դյուցազուններին հզորացնող այս ջուրը պետք է նույնական լիներ իրենց նախահայրերին ծնած ջրին¹³: Այսպիսով, այս հանելուկի կովը ներկայացնում է Օովինարի կենդանական սիմվոլը:

Օովինար անունը հայագիտության մեջ միարժեք ստուգաբանություն չունի: Իհարկե, վիճելի է անվան միայն երկրորդ մասի ծագումը: Ըստ Աբեղյանի, Օովինարը Օովյանի ածանցյալն է, -ար ածանցով¹⁴, ըստ Աճառյանի, այն «թերևս կազմված է» հայ.ծով և արաբ. nār «հուր» բառերից¹⁵, ըստ Ղափանցյանի՝ նարը ջրային ոգու անվանում է, ինչպես և Օովյանի ալը¹⁶: Մյուս կողմից, Օովինարի երկրորդ մասը համադրելի է խեթական աղբյուրներում հիշվող հնագույն փոքրասիական Ինարա դիցուհու՝ ամպրոպի աստծու դստեր անվան հետ¹⁷: Անկախ ամեն ինչից, Օովինարը, թեև որպես անձնանուն մեզանում վկայված է միայն 17-րդ դարի սկզբներից, այն հին, դիցաբանական ծագում ունի, և դժվար է պատկերացնել, թե ինչու պիտի բարբառներում փայլակն ու կայծակը կոչվեին հայերենում այլ հետքեր չթողած արաբերեն նար «հուր, կրակ» բառի միջոցով, կամ Օովյալը (որը Օովյանի

¹²Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, հ. Ա, էջ 80-81, հ.Է, էջ 66. Ը, 111. Հարությունյան Մ., *Հայկական առասպելաբանություն*, էջ 80-81. տե՛ս և Մարտիրոսյան Հ., *Լեռնային ակունքի ֆառնը, արշալույսի դիցուհին և գլխի ու մորթու զոհածեսը վիշապակոթողների իմաստաբանական հենքում*, Վիշապ քարակոթողները, Երևան, 2015, էջ 159:

¹³Հարությունյան Մ., *Հայ առասպելաբանություն*, էջ 80:

¹⁴Աբեղյան Մ., *նշվ. աշխ.*, հ. Է, էջ 71-72:

¹⁵Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան*, հ. Բ, Երևան, 1944, էջ 573:

¹⁶Капанцян Г. А., *Историко-лингвистические работы*, т. 1, Ереван, 1956, с. 295-300.

¹⁷Petrosyan A., *նշվ. աշխ.*, էջ 6-7:

մի ձևափոխությունն է), ծագեր «ծովի ալից», ուր *ալը* ծննդկաններին ու մանուկներին վնասող չար ոգիների անվանումն է¹⁸:

Ծիրանի ծով անվանումը կազմված է միայն Ծովինար անվան հնչյուններից. ընդ որում, եթե *ծովն* ուղղակի ներկայացնում է Ծովինարի առաջին մասը, ապա *ծիրանին* պարունակում է մեկական հնչյուն անվան առաջին ու երկրորդ վանկերից և երկրորդ վանկի շրջված ձևը (*ծ-ի-րան*): Առասպելաբանական տրամաբանությամբ անվանումների այս նմանությունը կապ կարող է ակնարկել նրանցով նշանակվող երևույթների միջև: Եվ ակնհայտ է, որ Ծովինարը հանդես է գալիս ոպես ծիրանի ծովի դիցաբանական՝ անձնավորում¹⁹: Ըստ այդմ, «Վահագնի երգի» երկրորդ տողը՝ *երկնէր և ծովն ծիրանի* միանգամայն համապատասխանում է Էպոսի երկվորյակների ծննդին. երկնում է ծիրանի ծովը, որի անձնավորումը Ծովինարն է: Բայց ակնհայտ է նաև, որ *ծովն ծիրանին* ոչ միայն անձնավորվում է Ծովինարով, այլ այստեղ հանդես է գալիս որպես Ծովինարի անվան սուսյուրյան անագրամ՝ անվան ակնարկ, գաղտնագիր²⁰: Ավելին, Ծովինար անունը գաղտնագրված է նաև երգի երրորդ տողում՝ *երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ*, որտեղ աստծուն ծնող *կարմրիկ եղեգնիկը* հանդես է գալիս որպես Ծովինարի արդեն բուսական սիմվոլ, իսկ *ծով* և *կարմրիկ* բառերը, որտեղ բոլոր հնչյունները, բացի ու-ից և կ-ից, կազմում են Ծովինարի անագրամը, ակնարկում են նաև կարմիր՝ *ծիրանի* կամ *արյուն ծովը*:

Ընդհանրապես, «Վահագնի երգ»-ի բոլոր հատվածներում կան կրկնվող հնչյունախմբեր, որոնք, պետք է կարծել, որ պատահական չեն, և հնարավոր է այնտեղ գտնել այլ սուսյուր-

¹⁸Ալերի վերաբերյալ տե՛ս Աբեղյան Ս., *նշվ. աշխ.*, հ. է, էջ 95-97: Ասատրյան Գ., *Miscellanea Demonologica*, Իրան-նամե, N 4-5, 31-32, գրականությամբ:

¹⁹Հարությունյան Ս., *Հայ առասպելաբանություն*, էջ 80: Petrosyan A. *նշվ. աշխ.*, էջ 14:

²⁰Պետրոսյան Ա., *Տիգրան Մեծի առասպելաբանական կերպարը*, Պատմաբանասիրական հանդես, 2008, N 2, էջ 163:

յան անագրամներ: Վահագնը իրանական անուն է, իսկ ի՞նչ է եղել այդ երգի հին, բնիկ աստծու անունը՝ հայտնի չէ: Երգում ներկայացվող աստվածը, ըստ ուսումնասիրողների մեծամասնության, ամպրոպային հատկանիշներ է ունեցել, և եթե երգը հնդեվրոպական բանաստեղծության մի վառ նմուշ է, ապա աստվածն էլ պիտի որ հնդեվրոպական ծագում ունենար: Չմտնելով վերականգնությունների և ստուգաբանությունների մանրամասների մեջ, ասենք, որ հնդեվրոպական ամպրոպի աստծու անունը կարող է վերականգնվել ըստ բալթիկ և սլավոնականամայրոպի աստվածների անունների (լիտվ. *Perkūnas*, լատվ. *Pērķōns*, ռուս. *Перунъ*, հմատ. և հնդ. *Parjanya* և իսլ. *Fjorgynn* դիցանունները): Այս անունները կարող են մեկնաբանվել որպես «հարվածող, զարկող», հնդեվրոպական *per- «զարկել, խփել» արմատից (որից հայ. *հար-* «զարկել», հմատ. և *հարուած*): Բալթիական ձևերում արմատին ավելացել է k՝ աճականը, ինչպես հայերենում ունենք *հարկանել*, *կ* (հնդեվրոպական *g) աճականով²¹: Կարելի՞ է նման անունների հետքեր գտնել «Վահագնի երգում»: Այսպես, սլավ. Պերունի հայերեն ստուգաբանական գուգահեռը կարող էր լինել *Հերուն*, հմատ. երգի յոթերորդ տողը *նա հուր հեր ունէր*, որը տեսականորեն կարելի է պատկերացնել որպես ուղղակի «նա հուր *Հերուն* էր»: Բալթիական ձևերի համար վերականգնվում է *Perkunos նախաձևը, որը հայերենում կտար **Հերգուն*, կամ, հաշվի առնելով, որ հայերենում *per- արմատը հայտնի է -կ աճականով (հմատ. *հարկանել* «զարկել, ծեծել»), գուցե և Հերկուն: Իներորդ տողի *աչկունք* «աչիկներ» և *արեգակունք* բառերը պարունակում են *կուն* հնչյունախումբը, որը նախորդ տողերի *հուր հեր* և *ունէր* բառերի, ինչպես և ողջ տեքստը

²¹Puhvel J., *Comparative Mythology*, Baltimore, London, 1987, p. 226. Հնդեվրոպական ամպրոպի աստծու մասին տե՛ս և Иванов В. В., Топоров В. Н. *Исследования в области славянских древностей*, М., 1974, 4-30. West M. L. *Կշի.* Էջ238-251:

բնորոշող *երկունքի* գաղափարի հետ կարող էր ակնարկել **Հերկուն*, գուցե և **Հերգուն* ձևերը:

Ըստ Վ. Իվանովի և Վ. Տոպորովի, հնդեվրոպական ամպրոպային առասպելում աստծու հակառակորդ օձ-վիշապի անունը կազմվում է **wel-*, իսկ աստծու՝ նրան խփելու, սպանելու գործողությունը՝ **g*hen-* արմատներով²²: Սրանց առաջինի հայերեն ժառանգն է *գեղ*-ը, որով հնում, մինչև իրանական *վիշապ* բառի փոխառությունը, կոչվել է առասպելական օձ-վիշապը (հմմտ. *վիշապ* քարակոթողների ամենամեծ կուտակման շրջանի Գեղամա, Գեղարքունի, Գեղի և մյուս նման տեղանունները, ինչպես նաև՝ վրաց. *gveli* «օձ» բառը, որը պետք է փոխառություն լիներ հնագույն հայերենից, երբ դեռ հնդեվրոպական *w-*ն գտնվում էր հայ. *գ* դառնալու կես ճանապարհին՝ **g* > **gw* > *g*)²³, իսկ երկրորդինը՝ *գան* «ծեծ», *գանել* «ծեծել, հարվածել» բառերը: Եվ Ինդրայի *Vṛtrahan* «Վրտրա օձ-վիշապին խփող/սպանող» մակդիրը, ի վերջո այդ բանաձևի մի արտացոլումն է: Այդ նույն բանաձևի իրանական հնագույն ձևերն են *Vr̥θragna-*ն և *Vərəθrayna-*ն, որոնց միջին իրանական մի տարբերակից է փոխառված հայ. *Վահագն*²⁴: Ըստ այդմ, ամպրոպային առասպելի հիմնական գործողությունը հայերենում կարող էր կոչվել *գեղ-ա-գան* բանաձևով, որի անագրամը կարելի է ենթադրել երգի չորրորդ և հինգերորդ տողերի *եղեգան* բառում, որտեղ առկա են նրա բոլոր հնչյուն-ները: Նկատենք նաև, որ *եղեգան*-ը որոշ չափով հիշեցնում է նաև Վահագն անունը:

²²Иванов В. В., Топоров В. Н., *նշվ. աշխ.*, էջ 31-75, 101:

²³Петросян А. Е., *Отражение индоевропейского корня *uel- в армянской мифологии*. Вестник общественных наук, 1987, N 1, с. 56-70. Petrosyan A. *Indo-European *wel- in Armenian mythology*. Journal of Indo-European studies, 2016, 1-2, p. 129-146: Պետրոսյան Ա. *Հին հնդեվրոպական օձ-վիշապը հայկական ավանդույթում և վիշապքարակոթողները, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին*, Երևան, 2019, 146-156:

²⁴Աճառյան Հ., *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ե, Երևան, 1962, էջ 8:

Ի միջի այլոց, քննարկված հանելուկում ներկայացվող պատկերը ևս կարող է կապվել «Մասնա ծոերի» հետ: Այսպես, *մարխանա*-նկարող է մեկնաբանվել որպես *Մարր* «Եգիպտոս» և թուրք. *խանա* «տուն», այսինքն՝ «Եգիպտական տուն, Եգիպտոս», որը Օռվինարի հետնորդ Մասնա դյուցազունների գլխավոր հակառակորդների երկիրն է (հանելուկում հնարավոր է բաղարկություն *մտուր* բառի հետ): Իսկ *հանա*, *հանա* «գուշակիր» իմաստով կրկնությունը (հմմտ.բարբառային *հանք* «հանելուկ» և *հանել* «հանելուկը լուծել») կարող է դիտվել որպես հայ. *հան(ի)* «տատ, մեծ մայր» (հնդեվրոպական *h₂en-) բառի ակնարկ: Խեթական դիցաբանության մեջ ամպրոպի աստծու մայրն էր նույն *h₂en- արմատի կրկնությամբ կոչվող H₂annahanna դիցուհին²⁵: Հիշենք, որ Օռվինարը Մասնա վիպական հերոսների նախամայրն է՝ «մեծ մայրը», իսկ նրա որդի Սանասարը՝ ամպրոպի աստծու վիպական փոխակերպումը: Ըստ այդմ, պատահական չի թվում Օռվինարի և Ինարա դիցուհու անունների վերնում նշված նմանությունը, որը կարող է մատնանշել Օռվինարի հնագույն, մինչև խեթական ժամանակներ հասնող ծագումը:

Armen Petrosyan- On the Anagrams of the “Song of Vahagn”.- Ferdinand de Saussure, while studying the special nature of the Indo-European poetic language, discovered that it acted in accordance with a principle: the name of the god or hero is referred to in the text by repeating its sounds and sound combinations. In this context, in ancient Armenian poetry the hymn on the birth of the god Vahagn, the “song of Vahagn” was especially studied (V.V. Ivanov, V.N. Toporov, S. B. Harutyunyan, et al.). This article proposes that the repeated sound combination *erk* is to be considered an anagram of the word *erku* “two” with an allusion to twinnies, and in the words *cov cirani* “purple sea” may be seen an anagram of the name of Covinar, the

²⁵ Haas V., *Geschichte der hettitischen Religion*, Leiden, New York, Köln, p. 323-324, 433.

mythological personification of the heavenly purple sea and the mother of the first twin heroes of the epic "Daredevils of Sasun".

Армен Петросян – "Об анаграммах «Песни Вахагна",- Фердинанд де Соссюр, изучая специфику индоевропейского поэтического языка, обнаружил, что в нем действовал принцип, согласно которому в тексте повторами звуков и звукосочетаний передавался имя бога или героя о котором говорится в тексте. В древнесармянской поэзии в этом контексте особенно тщательно был изучен гимн о рождении бога Вахагна – «песня Вахагна» (В. В.Иванов, В. Н. Топоров, С. Б. Арутюнян и др.). В настоящей статье предлагается многократные повторы в гимне звукосочетания *erk* рассмотреть как анаграмму слова *erki* «два» с намеком на близнечность, а в выражении *sov sirani* «пурпурное море» увидеть анаграмму имени *Sovinar*, мифологической персонификации пурпурного небесного моря и матери близнецов, первых героев эпоса «Сасунские безумцы».

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱԶՍՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Հայերենի բառակազմության քննությանը շատ հետազոտողներ են անդրադարձել: Բառակազմության ուսումնասիրությանը նվիրված բաժիններ կան բուհական և դպրոցական դասագրքերում, ասպարեզում կա Ս. Գալստյանի «Դպրոցական բառակազմական բառարանը»: Առանձին հետազոտողներ անդրադարձել են նաև հայերենի զարգացման տարբեր փուլերի բառակազմության առանձնահատկություններին և խնդիրներին: Թվում է՝ հայերենի բառակազմությունը լիովին ուսումնասիրված է, սակայն, դեռևս 2013 թվականից զբաղվելով բառակազմության ձևային նկարագրության խնդիրներով, բազմիցս առնչվել ենք հայերենի բառակազմության խնդրահարույց հարցերի: Դրանք կապված են ոչ այնքան ձևայնացման սկզբունքների մշակման, համակոդմանիության, ճշգրտության հետ, որքան մասնագիտական գրականության մեջ առկա տարակարծությունների և նորմատիվ ձեռնարկների բացակայության հետ: Խնդրահարույց հարցերը շատ են, սույն հոդվածի շրջանակներում անդրադառնում ենք մի քանիսին:

• *Եվ, ու շաղկապների բառակազմական դերի և բնորոշելու հարցը:*

Եվ, ու շաղկապները, հայտնի է, որ կազմում են բաղիյուսական հարադրություններ, երբեմն էլ՝ դրանց բաղադրիչների կցումով՝ կցական բարդություններ: Ինչպես, օրինակ՝ աղուհաց, անցուդարձ, առնտուր, երթենկ, նիստուկաց ևն: Բառի

¹ Հետազոտությունն իրականացվել է «Գալուստ Կիլպենկեան» հիմնադրամի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 216671 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

կրկնությամբ կազմված կցական բարդություններում բաղադրիչ բառերը կապվում են շաղկապով, հոդակապով կամ նախդիրով: Ինչպես, օրինակ՝ *լիուլի, մերթընդմերթ, մեծամեծ, նորանոր, գույնզգույն*: Իսկ եթե նկատի ունենանք, որ «հոդա-կապը երկրորդական քերականական ձևույթ է, և հանդես գալով բառի մեջ՝ կապակցում է նրա բաղադրիչները»², ձևականորեն վերացնում բարդության բաղադրիչների շարա-հյուսական կապը՝ մթագնելով կամ անհնարին դարձնելով բառաբաղադրիչի բառային էությունը, ապա հարց է ծագում. արդյո՞ք կապակցական նույն դերը չեն կատարում *ու, և* շաղկապները և *ա* հոդակապը:

Ս. Գալստյանն իր բառակազմական բառարանում *ու* շաղկապն առանձնացնում է այնպես, ինչպես *ա* հոդակապը, սակայն՝ փոքր-ինչ այլ է *և* շաղկապի տարանջատումը³: Օրինակ՝

[(ադ)ու(հաց)]ա(կեր)

(ինչ)(ն)(ե)

(երթ)(ն)(եկ)

Կարծում ենք՝ բառակազմական քննություն անելիս չպետք է հաշվի առնել *և, ու* շաղկապների խոսքիմասային դերը. դրանք պետք է դիտարկել որպես գործառական ձևույթներ, այն է՝ հոդակապ, ինչպես *ա*-ն: Բառակազմական տեսակետից դրանք նույնարժեք են և բառակազմական նույն դերն ունեն:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Ս. Գալստյանի բառակազմական բառարանում *ե* կապակցող մասնիկը բոլոր օրինակներում (սերող հիմքի *ի* վերջնահնչյունի և *ա* հոդակապի միավորումը, նախնական *ե* կամ *յա* ածանցի՝ հիմքին կցվելը, գրաբարյան բացառական հոլովով կրկնավորները ևն) ներկայացվում և տրոհվում է նույն ձևով, սակայն

² Ա. Մուքիսյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 2004, էջ 223:

³ Տե՛ս Ս. Գալստյան, *Դպրոցական բառակազմական բառարան*, Ե., 2011:

կարծում ենք, որ սերող հիմքի *ի* վերջնահնչյունի և *ա* հոդակապի միավորումով կազմված բարդությունները տրոհելիս *ե*-ն պետք է դիտարկել սերող հիմքի հետ, այսինքն՝ տրոհել ոչ թե (*գին*)(*ե*)(*վաճառ*) ձևով, այլ՝ (*գինե*)(*վաճառ*), քանի որ *ե*-ն պատկանում է սերող հիմքին:

• Գրաբարյան նախդիրների բառակազմական դերի և բնորոշելու հարցը:

Ինչպես գիտենք, գրաբարյան *առ*, *գ*, *ընդ*, *ըստ*, *ի*, *ց* նախդիրները, ժամանակակից հայերենում չունենալով քերականական համապատասխան կարգ, կորցրել են իրենց դերը, հանդես են գալիս իբրև բարդության բաղադրիչներ: Իսկ թե ի՞նչ տիպի բաղադրիչներ են, լեզվաբանական գրականության մեջ հստակ չէ: Ոմանք համարում են հիմնական ձևայիններ, ոմանք՝ երկրորդական: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են հետևյալ բնորոշումները՝ *նախդիր*, *ածանց*, *բառակազմական բաղադրիչ*, *նախամասնիկ*: Օրինակ՝ Ս. Գալստյանն իր բառակազմական բառարանում այս նախդիրները տարբեր կերպ է տրոհում. մի կողմից՝ *ընդ* նախդիրն առանձնացնում է որպես արմատական ձև, մյուս կողմից՝ մյուս նախդիրները ներկայացնում է որպես ածանցական ձևեր: Ինչպես, օրինակ՝

(*ընդ*)(հանուր),

(*ընդ*)[(*զծ*)ել],

առ(ավել),

(*գույն*)[(*գ*ույն)],

(*տար*)(*ե*)[(*ց*տարի)],

ի(*գուր*):

Եթե ընդունենք, որ «բառի հիմնական կամ արմատական ձևությամբ բառի նվազագույն, պարտադիր այն մասն է, որ պարունակում է բառի հիմնական բառական իմաստը»⁴, իսկ «երկրորդական են կոչվում այն ձևությամբ, որոնք արտահայտում են բառակազմական (ածանցային) կամ ձևակազմական

⁴ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 221:

(քերականական) իմաստներ»⁵, ապա գրաբարյան նախդիրները պետք է համարել ածանցներ, քանի որ դրանք հանդես են գալիս որպես բառի կամ բառերի մասեր և զուրկ են ինքնուրույն բառային իմաստից:

Ավելին՝ գրաբարյան այս նախդիրները աշխարհաբարյան շրջանում բառակազմական կարևոր դեր են ունենում: Դրանցով կազմվում են բազմաթիվ նոր բառեր: Ինչպես, օրինակ՝ *առօրյա*, *առայժմ*, *առհասարակ*, *ընդհանուր*, *ընդմիջտ*, *ընդմիջել*, *զանցանք*, *խապառ* ևն:

Սակայն հարկ է նշել նաև, որ նախդրավոր կազմությունների ոչ բոլոր դեպքերը՝ կարելի է արդի հայերենում համարել ածանցավոր կազմություններ, ինչպես՝ զարդ, գերծ բառերը և դրանցով կազմված բարդությունները: Այստեղ պետք է հաշվի առնել նախդիրի և արմատի սերտաճման չափը և արդի լեզվաընկալմամբ դրանց տրոհելիությունը: Եթե նախդիրը որոշակիորեն գիտակցվում է որպես առանձին բաղադրիչ, իսկ արմատն էլ իբրև այդպիսին հանդես է գալիս այլ կազմություններում, ուրեմն գործ ունենք ածանցավոր կազմության հետ: Եթե նախդիրը և արմատը չեն տրոհվում և չեն գիտակցվում որպես բառակազմական միավորներ, կարծում ենք՝ նման կազմությունները պետք է դիտարկել որպես ոչ ածանցական:

• Բայական *-ել*, *-ալ*, *-իլ*, *-ուլ* մասնիկները տարբերակելու և բնորոշելու հարցը:

Ակնհայտ է, որ բայական *-ել*, *-ալ*, *-իլ*, *-ուլ* մասնիկները երկրորդական ձևույթներ են, սակայն մասնագիտական գրականության մեջ հստակ չէ, թե ինչ տիպի են՝ *բառակազմակա՞ն*, թե՞ *բառաքերականական*: Դպրոցական դասագրքերում ընդունված է դրանք համարել բառաքերականական, այսինքն՝ վերջավորություններ: Բուհական ձեռնարկներում տարբեր կարծիքներ են առկա: Այսպես, օրինակ՝ Ա. Սուքիաս-

⁵ Նույն տեղում, էջ 222:

յանը համարում է վերջավորություն, Ս. Գալստյանը՝ վերջածանց:

Եթե նկատի ունենանք, որ վերջավորություններով կազմվում են բառաձևեր, իսկ ածանցներով՝ նոր բառեր, ապա պետք է նշված մասնիկները համարել վերջավորություն՝ որպես անորոշ դերբայի ձևակազմական մասնիկներ: Մինչդեռ, մյուս կողմից՝ այս մասնիկները, միանալով գոյականին, կազմում են այլ խոսքի մաս, ինչպես օրինակ՝ *ջուր- ջրել, գիր - գրել, գրպան - գրպանել, երգ - երգել* ևն: Այս տեսակետից դիտարկելով իրավացի է Ս. Գալստյանը, որ այս մասնիկները դիտարկում է որպես վերջածանց⁶:

Այս մասնիկները երկակի բնույթ ունեն. դրանք կարելի է դիտարկել և՛ իբրև բառակազմական երկրորդական ձևույթներ, և՛ իբրև բառահարաբերական երկրորդական ձևույթներ, այն է՝ և՛ ածանց, և՛ թեքույթ: Հետևաբար՝ այս ձևույթները բառակազմական համակարգում դիտարկելիս պետք է համարել ածանցներ, այն է՝ վերջածանցներ: Դրանք երկրորդական ձևույթներ են, որոնք ծառայում են բառեր կազմելուն և մյուս բոլոր ածանցների նման ունեն կատեգորիալ իմաստ: Կարծում ենք, սակայն, որ այս մասնիկները, ածանց համարելով հանդերձ, պետք է ընդգրկել ոչ թե մյուս վերջածանցների կազմում, այլ կարելի է ընդգրկել *բայական ածանցների* շարքում, քանի որ սրանք էլ միայն բայի կազմում են հանդես գալիս:

• Հնչյունական կազմով համընկնող արմատների և ածանցների հարցը:

Ինչպես գիտենք, երբեմն արմատներն ու ածանցները կարող են համընկնել հնչյունական կազմով: Մակայն մասնագիտական գրականության մեջ հանդիպում են դեպքեր, երբ դրանց տարանջատումն այնքան էլ հստակ չէ: Այսպես, օրինակ Ս. Գալստյանն իր բառակազմական բառարանում առանձնացնում է նմանատիպ մի քանի դեպք. *գերագույն՝* արմատ,

⁶ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ.:

գերմարդ՝ նախածանց, համույթ՝ արմատ, համերգ՝ նախածանց
են⁷: Մակայն, մյուս կողմից՝ նախ-ով բոլոր բառերում նախ-ը
դիտարկում է որպես միայն արմատ: Մինչդեռ, Ա.
Սուքիասյանի բուհական ձեռնարկում նախ-ը ներկայացվում է
որպես մակբայական ծագում ունեցող նախածանց: Եվ այն
բոլոր բառերում, որոնցում արմատ էր դիտարկվում նախ-ը, այս
ձեռնարկում ներկայացվում է որպես ածանց, ինչպես՝
նախագահ, նախագիծ, նախաճաշ են:

Նմանատիպ մոտեցում կա նաև բաց-ի դեպքում. այն մի
դեպքում ներկայացվում է որպես արմատ⁸, իսկ մյուս դեպքում՝
ածանց⁹: Կարծում ենք՝ մասնագիտական խառնաշփոթը կա-
րելի է լուծել՝ հոգուտ ածանցական կիրառության, քանի որ
բառի ներքին ձևը չի բացահայտվում և չի գիտակցվում:
Մանավանդ որ ասպարեզում կան նմանատիպ դեպքեր, երբ
արմատը դառնում է ածանց, ինչպես, օրինակ՝ -գործ: Կամ
քերականական ձևայինները վերածվում են ածանցի, ինչպես,
օրինակ՝ -ի՝ աղի, -ք՝ զիրք են:

Հնչյունական կազմով համընկնելու դեպքեր կան նաև
ածանցների մեջ, ինչպես՝ -աց-ը: Մի դեպքում հանդիպում է
-աց-ով արտահայտված անցյալ կատարյալի հիմք՝ գնալ-գնաց,
աղալաղաց են, մյուս դեպքում՝ ն/ց՝ հերթագայությամբ
ձևավորված անցյալ կատարյալի հիմք՝ մոռանալ-մոռաց,
հեռանալ-հեռաց են, իսկ պատճառական բայերի կրավորա-
կանի դեպքում՝ ն-ի անկումով կրկին հանդիպում է -աց
բաղադրիչը՝ բարձրացնել-բարձրացվել, հեռացնել-հեռացվել
են: Այս ամենին զուգահեռ որոշ կազմություններում
հանդիպում է նաև գրաբարյան սեռական հոլովի -աց
վերջավորությունը, որը թեև արդի հայերենում հանդես չի
գալիս որպես կենսունակ միավոր, սակայն քարացած ձևերում

⁷ Մ. Գալստյան, նշվ. աշխ.:

⁸ Նույն տեղում, էջ 32:

⁹ Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 267:

շարունակում է գիտակցվել որպես առանձին միավոր՝ *կենաց, ձեռաց* ևն: Ս. Գալստյանի բառակազմական բառարանում, օրինակ, *մսադաց, դիմաց, գնացք, արագընթաց* ևն բառերի *-աց*-ը ներկայացվում է որպես ածանց: Այստեղից հարց է առաջանում բառակազմական վերլուծության դեպքում *-աց*-ը ի՞նչ համարել՝ ածանց, թե՞ հիմքակազմիչ մասնիկ:

Կարծում ենք՝ անցյալ կատարյալի հիմքը կազմող *-աց*-ը պետք է դիտարկել որպես բայական ածանց, իսկ գոյականակերտ *-աց*-ը՝ վերջածանց, քանի որ նմանատիպ բառերը արդի հայերենի լեզվամտածողությամբ, առանց լեզվաբանական կամ լեզվական վերլուծության, այլևս չեն գիտակցվում որպես բայական ծագում ունեցողներ: Ինչ վերաբերում է հերթագայությամբ ձևավորված կատարյալի հիմքին և պատճառական բայերի կազմում հանդիպող *-աց*-ին, ապա դրանք պետք է համարել ոչ բայական ածանցներ:

• Համաժամանակյա քննության ընթացքում բառակազմորեն տրոհվող և չտրոհվող միավորների հարցը:

Հայտնի է, որ որոշ բառեր, ինչպես՝ *դեղին, կարոտ, դալար, ընկեր, զգաստ, զգեստ* ևն, արդի հայերենին են ավանդվել լեզվի պատմության հնագույն շրջաններից, սակայն դրանց կազմությունը ժամանակի ընթացքում մթազնվել է: Ի վերջո այս բառերի կազմում եղած ածանցները դադարել են գիտակցվել որպես ածանցներ, ձուլվել են արմատին և միայն լեզվաբանական վերլուծությամբ են երևան գալիս: Այժմ արդի հայերենի լեզվամտածողությամբ հնարավոր չէ գիտակցել, տեսնել կամ նշմարել նշված բառերում եղած երբեմնի ածանցները: Մինչդեռ լեզվաբանական որոշ աշխատություններում, ինչպես նաև բուհական ընդունելության համար նախատեսված շտեմարաններում նշված և նմանատիպ բառերը տրոհվում են: Խորապես համոզված ենք, որ դրանց տրոհելիությունը պետք է դիտարկել միայն տարժամանակյա քննության ընթացքում, իսկ արդի հայերենի բառակազմության համա-

Ժամանակյա քննություն անելիս պետք է բացառել՝ հիմնվելով արդի լեզվազգացողության և լեզվամտածողության վրա:

Ամփոփելով նշենք, որ հայերենի բառակազմության խնդրահարույց դեպքերն այսքանով չեն սպառվում: Վերը նշած մեր դիտարկումները, կարծում ենք, հիմք կլինեն բառակազմության հետագա խոր և համակողմանի ուսումնասիրությունների համար: Բացի այդ՝ դրանք մատնանշում են, որ ժամանակն է վերանայել բուհական և դպրոցական դասագրքերի նյութը, վերացնել դրանցում առկա հակասությունները, մշակել հայերենի նորմատիվ քերականություն՝ լեզվի զարգացման արդի մակարդակին համապատասխան:

Sargsyan Meri, Asilbekyan Shushan - On some of the most controversial issues of the Armenian word-formation. - Many rescarchers have studied the word-formation of the Armenian language. The word-formation of the Armenian language seems to have been thoroughly studied, but since 2013 we have been dealing with the formal description of the Armenian vocabulary and have repeatedly dealt with the controversial issues of the Armenian word-formation. They are related to the differences in the professional literature and the absence of normative manuals.

There are a lot of controversial issues. Within the scope of this article, we examine the issues of the word-formation role and characterization of the conjunctions «ev», «u», of the prepositions of Grabar, the verb particles «-el», «-al», «-il», «-ul», the issues of roots and suffixes that have the same phonetic composition, the issues of divisible and non-divisible units within synchronic study of word-formation. We analyze the disparities in professional literature, present our observations and solutions.

Саргсян Мери, Асилбекян Шушан - О некоторых наиболее спорных вопросах армянского словообразования. - Многие исследователи изучали словообразование армянского языка. Словообразование армянского языка, кажется, было тщательно изучено, но с 2013 года мы занимаемся формальным описанием армянского словаря и неоднократно сталкивались со спорными

вопросами армянского словообразования. Они связаны с различиями в профессиональной литературе и отсутствием нормативных пособий.

Есть много спорных вопросов. В рамках данной статьи мы рассматриваем вопросы словообразовательной роли и характеристики союзов «ев», «у», предлогов грабара, глагольных частиц «-эл», «-ал», « -ил », « -ул», проблемы корней и суффиксов, имеющих одинаковый фонетический состав, вопросы делимых и неделимых единиц в рамках синхронного изучения словообразования. Мы анализируем различия в профессиональной литературе, представляем наши наблюдения и способы решения.

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հ.Աճառյանը *թուր* «սուր, սուսեր» բառը համարում է բնիկ՝ հ.-ե. ծագման, և վերականգնում է հ.-ե. *tōr- նախաձևը, «որը միջին աստիճանի երկար ձայնդարձն է terə- արմատի: Հնի. terə- նշանակում էր նախապես «շփելով մաշեցնել» և յետոյ նշանակեց «ծակ բանալ, ծակել» (քարե դարի հետքերի շարունակությունն է)՝: Նա նշում է մասնավորապես հունարենի տείρω «շփելով մաշեցնել, վերքից թուլանալ, յոզնիլ», τρύπων «ծակիչ գործիք», τικάω «ծակել», τορεύς «զչիր, դուր», τόρος «դուր», τορός «ծակող, սուր», τορεύω «դուրով ծակել», τέρετρον «զչիր»: Այնուհետև նա բերում է հ.-ե. մյուս լեզուների՝ այս արմատին հանգող ձևերը՝ լատ. terebra «ծակիչ, զչիր, շաղափ», հին իռլ. կիմր. tarathar, taradr «զչիր», գերմ. drehen «պտտեցնել, պտույտ, պտտվելը»¹: Գ. Զահուկյանը նույնպես ստուգաբանական բառարանում *թուր* բառը՝ «թուր, սուր(զենք)», իմաստով, ծագած է համարում հ.-ե. *tōr, *ter(ə)- արմատից՝ «տրորել, շփել, շփելով մաշեցնել, ծակել» իմաստներով և հղում է Աճառյանին³:

Հետաքրքրական է, որ Յ. Պոկոռնին հ.-ե. *ter-, ter(ə)- նախաձևերին հանգող արմատների շարքում բերում է հնդեվրոպական լեզուների՝ հունարենի, սլավոնական, գերմանական լեզուների ձևերը, որոնց համար նշում է նույն իմաստները, ինչ որ Հ. Աճառյանը, բայց հայերենի *թուր* բառի մասին ոչինչ չի

¹ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., ԵՊՀ, հ.2, 1973, էջ 208 (այսուհետև՝ ՀԱԲ):

² Նույն տեղում:

³ Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., «Ասողիկ», 2010, էջ 275 (այսուհետև՝ ՀՄԲ):

ասվում, և առհասարակ այդ բառը բառարանի հայերեն արմատների ցանկում չի նշվում⁴:

Գ. Զոլտան ընդհանուր հնդեվրոպական բառաշերտին պատկանող բառերի մեջ նշում է նաև հայերենի *թուր* բառը՝ նշելով, որ Հ. Հյուբշմանը չի անդրադարձել այդ բառի ծագման հարցին, դրա մասին չկա և Վալդե-Պոկոռնու բառարանում, այնուհետև բերում է Աճառյանի կարծիքը հ.-ե. *tōr- նախաձևից ծագելու մասին: Հ. Աճառյանի բերած օրինակներին նա ավելացնում է հուն. τῆρας «գլուխ, փորել, ծակել», τετραίνα «ծակել, փորել», լիտ. trinti, trinti «տրորել», հեկսլավ. túro, trěti «տրորել»: Այնուհետև եզրակացնում է քանի որ այս բառերը հիմնականում ունեն աշխատանքային գործիքների իմաստ՝ «դուր, գլիր» և այլն, և նկատի ունենալով հայերեն բառի և՛ իմաստը, և՛ կազմությունը՝ այդ ստուգաբանությունը այնքան էլ հավաստի չի համարում⁵:

Պետք է նշել, որ *թուր* բառահոդվածում, բացի զենք իմաստից, բերվում է նաև «ոստայնանկի կկոց՝ մաքոք» իմաստը. այդ մասին նշվում է և՛ Հ. Աճառյանի արմատական բառարանում, և՛ զավառական բառարաններում, և՛ գրաբարի բառարաններում⁶: Մ. Մալխասյանը *թուր* բառի այդ կիրառության բացատրության մեջ գրում է. «Կիսաշրջանաձև փայտ, որ գտնվում է ոստայնի ստորիի մոտ, որով ամրացնում են թելերը»⁷: Յ. Պոկոռնու բառարանում *ter-, *terə- ձևերի տակ

⁴ J. Pokorny, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, Bern-München, 1959, s. 1071-1074, b. II, s. 74 (այսուհետև՝ Յ. Պոկոռնի):

⁵ G. Solta, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, Wien, 1960, p. 38-39

⁶ G. Solta, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, Wien, 1960, p. 38-39.

⁷ ՀԱԲ, հ. 2, էջ 208, *Հայերեն զավառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 379, *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Ե., 2001, հ. 2, էջ 145, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1, էջ 822, Մ. Ալգեթեան, Գ. Ճելալեան, *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865, էջ 330:

⁸ Մ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 2, էջ 126:

բերվում է և ալբաներենի *tjer (tero)* արմատը, որ նշանակում է «մանել». հին իսլանդերենում էլ կա *þræðr*, որ ունի «մետաղալար, թել» նշանակությունները⁸: Նկատի ունենալով ալբաներենի և իսլանդերենի այդ արմատների իմաստները՝ հավանաբար կարելի է ենթադրել, որ հայերենի *թուր* բառը այդ նշանակությամբ ևս հնդեվրոպական նշված արմատի արտացոլումն է:

Հայերեն *դուր* «հիսնի կտրոց» բառի մասին Հ.Աճառյանը նշում է Հյունքարայենտյանի կարծիքը՝ պարսկերեն *durāy* «խարտոց» բառի հետ համեմատելու մասին՝ առանց հայտնելու իր կարծիքը⁹: Գ.Ջահուկյանը այն համարում է անստույգ ծագման¹⁰, իսկ իր մի աշխատության մեջ համեմատում է հին հնդկ. *dāra* «ճեղք, անցք», նորվեգ. *ters* «մեխ» բառերի հետ և կանխադրում հ.-ե. **der-* նախաձևը՝ «պոկել, քերթել, քերծել, պոկել, կոտրել, ջարդել» իմաստներով. նույն արմատից ծագած է համարում նաև հայերեն *տեռեմ* բայը¹¹: Յ. Պոկոռնու բառարանում հ.-ե. **der-* արմատի համար նույնպես նշվում են «կտրել, պոկել» իմաստները, բերվում է հայերեն *տեռեմ* բայը, բերվում են նաև հ.-ե. մյուս լեզուների ձևերը՝ հունարեն *δρατός* «քերծված», բուլղարերեն *drípa* «կտոր», կոռն., կիմբ., բրետ. *darn* «մաս, կտոր», լիտվ. *duris, durti* «կոտրել, ջարդել» և այլն¹²: Կարծում ենք՝ հայ. *դուր* բառը այս նախաձևից ծագած համարելը այնքան էլ համոզիչ չէ՝ նկատի ունենալով հենց իմաստային կոդը: Գ.Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ արհեստների վերաբերող հնդեվրոպական արմատների մեջ չի նշում *դուր* բառը, միայն գրում է. «Արհեստի հետ կապված նշանակումներից հին

⁸ Յ. Պոկոռնի, էջ 1071-1072:

⁹ ՀԱԲ, հ.1, էջ 687:

¹⁰ ՀԱԲ, էջ 204:

¹¹ Г. Джаукян, *Очерки по истории письменного периода древнеармянского языка*, Е., 1967, с. 152.

¹² Յ. Պոկոռնի, էջ 206-211:

հայերենում բացակայում են հետևյալ բառերի բնիկ հնդեվրոպական համարժեքները...», և դրանց շարքում նշում է նաև *դուր* բառը¹³: Կարծում ենք, որ հայերեն *դուր* բառն էլ կարելի է հանգեցնել հնդեվրոպական նույն *tōr- արմատին: Բանն այն է, որ այդ արմատի՝ հնդեվրոպական մյուս լեզուների համապատասխանությունների մեջ կան հենց *դուր* նշանակությամբ բառեր. Պոկոռնու բառարանում *ter-, *ter(ə)- նախաձևից ծագած արմատների շարքում նշվում է նաև հուն. τóρος «դուր» բառը¹⁴: Հ. Աճառյանը ևս բերում է հուն. τορεύς «զչիր, դուր», τóρος «դուր» ձևերը¹⁵: Ինչպես տեսնում ենք, իմաստային առումով ոչինչ չի խանգարում հայերեն *դուր* բառը հ.-ե. նշված արմատին հանգեցնելուն. հնչյունական կոդմբ ևս որևէ դժվարություն չի հարուցում, քանի որ հայերենում կան հ.-ե. տ հայերեն դ անցման այլ օրինակներ ևս (հմմտ. հ.-ե. *tu- հայ. դու, հ.-ե. *to- հայ. դ, դ-ա, այ-դ)¹⁶:

Հայերենում կա *թրել* բայը: Հ. Աճառյանը այն համարում է հ.-ե. ծագման՝ «ալիւր շադուել, իմոր շինել» իմաստով՝ նշելով, որ այդ բառի «նախնական նշանակութիւնն է «թրջել» և այս իմաստով կապում է *թուրմ* և *թուրջ* ձևերի հետ»¹⁷: Այնուհետև այդ բառի ստուգաբանության պատմության մեջ նա բերում է Ֆ. Մյուլլերի կարծիքը, որն այդ բառը համեմատում է լատիներենի tero «կոտորտել, ծեծել, ալիւր աղալ», terebra «ծակիչ, գայլիկոն» բառերի հետ¹⁸: Գ. Զահուկյանը ստուգաբանական բառարանում *թրել* բայը՝ «այլուր շադախել, իմոր անել» իմաստով, որոշ վերապահությամբ կապում է հ.-ե. *(s)ter- «անմաքոր

¹³ Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, (այսուհետև ՀԼՊ), Ե., 1987, էջ 265:

¹⁴ Զ. Պոկոռնի, էջ 1071:

¹⁵ ՀԱԲ, հ. 2, էջ 208:

¹⁶ ՀԼՊ, էջ 154:

¹⁷ ՀԱԲ, հ. 2, էջ 213:

¹⁸ ՀԱԲ, հ. 2, էջ 214:

հեղուկ» նախաձևին¹⁹, իսկ «Հայոց լեզվի պատմության» մեջ *թրել* բայի համար նշում է հ.-ե. *tí-ro- ձևը²⁰: Յ. Պոկոռնին *թրել* բայը կապում է հ.-ե. *tā-, *tə- «հալվել, թրջել» նախաձևի r-աձած *tíro- տարբերակի հետ և նշում է, որ ունի «հունցել» իմաստը:

Ռ. Ղազարյանի բառարանում *թրել*-ը բացատրվում է «ալիւրը ջրով շաղուել, խմոր շինել, հունցել»²¹, իսկ ՆՀԲ-ում՝ «զանգանել զալիւր ընդ ջրոյ», և բերվում են բնագրային հետևյալ օրինակները. «Կնոջն հրամայեաց հայս թրել», «Հին խմորն ոչ թրի ընդ նոր ալերն»²²: Հայս բառը բացատրվում է „Ձանգուած ալեր ընդ ջրոյ՝ չև ևս խմորեալ», բերվում են «Հայսք առանց փանդանի մի՛ զանգիր», «Առ հայս, և թրեաց, և արար բլիթս»²³: *Թրել*-ի այս օրինակները, ինչպես նաև այլ կիրառությունները նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել, որ այն ավելի շատ ունի «հունցել, տրորել» իմաստները: Հ. Հյուբշմանը ևս *թրել* բայի համար նշում է «հունցում եմ, տրորում եմ» իմաստները²⁴: Հնարավոր է ենթադրել, որ թերևս այս բառն էլ կարելի է կապել հ.-ե. *tōr-, *terə- արմատին, մանավանդ եթե նկատի ունենանք հնդեվրոպական մյուս լեզուներում վկայված «տրորել» իմաստով բառերը:

Հայերեն *թործ/թորիծ* բառը, որ նշանակում է «ծակ՝ ծակուածք գերանի հաստ գլխում, որի միջով անց են կացնում հոռը (թործակապը) սրան եզներ լծելով՝ քարշելով փոխադրում»²⁵: Հ. Աճառյանի արմատական բառարանում *թործ* բառը չկա. այն չկա նաև Գ. Զահուկյանի ստուգաբանական բառարանում: *Թործ, թորիծ* բառերը նշվում են բարբառային բառա-

¹⁹ ՆՄԲ, էջ 277:

²⁰ ՆԼՊ, էջ 153:

²¹ Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, Ե., 2000, էջ 496:

²² ՆՀԲ, հ. 1, էջ 823:

²³ ՆՀԲ, հ. 2, էջ 32:

²⁴ Հ. Հյուբշման, *Հայագիտական հետազոտություններ*, Ե., 2004, էջ 180:

²⁵ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, հ. 2, էջ 120-121:

րաններում՝ որոշ դեպքերում տարբերակելով դրանց իմաստները (*թորիծ* «ծակ ունկան, ուստի գինոք կախեն», *թործ* «ծակ փայտից կամ տախտակաց, յոր անցուցեալ չուանս՝ կապեն կամ քարշեն»²⁶):

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ *թործ* և *թորիծ* բառերի համար կանխադրում է հ.-ե. *tor-g'- նախաձևը²⁷ և նշում է թեմատիկ այն խմբերը (9.451, 9.46), որոնց մեջ ընդգրկում է այդ բառը. այդտեղ նա բերում է *երիթ* «մեծ սեպ» և *թործ* «տաշվածք, տաշելով բացված» (*թործել* «տաշելով փոս անել»), *թորիծ* «ծակ(վածք)» օրինակները²⁸: Պետք է նշել, որ Կ. Բաքի բառարանում ևս իմաստային այդ խմբերի բառերի շարքում նշվում են «կտրել, տաշել»՝ հատկապես կացինով, ուրագով կամ դուրով, ինչպես նաև հ.-ե. լեզուների «ծակել, հորատել» իմաստներով արմատները (կրկնությունից խուսափելու համար Բաքի՝ հ.-ե. լեզուներից բերած համապատասխան ձևերը չենք նշում)²⁹: Ե՛վ Գ. Ջահուկյանի, և՛ Կ. Բաքի դիտարկումները նկատի ունենալով՝ կարելի է եզրակացնել, որ *թործ/թորիծ* բառերը ևս հանգում են հ.-ե. *ter-, *ter(ə)- արմատների *tör- ձևի g -ով աճած տարբերակից:

Simonyan Nektar - Etymological notes. - The article deals with the words *թուր* (sword), *դուր* (chisel), *թրել* (knead), *թործ/թորիծ* (hole). It is clarified the Indo-European form of the verb *թրել*, for which is proposed Indo-European archetype *tör-, *terə-. The word *դուր* is considered to come from Indo-European archetype *tör-. *դուր* was considered of unknown origin. The word *թործ* goes back to IE *tör-g'-. It is suggested that *tör-g'- comes from the Indo-European archetype *tör- with the determinative g'-.

²⁶ Հ.Աճառյան, *Հայերեն գաղափարական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 375:

²⁷ ՀԼՊ, էջ 153:

²⁸ ՀԼՊ, էջ 213:

²⁹ C.D.Buck, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, Chicago-London, 1049, p. 592-593.

Симонян Нектар - Этимологические заметки. - В статье рассматриваются слова *թըր* (сабля), *ղըր* (долото), *թըռլ* (месить тесто), *թըրծ/թըրհծ* (дыра). Предлагается слово *ղըր* (долото) считать исконно армянским и возвести к и.-е. праформе *tōr-. Уточняется индоевропейская праформа слова *թըռլ*. Слово *թըրծ /թըրհծ* (дыра) восходит к и.-е. праформе *tōr-g-, которая считается вариативной формой и.-е. корня *tōr- с детерминативом g-.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՇՈՒՐՁ

Հոգվածը նվիրված է նոր գրական հայերենի կայացման ընթացքին, երկփեղկման պատճառներին, երկու ճյուղերի կանոնարկման գործընթացի տարբերություններին, ներկա վիճակին, փոխազդեցությանն ու փոխհարաբերությանը, միասնացման հնարավորություններին ու հեռանկարներին:

Գրավոր հայերենն անցել է զարգացման երեք հիմնական շրջափուլ՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար: Ճակատագրի բերումով աշխարհաբարի ձևավորման ժամանակ հայոց գրական լեզուն ներկայացավ երկփեղկված՝ գրական արևելահայերեն և գրական արևմտահայերեն վիճակներով:

Արևելահայերենն ու արևմտահայերենը մեկ ազգային լեզվի ազգային երկու դրսևորումներն են, մեկ միասնական լեզվի տարբեր ճյուղեր: Երկու գրական լեզուների ձևավորման և զարգացման փուլերն ընդհանուր առմամբ համընկնում են՝ միայն այն տարբերությամբ, որ արևմտահայերենը մշակվեց, կանոնարկվեց ու գրական լեզու դարձավ փոքր-ինչ ավելի վաղ, քան արևելահայերենը:

Հարկ է նշել, որ աշխարհաբարի ճյուղավորման նախադրյալները կային արդեն միջին հայերենում և նոր բարբառներում: Միջին հայերենի տարածքային բազմատեսակությամբ պայմանավորված՝ նորհայերենի բարբառները իրարից ավելի հեռացան: Մինչև ճյուղավորումը 17-րդ դարի աշխարհաբարը բազմաշերտ էր: Տարբեր բարբառներ կարող էին դառնալ նոր գրական հայերենի հիմք: Այդպիսի հնարավորություն ունեին, օրինակ՝ Թիֆլիսի բարբառը (որով գրել են Սայաթ-Նովան, Սունդուկյանը), Նոր նախիջևանի բարբառը (որով գրել է Ռ.

Պատկանյանը), Կարնո, Նոր Զուղայի բարբառները: Բայց այս ուղղությունները հետագա զարգացում չունեցան: Մրցակցության մեջ հաղթեցին և գրական լեզվի հիմք դարձան Արատայան և Պոլսի բարբառները:

Հայերենի երկու ճյուղերն էլ որպես խոսակցական լեզու, ձևավորվեցին իրենց բնօրրանում: Սակայն, որպես գրական լեզուներ, մշակվեցին ու կանոնարկվեցին հայրենիքից դուրս:

18-րդ դարում աշխարհաբարը երկրորդական գրավոր լեզու էր: Առաջնությունը պատկանում էր գրաբարին: Մամուլի լեզվում վաղ աշխարհաբարը մրցության մեջ է մտնում գրաբարի հետ: Օրվա խնդիր է դառնում նոր գրական լեզվի ստեղծումը: Գրապայքարում ձևավորվում է երկու ուղղություն: 19-րդ դարի 50-60-ական թվականներին հայրենիքից դուրս ապրող մի խումբ մտավորականների ջանքերով աշխարհաբարն իր իրավունքներն է հաստատում մամուլի լեզվում, ձգտում է հիմնավորվել նաև գեղարվեստական գրականության մեջ:

19-րդ դարի սկզբներից ընդլայնվում են աշխարհաբարի արևմտյան տարբերակի գործածության սահմանները: Արևմտահայերենը աստիճանաբար մուտք է գործում ժողովրդի կենցաղ, ձգտում է դառնալ ընդհանուր բանավոր և գրավոր հաղորդակցման, նաև դպրոցի լեզու:

Արևմտահայերենը վերջնականապես կանոնարկվում և գրական լեզու է դառնում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին մի խումբ տաղանդավոր գրողների ջանքերով՝ Ա. Արփիարյան, Ե. Օտյան, Գ. Զոհրապ, Ա. Չոպանյան, Միամանթո, Դ. Վարուժան, Վ. Թեքեյան, Ռ. Սևակ, Մ. Մեծարենց և ուրիշներ:

Նոր գրական հայերենի երկփեղկմանը նպաստեցին մի շարք նախադրյալներ: Առաջին գործոնը միանշանակ կարելի է համարել պատմաքաղաքական: Հայաստանի պատմաաշխարհագրական տրոհումը նախ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև (387թ.), այնուհետև Թուրքիայի և Պարսկաստանի (ու նաև Ռուսաստանի) միջև պատճառ դարձավ, որ մեր երկրի

արևմտյան և արևելյան հատվածները զգալիորեն առանձնանան տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքով: Այդ բաժանումը տևեց ավելի քան տասնվեց հարյուրամյակ:

Պատմաաշխարհագրական տարանջատվածությանը հաջորդեց բուն լեզվական-մշակութային առանձնացումը: Պատմամշակութային այդպիսի իրավիճակում որոշակիորեն մեծանում է գերիշխող լեզվի դերը: Արևմտահայերենի վրա սկզբնապես մեծ եղավ թուրքերենի, իսկ ավելի ուշ՝ 19-րդ դարի կեսերից սկսած, ֆրանսերենի ազդեցությունը:

Արևելահայերենի վրա մեծ է եղել նախ պարսկերեն ու թուրքերենի, այնուհետև ռուսերենի ազդեցությունը՝ սկսած 19-րդ դարի կեսերից: Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները փաստորեն ձևավորվեցին ու զարգացան հիմնականում տարբեր մշակույթների ու տարբեր լեզուների ազդեցության ներքո, թեև այդ ազդեցությունը երկու դեպքում էլ մեծ չի եղել:

Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո արևելահայերենի և արևմտահայերենի փոխազդեցությունները դարձան շարունակական:

Արևելահայերենի դեպքում դա արտահայտվում է ավելի շատ բառերի և արտահայտությունների ներմուծմամբ, իսկ արևմտահայերենում այլ է պատկերը: Հայաստանից արտագաղթի անընդհատ աճը սփյուռքում արևմտահայերենի և արևելահայերենի միախառնման պատճառ է դառնում: Արևմտահայերենի անգամ քերականության մեջ են փոփոխություններ նկատվում:

Գրական արևելահայերենը Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է որպես պաշտոնական լեզու: Սա բարենպաստ պայմաններ է ստեղծում արևելահայերենի զարգացման ու կանոնարկման համար: Այնուամենայնիվ, ժամանակակից արևելահայերենն այսօր միատարր չէ: Զգացվում է անջրպետ արևելահայգրական և խոսակցական լեզուների միջև: Այդ երկփեղկման պատճառն այն է, որ արևելահայերենի

հիմքը Արարատյան բարբառն է, իսկ մշակողները, որ սկզբնապես մեծ մասամբ արտերկրում էին գործում, զգալիորեն հեռացան մայր բարբառից՝ կողմնորոշվելով դեպի գրաբարը:

Արևմտահայերենի հիմքում Պոլսի բարբառն է: Արևմտահայերենում աննշան է խոսակցականի և գրականի տարանջատումը: Ցավոք սրտի, արևմտահայերենի վիճակն այսօր անմխիթար պատկեր է ներկայացնում: Նա անգամ հայտնվել է Եվրոպայի անհետացող և վտանգված լեզուների «Կարմիր գրքում»:

Այսօր նա իր դիրքերն աստիճանաբար զիջում է անգամ Մերձավոր Արևելքում: Բեյրութում, որտեղ 300 000 արևմտահայ էր ապրում նախքան Լիբանանյան քաղաքացիական պատերազմը, այժմ 50000-ից ավելի քիչ հայեր են ապրում: Սփյուռքում քիչ են արևմտահայերենի ուսուցիչները: Նվազում են սփյուռքահայ կրթօջախները: Փակվել է սփյուռքի դպրոցների համար մանկավարժներ պատրաստող Մելգոնյան Կրթական հաստատությունը:

20-րդ դարի կեսերից սկսած՝ երկու գրական լեզուներում էլ շոշափելի են դարձել փոխներթափանցման երևույթները՝ արևելահայերենի ազդեցությունը արևմտահայերենի վրա և հակառակը: Երկու գրականների լեզվական իրողությունների կենդանի սերտաճման հետաքրքիր փաստեր կարող է տալ ծագումով արևմտահայի արևելահայերենը:

Վերջին տարիներին հաճախ է խոսվում երկու գրական տարբերակների մերձեցման մասին, ինչպես նաև միասնական ուղղագրության խնդիրն է արծարծվում: Երկու գրական լեզուների միասնացման համար հիմքեր կարող են սեղծվել միայն ընդհանուր պետականության և միասնական լեզվական միջավայրի ձևավորման պայմաններում: Պարզապես պետք է ընդլայնե 12փումները, փոխադարձաբար օգտվել միմյանց բառապաշարից:

Մինչև վերջին ժամանակներս հայերենագիտության մեջ աշխարհաբարի երկու ճյուղերին և դրանց զուգադրական

քննությանը անդրադարձել են Հ. Աճառյանը, Վ. Աճեմյանը, Ռ. Իշխանյանը, Ա. Սարգսյանը, Յու. Ավետիսյանը, Ռ. Սաքապետյանը և այլք։ Բայց դեռևս բավարար չափով չի կատարվել արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարի համաժամանակյա վիճակագրական վերլուծություն։

Այդ վերլուծությունը կարելի է կատարել աշխարհաբարի առաջացման ժամանակներիցի վեր մինչև մեր օրերը։ Կա նաև Հայաստանի անկախացումից ի վեր վերջին 20 տարվա ընթացքում, երկու գրական լեզուների բառապաշարի փոխներթափանցման և փոխազդեցության զուգադրական քննության կարիք։ Այս հարցերի քննությունը և համապատասխան եզրահանգումները կարող են մեծապես նպաստել մեր գրական լեզուների համար զարգացման ընդհանուր ուղի-ներ մշակելու գործին։

Sukiasyan H. - Observations on Literary Armenian Language. - The article is dedicated to the formation process of the modern literary Armenian language, the reason for its division, the differences between its two standardized literary forms, Eastern Armenian (Arevlahayeren) and Western Armenian (Arevmtahayeren), their current situation, interaction and interrelations, and the prospective and possibilities of literary Armenian language unification. Since the independence of Armenia in the last 20 years, there has been a need for a cross-examination of the interplay and interaction of the lexicons of the two literary languages. Examination of these questions and relevant conclusions can greatly contribute to developing common pathways for our literary languages.

Сукиасян Г.- Наблюдения литературного армянского языка.- Статья посвящена развитию нового литературного армянского языка, причинам раскола, различиям в процессе

регулирования двух дисциплин, современному состоянию, взаимодействию и взаимодействию, возможностям и перспективам объединения. С момента обретения Арменией независимости в течение последних 20 лет возникла необходимость в перекрестном рассмотрении взаимодействия и взаимодействия между двумя литературными языками. Изучение этих вопросов и соответствующих выводов может в значительной степени способствовать разработке общих путей для наших литературных языков.

Վարդանյան Արտակ (Հայաստան,
ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԳՈՂԹՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԼՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախիջևանի տարածքը 1918-1920թթ. Իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաքներ և գյուղեր: Բնակչության գերակշիռ մասը խոսում էր 1828 թվականից այստեղ հաստատված վերաբնակների բարբառներով՝ Խոյի բարբառով (33 բնակավայր), ինչպես նաև Մարաղայի բարբառով (3 բնակավայր): Պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ՝ Ագուլիսի բարբառը (7 բնակավայր), Ջուղայի բարբառը (1 բնակավայր), Արարատյան բարբառը (4 բնակավայր), Ճահուկ-Վայքի միջբարբառը (2 բնակավայր), Արցախ-Սյունիքի բարբառը (6 բնակավայր), Գողթնի խոսվածքները (6 բնակավայր): Բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև խառը խոսվածքներ (միջխոսվածքներ)՝ Ջուլֆայի (Ջուղայի-Խոյի), Որդուարի (Ագուլիսի-Խոյի)¹:

Ագուլիսի բարբառը կամ զոկերենը ընդգրկում էր պատմական Գողթն գավառի հարավային մասը՝ Վերին Ագուլիս ավանը, Ներքին Ագուլիս, Տանակերտ, Յոնա, Քաղաքիկ, Դիսար, Հանդամեջ գյուղերը: Այս բարբառը ժամանակին պատշաճ ուսումնասիրվել է ինչպես հայ, այնպես էլ օտար լեզվաբանների կողմից, սակայն գավառի հյուսիսային մասում տեղադրված Բիստ, Մեսրոպավան, Ողոհի (Ալահի), Փառակա և Ռամիս գյուղերի խոսվածքները, որոնք առաջին իսկ հայացքից իրենց հատկանիշներով առանձնանում են շրջակա բարբառներից և լեզվական բավական

¹ A. Vardanyan, *Dialectologic Map of Nakhijevan*, *Apaga* (International Journal of Armenian and Iranian Studies), 19, Tehran, 2004, p. 8-12.

սերտ առնչություն են ներկայացնում, առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել:

Ագուլիսի բարբառին նվիրված՝ իր նշանավոր բարբառագիտական աշխատանքում Սարգիս Սարգսյանը թողցիկ անդրադարձով Ռամիսի խասվածքը նույնպես համարել է Ագուլիսի բարբառ²: Հրայր Աճառյանը «Քննութիւն Ագուլիսի բարբառի» աշխատանքում Փառակայի և Ռամիսի խոսվածքներն է բնութագրել որպես Ագուլիսի բարբառին մոտ, բայց նրանից տարբերվող խոսվածքներ³, իսկ Ողոհի, Բիստ, Մեսրոպավան գյուղերի, ինչպես նաև փոքրաթիվ բնակչություն ունեցած և այդ ժամանակ արդեն իսպառ հայաթափված Խուրստ գյուղի խոսվածքները համարել Արցախի բարբառին մոտ խոսվածքներ: Մարի Զաքարյանը «Ագուլիսի բարբառը» աշխատանքում, կրկին հպանցիկ անդրադարձով, Փառակայի և Ռամիսի խոսվածքները համարում է Ագուլիսի բարբառի խոսվածքներ, իսկ Ողոհիի, Բիստի և Մեսրոպավանի խոսվածքները՝ Արցախի բարբառին մոտ խոսվածքներ⁴:

Նպատակ ունենալով ճշտելու այս հինգ գյուղերի (Խուրստի խոսվածքի վերաբերյալ նյութեր չեն պահպանվել) խոսվածքների հատկանիշների մերձավորությունը, կատարել ենք ոչ միայն խոսվածքների հատկանիշների համեմատական քննություն, այլև կիրառել ենք Գևորգ Զահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքը:

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի ավան լեզվի ինստիտուտում ժամանակին գրանցվել են այս հինգ գյուղերի խոսվածքներից չորսը, սակայն պահպանվել է միայն երեքը (Փառակա, Մեսրոպավան, Բիստ): Ռամիս և Ողոհի գյուղերի խոսվածքները մեր օրերում ապրող վերջին բարբառախոսներից գրանցել ենք վերջերս:

² Ս. Սարգսեանց, *Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն)*, Մ., 1883, էջ 16:

³ Հ. Աճառեան, *Քննութիւն Ագուլիսի բարբառի*, Ե., 1935, էջ 327-329:

⁴ Մ. Զաքարյան, *Ագուլիսի բարբառը*, Ե., 2008, էջ 7:

Հյուսիսային Գողթնի հիշյալ հինգ գյուղերի խոսվածքներն ունեն 42 հնչյուն:

Բաղաձայնները 33-ն են. ձայնեղ պայթականներ և պայթաշփականներ՝ ք, գ, գ', դ, ձ, ջ. խուլ պայթականներ և պայթաշփականներ՝ պ, կ, կ', տ, ծ, ճ. շնչեղ խուլ պայթականներ և պայթաշփականներ՝ փ, ք, ք', թ, ց, չ. ձայնեղ շփականներ՝ զ, ժ, դ, վ. խուլ շփականներ՝ ս, շ, խ, ֆ, հ. ձայնորդներ՝ լ, մ, յ, ն, ո, ր.

Մնացած 9-ը ձայնավորներն են՝ ա, է, ը, ի, ու, օ, ն, օ, ու:

Ժամանակակից գրական հայերենի հնչյուններից տարբերվում են ն, օ, ու քմային ձայնավորները, գ', կ', ք' քմային բաղաձայնները:

Մեարոպականի խոսվածքում փոքր հաճախականությամբ առկա է նաև Արցախ-Սյունիքի տարածքի և Մեղրու խոսվածքներին բնորոշ ի՞ ձայնավորը⁵, որը վերին բարձրացման ը է (տիբրէլ < տերև, քիշէր < գիշեր, զիբրթնիլ < զարդարել, յիբն < վրա և այլն), որն առավել նվազ հաճախականությամբ առկա է նաև Բիստի խոսվածքում (վիբն < վրա, միծանիլ < մեծանալ, զիբրթնիլ < զարդարել և այլն): Մակայն այս հնչյունը թույլ է արտահայտված և երկու խոսվածքներում էլ հնչում է գրեթե ինչպես պարզ ի:

Սահմանափակ դիրքերում առկա է նաև տարածքի որոշ խոսվածքներին բնորոշ ո^հ շնչեղ ձայնորդը⁶ (վօո^հնը < որդն, վօո^հնիլ < որդնել (Մեարոպական), կօո^հնուկ < գորտ(նուկ), ուո^հնը < որդն (Ռամիս) և այլն):

Քմային ն, օ, ու հնչյունները առաջնային շարքի՝ վերին բարձրացման ձայնավորներ են, հանդիպում են ինչպես նոր փոխառություններում, այնպես էլ բնիկ բառերում.

Բիստի խոսվածք՝ դնջնն («կաշաղակ»), աոմբոլ («հասկ»),

⁵ Է. Աղայան, *Մեղրու բարբառը*, Ե., 1954, էջ 17:

⁶ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004, էջ 17-19:

բըրդան («հանկարծ»), զանաք («թույն») և այլն, ինչպես նաև՝ կըճոճ (< կճուճ), ճոճը (< ջուր), ծոճ (< ձու), զանսիկ' (< զատիկ), տօխ (< դոխ), տոնդոմ (< դդում) և այլն:

*Մետրոպոլիտի խոսվածք*¹ խանգալ («չոր տերև»), զանբուլ («զամբուլ»), լանբ («գուլ»), դոճ («ճիշտ, ուղիղ») և այլն, ինչպես նաև՝ անվու (< ավել), անգիգ (< ընկույզ), կանբուր (< կարմիր), պանգու (< բագու), լու (< լույս) և այլն:

*Ողոհիի խոսվածք*¹ դանբան («դարպաս»), գըրդանբուրն («երկբոնակ սղոց»), փանփան («թիթեռ») և այլն, ինչպես նաև՝ հօլ (< ուլ) >, գու (< գայլ), գանը (< գառն), լուգի (< լեզու), հարթ (< երդիկ), գօլ (< գալ), հոջո (< ոջիլ) և այլն:

*Ռամիսի խոսվածք*¹ գըրդանբիլ («երկբոնակ սղոց»), քանփանբին («աքցան»), անբանդ («սլաշտար») և այլն, ինչպես նաև՝ անգու (< ընկույզ), ծուկուն (< ձուկն), քուրն (< գդալ), հոջան («վիշապ»), օրծան (< որձակ («աքաղաղ») և այլն:

*Փառակայի խոսվածք*¹ քանբան («աթար»), յանջան («ձեռնոց»), քանու (< մաքուր»), քուլլու (< աղբանոց»), քուլն (< ծոց») և այլն, ինչպես նաև՝ ժոմ (< ժամ («եկեղեցի»)), ճոճը (< ջուր), քուր (< քույր), կանբուր (< զարունք), կու (< գայլ), կօրի (< գարի), պօհ (< բահ) և այլն:

Ինչպես նկատվեց, բոլոր խոսվածքներում բավական մեծ հաճախականությամբ գործում է ձայնավորների ներդաշնակության օրենքը՝ ոջիլ > հոջո, դդում > տոնդոմ, գդալ > քուրն, լեզու > լուգու և այլն: Առավել կամ նվազ չափով ընդհանուր հատկանիշ է նաև բառավերջում՝ ձայնավորից և ն ձայնորդից հետո, գ, կ, ք ետևալեզվայինների քմայնացումը զանսիկ' (< զատիկ), տանանկ' (< դանակ), պընանի (< բանալի), ճիհանակ' (< ճախարակ), օլնոք

(< ուլունք), **ժանգ**⁷ (< ժանգ), **թըրէք**⁷ (< թրիք), **սիֆտանկ**⁷ (< սպիտակ) և այլն: Այս հատկանիշը բնորոշ է նաև Ագուլիսի, Խոյի, Մարաղայի բարբառներին:

Բոլոր հինգ խոսվածքներում բառասկզբի ձայնեղ պայթականների և պայթաշփականների դիմաց առկա են համապատասխան խուլեր: Ողոհիի խոսվածքում, սակայն, այս օրինաչափությունը գործում է մասնակիորեն. փոքր հաճախականությամբ ձայնեղները խուլերի են վերածվել՝ **գանգատ** > **կանգանտ**, **դանակ** > **տէնակ**, **ջարդել** > **ճանթիլ**, **բարակ** > **պերակ**, **ձմեռն** > **ծրմեռնը** և այլն, իսկ առավել մեծ հաճախականությամբ պահպանվել են՝ **բահ** > **բէհ**, **բան** > **բէն**, **բերել** > **բէրիլ**, **դեղին** > **դէղին**, **գարուն** > **գէրունք**, **գալ** > **գ'օլ**, **ջուր** > **ջո՛ւր** և այլն: Այս և համանման այլ երևույթներ կարելի է բացատրել Ողոհիի խառը բնակչություն ունենալու հանգամանքով: Տեղաբնիկներից բացի, այնտեղ բնակվել են նաև Մուժամբարից, Սալմաստից և Արցախ-Սյունիքից վերաբնակված հայեր⁷: Այսուհանդերձ, հնարավոր ենք համարում նաև հիշյալ հատկանիշի ծագման տեղական վարկածը, քանի որ այն բնորոշ է նաև հարևան Մեղրու բարբառին (**բահ** > **բէհ**, **բան** > **բէն**, **ձագ** > **ձէգ**⁷, **ձախ** > **ձէխ** և այլն):

Բոլոր խոսվածքներում առկա են ձայնավորների հնչյունափոխության հիմնականում ընդհանուր երևույթներ.

Ոչ շեշտակիր ձայնավորի թուլացում՝ **հեռանալ** > **հրռանալ**, **թերևանալ** > **թըրթիվանալ**, **գողանալ** > **կըղանալ** (Ռամ.), **նեղանալ** > **նըղանիլ**, **լողանալ** > **լըղանիլ** (Փառ.), **նեղանալ** > **նըղանիլ**, **հեռանալ** > **հըռանիլ** (Մար.), **գողանալ** > **կըղանիլ**, **նեղանալ** > **նըղանիլ** (Բստ.) և այլն:

Շեշտակիր ա-ի դիմաց առկա է **օ** (օ̈)՝ **ահ** > **օհ**, **աջ** > **օջ**, **թաթ** > **թօթ**, **տանձ** > **տօնձ**, **մարդ** > **մօրթ** (Ռամ.), **ափ** > **օփ**, **լաց** > **լօց**, **մագ**

⁷ Հ. Աճառեան, նշված աշխատանքը, էջ 8-9:

> մօզ, տաշտ > տօշտ (Փառ.) և այլն: Երևույթը բնորոշ չէ մյուս երեք խոսվածքներին:

Բառամիջի շեշտակիր ու-ի դիմաց առկա է ու (նի)՝ ոջիլ > հոյջնիլ (Ողհ.), խոզ > խուզ, կոթ > կութ, լակոտ > լակուտ, խնձոր > խընձոր||խունձոր (Ռամ., Փառ.), ոջլոտ > հոյջնիլոտ (Մար.), լակոտ > լակուտ, խաղող > հաղուղ (Բստ.) և այլն: Այս հատկանիշը նույնպես խիստ բնորոշ է հարևան բարբառներին:

Շեշտակիր ու-ի դիմաց առկա է օ (օ)՝ թուխս > թօխս, կուժ > կօժ, փուշ > փօշ, քուն > քօն (Ռամ.), թուփ > թօփ, ութ > օթ, սուր > սօր, քուն > քօն (Բստ.), կուզ > կօզ, ծուռ > ծօռ (Մար.), ուտել > օտիլ, ուրիշ > օրիշ (Փառ.), սուտ > սօտ (Ողհ.) և այլն: Այս հատկանիշը նույնպես խիստ բնորոշ է վերոհիշյալ բարբառներին:

Միավանկ և երկվանկ բառերում բառասկզբի ե-ի դիմաց հաճախ առկա է ի՝ եզն > իզնի||իզնը, երբ > իփ, երդ > (հ)իրթ, երևալ > իրիվալ, երեք > իրիք, երեկ > հիրկի||հիրկել (Ռամ., Փառ.), ելանել > իլնիլ, երեք > իրիք||իրեք, երես > իրես, երևալ > իրվալ, եփել > իփիլ (Մար., Բստ.), ես > իս, երես > իրիս, աւելուկ > իվլուկ, եփել > իփել (Ողհ.) և այլն: Բառամիջի շեշտակիր ե-ի դիմաց նույնպես առկա է ի՝ թեփ > թիփ, խելք > խիլք, արև > անրիվ (Ռամ., Փառ.), թել > թիլ, հեշտ > հիշտ, չեչ > չիչ (Մար.), աւել > անվիլ, աւելի > իվիլ, տերև > տիրել, շերեփ > շիրեփ (Բստ.) և այլն:

Բոլոր խոսվածքներում, բարբառային հնագույն տարբերակներ համարվող մի շարք բառերում⁸, բառասկզբում ր-ին կամ դ-ին նախորդող ե-ի դիմաց առկա է ա (ան) հնչյունը՝ եղբայր > ախայար||անխայնր||ախպեր, երազ > արազ, երեսուն > արասուն, երկաթ > արկաթ, երկան(ք)>արկանք, երկաթ > արկաթ,

⁸ Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերություններ հայերենում - *ՀնՍՀ ԳԱ հասարակական գիտությունների տեղեկագիր*, Ե., 1958, թիվ 5, էջ 67-80:

եղիճ > աղինջ||հաղինջ և այլն:

Որոշ բառերում հին հայերենի է-ի դիմաց առկա է ա (յն)՝
ամեն > աման, առնետ > առնատ, թէ > թան, էգ > անք, խլեգ > խըլագ,
մեջք > մաշկ, տեր > տար (Ռամ.), առնետ > առնատ, էգ > աք, պահեգ
> պըհագ, տեր > տան (Փառ.), ամեն > ամման, թէ > թան (Բստ.) և
այլն:

Բոլոր խոսվածքներում շեշտակիր ի-ի դիմաց բավական
մեծ հաճախականությամբ առկա է է՝ թի > թե, կնիկ > կընեկ, ծիծ >
ծեծ, միս > մես, պինդ > պենդ, սիրտ > սերտ, տիկ > տեկ, ցից > ցեց,
թրիք > թըրեք, ծիտ > ծետ, կծիկ > կըծեկ, միտք > մետկ(ը), հինգ >
հենգ և այլն:

Խոսվածքներին բավական բնորոշ է նաև ձայնավորների
ներդաշնակությամբ գաղտնավանկի լիաձայնությունը՝ ձուկն >
ծուկուն, կկու > կուկու (Մսր.), կճուճ > կոճոճ, բրինձ > պիրինձ,
սրբել > սիրփիլ (Ռամ.), սունկն > սունգուն, փշուր > փոշոճ
(Փառ.), բլիթ > պլիլիթ, ձուկն > ծուկոն (Բստ.) և այլն:

Հին հայերենի շեշտակիր այ երկբարբառի դիմաց Ռամիսի
խոսվածքում՝ առավել մեծ, Փառակայի խոսվածքում՝ նվազ
հաճախականությամբ առկա է ա պարզ ձայնավորը՝ այծ > ած, այս,
այդ, այն > աս, ատ, ան, հայր, մայր > հար, մար, ծայր > ծար, փայտ
> փատ (Ռամ.), լայն > լան, տայգր > տանքիր, այլ > ալ (Փառ.) և այլն:

Մյուս խոսվածքներում, սակավաթիվ բացառություններով հան-
դերձ, առկա է արևելահայ բարբառներին առավել բնորոշ այ > է
հնչյունափոխությունը՝ այծ > էծ, այս, այդ, այն > էս, էդ, էն (Ողհ.),
հայր, մայր > հեր, մեր, փայտ > փեդ (Բստ.), լայն > լեն, ծայր > ծեր,
կայծ > կեծ (Մսր.) և այլն:

Մի խումբ բառերում հին հայերենի աւ երկբարբառի դիմաց
առկա է օխ հնչյունակապակցությունը՝ աւձ > օխց (Ողհ., Փառ.),
օխցը (Մսր.), օղուծ (սեռ.՝ օխցի, Ռամ.), եւաթն > օխտը (Փառ., Բստ.,
Մսր., Ողհ.), էխտը (Ռամ.) և այլն:

Հին հայերենի ոյ երկբարբառի դիմաց առկա է ու (ոյ)

ձայնավորը՝ բոյթ > պոթ, կապոյտ > կնպոնտ, ընկոյզ > անգոնգ, ,
 ոյժ > ուժ, քոյր > քոնր (Ռամ., Փառ.), շոյտ > շոնտ, լոյս > լոնս, քոյր >
 քուր (Մսր.), բոյն > պոն, թոյլ > թոլ, բայց՝ քոյր > քիր, լոյս > լիս,
 ընկոյզ > անգիզ (Բստ.), լոյս > լոնս (Ողհ.) և այլն:

Հին հայերենի եա երկբարբառի դիմաց հիմնականում
 առկա է ա (ան) ձայնավորը՝ կորեակ > կօրակ, ցորեան > ցօրան
 (Ռամ., Մսր., Բստ.), երանեակ > հըրենակ, ցորեան > ցօրան (Փառ.),
 հոգնակի ձևերում՝ առչար, մագար||մօգար, քարար, օրար,
 բայական ձևերում՝ պերած ըմ (< բերել եմ), մրոահած ըմ (< մոռացել
 եմ), էփալ ա (< եփել է), խաշալ ա (< խաշել է), ծէփա (< ծեփի՛ր)
 խաշա (< խաշի՛ր), Էփա (< եփի՛ր) կիրնվ (< գրեց), խաշնվ (<
 խաշեց) և այլն:

Հին հայերենի իւ երկբարբառի դիմաց խոսվածքներում,
 որպես կանոն, առկա է ու (ոն)՝ ալիւր > անլոնր, աղբիւր > անխաոնր
 (Ռամ., Փառ., Մսր., Բստ., Ողհ.), հարիւր > հօրոնր (Ռամ.), ձիւն >
 ծոն, սիւն > սոն (Ռամ., Փառ., Մսր.) և այլն: Կան նաև փոքրաթիվ
 շեղումներ՝ ալիւր > անլիւր, արիւն > անրին (Բստ.) և այլն:

Միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային, ինչ-
 պես նաև ք-ին հաջորդող դիրքերում ձայնեղ պայթականները և
 պայթաշփականները վերածվում են համապատասխան շնչեղ
 խուլերի (ք, գ, դ, ձ, ջ > փ, ք, թ, ց, չ)՝ ազանիլ > հանքնիլ, գոգ > կոնք,
 էգ > անք, որձ > ուրք, խաբել > խանփիլ, արջ > օրջ, բարձ > պօրք,
 կարդալ > կանքթիլ, ուրբաթ > օրփանթ (Ռամ., Փառ.), կարդալ >
 կարթիլ, մրջին > բըրչեմ, բարձ > պերք (Մսր.), հաջել > հանչիլ, որձ
 > վերք, սրբել > սիրփիլ (Բստ.), թագաւոր > թաքավօր, բարձր >
 պեցուր (Ողհ.) և այլն:

Խոսվածքներին խիստ բնորոշ է նաև բառասկզբի խ-ի
 դիմաց տարնմանական հ-ի առկայությունը՝ խաղ > հաղ, խաղաղ >
 հաղաղ, խաղող > հաղու, խեղդել > հեխտիլ (Ռամ., Փառ.), խաղող >

հաղոդ, խաղալ > հաղալ, խաղացնել > հաղացընիլ (Մար.), խաղող > հաղուղ (Բստ.), հավօղ (Ողհ.) և այլն: Ինչպես նկատվեց, խաղող բառանունը թեև տարբեր բնակավայրերի խոսվածքներում տարբեր հնչատարբերակներ ունի (հաղօղ, հաղուղ, հաղու, հավօղ), սակայն բոլոր խոսվածքներում հնչյունափոխական այս երևույթն ակնհայտ է:

Գրաբարի բառավերջում և ունեցող բառերում հիմնականում նկատվում է ն-ի պահպանում՝ գաղտնավանկ ը-ի դրափոխությամբ ակն > օկնը, թոռն > թօռնը, նուռն > նօռնը, որդն > ծոնը (Ռամ.), ամառն > ամառնը, դառն > տծոնը (Փառ.), դառն > տէռնը, խառն > խառնը, որդն > վօռնը (Մար.), դառն > տաննը, ծունկն > ծօնգնը (Բստ.) և այլն: Սակավ դեպքերում առկա են նաև ն-ի անկում՝ գաղտնավանկի պահպանմամբ սերմն > սիրմը, ինն > այնը (Ռամ.), տասն > տասսը (Փառ.), տասն > տասը (Մար.), ն-ի պահպանում՝ գաղտնավանկի լիաձայնությամբ՝ ձուկն > ծուկոն (Ռամ.), մուկն > մօկուն, կամն > կումուն (Փառ.), ձուկն > ծիկուն, մուկն > մօկուն (Ողհ.), ինչպես նաև ն-ի պարզ անկում՝ խուփն > խուփ, ծունկն > ծունգ, հարսն > հօռս (Ռամ.), դադձն > տախց, մութն > մօթ, երդումն > ուրթում (Փառ.), թոռն > թօռ, սերմն > սերմ (Մար.), հարսն > հարս, ամառն > ամառ (Բստ.) և այլն:

Մի շարք բառերում բառավերջի նր հնչյունակապակցության մեջ առկա է դ-ի հավելում՝ ծանր > ծունդըր, մանր > մունդուր (Ռամ., Փառ.), ծունր > ծունդըր, (Բստ., Մար.), նաև պանիր > պանդիր (Ռամ.) և այլն: Համանման ձևով նկատվում է նաև ք-ի հավելում մր հնչյունակապակցությամբ որոշ բառերում՝ համարել > համբրիլ (Ռամ.), համարել > հըմբարիլ, զմուռս > զըմբըռ (Փառ.), համարք > համբարք (Մար.), զմուռս > զըմբէռնը, համարք > համբարք (Բստ.) և այլն:

Բառասկզբի ձայնավորից առաջ հ-ի հավելում՝ ալետր > հըլավուր, ընկեր > հինգիր, ոլորել > հըլօրիլ (Ռամ.), ազի > հանքու, արբենալ > հանրփիլ, երինջ > հէրինջ (Փառ.), ուլունք > հուլունք, ոջիլ

> հոյնիլ, ոլորել > հոյնօրիլ (Մար.), ով > հուվ, ուլ > հօլ, ոջիլ > հոյնիլ (Ողհ.), ուլունք > հօլննք, ընտրել > հընդրիլ (Բստ.) և այլն:

Ներկայացված հատկանիշները վկայում են, որ հնչյունաբանության տեսանկյունից այս հինգ խոսվածքները ներկայացնում են լեզվական բավական սերտ առնչություն: Իսկ Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքի կիրառմամբ՝ 50 հնչյունաբանական հատկանիշների արդյունքներով հիշյալ խոսվածքները միմյանցից տարբերվում են նվազագույնը՝ 3 և առավելագույնը՝ 6,5 միավորով: Հատկանիշների տարբերությունների նման ցածր մակարդակը նույնպես վկայում է, որ հնչյունաբանության առումով Հյուսիսային Գողթնի հինգ խոսվածքները կարող են դիտվել որպես միևնույն բարբառի կամ միջբարբառի խոսվածքներ:

Варданын Артак – Фонетические особенности говоров Северного Гохтна.— Изучение фонетических признаков неисследованных говоров северных сел Бист, Месропаван, Вохохи, Рамис, Парака провинции Гохтн ашхара Васпуракан исторической Армении свидетельствует, что с точки зрения фонетики эти пять говоров представляют собой довольно близкие языковые отношения.

Используя также разработанный Геворгом Джаукяном многопризнаковый статистический принцип классификации армянских диалектов, выясняется, что 50 фонетических признаков упомянутых говоров отличаются друг от друга по меньшей мере 3-мя и самое большее 6,5 единицами. Следовательно, по фонетическим признакам пять говоров Северного Гохтна можно рассматривать как говоры того же диалекта или междиалекта.

Vardanyan Artak – The Phonetic Features of Subdialects of North Goghthn.— A study of the phonetic characteristics of unexplored subdialects of the northern villages of Bist, Mesropavan, Voghohi, Ramis, Paraka of the Goghthn province of Vaspurakan ashkhar of historical Armenia indicates that, from the point of view of phonetics, these five subdialects have quite close linguistic relations.

Using also the multi-attribute statistical principle of classification of Armenian dialects developed by Gevorg Jahukyan, it turns out that 50 phonetic signs of the above - mentioned subdialects differ from each other by at least 3 and at most 6.5 units. Consequently, according to phonetic features, the five subdialects of Northern Goghthn can be considered as subdialects of the same dialect or inter-dialect.

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝
ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՆՔՈՎ

Մաղանջուղ՝ «քարայրների երկիր»

Պատմաաշխարհագրական տեղեկություններ: Մաղանջուղ հին գյուղը հետաքրքիր է ոչ միայն իր պատմությամբ, այլև բնական¹ նշանակությամբ²:

Մաղանջուղը եղել է Գորիսի տարածաշրջանի ամենամեծ գյուղերից մեկը: Այն հիշատակվում է 17-րդ դարից սկսած՝ նախ որպես գավառ Սյուս Բաղքում, ապա որպես գյուղ՝ Ելիգավետայոլի նահանգի Ջանգեզուր գավառում:

Մաղանջուղի մասին առաջին ամփոփ տեղեկությունը հանդիպում է Ղ. Ալիշանի պատմության մեջ. «Մեկ մղոնով կամ դրանից պակաս Ձազեձորի վերջից Բարկուշատն ընդունում է մի այլ փոքրիկ վտակ, որի ձորաբերանում Մաղանջուկ փոքր գյուղն է՝ Ս. Հռիփսիմեի եկեղեցով, Քարահունջի հարավի և Տավուրուի հյուսիսի միջև: Սա չի հիշվում հնում, բայց Տաթևի թեմի նոր Յուզակներում [կա], և գուշակվում է, որ մեծ շեն է եղել, որովհետև 17-րդ դարի սկզբին գրվում է, որ միայն գյուղ կամ ավան չի եղել, այլև մի տարածք՝ «յերկիրս Մաղանջուղու», որի մեջ է առնվում Տանձավեր գյուղը»³:

¹Աշխարհագրական դիրքով Մաղանջուղի տարածքը բավականին նպաստավոր է: Ծովի մակարդակից մոտ 800 մ բարձրության վրա է՝ շրջապատված անտառ-թփուտներով: Բուն գյուղի ձորակը խոնավ է: Գյուղը այգիներ ունեցել է ոչ միայն շրջակա տարածքում, այլև Որոտան և Վարարակն գետերի միացման հովտում:

²Այն կարող է հետաքրքիր լինել զբոսաշրջության համար, որովհետև հին գյուղատեղում և ամբողջ շրջակայքում դեռևս պահպանված եկեղեցիները, սրբավայրերը, աղբյուրները, խաչքարերը, բնական հուշարձանները և հովասուն բնությունը դիտարժան են:

³Ալիշան Ղ., *Միսական*, Ս. Ղազար, Վենետիկ, 1893, էջ 262:

Երբեմնի գավառը ունեցել է մի շարք գյուղեր, որոնք, ցավոք, այսօր չեն պահպանվել⁴: Մինչ խորհրդային շրջանը Մաղանջուղի մասին հիշարժան այլ տեղեկություններ առանձնապես չեն հանդիպում⁵:

Ս. Լիսիցյանը նշում է, որ Կյորի, Ալիդուլի, Քարաշեն, Մաղանջուղ գյուղի բնակիչները եկել են Պարսկաստանից⁶:

Ավանդագրույցներ⁷: Ցավոք, բանահյուսական առանձին նմուշներ հիմա շատ չեն պահպանվել: Եղածներն էլ չեն տարանջատվում մյուս բնակավայրերի բանավոր գրույցներից, և դժվար է տարբերակել անգամ լեզվական առանձնահատկությունները, որոնք կարող էին լինել Մաղանջուղ գավառում:

Ծագումով մաղանջուղեցիները պատմում են, որ իրենց հին բնակավայրը շատ ավելի մեծ է եղել՝ փոված ձորակն ի վար, քան հիմա երևում է: Թշնամիները ոչ մի կերպ չեն կարողացել իրենց ենթարկեցնել գյուղի բնակիչներին բնակավայրը շրջապատող բերդաման ժայռերի ձեռքերին փորված քարայրերի շնորհիվ: Դրանք եղել են ոչ թե բնակելի քարայրեր, այլ

⁴Այս գավառի գյուղերի կարգում է հիշատակվում պատմական հուշարձաններով հարուստ Մազրան, որ գտնվում է Մաղանջուղ գյուղի ձորի երկայնքով դեպի հարավ ձգվող բարձունքին՝ մոտ 1200-1300 մ բարձրության վրա՝ Որոտանի աջափնյա սարալանջին. այս մասին տե՛ս՝ **Ըորոյան Զ., Մաղանջուղ գավառի Մազրա գյուղը**, «Հայ գինվոր», թիվ 46 (1013), 21.11.2013:

⁵Գիտենք միայն, որ դեռևս 18-րդ դարի երկրորդ կեսին այն գտնվում էր Մելիք Օհանի իշխանության ներքո՝ Կյորես, Խոտ, Հալիձոր, Քարահունջ, Ալիդուլիչեն, Կյուրու գյուղերի հետ: 1831 թվականին Մաղանջուղը ունեցել է 36 ծուխ, բոլորը՝ հայ (այս մասին տե՛ս՝ **Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931)**, «Պետհրատ», Յերևան, 1932, էջ 238), իսկ արդեն 20-րդ դարի 20-ական թթ.՝ կոմերտմիություն, Գյուղտնտեսություն, կոլտնտեսություն, դպրոց, 49 ծուխ (տե՛ս՝ **Հայաստանի ազգային արխիվ**, ֆ.370, ց. 1, գ. 34, թ. 44):1949թ. ունեցել է էլ. հոսանք. Մեղրիի և Կապանի շրջանի գյուղերի հետ էլեկտրաֆիկացվել է նաև այս գյուղը (այս մասին կարելի է տեսնել՝ «Գյուղերը էլեկտրաֆիկացվում են», «Էջմիածին», Գ-Դ, 1949, էջ 87):

⁶Լիսիցյան Ս., **Ձանգեզուրի հայերը**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1969, էջ 53:

⁷Ասացողներ՝ Արկադիա Հովհաննիսյան, Գյուղ Ազատաշեն, 86 տարեկան (նա գյուղի ամենատարեց բնակիչն է), Դավթյան Արամայիս, 70 տարեկան:

ապաստարաններ, որտեղ պատսպարվել են վտանգի պահին: Հիմա դրանցից շատերը փլվել են կամ ծածկվել հողով, բայց նախկինում այնքան մեծ են եղել ու շատ, որ ասում են, թե հսկաներն են փորել ու իրենց համար բնակելի տներ կառուցել: Այդ քարայր-քարանձավներից մեկի խորությունը հասել է մինչև Որոտան գետը, և ոչ բոլորն են կարողացել մտնել այնտեղ (ասում են՝ շատերն են մտել ու դուրս չեն եկել): Ժամանակին գյուղի հոչակը տարածված է եղել այնքան, որ հետագայում այդ անունով է կոչվել նաև Սյունիքի Սյուս Բաղքի գավառներից մեկը:

Պատմում են նաև, որ Որոտանի ձորահովտի գյուղերի մեծ մասի հետ Մաղանջուղը չի անցնում թուրքերին, որովհետև վերջիններս կարծում էին, թե Մաղանջուղի քարայրերում հրեշներ են ապրում, որ կարող են դուրս գալ ամեն վայրկյան: Այդ պատճառով էլ գյուղը խորհրդային շրջանում մնացել է Հայաստանի տարածքում, իսկ թուրքերը անգամ իրենց անասունները չէին մոտեցնում տարածքին:

Տեղանվան տարբերակները և ծագումը: Մաղանջուղը բնավոր, վիմագրական և մատենագիտական աղբյուրներում ունեցել է տարբեր անուններ՝ Մաղանջ, Մաղանջուխ, Մաղանջուկ, Մաղանձու, Մահանջու, Մաղարաջուղ, Մաղարաջուխ, Մաղարաջուկ⁸: Ս. Խանգաղյանը նշում է, որ այն առաջացել է Մուղանի ճյուղ բառից⁹:

Առաջարկում ենք ստուգաբանական երկու հիմնական տարբերակներ¹⁰:

⁸ Այս մասին կարելի է տեսնել՝ Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հատ. IV, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986-1991, էջ 658-659:

⁹ Տե՛ս՝ Խանգաղյան Ս., *Հայրենապատում*, «Հայաստան» հրատ., Երևան, 1980, «Մուղան ճյուղ» գլուխ:

¹⁰ Ս. Խանգաղյանի կարծիքը՝ Մուղանի ճյուղ > Մաղանջուղ, տարածված է ժողովրդի մեջ: Թերևս խնդրահարույց է Մուղ>Մաղ՝ ու>ա անցումը, որ բնորոշ

Ա. Ծագմամբ արաբ. մաղարա *mağāra* /غار < مغارة (*gār*)/ «քարանձավ, քարայր» բառը անցել է հայերենին, թուրքերենին և պարսկերենին¹¹: Այդ բառը պահպանված է նաև Սյունիք-Արցախ բարբառային տարածքում՝ նույն նշանակությամբ: Բարբառախմբում այդ բառին հոմանիշ են քըրատակ, դաբ, վըրվան և այլն: Այսօր բարբառում համարյա չի գործածվում մաղարա բառը և թերևս պահպանվել է տեղանվան մեջ¹²: Կարելի է կարծել, որ նախապես եղել է մաղարաջուտ «քարանձավաշատ վայր, քարայրոտ», որ հետագայում լեզվական տարբեր ազդեցություններից դարձել է Մաղանջուղ¹³. մաղարա «քարայր» արմատին կցվել է -ջուտ ածանց, որ ունի «ինչ-որ բանով հարուստ, առատ տեղ, վայր» նշանակությունը, որն էլ կազմված է -իչ և -ուտ ածանցներից: Հավանաբար մաղարա բառում կրճատվել է -րա վերջնամասը փոխազդեցական հնչյունափոխությամբ, հմմտ՝ ապաստարարան > ապաստարան, այլև՝ ջրաղաց > ճաղաց > ճըղաց և այլն¹⁴, իսկ -ջուտ ածանցը օտար հնչողությամբ դարձել է -ջուղ՝ նախադիր արմատի՝ գործածությունից դուրս գալուց և անհասկանալի դառնալուց հետո: Ջ, չ հնչյուններից առաջ Գորիսի և շրջակա բարբառներում հաճախ ավելանում է ն, հմմտ՝ կամուրջ > կարմուռջ, բառաչ - պըռառջ, ճանաչ - ճանառջ, կանաչ -կանառջ և այլն: Այս տարբերակին հետևելով պետք է նկատել, որ գյուղի անվան մեջ պահպանվում են գյուղացիների պատկերած առասպելակերպ պատմությունները:

Բ. Կարելի է կարծել նաև, որ մաղանջուղ բառի ջուղ

չէ Գորիսի բարբառին, այլև չի հանդիպում Մաղանջուղ տեղանվան ոչ մի տարբերակում:

¹¹ Rajki's A., *Arabic Etymological Dictionary*, 2002, p. 66 (microsoft word option).

¹² Նույնանուն գյուղ կա նաև Արցախում:

¹³ Այդ են վկայում գյուղանվան տարբերակները՝ Մաեանձու, Մաեանջու, Մաղանջուխ, Մաղանջուկ, Մաղարաջուղ:

¹⁴ Բ-ի և նրա հետ որոշ հնչյունների անկման մասին կարելի է տեսնել Մարգարյան Ա., *Գորիսի բարբառը*, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1975, էջ 110:

հատվածը ոչ թե անանգի՝ -չուտ, օտար հնչողությամբ տարբերակ է, այլ ջուղ արմատն է, որ հանդիպում է Սյունիքում՝ Կապուտջուղ, Կալաջուղ (հին գյուղ Միսիանում), այլև՝ Ջուղա¹⁵։ Սասունի բարբառում այն ունի «խումբ» իմաստը, բայց դժվար թե անցած լինի նշված բարբառից։ Սյունիք-Արցախում առանձին գործածությամբ այդ բառը չի ճանաչվում, իսկ Ջուղա բառն էլ լեզվաբանական գրականության մեջ դեռևս ստուգաբանված չէ¹⁶։ Թերևս կարելի է եզրակացնել, որ պրսկ. արաբ. جوفه /cuğe/>جوخه /cukhe/ ջուխե/ «խումբ, համախումբ» իմաստներով բառն է, որ պահպանվել է տեղանուններում¹⁷։ Սրա դիմաց արաբ. պրսկ. առկա է ջուղե՝ cuğ /جوفه/, «խոռոչավոր, սնամեջ, գոգավոր» համանունը, որ նույնպես կարող է լինել մաղարա բառին կից։ Սակայն նկատում ենք, որ ոչ միայն մաղարա, այլև կապուտ, կալա բառերին իմաստով համադրվում է «խումբ» նշանակությամբ բառը, որից էլ կարող է առաջացած լինի «քարայրերի խումբ» անվանումը։

Ցաղաց քար

Պատմական համառոտ տեղեկություններ։ Ցաղաց-քար, Ցաղաց քարի վանք, Ցախաց քար, Ցաղացքար (*Մատվածանի անապատ, Արեգունու Սբ. Գրիգոր, Սբ. Կարապետ* և այլն) անվանումներով է հռչակված Վայոց Ձորի մարզի Եղեգիս գյուղից մոտ 6 կմ հյուսիս-արևելք՝ բարձրադիր սարավանդի վրա գտնվող վանական համալիրը՝ կազմված շինությունների 2 խմբից¹⁸։ Ցախաց քարի վանքը¹⁹, ըստ XI դ. պատմիչ Ստեփանոս

¹⁵ Ջուղա բառը չենք դնում այս շարքում. դժվարանում ենք այն նույնացնել նշված արմատին՝ համապատասխան և բավարար տեղեկություններ չունենալու հիմքով։

¹⁶ Այվազյան Ա., *Ջուղա։ Պատմական Հայաստանի քաղաքները*, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1984, էջ 3։

¹⁷ Կարծում են՝ քիչ հավանական է ջուխտ արմատի լինելը, իսկ ջիղ || ջիլ բառը առհասարակ չի հանդիպում տեղանուններում։

¹⁸ Համալիրից մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվում է Սմբատաբերդը (X-XI դարեր), որ պաշտպանված է Արտաբունի և Եղեգիսի խոր ձորերով։ Ցաղաց քարի տարածքի աղբյուրներից ջուրը տարվել է Սմբատաբերդ, որտեղ եղել են

Տարոնեցու, հիմնադրվել է հայոց Աբաս Բագրատունի թագավորի օրոք (929–953)²⁰ «ի ձեռն Հոր Ստեփանոսի», 10-րդ դարի կեսերին²¹:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ դրանք կառուցվել են սկսած 1041թ.-ից Վարդիկ վանահոր կողմից²²:

Մատենագիտական և վիմագրական տեղեկություններ: Ցաղաց քարի մասին մատենագիտական թերևս առաջին տեղեկությունն ունենք 11-րդ դարի պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի «Պատմութիւն տիեզերական»²³ երկից. «Նոյնգունակ եւ նոյն արինիւ վանքն Հնձուց ի Կարին գաւառի ի ձեռն հարն Սարգսի ամենայն արինաւք լցեալ. եւ վայելչագարդ տեղին, որ Կապուտաբարն անուանի, յԱրշարունեաց գաւառին. եւ Դպրեվանք ի Շիրակ գաւառի. եւ Ցախաց քար ի Վայոց Ձորի ի ձեռն հար Ստեփանոսի»²⁴:

Մյուս հիշատակումը քաղում ենք Սյունյաց տան պատմիչ Ս. Օրբելյանից, որ «Սյունիքի պատմության» մեջ չորս անգամ հիշատակում է Ցաղաց քարը²⁵: «Սյունիքի պատմու-

միջնաբերդ, բնակելի տներ, ջրավազաններ (այս մասին կարելի է տեսնել <http://vdzor.mtad.am>):

¹⁹ Վանքի համալիրը կազմված է շինությունների երկու խմբից: Պարիսպներով շրջապատված բակով արևմտյան խմբի հարավային կողմում միանալով, կոպտատաշ բազալտից կառուցված, թաղածածկ Ս. Հովհաննես եկեղեցին է (989թ.) և մատուռը, իսկ հյուսիսային կողմում գտնվում է Ս. Աստվածածին եկեղեցին (X դ.)՝ չորս խորանով, չորս անկյուններում ավանդատներով և կենտրոնագմբեթ, որին հարավից կցված է այունասրահը, իսկ արևմուտքից՝ կամարակապ խորշերով զավիթը:

²⁰ Ս. Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, II տպագրութիւն, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 752 (այսուհետև՝ Տարոնեցույ Պտ):

²¹ Լալայեան Ե., Վայոց-ձոր. Նշանաւոր վանքեր, Ազգագրական հանդես, № 26, Թիֆլիս, 1916, էջ 17-18:

²² Օրբելյան Ս., Սյունիքի պատմություն, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 107 (այսուհետև՝ Օրբելյան 1986):

²³ Տարոնեցույ Պտ, էջ 176:

²⁴ Տարոնեցույ Պտ, էջ 176:

²⁵ Առաջին հիշատակումից իմանում ենք վանքի դիրքի մասին. «Եվ պարսիկներն այնտեղից մի փոքր անցան դեպի ձորաբերանը, որը ձախ կողմից դեպի

թյուն» աշխատության ծանոթագրության մեջ նշվում է **Ցաղաց քար, Ցաղացքար** կամ **Ցախաց քար**²⁶:

Տեղանքի՝ տարբեր ժամանակներով թվագրվող վիմագիր արձանագրություններում վեց անգամ հիշատակվում է **Ցաղաց քար** ձևով և մեկ անգամ՝ **Ցաղած քար**, որը պարզապես գրչի սխալ պետք է համարել²⁷:

Ստուգաբանական կանխավարկածներ: Մատենագրական և վիմագրական տեղեկություններից պարզ է դառնում, որ եկեղեցին կոչվել է **Ցաղաց քար**: Մյուսները՝ **Ցախաց քար**, **Ցաղած քար** և այլն, տարբերակներ են, ինչպես նշվում է, որ այս վանքի անունը հետագայում գրվել և արտասանվել է նաև **Ցախաց քար**²⁸ և այլ ձևերով: Փաստորեն՝ բառը կազմված է ցաղ արմատից և -աց ձևությից, որը առաջին տպավորությունից ենթադրել է տալիս, որ գրաբարի հոգնակի սեռականի վերջավորությունն է: **Ցախ**՝ «փայտի մնացուկ, ճյուղ» (**Ցախաց քար**), արմատը բացառում ենք այս տեղանվան համար: Այն ժողովրդական ստուգաբանությամբ է ձևավորված, քանի որ գրավոր աղբյուրների գերակշիռ մասը ուղղակիորեն նշում է **Ցաղ**>**Ցաղաց քար**:

Ցաղ արմատը վկայված չէ հայերենի բառարաններում, Սյունիքի, Վայոց Ձորի բարբառային տարբերակներում: Արմա-

վեր նայում է **Ցաղաց քար** կոչված սուրբ վանքին՝ կառուցված բարձրավանդակի վրա, երկու այն գյուղերի սահմանների միջև, որ վերը նշեցինք [**Ոստինք** և **Արտաբույնք**]» (Օրբելյան 1986, էջ 107): Երկրորդ հիշատակման մեջ ներկայացվում է եկեղեցիների շինության մասին, երբ Վայոց Ձորում մշտապես գործող վանքերը թվարկելիս պատմիչը նշում է նաև **Ցաղաց քարը**: «...Ցաղաց քարը՝ բարձրահռչակ և սուրբ առաքինարանը, որտեղ չորս հարյուր իննսուն թվականին, Գագիկի թագավորության օրոք Վարդիկ անունով մի վանահայր առաջին սուրբ հայրերի հանգստարանում շինում է երկու պայծառ եկեղեցի, մեկը զմբեթահարկ՝ Սուրբ Կարապետի անունով, մյուսը՝ թաքակտուր, հրաշալի կառուցվածքով» (Օրբելյան 1986, էջ 282):

²⁶ Օրբելյան 1986, էջ 430:

²⁷ Տե՛ս՝ *Դիվան հայ վիմագրության*, III պրակ., շՄՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 140-141 (այսուհետև՝ *Դիվ*):

²⁸ *Դիվ*, էջ 141:

տին վերաբերող լեզվաբանական լուրջ մեկնություն նույնպես բացակայում է:

Ցաղ արմատին ձևով մոտ բառեր կան Վայոց Ձորի միջ-բարբառում և նրան հարակից տարբերակներում, օրինակ՝ **Ց/ը/դնա**²⁹՝ գետ և բնակավայր Գողթն գավառում, **ցալ/ք/-ուն** «ջրի շիթ, ցայտյուն», **ցել/ցիլ/** «չցանված հերկ» > **ցիլ** անել, **ցիլել** «հերկել», **ցիլանք** || **ցըլանք** «փայտի, քարի, ապակու, մետաղի կտոր»: Սրանցից երկուսն են առնչակից **ցաղ-ին** **ցալ/ք/-ուն**, **ցել/ցիլ/**: Առաջին տարբերակի համար **ցալ/ք/-ուն** «ջրի շիթ, ցայտյուն», ենթադրելի է վերջնիկի լ>ղ անցումը, ինչպես մյուս օրինակներում՝ **ջիլ** > **ջիղ**. այս տարածքի բարբառներում նշված օրենքը համեմատաբար երկար է գործել³⁰: Հոգնակերտ **ք-ի** առկայությունն էլ՝ սեռականի **-աց** ձևով՝ **ցալ/ղ/-աց**, կարծես համատեղվում է տեղանվան հետ, բայց իմաստային առումով չի տրամաբանվում: Մյուս բառը՝ **ցել/ցիլ/** «չցանված հերկ, չմշակված», բարդանում է տեղանվանը կցելու առումով ոչ միայն լ>ղ, այլև **է/ի>ա** անցմամբ, չնայած ունի իմաստային համապատասխանություն՝ **Ցաղաց քար**՝ «չմշակված քար»³¹:

²⁹ Վարդանյան Ա., *Վայոց Ձորի միջբարբառը*, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2004, էջ 153:

³⁰ Աղաբեկյան Մ., *Մյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ III, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2010, էջ 147:

³¹ Հայերենի արևելյան բարբառներում ունենք օրինակներ, որոնցում է-ն դարձել է ա, ինչպես **ամեն** /հնչ>**ամառ** հինչ (Գորիսի բարբառում), բայց դա նախընթեր ա-ի առնմանության դրսևորում է և գործուն չէ **ցաղ** արմատի դեպքում (քննվող բառի համար գործուն չէ նաև Վայոց Ձորի միջբարբառում և Մյունիքի բարբառներում նախադիր յէ>ա անցումը **երագ>արագ**, **երկաթ** > **արկաթ** և այլն, քանի որ դրանցում յէ-ի փոփոխությունն է ենթադրվում): Անհամատեղելի ենք համարում նաև **տէր>տար**, **անտէր>անդար**, **Մարգարէ** > **Մարգարա**, **գումէ>կոմամշ** հնչյունափոխությամբ առկա բառերի զուգադրությունը քննվող բառի հետ, քանի որ նրանցից առաջինը բացառություն է անձնանիշ գոյականի համար, երկրորդը՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով է առկայացել, իսկ երրորդը՝ մասնավոր դեպք դարձյալ ներդաշնակության օրենքով:

Ստուգաբանություն: Ամենայն հավանականությամբ Ցաղաց քար անունը առաջացել է ջրաղաց>ջաղաց ձևից, և նրանում -աց-ը ոչ թե հոգնակի սեռականի վերջավորություն է, այլ հայերենի բաղադրության³² օրենքով առաջացած ջուր+աղաց > ջրաղաց>ջաղաց բարդության վերջին բաղադրիչի -աց-ը: Ջրաղացի քար>ջաղացի քար բարդության առաջին ջ-ն փոխազդեցական հնչյունափոխության առնմանության օրենքով՝ վերջին ց-ի ետընթաց ազդեցությամբ դարձել է ց: Նման մի տիպիկ օրինակ վկայում է նաև Հ. Աճառյանը՝ ջրցան>ցրցան³³, որ համարում է «համանմանություն բաղաձայնների միջև»³⁴, ջրցան > ցրցան > ցրցամ³⁵ և այլն:

Շինության կառուցման վերաբերյալ պետք է որ եղած լինի գրույց կամ ավանդապատում՝ կապված ջաղացի քարի հետ, որից էլ առաջացել է եկեղեցու անունը: Թերևս հավանական է նաև, որ նկատի է առնվել եկեղեցու շինության համար նախատեսված քարանյութը, որ կոպտատաշ բազալտից է՝ ջաղացի քարի որակի: Ենթադրություններից մեկն էլ այն է, որ այս տարածքը, որ եղել է ջրառատ և բերրի, ունեցել է բնակավայրեր³⁶ և ջրաղացներ³⁷, որից էլ տեղանքը ստացել է անունը,

³²Բառակազմական եղանակ է, նոր բառաձևի կամ կապակցության առաջացում երկու իրար մերձավոր կամ իրար հետ հաճախ գործածվող բառերի, կապակցությունների խաչավորման կամ միավորման հետևանքով: Բաղադրությամբ առաջացած են համարում նաև ցայլուն-ը:

³³ Աճառյան Հ., *Հիականար քերականություն հայոց լեզվի*, հատ. VI, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 690 (այսուհետև՝ Աճառյան 1971):

³⁴ Աճառյան 1971, էջ 690:

³⁵ Առաքելյան Վ. և ուրիշներ, *Ժամանակակից հայոց լեզու*, հատ. I, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979, էջ 153:

³⁶ Այս մասին կարելի է տեսնել՝ Բաբաջանյան Ա., *Հայաստանի XIV – XVII դդ. խեցեղենը*, Ե., 2015, էջ 35-36 (ատենախոսություն):

³⁷ Օրինակ՝ Եղեգիսի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում միջնադարյան երեք ջրաղացներ կան գյուղատեղի հյուսիսարևելյան կողմում՝ հանքային ջրի աղբյուրների մոտ (տե՛ս՝ ՀՀ կառավարության 2003 թ. հունիսի 17-ի N 754-Ն որոշման Զ. 21. -ի 5.2, 5.3., 5.4 և գյուղատեղի 6. թվահամարների ներքո):

իսկ հետագայում տեղանունը տարածվել է նաև եկեղեցու վրա: Մա առավել քան հավանական է, քանի որ **Ջադաց քար** կոչվել է եկեղեցիներից ոչ թե մեկը, այլ համալիրը՝ «բարձրահռչակ և սուրբ առաքինարանը» կամ շրջակա ողջ տարածքը:

Գորիսեցիների սուրբ սարը Լաստի³⁸ խուրը

Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում բազմաթիվ բառեր կան, որ ծագմամբ բնիկ են: Այս առումով աչքի են ընկնում հատկապես տեղանունները: **Լաստ** բառը հին հայերենում հիմնականում նշանակել է «գերաններով կամ տախտակներով շարվածք, որի միջոցով շարժվել են ջրի մեջ, 2. փոքր նավ»: Գորիսի բարբառում լաստ նշանակում է «1. շերտ՝ խոտի, քարի, լեռան և այլն, 2. հարած խոտի փունջ, որ շերտ-շերտ թափված է գետինին»: **Լաստ** բառի հնդեվրոպական արմատն է³⁹ **lazd-/e-*, որ զարմիկ լեզուներում դարձել է՝ ալբ. *lethi*, լեթ. *lazda* /*laz-d-à*/, լեթթ. *lazda*, սերբ. *lōza* «կոճղ, գերան, գավազան, կաղնու ճյուղ» և այլն: Ընդ որում՝ Գորիսի բարբառը այս արմատից ունի նաև այլ նշանակությամբ բառ՝ **լախտ** (> **լախտե**, **լախտի**, **լախտ անել**), որ նշանակում է «կոպալ, մահակ, որի ծայրին կապված է կաշվե թել՝ ծայրը ոլորած, գունդ սարքած», այստեղից՝ **ջրնջըլախտի** (խաղի տեսակ): **Լաստ**||**լախտ** տարբերակներից երկրորդը բարբառին հավանաբար անցել է պարսկերենի միջնորդությամբ՝ **لخت** /*lāxt*/ «մահակ, կոպալ» հիմնական նշանակությամբ:

Գալով **Լաստի/ն** խուր սրբազան լեռան անվանը՝ առաջարկում ենք ստուգաբանական երկու տարբերակ՝

1. Բանավոր զրույցներից իմանում ենք, որ **Լաստի խուրը** եղել է կաղնուտ՝ փոված սարի հարավարևմտյան լանջերից մինչև **Լաչին քերձի** փեշերը, և այստեղից են կտրել հաստ գերաններ, որոնցից մինչև օրս էլ կան շատ գորիսեցիների

³⁸ Այլն՝ **Լաւնտի** || **Լաւնտին** || **Լաստին**:

³⁹ Առկա են նաև նոստրատիկ հիմքեր. այս մասին կարելի է տեսնել **Dolgopolsky A., Nostratic Dictionary** (McDonald Institute for Archaeological Research), III edition, 2012, p. 1345.

տներում (հավանաբար հագար և ավելի տարեկան), և որոնց Գորիսում անվանում ենք լօփա: Լեռնապարի անտառուտի պատճառով հավանաբար կոչվել է Լաստին խութ:

2. Նկատի ունենալով, որ սարը բարձրանում է շերտ-շերտ լեռներով, հավանական է՝ այս հատկանիշից բնակիչներն այն անվանել են Լաստի խութ⁴⁰:

Կապանի շրջանի Տորթնի (Անտառաշատ) գյուղի անունը: Ս. Օրբելյանի «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ նշվում է Տորթնի բնակավայրը, որը եղել է Բաղք գա-վառի ամենամեծ գյուղը (Տաթնի վանքին՝ վճարում էր 26 միա-վոր հարկ): 1949թ., ցավոք, գյուղի բազմադարյան անունը փոխ-վել է Անտառաշատ: Գյուղի հին անվան տարբերակներից հիմնականում նշվում են Դորդնի, Դորթնի, Տորթնի, Տորթին, Տորթն, կապանցիների շրջանում տարածված է Տորթնի, այստեղից՝ տորթնեցի, տորթնըցե, տըրթնեցի, տըրթնըցի:

Ժողովրդական ստուգաբանությամբ՝ Տորթնի գյուղա-նունն ունի հետաքրքիր տարբերակներ, ըստ այդմ՝ գյուղի անունն առաջացել է «տեր օրհնի (տեր արքնի)» կամ «տե ր, աղոթի ր», «տուն օրհնե» կապակցություններից որևէ մեկից: Կան այլ տարբերակներ. Տորթնին՝ որպես բնակավայր, եղել է անհի-շելի ժամանակներից, և նրա անունը կապված է Տորք կամ Տիր աստվածությունների հետ: Նշվում է նաև դիրտ «գինու նրստ-վածք, մրուր» բառի տարբ տարբերակը գյուղի անվան համար:

Տեղանվան մեջ պահպանվել է բարբառային մի հին փոխառություն, որ, հավանաբար, հետագա շրջանում դուրս է մնացել սովորական բառերի շարքից: Կարծում ենք, որ Տորթնի անունը առաջացել է պարսկերենի **دورود** /dorud/ «փայտ, անտա-

⁴⁰ Մի գեղեցիկ ավանդազրույց է պահպանվել Լաստի խութի անվան մասին: Զրիեղեղից հետո, երբ Նոյ Նահապետը իջել է Արարատի գագաթին, և ջուրը դեռևս ամբողջովին չէր բացել ցամաքը, նրա որդիներից մեկը լաստով լողալով եկել և իջել է Լաստին խութի գլխին ու այստեղ էլ հիմնել է իր տունը: Այդ օրվանից այն կոչել են Լաստի խութ՝ «լաստ-նավի» բլուր (Ասացող՝ Սուրեն Բումունց):

ռանյութ, ատաղձ» բառից, այստեղից درودگر /dorudgār/ «ատաղ-
ձագործ»: Բարբառախմբում այս բառի իմաստից մնացել է դուր-
գար || դուլգար «հյուսն» դորուդգար ձևից: Մյուսիք-Արցախ
բարբառային տարածքի Կապանի խոսվածքում բառասկզբի դ-ն
հիմնականում դառնում է տ, ինչպես դանակ > տէնակ, դառնալ
> տէռնալ, դեղնել > տըղնել և այլն, իսկ ք ձայնորդից հետո դ-ն
փոխվում է թ-ի, օրինակ վարդ > վարթ, բուրդ > պուրթ և այլն:
Այսպես՝ դորուդ բառը դարձել է տօրութ, որի ու-ն շեշտակո-
րույս դիրքում ընկել է, երբ բառին ավելացել է բարբառախմբում
տարածված -նի (-նէ) (հին հայերենի -նեար) հոգնակերտը, որ
սովորաբար դրվում է բազմավանկ բառերի վրա, ինչպես
բուստըննի || բուստըննէ, տըխտըկնի || տըխտըկնէ և այլն:
Այսպիսով՝ Տօրթնի բառը կրել է հետևյալ փոփոխությունները՝
դորուդ > տօրո ւթ > տօրթնի՝ «փայտանյութեր, փայտեր»: Նոր
անուն էլ Անտառաշատ, հուշում է, որ Տօրթնի անունը տրվել է
մի գեղեցիկ բնակավայրի, որ անտառաշատ և փայտաշատ է:

Ուրդունիշեն (Ագատաշեն) Արեգունու երկիր

Ավանդագրույցի հետքերով: Ուրդունիշեն (Ագատաշեն)
գյուղը այսօր գոյություն չունի: Պատմական տեղեկություններ
առանձնապես չեն հանդիպում: Ագատաշենցիները պատմում
են, որ իրենց գյուղը նախկինում ունեցել է Արեգունի անվա-
նումը, հետո այն դարձել է Ուրդունիշեն, իսկ ավելի ուշ
Ագատաշեն⁴¹: Պատմում են, որ շատ հնում Արցախից բերդա-
նման փոքրիկ խոր ձորակ են գալիս մի քանի ընտանիք՝ Արե-
գունու գլխավորությամբ: Այդ ձորակում հիմնում են գյուղ ու
ապրում: Բայց այստեղ է արշավում Ալի Ղուլի խանը: Բնակիչ-
ները դիմադրում են, իսկ Ալի Ղուլի խանը ամեն գնով փորձում
է իրեն հպատակեցնել Արեգունի քաջ տոհմի որդիներին: Տես-
նելով, որ թշնամու գորքը մեծ է, արեգունցիները պատսպար-

⁴¹1969թ. դրվել են Հարթաշեն գյուղի հիմքերը: Այս գյուղը ձևավորվել է
նախկին Կյորու (Ձորաշեն), Մաղանջուղ (Այգեձոր), Ուրդունիշեն (Ագատաշեն)
գյուղերի բնակիչներով: Այսօրվա Հարթաշենը եղել է Ագատաշենի
հանդամասը:

վում են քարատակներում՝ իրենց հետ տանելով ամբողջ սնունդը: Ալի Ղուլի խանը գյուղում մնում է այնքան ժամանակ, մինչև կվերջանա բնակիչների ուտելիքը: Շատերը սովից մեռնում են, բայց չեն հանձնվում թշնամուն: Վերջապես բնակիչների մնացած մասը իջնում է քարայրերից ու հանձնվում խանին: Քանի որ այդ գյուղը իրեն հպատակեցնելու համար մեծ դժվարություններ էր կրել, Ալի Ղուլի խանը հրամայում է, որ այն կոչվի իր անունով:

Ստուգաբանություն: Ամենայն հավանականությամբ գյուղի անվանումը օտար լեզվում է դարձել **Ուրդունի** շեն՝ **Արեգունի** > **Ուրգունի** > **Ուրդունի**, իսկ ժողովրդի համար այնքան սարսափազդու է եղել Ալի Ղուլի խանի հարձակումը, որ գյուղի անունը կապել են խանի հետ: **Ուրդունի** բառի վերջին բաղադրիչը՝ **-ունի**, ենթադրվում է ցեղանուն մատնանշող ածանց⁴²: Առկախ է մնում **արեգ** բաղադրիչի ուրդ-ի վերածվելու հարցը: Կարծում ենք՝ բառակզբի **ա-ն ու** է դարձել ետընթաց **ու-ի** առնմանությամբ⁴³, իսկ **գ[ջ]** > **ղ[ջ]** անցումը սովորական երևույթ է թյուրքական լեզուներին անցած փոխառությունների և օտարաբանությունների համար, հմմտ.՝ **ciger** > **ciğer**, **eger** > **eğer**, **legen** > **l eğer**⁴⁴: **Արեգ** || **ուրեղ** -**ե-** դուրս է մնացել անշեշտ դիրքում:

Այսպիսով՝ հանդիպում ենք տոհմանունից առաջ եկած մի տեղանվան, որ չնայած օտար ազդեցությամբ աղավաղվել է, բայց որի բառային և իմաստային հիմքերը պահպանվել են ավանդազրույցում: **Արեգունի** անվամբ հին թաղամաս կա Գորիս քաղաքից հարավ-արևմուտք: Հին բնակավայր է եղել,

⁴² Ջահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*, «Ասողիկ», Երևան, 2010, էջ 812:

⁴³ Տարածաշրջանում **Ուրդունի** շեն բառի առաջին **ու-**ի արտաբերումը միանշանակ չէ: **Ու-ա-ը** հնչյունների միջակայքում է, ոմանց խոսքում նաև թույլ ը կամ ա է՝ **Ը[ա]րդունի** շեն:

⁴⁴ Karaca V., *Türkiye türkçesindeki alinti sözcüklerde görülen ses olayları üzerine bir inceleme*, "Turkish Studies" (International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic), vol. 7/4, Ankara, 2012, s. 2081.

որի հետքերը հիմա հազիվ են նշմարվում⁴⁵:

⁴⁵ Կան Ստուգաբանությանը առնչվող տեղեկություններ: Արեգունի տեղանունը կարող է առաջացած լինել դեռևս 11-12-րդ դարում՝ կապված արևորդիների հերձվածի հետ: Քրիստոնեական աղանդավորական այս շարժմանը հետևող հայերի մասին տեղեկություն ենք ստանում Գրիգոր Պահլավունուց. «Ահա և այլ ոմանք ի Զրադաշտ մոզե՝ մոզք պարսկականք, և այժմ ի նոցունց դեղեալ արեգակնապաշտք, գոր Արևորդիսն անուանեն» (*Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, Լոյս. ընծ. Կ. Կոստանեանց, տպ. Գեորգ Ս. Սանոյեանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 161 (այսուհետև՝ Մագիստրոսի թղթերը)): Հավանաբար Միջագետքից տարածված այս շարժումը հասել է Պարսկաստան և Արցախ-Սյունիք. «Եւ ահա են յայդմ գաւառի բազումք և ինքեանք քրիստոնեայք զինքեանքս յայտնապէս կոչեն: Բայց եթէ որպիսի մոլորութեամբ և անառակութեամբ վարին, զիտեմք, զի ոչ ես անտեղեակ» (Մագիստրոսի թղթերը, էջ 161): Ն. Շնորհալին հիշատակում է, որ արևորդիները «ազգաւ եւ լեզուաւ ի տոհմէ Հայոց են» (Ն. Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի նամականի, «Թուղթ» ի Սամոստիա քաղաք յաղագս Արևորդացն դարձի», Ս. Ղազար, Վենետիկ, 1838, էջ 239): Այս հարցը մինչ օրս ուսումնասիրվում է տարբեր հեղինակների կողմից: Ժամանակին Աբել արքեպիսկոպոսը «Արարատ» ամսագրում անդրադառնում է արևապաշտների հարցին, մատենագիտական տեղեկություններից համոզվում, որ արևորդիները մինչև քրիստոնեությունն են գոյություն ունեցել՝ «հեթանոսաց մնացեալք» «և յաղագս մնալոյ նոցա ի ժամանակէ կռապաշտութեան» (Աբել արքեպիսկոպոս, *Պատմութիւն հայածլաց, ուրացողաց, հերձուածողաց, եւ բաժանելոց յեկեղեցւոցն հայոց*, «Արարատ», թիւ Բ, շրջան Ը, 28.02.1875, էջ 44): Կարծիք կա նաև, որ արևապաշտ եզդիները հայեր են (Եզդիի քրդեր, «Մշակ», N 197, 15.10.1883, էջ 1-2): Փաստորեն՝ Արեգունի տեղանվան մեջ պահպանվել են «արևի հետևորդներ, արևորդիներ» հասկացությունները: Ավելի հակված ենք կարծելու, որ տեղանունը ավելի հին է՝ նախաուրարտական շրջանից. արեգ՝ *rev- և -ունի կազմությունները այդ են վկայում: Բացի այդ, Սյունիքի հնագիտական բազմաթիվ գտածոներ հաստատում են, որ այս տարածաշրջանում եղել է արևի պաշտամունք: Նույնիսկ հեթանոսական շրջանից անցած շատ պատկերներ հետազայում վերարտադրվել են: Արեգունի բնակավայրերից մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող հին Գորիսում՝ Կյորեսում, մինչև 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի գերեզմանաքարերի վրա քանդակում էին արևի պաշտամունքն արտահայտող պատկերներ:

Mher Kumunts - Few Names Etymology by Historical and Ethnographic Base.- Etymology of place names is a complicated process and it is necessary to use historical, ethnographical and folkloric information to succeed.

In historical Syunik had been saved a few names which are not etymologized till now: Maghanjugh (Մաղանջուղ), Tsaghats kar (Յաղացքար), Lastin khut (Լաստինխութ), Urghunishen (Ուրղունիշեն), Tortni (Տորթնի). From the etymology of this words it is clear that the word Maghanjugh means "place with a lot of caves", and the name Tsaghats kar name came from the form Tsaghats kar (Յաղացքար). It is possible that the name Lastin khut (Լաստինխութ) came because of forests on the mountain. Tortni (Տորթնի) village name, which means "with a lot of forests", came on the same basis. Urgunishen place name came from the form Areguni (Արեգունի): Areguni>Urguni>Urghuni, (Արեգունի> Ուրգունի, Ուրղունի).

Мгер Кумунц - Этимология ряда топонимов историко-этнографической основой.- Этимология топонимов является более трудным процессом, и для удачного результата нужно использовать исторические, этнографические и фольклорные сведения.

В историческом Сюнике сохранились некоторые топонимы, которые до сихпор не этимологизированы: Маганджуг (Մաղանջուղ), Цагац кар (Յաղացքար), Ластинхут (Լաստինխութ), Ургуннишен, (Ուրղունիշեն), Тортни (Տորթնի). Из этимологии данных слов становится понятным, что Маганджуг (Մաղանջուղ) означает место, полное пещерами, а топоним Цагац кар (Յաղացքար) происходит от словоформы джрагац > джагац ջրաղաց>ջաղաց. Считаем возможным, что топоним Ластинхут (Լաստինխութ) возник вследствие того, что гора была полна лесами. Имя села Тортни (Տորթնի) возникло с тем же основанием и означает «полное лесами», а топоним Ургуннишен, (Ուրղունիշեն) происходит от словоформы Арегунни (Արեգունի) – Арегунни > Ургунни > Ургунни (Արեգունի > Ուրգունի > Ուրղունի).

Գալստյան Աշոտ - Հուշագրության լեզվակառուցվածքային մի քանի հարցեր	5
Գրիգորյան Սուսաննա - Հատուկ անունների քննությունը	
Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում	19
Զաքարյան Հովհաննես - Հայերենի Վ/- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին.....	34
Թադևոսյան Հասմիկ - Բառակապակցություն-տերմինների կիրառությունը Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» բժշկարանում	46
Խաչատրյան Հասմիկ - Համշենի բարբառի հնարանությունների շուրջ.	57
Խաչատրյան Վալենտին - Բարբառային-խոսակցական բառեր Ղ. Փարպեցու երկերում.....	67
Կատվայյան Վիկտոր - Հարացուցային հնարանությունները բարբառային հայերենում.....	78
Հակոբյան Ֆրիդա - Գրաբարի էլեկտրոնային պատմական բառարանի կազմության սկզբունքները	88
Հովհաննիսյան Լավրենտի - Միջին հայերենի և Ղարաբաղի (Արցախի) բարբառի բուսանունների զուգադրական քննություն.....	97
Հովհաննիսյան Նազիկ - Բառաքնական դիտարկումներ (ըստ ձեռագիր բառարանների)	107
Ղամոյան Լուսինե - Հնարանությունները «հագուստ» իմաստային դաշտում.....	118
Ղարիբյան Ալինա - «Սասնա ծռեր»-ի անունների շուրջ.....	127

* Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների համար:

Միքայելյան Սոնա - Արաբերեն փոխառություններ Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանի բարբառային միավորներում (ըստ Աշտարակի շրջանի 10 գյուղերի խոսվածքների)...	141
Մխիթարյան Գայանե - Աստվածաշնչի հայերեն թարգմանության հարցի շուրջ.....	150
Պապիկյան Միլվա - Տերմինաբանական դիտարկումներ (Տերմինային արտահամակարգային բազմիմաստություն) ...	159
Պետրոսյան Արմեն - «Վահագնի երգ»-ի անագրամների շուրջ.....	167
Սարգսյան Մերի, Ասիլբեկյան Շուշան - Հայերենի բառակազմության խնդրահարույց մի քանի հարցերի մասին.....	177
Միմոնյան Նեկտար - Ստուգաբանական դիտարկումներ.....	186
Սուքիասյան Հենրիետա - Դիտարկումներ գրական հայերենի շուրջ.....	193
Վարդանյան Արտակ - Հյուսիսային Գողթնի խոսվածքների հնչյունաբանական առանձնահատկությունները.....	199
Քումունց Մհեր - Մի քանի տեղանունների ստուգաբանություն՝ պատմաազգագրական հենքով.....	209

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հրատ. պատվեր № 989
Ստորագրված է տպագրության 20.12.2019թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 14,25 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:



[2000 ԴԴ.]

ԳԱՍ ՀԻՃՆԱՐԱՐ ԳԻՒՄ. ԳՐԱԴ.



FL0647330

A^{*N*}
108294